ԱԼԻՇԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ



ԳՐԱԿԱՆ
ՀՈՒՇԵՐԻ
ՍԱՏԵՆԱՇԱՐ

8(092)
Ա-31

1563

ԱԼԻՇԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

1974

«Հայաստան»
հրատարակչություն
Երևան

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

8 Ap 1
Ա 31

Ժողովածուն ապագրության պատրաստեց
Սուրեն Շահիկյանը

70383 (56)
700 (01) 74
132. 74 «S»

ՀՍՍՌ ԳԱ Հասարակական Գրադարան
Общественная Библиотека
ГР. ДАРАН
Библиотека
Акад. Арм. ССР

27029

© Հայաստան հրատարակչություն, 1974 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ալիշանը ժամանակակիցների հուշերում, այս ծավալով ու ընդգրկմամբ, առաջին անգամ է ներկայացվում ընթերցող հասարակությանը։ Հատորը բան հնարավորին ամբողջական դարձնելու համար թերթել ենք բազմաթիվ պարբերականներ, անձնական արխիվներ, որոնումներ ենք կատարել շատ գրադարաններում ու անհատական արխիվային ֆոնդերում։

Հակված չենք կարծելու, թե գտել ենք Ալիշանին վերաբերող բոլոր հուշապատումները. գործը նախ և առաջ բարդանում էր նրանով, որ Ալիշանին ճանաչած կամ նրան հանդիպած մատենագիտներից ոմանք անգամ հրապարակով հայտարարելուց հետո որևէ գրավոր հետք չեն թողել։ Ինչպես, օրինակ, Առաքել Սարուխանյանը, որը 1890 թ. «Մշակ»-ում հանդես եկավ մի հայտարարությամբ, որ ինքը Վենետիկում եղած ժամանակ հանդիպել է Նահապետին, «բայց այդ մասին՝ առանձին հոդվածով, որտեղ առաջ կբերեմ և իմ հիշողությունները» («Մշակ», 1890 թ. № 53), սակայն ցավոք սրտի նա այդպես էլ չկարողացավ կատարել իր խոստումը։ Հայագետ-բանասեր Մկրտիչ Պոտուրյանը, որը երկարատև ծանոթություն էր ունեցել Ալիշանի հետ, խոստացավ գրի առնել իր հիշողությունները և հրատարակել կամ ճանաչել մեզ, սակայն վերջահաս մահը (1959 թ.) հնարավորություն չտվեց նրան իրագործելու իր մտադրությունը։ Ալիշանի հետ վերջապես հանդիպել է ոմն նշանավոր արվեստագետ Ա. Կերպիդնիկովը, մի քանի ամիս շարունակ Վենետիկում նրա օգնությամբ գրչագրերի մանրանկարներն է դասակարգել գեղարվեստագետ Ա. Ստասովը, սակայն վերջիններս նույնպես բավարարվել են մեկ-երկու հապճեպ նախադասություն ասելով մեծին։ Հակառակառակ. եթե եթե ձեռքի տակ ունենայինք նաև վերևում հիշատակված հուշերը, ապա հնարավոր կլիներ է՛լ ավելի ամբողջական պատկերացում կազմել Ալիշանի կյանքի այլևայլ մանրամասների մասին։

Գործը դգալի չափով բարդացավ նաև հետևյալ պատճառով։ Ինչպես հայտնի է, Ալիշանն իր ամբողջ գիտակցական կյանքն անց է կացրել Վենետիկի Մխիթարյան միաբանության ներսում, նշանավոր բանասեր-գիտնականների շրջանում։ Մեզ տեղեկություններ են հասել այն մասին, որ միաբանության ավագ և կրտսեր սերնդի շատ ներկայացուցիչներ իրենց

մեծ ու փոքր գրառումներն են ունեցել Ալիշանի կյանքի այս կամ այն դրվագի վերաբերյալ։ Ալիշանի մասին իր հավանորեն բավականին ընդարձակ հուշագրումն ունի նրա ուսուցիչը՝ Անդրեաս Մովիջյանը, իր անձնական օրագրության մեջ բազում առիթներով Ալիշանին է անդրադարձել նրա ավագ ընկերն ու բարեկամը՝ Արսեն Բագրատունին, Փարիզում, Մուրադյան վարժարանում համատեղ աշխատանքի ժամանակ նրա մասին գրել է վարժարանի տնօրեն Ռափայել Թրյանցը և ուրիշներ։ Այս կարգի գործերը անհասանելի մնացին մեզ։

Իսկ նրանք ներկայացնում, այնպիսով, մեր ձեռքի տակ եղած՝ Ալիշանի ժամանակակիցների հուշերը։

Ամենից առաջ՝ ուշադրությունից չի վրիպում այն, որ հուշագրողները ամենաբազմազան մակարդակ և հասարակական դիրք ունեցող մարդիկ են։ Հուշերով հանդես են եկել, օրինակ, գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը,— և այն էլ մի քանի անգամ,— գրականագետ-բանասեր Գրիգոր Խալաթյանցը, նկարիչներ Գևորգ Բաշինջաղյանն ու Արշակ Ջեբեջյանը, մանկագիր ու մանկական ամսագրերի խմբագիր Տիգրան Նազարյանը։ Արժեքավոր հուշագրություններ են թողել ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին և հայ նոր գրականության դասական Ավետիք Իսահակյանը։ Եթե սրան ավելացնենք, որ զանազան առիթներով հանդես են եկել նաև այնպիսի անձինք, որոնք գրեթե ոչ մի հետք չեն թողել մեր մշակույթի պատմության մեջ (Մ. Զալյան, Արբ. Տեր-Հակոբյան), ապա պարզ կդառնա, թե ինչպիսի՝ իրարից միանգամայն տարբեր դիրքի ու դրության մարդիկ էին նահապետի մասին գրում։

Այս ամենը, ասես, գալիս էին ամբողջացնելու Վենետիկի Մխիթարյան միաբանության հուշագրողները՝ Ալիշանի ավագ և կրտսեր ընկերները (Սիմոն Երեմյան, Հովհաննես Թորոսյան, Մեսրոպ Ճանաշյան, Թադեոս Թովմասյան և ուրիշներ)։ Մի հանգամանք, որ ուշագրավ է այն պատճառով, որ Մխիթարյանները, եթե փոքր-ինչ խիստ արտահայտվելու լինենք, հուշագրելու սովորություն չունեն։ Ճիշտն անենք, որ մինչև Ալիշանի հանդես գալը միաբանությունն արդեն 150 տարվա պատմություն ուներ, տվել էր Միքայել Չամչյանի, Եղիա Թովմասյանի, Հարությունի և Մկրտիչ Ավգերյանների, Արսեն Բագրատունու նման դեմքեր, որոնց գործը երկու խոսքով չի սահմանափակվում։ Եվ դրանով հանդերձ այդ անձանցից և ոչ մեկի մասին ոչ մի հուշ կամ հրատարակված գրավոր խոսք չկա։ Հասկանալու համար, թե ինչու այդ կարգը պետք է խախտվեր և խախտվեց միայն ու բացառապես Ալիշանի կապակցությամբ, պետք է նախ նկատի ունենալ, որ իր վիթխարի գործով՝ շուրջ հիսուն հատորի հասնող և ամենաղանազան բնույթ ու բովանդակություն ունեցող իր աշխատություններով (բանաստեղծություն, արձակ, գեղարվեստական թարգմանություն, պատմա-աշխարհագրական ուսումնասիրություններ, պատմիչների քննական տեքստերի հրատարակություն, գիտական բուսաբանություն, հայկական հեթանոսության ու նրա հավատալիքների քննական վերլուծություն և այլն), Ալիշանը կարողացավ վճռականորեն բարձրանալ այն մարդկանցից ու միջավայրից, որտեղ ապրում ու գործում էր։ Մխիթարյան ոչ նախորդ և ոչ էլ հաջորդ սերունդների մեջ, այս առումով, Ալիշանին հավասար ու համարժեք մեծություն չենք գտնում։

Ապա՝ Մխիթարյան միաբանության ամբողջ պատմության մեջ Ալիշանին հավասարազոր մեծություն չենք գտնում նաև հասարակական-քաղաքական այն մեծ դերի կատարման իմաստով, որը վերապահված էր նրան։ Հայ ժողովրդի ազգային զարթոնքի և համընդհանուր վերելքի տարիներ էին դրանք, երբ հյուսիսից հաղթականորեն առաջ շարժվող ռուսական բանակները հաստատ հույսեր էին ներշնչում բազմաչարչար հայությունը, որ մոտենում է ազատագրության բաղձալի րոպեն։ Ուրեմն հարկավոր էր ոտքի հանել հայությունը, հրաթափ խոսքով ոգևորել նրան։ Հարկավոր էր պետական քննության առարկա դարձնել հայ ժողովրդի պատմությունը՝ հանուր-հանուրին և առաջին հերթին հենց իրեն՝ ժողովրդին ցույց տալու համար, որ նա իր իրավացի տեղն ունի աշխարհում։ Անհրաժեշտ էր վերջապես այդ նույն նպատակասլաց քննության առնել ներկիր Հայաստանի գիտական աշխարհագրությունը, ապացուցելու համար, որ Բաբելոնին, Նինվեին, Ասորեստանին հարևանություն արած ժողովուրդը այսօր էլ պահպանում է բազում հուշարձաններ, որոնք նրա լուսե փառքի հին վկաներն են։ Ալիշանն այս բոլորն արեց և արեց հիացնող համառությամբ։ Այս բոլորից հետո հասկանալի է, թե ինչու Ալիշանը դարձավ Մխիթարյան միաբանության անգամներից ամենահեղինակավորը, և թե ինչու Մխիթարյան հեղինակները, խախտելով ընդունված կարգը, մեկից ավելի անգամ հանդես եկան նրա մասին։ Իսկ այս հանգամանքը մեզ համար կարևոր է այն պատճառով, որ նրանց հաղորդած տվյալները հնարավորություն են բնձեռում բացահայտելու նահապետի կյանքի հետ կապվող այնպիսի մանրամասներ, որոնք այլ հուշագրողների մոտ հազիվ թե հնարավոր լինեն գտնել։ Բազմաթիվ օրինակներից հիշատակենք մեկը։ 1902 թվականին Մկրտիչ Պատուրյանը Վենետիկում հրատարակում է «Զարդանկարք ավետարանի Մլքե Թագուհուն աշխատություն-ալբոմը, որը ինչպես առաջաբանում գրում է հրատարակիչը, լույս է տեսել «Վասն ըղձից Հ. Ղ. Ալիշանի»։ Եվ այս «Վասն ըղձից Հ. Ղ. Ալիշանի» ոչինչ չասող արտահայտությունը այդպես էլ կմնար անհասկանալի, եթե աշխարհ չգար Ս. Երեմյանի հուշագրությունն Ալիշանի մասին, որտեղ ոչ միայն բացահայտվում է վերևում ասված նախադասության ենթատեքստը, այլև պարզվում է, թե ըստ հիդինեանի նոթերական մատնացույցման ինչպիսին պիտի լիներ Մլքեի ավետարանի զարդանկարներին նվիրված աշխատությունը և ինչպես էր կամենում իր մտահղացումն իրագործել նահապետը։

Նման օրինակներ կարելի է էլի բերել, իսկ այս ամենը գալիս են մի անգամ ևս ապացուցելու, թե ինչպիսի կարևոր դեր կարող է կատարել հուշագրությունների ներկա հատորը Ալիշանին ավելի լավ ճանաչելու համար։

ՍՈՒՐԵՆ ՇԱՀԿՅԱՆ

ՀԱՐՈ

ՆԱՄԱԿ ՎԵՆԵՏԻԿԻՑ

Հռոմից ձեզ գրած երկրորդ և վերջին նամակիս մեջ ասում էի, թե վաղը առավոտ ուղևորվում եմ Վենետիկ։ Առայժմ թողնում եմ մի կողմ Վենետիկ՝ տարօրինակ և յուր տեղագրական դրությամբ աշխարհիս երեսին իր տեսակի մեջ եզակի քաղաքի ինձ վրա արած այլևայլ տպավորությունները, որոնք, անշուշտ, իրանց վայելուչ և առավելապես հայկական ուշադրությանը միշտ արժանի տեղն ունեն և, հուսով եմ, կունենան էլ։ Այս նամակով ես ուզում եմ մի քանի հետաքրքիր տեղեկություններ հաղորդել ձեզ այստեղից ևս՝ դարձյալ հայերիս վերաբերյալ, որ նույն է թե Մխիթարյան միաբանության։

Նախ՝ սկսենք բոլոր հայերից սիրված և շատ օտարազգիներից պատվված հայ բանաստեղծ և միանգամայն պատմաբան-աշխարհագիր հայր Ղևոնդ Ալիշանից, որ հայր Գարեգին Զարբհանալյան[1] ուսումնասեր և վաստակավոր վարդապետի և Մխիթարյան ուխտի մյուս մի քանի հայերի հետ միասին, մինչև այսօր էլ կարողացել է պահպանել և գուցե տակավին պահպանելու է Վենետիկի Սուրբ Ղազարի վանքի միաբանության նախկին հռչակավոր անունը։ Ասում եմ նախկին, որովհետև ո՞վ չգիտե, որ երբ արևելյան անդուր ու բարբարոս բռնակալները հալածելով դուրս քշեցին մեր հայոց լեզուն, գիրն ու գրականությունը, մի խոսքով հայկական մտավոր կյանքը, Մխիթարյան միաբանության հիմնադիրն էլ, տարագրյալ և աշխարհիս չորս կողմը թափառող մյուս հայերի պես, մի ապահով և խաղաղ տեղ փնտրելով, ապաստան էր գտնում Ադրիատիկ ծովի հյուսիս-արևմտյան ծայրի կղզիներից մեկի վրա։ Այո՛, Մխիթարյան միաբանությունը իր ուխտի բոլոր ճյուղերով ու բաժանումներով, որոնք

ասես միմյանց հետ մրցելու և իրարու գերազանցելու համար անջատվել և հաստատվել էին եվրոպական զանազան քաղաքներում[2], հասել են, ասում եմ, այդ ժամանակ արդեն իր հեռակետին. հեռակետ, որին մի անգամ հասնողը բնական և անդառնալի բախտի բերմամբ, կամաց-կամաց պիտի վար իջներ, տեղ տալով իրանից հետո եկող, թեև անզոր, բայց կենսական ոգի, գործարանավոր կազմված ներկայացնող երևույթներին...

Բայց չհեռանանք հայր Ալիշանից, որը,— ինչպես ասացի,— մյուս մի քանի վաստակավոր վարդապետների հետ միասին, ինչ որ էլ պատահի, այնուամենայնիվ, իր հեղինակած նշանավոր գործերով տակավին փառավորապես կրում է իր կրծքի վրա Մխիթարյան միաբանության խաչը, այսինքն՝ Սուրբ Ղազարի վանքի նախկին հռչակավոր անվան արժանի համբավը։ Եվ այսօր, Մխիթարյան ուխտի վրա խոսողը, երբ թվելով հիշում է հ. հ. չամչյանների, ինճիճյանների, ավգերյանների, հյուրմյուզյանների աշխատությունները, և Արսեն Բագրատունու, Գաբրիել Այվազովսկու և ուխտի մյուս հայրերի մատուցած ծառայությունները հայ գրականությանը, ոչ թե չէ մոռանում, այլ ամենայն իրավամբ ավելացնում է և հ. Ալիշանի անունը։

Թե որչափ սխալվել էր պարոն Ալեքսանդր Երիցյանը, Շիրակի հորինողին կարծելով զառամյալ մի ծերունի և հետևաբար անկարող երկար ճանապարհորդության, այդ ես անձամբ ստուգեցի, երբ տեսա «Հուշիկք հայրենյաց հայոցի» հեղինակի, այո, ծեր անձնավորության մեջ մի առույգանձն և ջղապինդ բարձրահասակ մարդ, որ անկասկած պարոն Երիցյանի և ինձ նման քայլողներին հեշտությամբ կարող է միշտ առաջը կտրել ման գալու մեջ, եթե չասեմ ուրիշ ավելի դժվարագործ բաներում։ Եվ ինչպես իրանից լսեցի, երբ Թիֆլիսում մտադրություն կար (կարծեմ անցյալ տարի) ուսումնասիրական մի արշավ անելու Ղարաբաղի գավառում, իզուր առարկել էին, թե հեռավորության պատճառով չէ կարող մասնակցել այդ արշավին ծերունի Ալիշանը։ Ընդհակառակն, որքան ես հասկացա և եզրակացրի նորա խոսքերից, ուրախությամբ կընդուներ նա այդ ուսումնասեր հրա-

վերը մեր քաղաքի հանձնաժողովի կողմից[3]։ Եվ իրավ, մի՞թե մի առանձին գոհությամբ և հայասեր հաճությամբ չեն շտապել ընդունելու այդպիսի հրավերները դեպի հայոց հայրենիքը նոքա, որոնք մինչև այսօր անտես այդ երկրին, օտարության մեջ, մտքի աչքով դիտելով հայության ծննդավայրը, ոչ թե միայն նկարագրել, այլև ազգասեր հոգով երգել են նորա սրբազան տեղերն ու դաշտերը, նորա երբեմն հոյակապ քաղաքներն ու անուշահամ ջրերը։ «Հրազդան, գետակդ իմ հայրենի» բացականչում է մի տեղ իր բանաստեղծության մեջ Ալիշան հայրը, որ Շիրակ գավառը չտեսած, իր անդուլ աշխատասիրությամբ «Շիրակը» հորինելուց հետո, այսօր գրաղված է հեղինակներով մի նոր տեսակ «Շիրակ» մեջ ընծայելու, կարծեմ Կիլիկիայի վերաբերյալ[4]։ Անշուշտ, դուք էլ (և ես էլ իհարկե), մի առանձին անհամբեր հետաքրքրությամբ սիրով կկարդաք այս նոր աշխատությունը, որ դեռևս լույս չէ տեսել և կտեսնենք ու կասենք անաչառապես ճշմարիտը, թե արդյոք ի՞նչ եղանակով և ո՞ր տեսակետից է խոսում ազգասեր հեղինակը այն երկրի վրա մանավանդ, ուր մի ժամանակ ազգ քայքայող կաթոլիկ վարդապետությունը, սկսելով յուր նախաձեռնությունը, ուզեց տարածել հռոմեական՝ օտարազգի դավանությունը, ամբողջ Հայաստանում և բոլոր հայերի մեջ։ Ինչևէ՝ ամեն մարդ ազատ է, անշուշտ, յուր հայացքն ու տեսակետը ունենալ այլևայլ խնդիրների վրա, առավելապես զարգացած հայ հասարակության մեջ, ուր, համարձակվում եմ ասել, ավելի քան թե համբերող ու ներողամիտ է յուրաքանչյուր անհատի կրոնական, դավանական և չգիտեմ ինչ «ական» համոզումների ու կարծիքների։ Ահավասիկ ամեն մի խղճմտավոր, լրջամիտ և ճշմարիտ հայրենասեր հայ մարդու բաղձանքը... բայց... ինչևէ, ասում եմ։ Եվ ով որ «Շիրակ» դեղեցիկ և օգտակար գիրքը կարդալով գոհացել է, թող շտապե դիմել Վենետիկ, «Կիլիկիան» խնդրելու։

Հայր Ալիշանն էր, որ հյուրասիրելով առաջնորդեց ինձ իրանց վանքի ամեն կողմերը և սիրով ցույց տվեց այն ամենը, ինչ որ տեսա, և հույս ունեմ Ձեզ հետ խոսելով, նորից հիշելու և տեսնելու։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

ՕՐՎԱՆ ԿՅԱՆՔԸ

Եվ այդ առաջին դառնությունը չէ, զոր կրնենան Մխիթարյանք[1], անփոփոխելի է Հռոմ, ինչպես անփոփոխելի են ազգության թշնամիներն։ Կհիշեմ դեպք մը, որ միշտ տխուր հիշատակ մը թողած է սրտիս մեջ. 1868 թվականին, երբ Վենետիկ, Ռափայելյան վարժարանն աշակերտ էի, ամռան մի երեկո մեր նքանչելի պարտիզին մեջ կզրոսնեինք, մեկ մոտ եկավ մեր տեսուչն, հ. Ղևոնդ վ. Ալիշան. կճեմեինք, կխոսակցեինք, երկու եկեղեցականք կան, որոց դեմքը նայելով երբեք հայ մը չկրնար հագենալ՝ Խրիմյան և Ալիշան։ Մեր պատանեկության օրերու ամենեն մեծ հրճվանքն էր մեր տեսուչն, որ ոչ միայն մեծ հայրենասեր մը է, մեծ միտք մը, այլ նաև մեծ սուրբ մը։ Այդ երեկո հ. Ղևոնդ վ. Ալիշանի դեմքին վրա արտաքո կարգի տրխրություն մը կար. չկրցավ դիմանալ, սիրտը բացավ մեզ. երկու-երեք ընկերներ էինք, կհիշե՞ն արդյոք։

Պոլիս Հասունյանց և Հակահասունյանց կռիվները[2] կային, և Հռոմ յուր խստություններն ի գործ կդներ ընդդեմ Վենետիկո Մխիթարյանց։ Պոլսեն հաղորդված էր ի Հռոմ, թե Հռոմա դեմ ապստամբներու պարագլուխները Ռափայելյան և Մուրատյան վարժարաններու աշակերտներն են։ Մխիթարյանք փոխանակ կրոնասեր աշակերտներ տալու ազգին, հայրենասեր աշակերտներ կուտային. ոճիր մը էր այս։ Եվ Հռոմ կհրամայեր Մխիթարյանց, որ այլևս իրենց աշակերտներուն ազգության և հայրենասիրության հորդորներ չտան[3]։

Կիսոցեր այս հրամանն Ալիշանի սիրտն. ի՞նչ մտածություններ պաշարեցին յուր միտքն։ Իսկ մենք թեթև ժպիտ մը ունեցանք։ Ապրիլ Ալիշանի հետ, ծծել անոր հետ միևնույն օդը և անտարբեր հա՞յ լինիլ. այդ հնթադրելը պարզապես

ախմարություն էր։ Հասունն ալ անցավ, Պիոսն ալ անցավ, շատերն ալ անցան և Հ. Ալիշան կմնա միշտ հայության համար։ Եվ շատ հեռու չէ այն օր, 1890-ին, ուր պիտի կարենանք, հուսանք և մաղթենք, տոնել հայության այդ սիրելի անվան հիսնամյակի հոբելյանն։

Եվ այն օրին հետո, պիտի դա տիեզերաց մեջ աննման հոբելյանն, որուն պետք է այժմեն պատրաստվիլ։ Այս տարի օրացույցը կդնե 3993 թվականն, ուրեմն դեռ յոթը տարի կա. բայց հայր Ալիշանի և հայության դիտնականներուն անկ է ճշտել այն տարին, որում նավասարդի առաջին օրը պիտի տոնենք մեր ՁՈՐՍ ՀԱԶԱՐ ԱՄՅԱԿԸ։

...Ազգատյացներու ոխերիմ թշնամի էր։ Նշանարանն էր, ԿՐՈՆ ԵՎ ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ։ Զայսոսիկ իրարմե չէր կրնար բաժնել։ Ըսավ օր մը. «Զգիտեմ, թե ազատյաց ոք ո՛րպես կրնա մտնել յարքայութիւն երկնից»։ Մինչ ի Մուրատյան վարժարան հ. Ղևոնդ անդադար կաշխատեր յուր աշխարհագրական և պատմական երկասիրությանց։ Կարծես հրաժեշտ տված էր բանաստեղծության, քանզի այն երեք տարիներու մեջ ոչ ոք տեսավ նորա բանաստեղծական երկ մը հորինելն։ Օտարք և ազգայինք կուզային զինք տեսնել։ Պարզությամբ և մեծ վայելչությամբ կընդուներ այցելուներն, որոց խորին պատկառանք կազդեր։ Էր բարձրահասակ, վատույժ, լայն ճակատ, սև մորուք, անպաճուճ, բայց մաքուր, անպատմելի քաղցրահայաց աչկունք, որոց բոցեր կցոլային երբեմն, յուր սրտին սիրելի նյութոց վրա ճառելու ժամանակ։ Յուր սրբակրոն վարքով և անկեղծ բարեպաշտությամբ օրինակ էր յուր կրոնավոր ընկերաց, որք արդ կգուրգուրան նորա վրա և կպանծան ի նա։

Իսկ հիմա՞. ալևոր ծերունի մ'է։ Շատ օտարականներ և հայեր կերթան զնա տեսնելու՝ իբրև ուխտատեղի նորա սենեկին մեջ։ Գերապատիվ Ազարյան պատրիարք՝, ի Եվրոպա վերջին ուղևորությանն առթիվ Վենետիկ անցնելով, գընաց Ս. Ղազարու վանք և ի մասնավորի այցելեց հ. Ղևոնդի սենյակն, ողջունելու հայության հիանալի փառքն ու պարծանքն։ Հ. Ղևոնդ չէ կորուսեր յուր հոր հիշատակն, այն հոր, որ զինք ի մանկութենե անտի կսիրեր յուր ուսումնասիրության համար։ Պատին վրա, գրասեղանին մոտ, կախված է հորը կենդանագիրը՝ գունավոր, այն ժամանակվան զգեստով, մուշտակ, ԳԱԼՓԱՔ և այլն։ Ի մանկության, ուրիշ տղոց հակառակ, խաղերե խույս կուտա և հանապազ գիրքերով կպարապի եղեր։ Հայրն ալ ուրախությամբ քովը կնստեցներ «Ուսումնասեր զավակս» կոչելով զնա։ Հ. Ալիշան շատ կսիրե յուր աշակերտներն. ոչ զոր մոռցած է անոնցմե. ջամենն ալ որոշ կհիշե. անոնցմե ո՛վ ոք,— կամ ուրիշ որևէ անձ,— եթե թուղթ գրե, անմիջապես կպատասխանե։ 1862-ին Մուրատյան վարժարանի ուսումնավարտ աշակերտներուն (18 երիտասարդք) ընկերացավ մինչև ի Մարսիլիա։ Շոգենավ դրավ զանոնք. օրհնեց նավամատույցին վրայեն, մինչ նոքա գլուխնին բաց կհպեին իրեն։ Երբ նավը շարժել սկսավ, հայրն ալ օդին մեջ շարժեց յուր թաշկինակն և աշակերտք արտասվալից աչոք զոչեցին «Կեցցե՛ հայր Ղևոնդ», և Մարսիլիո նավահանգիստն առաջին անգամ զարմացմամբ կրկնեց այս հայկական բառերը։ Հայ ազգը չսիրող ավազակ մը, օր մը Մուրատյան վարժարանն եկավ ու խրոխտալով ըսավ հ. Ալիշանի, որ այդ փառավոր շենքը վաճառեն և իրենք բնակին ի գյուղ, պարզ գեղջուկ շենքի մը մեջ։ Փոխանակ պատասխանի, հ. Ղևոնդ կռնակը դարձուց ու գնաց։

Յուր արդի կյանքն է՝ մինչև կեսօր եկեղեցի, աղոթք, մտածություն հոգևոր և հանգիստ։ Կեսօրեն ետքը՝ մատավորական և գրական աշխատություն սենեկին մեջ։

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑ

Հ. ԱԼԻՇԱՆ ԵՎ ՅՈՒՐ ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին ամիսներս մեր մամուլը քանիցս խնդիր հարույց, թե երբ է լրանում հռչակավոր հայ քերթող և հնագետ հ. Ղեւոնդ վ. Ալիշանի հիսնամյա հոբելյանը և թե ինչպես պետք է կատարել այդ հանդեսը։ Արդարև, «Բազմավեպի» վերջին համարում մի ծանուցումն կա այդ առթիվ. բայց այդ, ըստ իս, իբրև պաշտոնական բացատրություն ընդունելու է. հայ հասարակությունը ունի կատարել յուր պարտականությունը՝ առանց այդ բացատրությանը միտ դնելու։ Այս օրերս, վերադառնալով Վենետիկից, ուր շատ անգամ այցելած եմ Ս. Ղազարու վանքը, և պատիվ ունեցած ի մոտո ճանաչել շնորհազարդ Նահապետին, թույլ կտամ ինձ մի քանի դիտողություններ և խորհրդածություններ հաղորդել ի դեպս վերը հիշած խնդրի, որ գուցե ավելորդ չհամարվին հայ բանասերների կողմից։

Նախ՝ հ. Ղեւոնդի անձնավորության մասին։ Բավական տարածված կարծիք է մեր մեջ հ. Ղեւոնդի մի թույլ և դողդոջուն զառամյալ ծերունի երևակայել, որ հագիվ յուր քայլերն է փոխում։ Կարծեմ Թիֆլիզի հնագիտական ժողովը (1881 թ.) ես, երբ մի քանի աղնվամիտ անձինք մտադիր էին հրավիրել հ. Ալիշանին Կովկաս, դույն իսկ երևակայալ զառամությունը ցավակցաբար արդելք դրեց նոցա զեղեցիկ դիտավորության։ Բայց որքա՜ն մեծ եղավ իմ զարմանքս, որպես և ուրախությունս, բոլորովին հակառակը տեսնել. չնայելով յուր 70-ամյա հասակին, հ. Ղեւոնդ այնպես ամրակազմ է և առողջ, ժիր և առույգ, որ շատ երիտասարդներ կնախանձեին նորան։ Հետևաբար, եթե մյուս անգամ ես հարց ծագի նորա ճանապարհորդության ի Հայս, կարծեմ որ նորա առողջության խնդիրը միանգամայն չէ կարող արգելարիթ համարվիլ, մանավանդ թե նպաստավոր։ Եվ այդպիսի մի ճանապարհորդություն մեր համակրելի մատենագրի համար ոչ միայն ցանկալի էր, այլ նաև անհրաժեշտ։ Գուցե սակավուց հայտնի է, որ հ. Ղեւոնդ յուր բոլոր եռկասիրությունները Հայաստանի մասին գրել է առանց երբեք այդ աշխարհը տեսնելու. ծովածիծաղ Վենետկի Ս. Ղազարում նստած՝ նա սլացել է մտքով և երևակայությամբ դեպի Հայաստան. նա ուսումնասիրել է այդ երկրի բնական և քաղաքական (հին ու նոր) աշխարհագրությունը այնպես մանրամասն և հիմնովին, որքան միայն հնար է. նա ստուգել է հին ու նոր պատմիչների տեղագրական ցուցումները. նա հավաքել է Հայաստանում երբեք գտնված բոլոր արձանագրությունները... և որքա՜ն ջերմ արցունքներ է թափել հայի անցած-գնացած օրերի, հայ ավերակների վրա։ Կրկնում եմ, որ հ. Ղեւոնդի ճանապարհորդությունը ի Հայս (գոնե ի Ռուսահայս, ուր ուղևորության ամեն հարմարություններ կան) անհրաժեշտ է թե՛ հասարակության համար, որ միջոց կունենար տեսնել յուր մեծավաստակ պատմագրին և յուր համակրությունն ու հարգանքը հայտնել (թո՛ղ որ հ. Ալիշան՝ իրեն հատուկ համեստությամբ միշտ խույս է տալիս հասարակական համակրալիր ցույցերից) և թե՛ իրեն՝ հ. Ալիշանի համար, որ այս եղանակով բազմաթիվ նոր նյութեր և տակավին անհայտ հիշատակարաններ կարող էր ձեռք բերել՝ շատ կարևոր յուր հնագիտական, պատմական և աշխարհագրական աշխատություններին։ Այս հանգամանքները նկատողության առնելով՝ պետք է հուսանք թե 1881 թվականին հ. Ալիշանին Թիֆլիզ հրավիրելու դիտավորություն ունեցող անձինք չեն դանդաղիլ վերստին կրկնելու իրանց սիրալիր հրավերը, որով մեծ ծառայություն մատուցած կլինեին հայ հասարակության։

Հետ այնուհետև՝ կարծեմ հետաքրքրական պետք է լինի մեր բանասերներին, թե ինչով է այժմ զբաղված հ. Ալիշան։ Յուր հնագիտական բազմաթիվ պարապմունքների շարքում նա պատրաստում է մոտ ամիսներս մամուլին հանձնել տասնյակ տարիներով աշխատած յուր գուցե ամենասիրելի երկը՝ «Այրարատ» նույն դիրքով, ձևով և ոճով, ինչպես «Սի-

սուանը»։ Մե՞ծ գործ է «Սիսուանը»՝ մի երկ, որ հեղինակի՝ նաև առանց նախկին աշխատությունների կարող էր անմոռաց անուն թողնել. բայց թող ներվի մեզ ենթադրել, որ «Այրարատ» ոչ միայն կհավասարվի «Սիսուանին», այլ կգերազանցի նորա թե՛ ստվարությամբ և թե, մանավանդ, բովանդակությամբ. որովհետև այս ԲՈՒՆ հայոց աշխարհն է, լի այնպիսի հայրենի հիշատակներով և հիշատակարաններով, որք ավելի մոտ են ազգի սրտին և որոց նմանը սակավ կգտնվի Կիլիկիա...

Այս այսպես լինելով՝ շատ ցավալի է լսել, որ «Այրարատը» փառավոր և ԲԱԶՄԱՆԿԱՐ հրատարակելու համար մի քանի դժվարություններ կան։ Այստեղ խոսքս գրքի միայն նկարների ու պատկերների վրա է, որք նորա զարդը պետք է կազմեն և որոց մասին, ինչպես տեղեկացա, պակասություն է զգացվում։ Ուստի բաղձալի էր՝ քանի դեռ միջոց կա, օգնության հասնել և կարողության չափ միջոց տալ պատկառելի հեղինակին «Այրարատը» յուր ուզածի չափ շքեղ և լիակատար անել և այնպես ընծայել յուր գործը ազգին։

Ակամա մի դեպք եմ մտաբերում անգլիացոց կյանքից։ Երբ որ հռչակավոր պատմագիր Մակոլեյ[2] մտադիր լինելով Անգլիայի պատմությունը գրել, հրավեր կարդաց հասարակությանը, որևէ հին վավերագիր, դիվանական գրություններ կամ այլ պատմական հիշատակարաններ գեթ արտագրելու համար իրան ուղարկել,— ամեն կողմից տեղացին յուր խնդրած նյութերից այնպիսի առատությամբ, որ նա բնավ չէր սպասում։ Ահա գեղեցիկ միջոց այն ամեն անձանց, որք կցանկանային իրանց հարգանքը ավելի շոշափելի կերպով մատուցանել հայ պատմագրին։

Այստեղ գնում եմ ես մի ցուցակ այդպիսի խնդրելի նյութոց՝ որ հաջողեցավ ինձ ստանալ նույնիսկ հ. Ալիշանից և որի մի մասը ամենայն սիրով հանձն առա՝ որքան հնար է ձեռք բերել և իրան հասցնել։ Հարկ եմ համարում կրկին շեշտել, որ հեղինակին հարկավոր են ցուցակում նշված լեռների, լճերի, գյուղերի, վանքերի, ավերակների որպես և զանազան հնությունների ու արձանագրությունների ան-

պատճառ ԼՈՒՍԱՆԿԱՐ պատկերները։ Անտես առնելու չէ նույնպես և հնագույն հայ գրչագիրների մեջ պատահած ընտիր մանրանկարներն և մանավանդ պատմական անձանց պատկերները (նույնպես լուսանկար), չմոռանալով մեջ բերել գրչագրի հիշատակարանը և արտաքին նկարագիրը։

Այրարատ աշխարհը հնում 20 գավառ ուներ, որոնց մեծագույն մասը այժմյան Երևանի նահանգն է ընկնում, մասամբ ևս Կարսի նահանգը, հին Բայազիդի և Հասան-Ղալայի կողմերը։ Հ. Ալիշանի «Այրարատը» պետք է պարունակե 19 գավառների հնագիտական, աշխարհագրական և պատմական նկարագիրը։ Քանի՞ որդը՝ «Շիրակը» նա արդեն հրատարակել է առանձին գրքով։ Բայց հավանական է, որ եթե դրամական կողմանե արգելք չլինի, արդո հեղինակը նաև «Այրարատին» կցե «Շիրակը», երկրորդ տպագրությամբ, բարեփոխված և լրացրած[3]։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՎԵՆԵՏԻԱ 1870 ԹՎԻՆ

(Հիշողություններ)

— Mestre!...կանչեց կոնդուկտորը, երբ Տրիեստի վրայով Վիեննայից եկող երկաթուղային գնացքը կանգնեց այն կայարանի առջև, որը Իտալիայի ցամաքի վերջին կայարանն է։

Մենք դուրս եկանք կայարանի պլատֆորմը. այդտեղից արդեն Ադրիական ծովն էր երևում...

Մի դյուցազական տեսարան էր բացվում մեր աչքերին։ Մեստրե կայարանը ծովի ափումն էր գտնվում, ապա սկսվում էր ծովը, իսկ հեռու-հեռու, ծովի մեջտեղ, երևում էր մի քաղաքի պես, ծովի մեջ ընկղմված՝ մի ամբողջ քաղաք, իր պալատների կտուրներով, իր եկեղեցիների տակեզոծ գմբեթներով...

Վենետիկն կղզիների վրա է կառուցված. Իտալիայի ցամաքի վերջին կայարանը, ծովի մեջտեղ գտնվող Վենետիկ քաղաքի հետ՝ մի նեղ թումբով է միացրած, որի վրայով անցնում է երկաթուղու գնացքը։

Գնացքը շարժվեց. մի տարօրինակ տպավորություն էր գործում ճանապարհորդի վրա երկաթուղու վագոնում նստած ժամանակ,— ուրիշ բան չտեսնել վագոնի երկու կողմի պատուհաններից, եթե ոչ լայնատարած ծովը։ Վագոնի պատուհանից չէին երևում թումբի ափերը, և այնպես էր թվում, իբր թե երկաթուղու արագընթաց գնացքը սլանում է ուղղակի ջրի վրայով...

Կես ժամից հետո մենք Վենետիկումն էինք։ Գնացքը մտնում է երկաթուղային ծածկված կայարանը։ Ապա ճանապարհորդները դուրս են գալիս վագոններից, ուղղում են իրանց քայլերը դեպի կայարանի մուտքը,— և ի՞նչ է բացվում նրանց աչքերին... Փոխանակ փողոցի, հրապարակի, որտեղ կանգնած լինեին ֆաետոններ,— ձեր առջև դարձյալ ջուր է, ծովային լայն կանալ։ Դուք փչում եք սանդուղքներից և

մտնում եք նավակներից (գոնդոլներից) մեկը և ծովային կանալներով հասնում եք ձեր ուզած հյուրանոցը...

Ամբողջ Վենետիկն կառուցված է կղզիների վրա, որոնք իրարից ծովային կանալներով են բաժանված։

Ջուր և քարյա պալատներ,— ուրիշ ոչինչ չէ երևում։ Բոլոր փողոցները ջրանցքներ են, միայն տների երկարությամբ շինված են նեղ տրոտուարներ. կանալների երկու ափերի տրոտուարները իրար հետ կապված են կամարաձև մեծ և փոքր բազմաթիվ կամուրջներով։ Այսպիսով, թեև Վենետիկում փողոցների տեղը բռնում են ջրանցքներ, բայց և ոտով կարելի է ամբողջ քաղաքով անցնել, փողոցի մի ծայրից մյուս ծայրը ոլոր-մոլոր փոքրիկ և նեղ փողոցներով, տրոտուարներով և կամուրջներով։

Ամբողջ Վենետիկում մի հատ մեծ հրապարակ կա միայն, այն է Սան-Մարկոյի հրապարակը։ Սկզբից քաղաքը սաստիկ հետաքրքրում է ճանապարհորդին իր ինքնուրույն առանձնահատկություններով, բայց շուտով դուք սկսում եք ձանձրանալ այդ քաղաքի միակերպությունից, չտեսնելով այդ քաղաքում ոչ բուսականություն, ոչ կառքեր, և ոչ ձիեր... Ամբողջ քաղաքում մի հատ փոքրիկ այգի կա միայն, «Gardino publico» հասարակական այգին։

27029

1563

▲

Ես եկել էի Վենետիկ հատկապես այն նպատակով, որ պարապեմ հայերեն լեզվով Մխիթարյանների մոտ։ Նույն տարվա ամբողջ ձմեռը Վիեննայում անցկացրի, որտեղ համ քաղաքատնտեսական դասախոսություններ էի լսում համալսարանում, Լորենց Շտեյնի ու Շեֆլեի մոտ՝, համ էլ Մխիթարյանների մոտ հայերենով էի պարապում։

Վիեննայի Մխիթարյաններին ես չհավանեցի։ Նրանք սարսափելի նախապաշարված, հնապաշտ և տգետ մարդիկ երևեցան ինձ և բոլորովին հիշեցուցին ինձ մեր տգետ հոգևորականներին։ Երբ առաջին անգամ գնացի Mechitaristen-gasse փողոցում գտնվող նրանց հիմնարկությունը և մեծ մուրճով բակերի ահագին դուռը (զանգակ չկար դռան մոտ), աբեղա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՌԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА
Общественная Библиотека

ներից մեկը զգուշությամբ բացեց դուռը և զարմացած ու կարծես վախեցած նայեց ինձ վրա... Ես անմիջապես սկսեցի խոսել հայերեն և հարցրի թե կարո՞ղ եմ արդյոք տեսնել աբբահորը...

— Jch verstehe nicht (ես չեմ հասկանում) եղավ պատասխանը գերմաներեն լեզվով։

Բանից երևաց, որ աբեղան գերմանացի էր։ Մխիթարյանների միաբանությունը ինչպես Վիեննայում, այնպես էլ Վենեցիայում բաղկացած է երկու տեսակ աբեղաներից. հայրերից և եղբայրներից։ Առաջինները հայ պետք է լինեն ծնունդ, իսկ վերջինները, որոնք ուխտի անդամները լինելով հանդերձ, երբեք ուսումնական, վարդապետի աստիճան չեն ստանում և վանքում այլևայլ ծանր պաշտոններ են կատարում,— կարող են լինել և այլազգիներ[2]։

Ճարահատված սկսեցի խոսել աբեղայի հետ գերմաներեն լեզվով։ Նա, դուռը ետևից փակելով և ինձ փողոցում մենակ թողնելով, գնաց օրապահ վարդապետին իմ գալու մասին իմաց տալու համար, սա էլ՝ ուրիշին, երևի ավելի մեծին և այլն և այլն, մինչև որ հայտնեցին աբբահորը, թե մի օտարական ուզում է տեսնել իրան... Եվ ես այդ ամբողջ ժամանակ փակած դռան մոտ պետք է կանգնեի ու սպասեի...

Վերջապես, բարեհաճեցին ինձ թույլ տալ կաթոլիկների այդ միջնադարյան արքավայրը մտնելու։ Դուռը բացվեց, և այս անգամ մի հայ աբեղա խնդրեց ինձ ներս մտնելու։

Անվերջանալի կորիդորներով անցնելով և ոչ ոքի չհանդիպելով (երևի բոլորն էլ խուցերն էին մտել), վերջապես ես իմ ուղեցույցիս հետ մտանք աբբահոր խուցը։ Սա ընդարձակ և բարձր տնյակ էր, պարզ և անշուք։

Ես ուղղակի ասեցի, թե ինչ էր իմ նպատակը. ես ուզում էի հայերեն լեզվի դասեր առնել և խնդրում էի, որ աբբահայրը վարժապետներից մինին նշանակեր ինձ ուսուցիչ։

— Հրամանքդ, ո՞վ եք, ո՞րտեղացի եք,— հարցրեց ինձ ծերունի աբբահայր Վարդան եպիսկոպոսը[3]։

Ես ասեցի։ Մի տեսակ սարսափ նկարվեց թե՛ աբբահոր և թե՛ երիտասարդ վարդապետի երեսին, երբ հայտնվեց, որ ես

կաթոլիկ չեմ, այլ լուսավորչական եմ... Խեղճերը չգիտեին ինչ պատասխան տան... Հայ-լուսավորչականին պետք է ընդունեին աշակերտ իրենց կաթոլիկ վանքում...

Մի քանի բոպեների լռությունից հետո աբբաղանը հայտնեց, թե կառաջարկի իմ խնդիրքը միաբանությանը և խորհուրդ անելուց հետո «ինչ որ հարկն է» կանոնինեն ու չորս օրից հետո ինձ կտեղեկացնեն։

Ապա փոխելով խոսակցության նյութը, եպիսկոպոսը հարցրեց ինձ, թե ո՞վ է հայրս։ Ես անմիջապես պատասխանեցի, թե ժենեբալ է, մտածելով, որ այդ տեսակ մարդկանց համար ոչինչ բան այնքան մեծ նշանակություն չունի, որքան բարձր պաշտոններ և տիտղոսներ։ Ժենեբալի որդի լինելս գուցե կօգներ ինձ վանքում աշակերտ ընդունված լինելու...

— Ո՞րտեղ եք ուսում առել,— շարունակեց ծերունի եպիսկոպոսը։

— Հեյդելբերգում, սրբազան,— պատասխանեցի ես։

— Հեյդելբերգ, Հեյդելբերգ,— կրկնեց նա մի քանի անգամ։

Ես կարծելով, թե նա չի հիշում որտեղ է գտնվում Հեյդելբերգ քաղաքը, ավելացրի, թե Բադենի դքսության մեջ է։

— Ի՞նչ առարկա եք սովորել,— դարձյալ շարունակում էր հարցուփորձ անել ինձ եպիսկոպոսը։

— Քաղաքական տնտեսություն,— ասեցի ես։

Նա զարմացած նայեց վրաս. պարզ էր, որ ծերունին չգիտեր, թե ինչ բան է քաղաքական տնտեսությունը։ Կարծելով, որ Վիեննայի պես գերմանական քաղաքում ապրելով նա ավելի կհասկանա գիտության իմ ճյուղի եվրոպական անունը, ես անմիջապես ավելացրի «National-Economie, Economie... politique»...

Ծերունին շարունակում էր զարմացած նայել վրաս և, վերջը մի հառաչանք արձակելով, ավելացրեց.

— Է՜հ... ի՞նչ ասես գիտություններ կան այժմս... Թիբլոմասի կըսեն, բոլիթիք կըսեն, էգոնոմի կըսեն... ես ինչ գիտեմ... Գիտությունները կավելնան մարդկության մեջ, սակայն բարոյականությունը հետզհետե կընկնի...

Այդ խորամիտ, միջնադարյան փիլիսոփայական անտեղի քարոզը վերջ տվեց մեր խոսակցության... Մեր տեսակցու-

թյունը վերջացած համարելով, ես «հրաժարական» ուղի» և գնացի տուն, սպասելով թե ինչ պատասխան պիտի տան ինձ սուրբ հայրերը չորս օրից հետո։

Չորս օրից հետո ինձ պատասխանեցին, որ ընդունում են առաջարկությունս, կնշանակեն ինձ մի վարժապետ ուսումնական աբեղաներից մինին, կառնեն ինձանից յուրաքանչյուր դասից երկու գուլդեն, և ես կարող եմ սկսել դասերիս առնելը։

Եվ ահա ես սկսեցի հաճախել վանքը շաբաթը չորս անգամ։ Իմ վարժապետս մի երիտասարդ լեհաստանցի (գալիցիացի) հայ էր, որի ազգանունը այժմս չեմ հիշում։

Այդ ժամանակ եկավ Վիեննա և Սեդրակ Մանդինյան[4]։ Նա որպես Սանասարյանցի որդեգիր եկել էր Սանասարյանցի և Եզովի[5] հանձնարարականներով։ Նրան էլ ընդունեցին Մխիթարյանները, միայն նրանից կարծեմ մեկ գուլդեն կամ 1½ գուլդեն էին առնում դասից, որովհետև «նա բարերարի մը հաշվով կուսաներ», այնինչ ես «ժեներալի մը որդի էի»...

Մանդինյանին էլ մի վարժապետ նշանակեցին։ Մենք երկուսով շատ դժգոհ էինք մեր վարժապետներից։ Միայն ես հարմարվում էի, կամ ավելի լավ է ասել՝ ինքս աշխատում էի իմ դասերին ուղղություն տալ, բացատրելով վարժապետիս, թե հասակ առած, համալսարանում ավարտած, 24 տարեկան մարդու հետ պետք է բոլորովին ուրիշ կերպ պարապել, քան թե մի մանուկի հետ։

Իսկ Մանդինյան այն աստիճան զայրացած էր հասակ առած մարդկանց հետ պարապելու ուսումնական սուրբ հայրերի անընդունակությունից, որ շաբաթ չէր անցնում, որ նա չգնար եպիսկոպոսի մոտ ու չգանգատվեր իր վարժապետից, խնդրելով, որ մի ուրիշ վարժապետ նշանակեն։ Այսպիսով, նա մի ամեռվա ընթացքում մի քանի վարժապետներ փոխեց և դարձյալ դժգոհ էր։

Ամեռվա վերջը ես հիվանդացա։ Թիֆլիսեցի բժիշկ Մարկոզով այդ ժամանակ Վիեննայումն էր։ Նա պարապում էր «Allgemeines Krankenhaus» նշանավոր հիվանդանոցում։ Նա քննեց կուրծքս և ինքն տարավ ինձ աշխարհահռչակ ծերունի Օպոլցեր բժշկապետի մոտ, որպեսզի սա էլ քննի կուրծքս։ Օպոլցեր հրամայեց ինձ անմիջապես թողնել Վիեննա և գնալ հարավային երկիր։

Ես վճռեցի ուղևորվել Վենեցիա, որպեսզի մի կողմից կարողանամ կազդուրել առողջությունս, որը խախտված էր նախընթաց տարվա համալսարանական պարապմունքներից, իսկ մյուս կողմից կարողանամ շարունակել հայերենով պարապել։

Այսպիսով Վիեննա թողնելով, ես տեղափոխվեցի Վենեցիա։

▲

Ես Վենեցիա արդեն ճանաչում էի. մի երկու երեք տարի սրանից առաջ ես այցելել էի այդ քաղաքը, մնալով այնտեղ մի երկու ամիս...

Անցել էր մի քանի օր իմ Վենեցիա գալուց հետո. ես սենյակ էի վարձել Սան-Մարկո հրապարակից ոչ հեռու և բուն վենեցիացու պես օրվա մեծ մասը անց էի կացնում բաց օդում, հրապարակի կաֆեներից մինի առջև նստած, լրագիր կարդալով և ագահությամբ ներշնչելով ծովային մեղմ և առողջարար օդը։

Վերջապես ժամանակն անցնում էր, պետք է սկսեի պարապմունքներս։ Եվ ահա մի գեղեցիկ առավոտ վարձում եմ Piazzetta ասված ծովեզրյա հրապարակից ոչ հեռու, ծովի ալիքների վրա ճոճվող նավակներից մին և ճանապարհ եմ ընկնում դեպի San-Lazaro կղզին, Մխիթարյանների միաբանության վանքը։

Նավավարս թիավարելով անվանում էր ինձ այն բոլոր կղզիները, որոնց մոտով անցնում էր մեր նավակը... Ահա San-Servolo կղզին, որի վրա գտնվում է խելագարների համար մեծ հիվանդանոցը, ահա այգիներով ծածկված Լիդո կղզին, ահա վերջապես, կանաչագարդ San Lazaro կղզին, որի բոլոր շինությունները կարմիր աղյուսներից են շինված...

Նավավարս ինձ հետ անդադար խոսելով և ամեն բան բացատրելով, առիթ բաց չթողեց օրինավոր կերպով հայհոյելու հոգևորականներին։ Յոթանասունական թվականներում սաստիկ հակակղերական ոգի էր տիրում ամբողջ Իտալիայում.

ստորին ամբոխի և հոգևորականների մեջ ամբողջ Իտալիայում ընդհարումներ էին պատահում։ Ես ինքս ներկա էի Վենեցիայում հետևյալ դեպքին։ Սան-Մարկո հրապարակի վրա, մի տոնի օր, երբ կաթոլիկ հոգևորականությունը թափոր էր կազմել, ամբոխը, հրապարակի վրա երկու խիտ շարք կազմելով, ամեն տեսակ հայհոյանք էր թափում անցնող հոգևորականության վրա, վերջը թե՛ ամբոխի միջից և թե՛ հրապարակի երկու վտղմը գտնվող կաֆեներից սկսեցին քարեր արձակել զգեստավորված քահանաների վրա, այնպես որ պոլիցիան ստիպվեց միջամտել ընդհարմանը և աղմուկ անողներից շատերին կալանավորեց։ Ես գիտեի որքան կատաղած, զայրացած է իտալական ամբոխը կաթոլիկ հոգևորականության դեմ և ինձ հետաքրքրում էր իմանալ ամբոխի մարդու կարծիքը հայ-կաթոլիկ միաբանության մասին...

— Չէ, gli Armeni բացառություն են,— պատասխանեց նավավարս,— ամենքն էլ նրանց հարգում են... Նրանք ուսումնական մարդիկ են, նրանք ոչ ոքին չեն խաբում ու չեն հարստահարում։

Շատ անգամ, նույն նյութի վրա խոսելով, ես միշտ միակերպ պատասխան էի ստանում ծանոթ իտալացիներից։ Ամենքը ատելով ատում էին հոգևորականներին, իսկ հայ Մխիթարյան միաբանությունը ընդհանուր հարգանք էր վայելում Վենեցիայում։

Սուրբ Ղազարի վանքը շատ անգամ նկարագրված է եղել թե՛ օտար և թե հայոց գրականության մեջ։ Այդ վանքը մտնողը բոլորովին ուրիշ տպավորություն է ստանում, քան թե Վիեննայի Մխիթարյանների միջնադարյան վանքն այցելողը։ Վենեցիայում իմ կացության ժամանակ ես փորձեցի հաղորդել իմ տպավորությունները վանքի մասին «Հայկական Աշխարհի» ընթերցողներին։ Վերին աստիճանի հյուրասեր, սիրալիր ընդունելությունը, աբեղաների կիրթ վարմունքը, նրանց լուսավոր, առաջադեմ հայացքները, վանքի գեղեցիկ սարք ու կարգը, հարուստ տպարանն ու գրադարանը, եկեղեցու մեջ բուն հայկական արարողությունների անխախտ պահպանելը,

վերջապես և խնամքով մշակված խաղողի այգին ու բանջարանոցը,— այդ բոլորը վերին աստիճանի մխիթարական տպավորություն էր գործում հայ այցելողի վրա։ Խաղաղություն, տոկուն աշխատանք, անձնվեր սեր դեպի հայրենիքի հիշատակները և միևնույն ժամանակ եվրոպական կիրթ վարմունք ու լայն ժամանակակից հայացքներ ամեն հարցերի վրա,— ահա Վենեցիայի սուրբ հայրերի հատկանիշը։ Իր ժամանակին ես հայտնել էի «Հայկական Աշխարհում» իմ հայացքները և սուրբ հայրերի ուղղության պակասավոր կողմերի մասին, այն է նրանց մանկավարժական սխալ և անժամանակակից ուղղության մասին։ Նրանք ունեն Վենեցիայում երկու դպրոցներ՝ մինը կղզում,— վանական դպրոց է, իսկ մյուսը քաղաքում,— մի տեսակ միջնակարգ դպրոց, մի տեսակ լիցեյ է, որը այն ժամանակ կրում էր «Ռափայելյան» անունը, իսկ այժմ միացվելով Փարիզից տեղափոխված Մուրադյան դպրոցի հետ, կրում է «Ռափայելյան-Մուրադյան» անունը։

Կղզու վրա գտնվող վանական դպրոցը գործեց ինձ վրա, ինչպես և նկարագրել էի «Հայկական Աշխարհում» անախորժ տպավորություն. երեխաները՝ հիվանդոտ, նիհար, դեղնած, ստրկացած, բթացած դեմքերով... Ներկա գտնվելով դպրոցի տարեկան հանդեսին, համոզվեցա թե դպրոցում տիրում է մեռած դրաբարականությունն ու հնացած սխոլաստիկական մեռցնող ոգին...

Բայց մի բան անուրանալի է, այդ այն է, որ Վենեցիայի Մխիթարյանները սիրահարված են իրանց հայրենիքի հիշատակների վրա... Ուր և նայես, ուր և դնաս, այդ փոքրիկ աշխարհը, Սուրբ Ղազարի կղզին հիշեցնում է քեզ հայրենիքը։ Հայոց գրքեր, հայոց ձեռագիրներ, Հայաստանի տեսարանների պատկերներ, եկեղեցում հին հայկական պարզ ծիսակատարություն, այգու մեջտեղ մի մեծ ավազան Վանի ծովի ձևով շինված...

Աբեղաները սիրով ընդունեցին ինձ... Որքա՜ն տարբերություն նրանց և Վիեննայի միջնադարյան ուրվականների մեջ...

Սրանց հետ խոսելով, մարդ մոռանում է, թե նրանք կաթոլիկ են, մոռանում է նույնիսկ թե աբեղաներ են,— այն

աստիճան լուսավորված մարդիկ են նրանք։ Մարդ նույնիսկ առաջին բոպեից ստիպված է նայել նրանց վրա, որպես լուսավորված աշխարհականներից բաղկացած համեստ մի ուսումնական ընկերակցության վրա... Միայն հարկավոր չէ խոսել ու վիճել նրանց հետ կաթոլիկության մասին...

Ես հայտնեցի սուրբ հայրերին իմ նպատակս....

Նրանք խորհուրդ տվեցին ինձ դիմել հայր Ղևոնդ Ալիշանին, որն այն ժամանակ Ռափայելյան դպրոցի տեսուչ էր և կենում էր քաղաքում գտնված դպրոցի շինության մեջ։

Մի քանի օրից հետո ես վարձում էի Սան-Մարկո հրապարակում իտալացի մի ուղեցույց, որը ոտով տարավ ինձ նեղ և ոլոր-մոլոր փողոցներով ու փոքր կամուրջներով դեպի Ռափայելյան դպրոցը։

Դպրոցը գետեղված է մի լայն կանալի վրա գտնվող շքեղ, հոյակապ պալատում։ Հայր տեսչի հետ տեսակցության իրավունքը խնդրած լինելով, ես բարձրացա լայն սանդուխքը, անցա մի քանի ընդարձակ, գեղեցիկ կորիդորներ և շուտով բախում էի արդեն հայր Ղևոնդի առանձնասենյակի դուռը։

— Բա՞ց,— լսվեց սենյակից մի թույլ և խուլ ձայն.

Ես բաց արի դուռը, և իմ աչքերիս առաջ ներկայացավ հետևյալ տեսարանը։ Ահագին, լուսավոր սենյակ, լի գրքերի պահարաններով, մեջտեղ դրած մի մեծ գրասեղանով, որը բեռնավորված էր բազմաթիվ գրքերով և թղթերով. մի քանի գեղեցիկ, թեև հասարակ բազկաթոռներ և մի դիվան, լայն և բարձր պատուհանների վրա՝ մուգ գույնի վարագույրներ,— ահա Ալիշանի սենյակը։

Առաջին բոպեին ես մարդ չէի տեսնում սենյակում... մի վայրկյան անշարժ կանգնեցի սենյակի շեմքի վրա... Ուղղելով հայացքս դեպի ահագին գրասեղանը, այդ բոպեին միայն նկատեցի մի շատ նիհար դեմքով մարդկային գլուխ գրքերի ու թղթերի ահագին կույտի մեջտեղ։

Ինչպես երևում է, հայր Ղևոնդը խորասուզված էր ընթերցանության մեջ, երբ ես ներս մտա։

Նա անմիջապես տեղից բարձրացավ, մոտեցավ, մեկնեց ինձ իր ձեռքը և ձեռքիցս բռնած՝ տարավ ինձ իր գրասեղանի մոտ, խնդրելով նստել։

Ես ասեցի, թե ով եմ։

Ընդունելությունը բոլորովին ուրիշ էր, քան թե Վիեննայի վանքում։

Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիվանդոտ դեմքով, թույլ կազմվածքով, մոտ հիսուն տարեկան մարդ էր։ Նա սկսեց խոսել. ձայնը թույլ էր և խուլ, խոսակցությունը անդադար ընդմիջվում էր չոր, անախորժ հազով։ Խոսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարմրում էր, ինչպես մի օրիորդ կամ ինչպես մի գերմանացի համեստ պրոֆեսոր...

Ես հայտնեցի, որ կուզենայի նրանից հայերեն լեզվի դասեր առնել։

— Կներեք, չեմ կրնար, կուրծքս թույլ է, բժիշկները արգելած են ինձի շատ խոսել, և բարձր խոսել, բայց կհանձնեմ ձեզ մեր դպրոցի օգնականին, հայր Իգնատիոսին՝։

Ես շնորհակալություն հայտնեցի։ Նա կրկին կարմրեց։

— Հրամանքդ ժամանակ առ ժամանակ կգրեք Թիֆլիսի լրագիրներուն մեջ,— շարունակեց նա։

Խոսակցությունն անցավ մեր մամուլի, մեր գրականության վրա, ապա կովկասյան հայերի վրա։

Անմիջապես զանգ տալով, Ալիշան հրամայեց կաֆե բերել։ Վենետիայի Մխիթարյանները ոչ մի հյուր չեն ընդունում, առանց կաֆեով հյուրասիրելու։

Ես ասեցի, որ պարապել եմ մի ամեռ Վիեննայի հայերի մոտ և ավելացրեցի, որ կուզենայի վճարել դասերիս համար։

— Հարկ չկա, մենք ստակ չենք վերցնի ձեզմե։

— Բայց, հայր սուրբ, ես կուզեմ վճարել և կարող եմ վճարել։

— Հարկ չկա,— կրկնեց նա։

Ստիպված էի ընդունել և նորից շնորհակալություն արտահայտել։

Ի՜նչ տարբերություն երկու վանքերի ընդունելության մեջ... Այնտեղ եպվիտություն, սահմանափակ հայացքներ, երկյուղ, անվճռողականություն, «Կմտածենք», «Կխորհենք», «Միաբանությանը կառաջարկենք», «Չորս օրեն եաքը ձեզի կիմացուներնք» և այլ, այդ տեսակ միջնադարյան ձևեր, իսկ

Ես ասեցի, թե ով եմ։

Ընդունելությունը բոլորովին ուրիշ էր, քան թե Վիեննայի վանքում։

Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիվանդոտ դեմքով, թույլ կազմվածքով, մոտ հիսուն տարեկան մարդ էր։ Նա սկսեց խոսել. ձայնը թույլ էր և խուլ, խոսակցությունը անդադար ընդմիջվում էր չոր, անախորժ հազով։ Խոսելու և պատասխան ընդունելու ժամանակ նա անդադար կարմրում էր, ինչպես մի օրիորդ կամ ինչպես մի գերմանացի համեստ պրոֆեսոր...

Ես հայտնեցի, որ կուզենայի նրանից հայերեն լեզվի դասեր առնել։

— Կներեք, չեմ կրնար, կուրծքս թույլ է, բժիշկները արգելած են ինձի շատ խոսել, և բարձր խոսել, բայց կհանձնեմ ձեզ մեր դպրոցի օգնականին, հայր Իգնատիոսին՝։

Ես շնորհակալություն հայտնեցի։ Նա կրկին կարմրեց։

— Հրամանքդ ժամանակ առ ժամանակ կգրեք Թիֆլիսի լրագիրներուն մեջ,— շարունակեց նա։

Խոսակցությունն անցավ մեր մամուլի, մեր գրականության վրա, ապա կովկասյան հայերի վրա։

Անմիջապես զանգ տալով, Ալիշան հրամայեց կաֆե բերել։ Վենետիայի Մխիթարյանները ոչ մի հյուր չեն ընդունում, առանց կաֆեով հյուրասիրելու։

Ես ասեցի, որ պարապել եմ մի ամեռ Վիեննայի հայերի մոտ և ավելացրեցի, որ կուզենայի վճարել դասերիս համար։

— Հարկ չկա, մենք ստակ չենք վերցնի ձեզմե։

— Բայց, հայր սուրբ, ես կուզեմ վճարել և կարող եմ վճարել։

— Հարկ չկա,— կրկնեց նա։

Ստիպված էի ընդունել և նորից շնորհակալություն արտահայտել։

Ի՜նչ տարբերություն երկու վանքերի ընդունելության մեջ... Այնտեղ եպվիտություն, սահմանափակ հայացքներ, երկյուղ, անվճռողականություն, «Կմտածենք», «Կխորհենք», «Միաբանությանը կառաջարկենք», «Չորս օրեն եաքը ձեզի կիմացուներնք» և այլ, այդ տեսակ միջնադարյան ձևեր, իսկ

այստեղ, ընդհակառակն, կիրթ, սիրալիր, մարդավարի, գրքկարաց ընդունելություն։

Սկսեցի շաբաթը չորս անգամ դասեր առնել տեսչի օգնական հայր Իգնատիոս Կյուրեղյանի մոտ (այժմ աբբահայր)։ Հայր սուրբի խուցի մեջ նստած, Եղիշե, Խորենացի կամ մի այլ հայոց կլասիկական գիրքը կարդալով, իմ դասերիցս յուրաքանչյուրը մի ժամի տեղ շատ անգամ երկու, երեք ժամ էր տևում։ Գիրքը թողած, շատ անգամ սկսում էինք վիճել երիտասարդ վարժապետիս հետ

Վեճը մեծ մասամբ եկեղեցու, կրոնի մասին էր, լուսավորչական, կաթոլիկ և բողոքական եկեղեցու մասին...

— Հրամանքդ բողոքական երկրում ուսումդ ստացած ըլլալով, կնկատեմ, որ ավելի համակիր եք բողոքականությանը,— ասում էր ինձ իր մեղմ և ներդաշնակ ձայնով համակրելի վարժապետս...

— Ոչ, հայր սուրբ, ինձ համար միևնույն է, ինչ կրոնի էլ պատկանի հայը. ես ծնվել եմ լուսավորչական ծնողներից, և նրանցից եմ ստացել իմ առաջին բարոյական գաղափարները, բարձրագույն ուսումս և համոզմունքներս՝ բողոքական Գերմանիայից եմ ստացել, իսկ հայոց, մայրենի լեզվի հմտություններովս պարտական կլինեմ ձեզ, կաթոլիկ հայերին... Դուցե այդ պատճառով ես միակերպ եմ վերաբերվում դեպի բոլոր դավանությունները, առանց որևէ մոլեռանդ զգացմունքի...

Վարժապետս ժպտում էր իր մեղմ ժպիտով, ապա հանկարծ կտրում էր մեր վիճաբանությունը։

— Սակայն ժամանակը կանցնի, դառնանք մեր Խորենացուն։

▲

Ամբողջ վեց ամիս, շաբաթը չորս անգամ դասերս առնելով հայր Իգնատիոսի մոտ, ես դասերիցս հետո կամ պատում էի դպրոցում, կամ մտնում էի հայր Ալիշանի սենյակը։

Դպրոցը ինձ հետաքրքրում էր։ Դպրոցի ամբողջ կազմակերպության և ուղղության վրա տիրում էր հայր տեսչի՝ Ալիշանի ոգին։ Դպրոցն ուսումնասիրած լինելով, կարելի էր գաղափար կազմել և նրա ղեկավարի ուղղության, բնավորության ու լայն համամարդկային գաղափարների մասին։ Ալիշանի անխարդախ, համակրելի, անկեղծ բնավորությունը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձնվեր հանճարը կերպարանավորվում էր դպրոցի թե՛ ամբողջության և թե՛ նրա յուրաքանչյուր մանրամասնության մեջ։

Ալիշանին միաբանությունը մի քանի անգամ էր առաջարկել աբբահոր պաշտոնը, սակայն նա երբեք չընդունեց այդ պատասխանատու պաշտոնը, նախապատվելով զբաղվել իր գրքերով ու դպրոցով, գրական աշխատություններով ու մանկավարժությամբ։

Ռափայելյան դպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրության էր հասել, որ համարվում էր ամբողջ Վենեցիայում ամենալավ միջնակարգ դպրոց։ Բազմաթիվ իտալացի հարուստ ընտանիքներ խնդրում, աղաչում էին, որ այդ դպրոցումն ընդունվեին իրենց զավակները, սակայն միշտ մերժումն էին ստանում։ Հայր Ալիշան միշտ պատասխանում էր, որ դպրոցը միմիայն հայ զավակների կրթության համար է նշանակված, առանց խարության հայ ազգության պատկանող աշակերտների դավանությունների։ Իմ ժամանակ, կաթոլիկ աշակերտների մեծամասնության մեջ կային և լուսավորչական մի քանի երիտասարդներ և նույնիսկ մի հայ բողոքական աշակերտ։ Անուրանալի է, որ Վենեցիայի Մխիթարյանները թունդ կաթոլիկներ են, բայց նրանք այն աստիճան լուսավորված մարդիկ են, որ երբեք չեն փորձում որևէ ճնշում գործադրել իրանց դպրոցում ուսանող այլակրոն հայ երիտասարդների վրա և դարձնել նրանց կաթոլիկ։ Եվ ես համոզված եմ, որ այդ համբերողության ոգու գլխավոր պրոշակակիրը միաբանության և դպրոցի մեջ, ինքն՝ հայր Ղևոնդն էր։

Հայր Ղևոնդը հայտնի է բոլոր հայերին, ամբողջ մարդկության, որպես ուսումնական մարդ, որպես դրող և բանաստեղծ։

Մեզանից ո՞վ չգիտե, չէ կարդացել նրա բազմաթիվ գրվածքները, կամ գոնե նրանց մասին լսել...

Հարկ չեմ համարում այստեղ մի առ մի թվել նրա բազմաթիվ և համակրելի երկասիրությունների վերնագրերը։

Բայց դուցե շատերը չգիտեն, որ Ալիշան խելացի մանկա-

վարժ էլ է։ Մայրենի լեզուն նրա ձեռքով ղեկավարած դպրոցի ուսմունքների հիմքն էր կազմում, հայրենագիտությունը դպրոցի բոլոր ուսմունքների ոգին էր...

Երբ ես մտնում էի դպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները զբաղվում էին նկարչությամբ, ես ապշած էի մնում։ Հայր տեսուչը պատվիրել էր նկարչության ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նկարեին հայոց պատմության հետ սերտ կապ ունեցող և երեխաների վառ երևակայությունը գլխավորապես հայրենիքը հիշեցնող դեմքեր և տեսարաններ... Մի տեղ տեսնում էիք Վարդան Մամիկոնյանի ընդօրինակած կենդանադիրը, մի ուրիշ տեղ Անիի ավերակների տեսարանը, և այլն, և այլն...

Եվ առհասարակ, որպես մանկավարժ, հայր Ղևոնդը փորձված և խելացի մանկավարժ է։ Նրան է պարտական դպրոցը հետևյալ բուն մանկավարժական խելացի կարգադրությամբ. դպրոցում գիշերօթիկ աշակերտները չունեին մի ընդհանուր ննջարան, նրանց արգելված էր միասին քնել, այլ յուրաքանչյուր աշակերտ պառկում էր ջոկ խուցում, յուրաքանչյուրը իր համար ջոկ փոքրիկ սենյակ ուներ։ Միայն երկու հարազատ եղբայրներին թույլ էր տրվում միևնույն սենյակում միասին քնել։

▲

Վեց ամիս շարունակ հայր Իգնատիոսից շաբաթը չորս անգամ դասեր առնելուց հետո, երբ հասավ Վենետիան թողնելու օրը, ես կրկին դիմեցի հայր Ղևոնդ Ալիշանին, խնդրելով որ դպրոցի օգտին գոնե ընդունե ինձանից դասերիս վարձը։ Բայց բոլոր թախանձանքներս զուր էին, հայր Ղևոնդը ոչինչ կերպով չէր ուզում ինձանից փող ընդունել։

Ճարահատված, քաղաքից իմ դուրս գալուց մի քանի օր առաջ, գնեցի գրավաճառանոցում ֆրանսիական կլասիկների ժողովածուն և ընծայեցի Ռափայելյան դպրոցի գրադարանին, որպեսզի գոնե մի կերպ արտահայտեմ իմ երախտագիտությունս սուրբ հայրերին, նրանց սիրալիր ընդունելության, հյուրասիրության և վեց ամիս շարունակ ինձ տված դասերի համար։

▲

Հայր Ալիշանի հետ վեց ամսվա ընթացքում բավական մոտիկ ծանոթություն կապելով, ես մի անգամ առիթ էի ունենում նրա հետ մտերմաբար խոսել ընդհանրապես մեզ հետաքրքրող հարցերի մասին։

Թող ամեն մարդ ունենա իր համոզմունքները, և թող միևնույն ժամանակ Ալիշանի պես պայծառ, լայն, ընդհանրապես մարդասեր գաղափարներ ունենա, նրա չափ հայրենասիրություն ունենա, և այն ժամանակ անձնական հայացքները յուրաքանչյուր դավանությանը պատկանողի կողմից ոչինչ վտանգ չեն ներկայացնի ընդհանրության համար, ոչինչ երկպառակության սերմեր չեն ցցի տարբեր կրոնական հայացքներ ունեցող մարդկանց մեջ, երբ նրանք այդ հայացքներից բարձր կդասեն ընդհանրապես ազգը սիրելու զգացմունքը։

Այդ տեսակ լայն հայացք մենք կարող ենք սովորել Վենետիայի Մխիթարյաններից, մանավանդ Ալիշանի պես համոզված մարդուց։ Կարելի է Ալիշանի պես ջերմ, նույնիսկ մոլեռանդ կերպով սիրել իր կրոնը, բայց միևնույն ժամանակ պետք է Ալիշանից օրինակ առնել, թե դեպի ուրիշ դավանությունները նրա ունեցած լայն համբերողական ոգուց և թե հայրենասիրության նրա անսահման և անձնվեր զգացմունքից...

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՔԱՐԱՄՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(Մի քանի թերթ իմ հիշատակարանից)

«Վենետիկ, Ս. Ղազար, 3 հուլիս, 1886 թ.
Ազնիվ բանասեր պարոն.

Թուղթդ ընդունելես առաջ կարդացինք լրագրաց մեջ...

Փափագդ գալու ի Վենետիկ և մեր լեզվի և պատմության տեղեկությունդ ավելացնելու, կարելի է, եթե ընակիս ի քաղաքին, և ուզած կամ սահմանյալ ատեն երթաս ի Մուրատ— Ռափայելյան վարժարան, եթե այնպես պատշաճ դատվի, կամ գաս ի վանս մեր. վանքի նավակով ալ կրնաս գալ և երթալ մեր նավակի սահմանած ժամերուն...

Հ. Ղևոնդ Ալիշան Մ.

Ահա այն նամակը, որ ես ստացա ի պատասխան իմ գրությանս Բեռլինից, որով թույլտվություն էի խնդրում Մխիթարյանց վանքում հայերենով պարապելու։

Գերմանիո մայրաքաղաքը հաղիվ էր դադարել յուր դյուցազն կայսեր իննսնամյա տոնախմբության ժխորից. դեռևս վիտում էին ծովացյալ քաղաքում օտարականների բազմությունը, դեռևս փողոցները զարդարված էին 1887 թվականի մարտի 1-ի հանդեսի հաղթական կամարներով[1], երբ ես վերջին հրաժեշտս տվի այն փոքրիկ ընկերական շրջանին, որ ինձ ուսանողությունից փղշտացիության էր ուղեկցում։ Դեռևս հընչում էին ականջիս հրաժեշտի երգի վերջաբանը... Ade, Ade...[2] երբ կառախումբը սլանալով ծածկեց աչքիցս Բեռլինը։

Առաջին զվիցերական քաղաքը, ուր դիշերեցի, Բազելն էր։ Թերևս անհավատալի թվի, բայց այդ ավանի նման փոքրիկ քաղաքը, Եվրոպայի ամենահարուստ քաղաքն է, Եվրոպացիք այդ քաղաքը միլիոնների և կամ զվիցերական ազնվականների քաղաքն են անվանում։ Զարմանալու չէ՞ արդյոք, որ Զվիցերիան էլ յուր ազնվականներն ունի։ Այո՛, զարմանալի է, բայց երբ ամերիկյան յանկին ազնվականության է ձգտում, և հայ չարչին իրան ազնվական է կոչում, ինչո՞ւ զվիցերական բաուերն (գյուղացին) էլ արիստոկրատ չպիտի կոչվի։ Մոայլ է Բազելի տեսքը, քաղաքացվոց դղյականման հին բնակարանները կատարյալ պատկեր են ռամկավարական վարչությունից դժգոհ ազնվապետական բազելցոց։

Թե ինչ կարող է անել անհատական բարեգործությունը, այդ կարելի է տեսնել Բազելում, ծանոթանալով այդ քաղաքի համալսարանին, թանգարանին և գրատանը, որոնք մասնավոր նվերներով են ճոխացած և պահպանված։ Հայ բանասերին անհնարին է առիթը փախցնել և չծանոթանալ Եվրոպայում որևէ հայագիտի հետ։ Արդեն իսկ ուսանողությանս ժամանակ ծանոթացել էի շնորհալի գիտնական, հայագետ և պատմաբան Բաումգարտենին (Baumgarten)[3], որ աներկբա նորագույն հայագետ Եվրոպացիների մեջ հմտագույնն է, նա դասախոս է հին պատմության Բազելի համալսարանում, ուստի վճռեցի գտնել նրան։

Երիտասարդ, նիհար, բարձրահասակ և ծանրաղլուխ գիտնականը դիմավորեց ինձ ուրախությամբ և տարավ յուր պարապմանց սենյակը։ Սկսեցինք խոսակցությունը Հայոց լեզվի, պատմության և մատենագրության պատմության մասին, ձեռագրերի և մատենադարանների մասին, և նա ինձ ցույց արավավ յուր քաղվածքները զանազան ձեռագրերից։ Պատմեց ինձ յուր ուղևորությունն ի Վենետիկ և այնտեղ գտած սիրալիր ընդունելությունը, յուր զբաղումներն և հայր Ալիշանի հմտությունից քաղած օգուտները։ Ի վերջո հայտնեց, որ ինքը զբաղված է Խորենացու պատմության հրատարակությամբ, արդեն քննել է եվրոպական ձեռագրերից շատերն և երբ վերջացնի, մտադիր է գնալ Երուսաղեմ և էջմիածին, որպեսզի բոլոր ձեռագրերի համեմատությամբ վերականգնե Խորենացու իսկական բնագիրն, որ մտադիր է հրատարակել լատիներեն

թարգմանությամբ հանդերձ, որի գլուխ գալուն ամենամեծ երաշխավորությունն է հարգելի գիտնականի տոկունությունը և աշխատասիրությունը։ Համակրելի հայազետի ընտանեկան հարկի տակ գիշերելուց հետո, մյուս օրն ուղևորվեցա դեպի Իտալիա։

Կատարյալ գարուն էր արդեն Իտալիայում, թեև դեռ իսկական գարնանային օրերը չէին սկսել։ Գեղեցիկ էր ծառապարդ ուղին դեպի Լոմբարդիո մայրաքաղաքը՝ Միլան։

Հանրածանոթ են իտալական քաղաքների և առհասարակ այդ երկրի ամեն մի անկյան բնական և գեղարվեստական հրաշալիքները. հնագույն, միջին և նոր դարերը թողել են Իտալիայում յուրյանց գեղեցկագույն հրաշակերտների հետքերը։ Իտալական քաղաքներից յուրաքանչյուրը մի որևէ առանձնահատուկ գեղեցկություն ունի, իսկ Միլանի գեղեցկությունն է նորա տեսքը, հոյակապ հին և նոր շինվածները, և մաքրությունը, որ հատուկ չէ առհասարակ իտալական քաղաքներին։ Միլանը կենտրոն է այժմ իտալական արվեստագիտության և իզուր չէ կոչվում մայրաքաղաք Լոմբարդիո։ Երեք հրաշակերտ կան այդ քաղաքում, որոնցից յուրաքանչյուրն յուր տեսակի մեջ աննման է. առաջին՝ Միլանի մայր եկեղեցին կամ դոմը, երկրորդ՝ նոր գերեզմանատունը, որ գեղարվեստական արձանների դահլիճի է նմանվում և երրորդ՝ աշխարհիս ընդարձակագույն թատրոնը՝ Սկալան։

Միջօրեին ճեպընթաց գնացքը ուղևորվում էր Վենետիկ, ուստի շտապեցի ըստ կարելվույն շուտափույթ հասնել նպատակիս և ճանապարհ ընկա դեպի Վենետիկ։ Արդեն մութը դետինն առել էր, երբ մեր կառախումբը սկսավ համրաքայլ ընթանալ Վենետիկի կղզին ցամաքի հետ միացնող հսկայական կամրջով և կանգ առավ կայարանում։

Վենետիկի նկարագիրը շատերն են արել, սակայն ոչ մի նկարագիր այնքան ճիշտ չէ թվացել ինձ, որքան մի գաղղիացու մատիտով գրած մի տողը դոժերի պալատի վրան. «Վենետիկը քաղաք չէ, այլ մի թանգարան», այդ թանգարանը դժվար է ստեղծագործել, որովհետև Վենետիկի դիրքն ունեցող այլ անկյուն չկա աշխարհիս վրա։

Ալիշանը իր աշխատասենյակում

Հային երկու բան ամենից շատ է Վենետիկում ձգում, մեկն է քաղաքի հայկական հին փողոցն (Galle degli Armeni) յուր եկեղեցվով, և երկրորդը՝ սուրբ Ղազարի կղզին իր վանքով, ուր ապրում է ամեն հայի սիրելի Նահապետը՝ Ալիշանը։

Ո՞վ չէ երգել այդ առաջին հայ բանաստեղծի վառ հայրենասիրական երգերն, ո՞վ չէ զմայլել Ավարայրի բլբուլի քաղցրահնչյուն ձայնով. ո՞վ չէ ճանաչում, վերջապես, հայրենյաց ավերակներին սիրահար Նահապետին։ Այո՛, շատերն են ճանաչում նորան, բայց քիչ մարդիկ են վայելել նորան տեսնելու բախտը, սակայն չէ եղել մի հայ, որ Վենետիկ հասնելով չբաղձար տեսնել նորան։ Իմ ևս առաջին բաղձանքս էր վայրկյան առաջ Մխիթարյանց մենարանը դիմել, և տեսնել այդ նշանավոր կղզու միանձն գիտնական բանաստեղծին։

Մարտի 7-ին, 1887 թ. առավոտյան, գոնդոլով դիմեցի սուրբ Ղազար. հեռվից ցիրուցան կղզիների մեջ երևում էր հայկական եկեղեցու գմբեթը և շինությունների երկար շարքով շրջապատված սուրբ Ղազար կղզին։ Ինչքա՜ն մտքեր խառնվում էին հիշողությանս մեջ, ինչքա՜ն վեհ և պատկառելի անձինք կենդանանում էին երևակայությանս մեջ՝ Մխիթար Սեբաստացին, Միքայել Չամչյանը, Արսեն Բագրատունին և այլք։

Վերջապես հասա կղզու նավամատույցին և իջա նավակից վանքի դռանը։ Իտալացի բարապանն առաջնորդեց ինձ դեպի ընդունարանը, ուր դիմավորեց ինձ հայր Բարսեղ Սարգիսյանը՝, որին հայտնված էր իմ գալուստս։ Բարեկամական ողջույններից հետո հարգելի հայրը առաջնորդեց ինձ աբբահոր սենյակը։

Գերապայծառ Կյուրեղյանը,[3] մի բարձրահասակ, գեղեցկադեմ և դրավիչ դեմքով անձն, ընդունեց ինձ սիրով և, ամենայն ուշադրություն և օգնություն խոստանալով, հրամայեց առաջնորդել ինձ հայր Ալիշանի խուցը, որ գտնվում էր աբբահոր սենյակի աջ կողմում, ընթերցարանին կից։

Անպաճույճ խցի դուռը բացվեցավ։ Քառակուսի, լուսավոր և անզարդ սենյակի մի կողմում դրված էր անկողին, իսկ ձախակողմյան պատի առաջ գրքերով ու թղթերով ծածկված սեղանի հետևը նստած էր մի ալեզարդ, բարձրահոն վարդա-

3—Ալիշանը ժամանակակիցների հուշերում

պետ, որ վեր կենալով ողջունեց ինձ սիրով և հրավիրեց նըստելու։ Այդ բարձրահասակ, ալեզարդ, քաղցրադեմ ծերունին էր հայր Ղևոնդ Ալիշանը։

Առաջին հանդիպման սովորական ողջույններից և հարցուփորձից հետո հաղորդեցի պրոֆեսոր Կիպերտի և Զախաուի բարևներն[6] և նոցա շնորհակալությունը «Սիսուանի» նման շքեղ պարգևի համար, որ նրանք ստացել էին հայր Ալիշանից և մեծ հրճվանոք կարդացել։ Պետք է այստեղ հիշատակեմ, որ եվրոպական գիտնականներն եթե որևէ բացատրության կամ տեղեկության կարոտություն են ունենում, անմիջապես Վենետիկի Մխիթարյանց և մասնավորապես Հայր Ալիշանին են դիմում, ուստի նոցա մեջ քիչ պատմագետ, աշխարհագրագետ և արևելագետ կա, որ թղթակցությամբ ու կամ անձամբ ծանոթ չլինի Հայր Ալիշանի հետ։

Պրոֆեսոր Կիպերտը, մասնավորապես, լավ բարեկամ է Հայր Ալիշանին, որովհետև երկու գիտնականների գլխավոր զբաղմունքը աշխարհագրությունը լինելով՝ շատ անդամ առիթ են ունեցել միմյանց դիմելու։ Պրուսական դեմոկրատի և աշխարհիս առաջին աշխարհագրագետի սիրած և մասնավոր կերպիվ ուսումնասիրած երկրներից մեկն է և մեր հայրենիքն, հին և նոր Հայաստանի դեղեցիկ քարտեզները մենք նորան ենք պարտական։ Այդ զբաղման համար նա հատկապես ուսումնասիրած է հայերենն և քրքրել է շատ աշխարհագրական հայ ձեռագրեր, ափսո՜ս միայն, որ նրա հին Հայաստանի քարտեզը լույս չէ տեսել դեռևս, հետաքրքրության և դրամի նվազության պատճառով։

Երբ Բեռլինում աշակերտում էի աշխարհահռչակ գիտունին, քանի՜-քանի անգամ մասնավորապես առիթ եմ ունեցել «Սիսուանի» մասին խոսելու նորա հետ, որ շատ էր գնահատում հարգելի գիտնականն և ուսումնասիրում։ Մի անգամ վշտացած հայտնեց ինձ, որ այժմս աշակերտաց հավատարմությունն իսկ անհետացել է, որովհետև այն Կիլիկիո քարտեզն, որ Հայր Ալիշանը պատրաստել է տվել Կիլիկիո համար, ոչ մի աշակերտի գործն է, որը արտանկարել է միայն յուր գործից։

Այս խոսակցության ժամանակ, ուր ես շարունակ առիթ

ունեի պատկառելի գիտնականի գործերի մասին խոսելու և նորա գրվածները անելու, նկատելի էր Հայր Ալիշանի անաչառությունն և իսկական գիտնականի համեստությունը, որ ինչպես նկատելի էր, կամենում էր խոսակցությունը դարձնել յուր անձնից մի ուրիշ նյութի վրա։ Ուստի սկսավ հարցուփորձ անել իմ ուսման ընթացքի մասին և երբ խոսքներն աննկատելի կերպիվ անցավ հայրենյացս և գլխավորապես Ռուսաստանի հայոց վրա, այն ժամանակ առանձին իմն հետաքրքրությամբ և նկատելի աշխուժով սկսավ ծերունին մեր մարդկանց և գործերի վրա խոսել։

Պետերբուրգիս բնակությանս ժամանակ Վենետիկում առիթ և բախտ ունեցա ծանոթանալու Մխիթարյան հարց շատերի հետ, որոնց յուրաքանչյուրն ես իրանց գործունեության շրջանում հնոտ, ջանասեր և համակրելի անձինք երևեցան ինձ որպես հայ, տգետ և ոչ մեկը նոցանից այնչափ դրավեց իմ սիրտս, որքան Հայր Ղևոնդը, որովհետև նրան հետաքրքրում էր այն ամենն, ինչ որ մոտ էր և իմ սրտիս ու հոգուս։ Նա էր միակ այն վարդապետը որ յուր բազմաթիվ գիտնական, քահանայական և միաբանական պարտականությանց և զբաղմանց մեջ ժամանակ էր գտնում հետաքրքրությամբ հետանալու մեր արևելյան գրականությանն, ծանոթանալու մեր տարեկան և մարդկանց հետ։ Այնքան վարդապետների մեջ, որոնք, անշուշտ, ավելի ժամանակ ունեին, Հայր Ալիշանը գտնվեց միայն էր (բացի երիտասարդ հայր Բարսեղ Սարգիսյանից՝ մեծ Նահապետի հետևողից), որ կարդում էր լրագրերն, օրագրերն և ամսագրերն, նա մեր մեջ ապրող անձանց նման հետաքրքրվում էր մեր դպրոցական, եկեղեցական և քաղաքական վիճակով, մինչդեռ մյուս վարդապետներից ոմանք արևմտյան կաթոլիկ հայոց գործերի համար հետաքրքրություն ունեն, իսկ ոմանք միայն իրանց վանքի և Վենետիկի գործերի համար։ Նույնիսկ այն զբաղմունքը, որ մեծ գիտնականն ընտրել է և որին նվիրել է իր կյանքի վերջին քառորդը, ստիպել է նրան անընդհատ հարաբերություն ունենալ հայրենյաց հողի վրա բնակվող հայերի հետ, որոնց վիճակը նրա զգայուն սրտին միշտ մոտ է եղել։

Հայր Ղևոնդն յուր երիտասարդությունից սկսած նյութեր

է ժողովել հայոց պատմության և աշխարհագրության համար, այժմ քառասուն տարուց ավելի է, որ նա հղացել է Հայաստանի նահանգների ՀԱՄԱՊԱՏՈՒՄՆԵՐ տպելու միտքն։

Ճիշտ այն ձևով, ինչպես «Սիսուանի» մեջ արել է, նա կամենում է ամենայն հայաբնակ նահանգների ՀԱՄԱՊԱՏՈՒՄԸ գրել, ուր ամփոփված պիտի լինին այդ նահանգների մասին ամենայն բնական և պատմական թե՛ հին և թե՛ նոր տեղեկություններ, որ միայն հայտնի են։ Այս է պատճառն ահա, որ հայր Ալիշանը անդուլ հետևում է ամեն մի օրագրական ծանոթության մի տեղի, կամ ավերակի կամ ձեռագրի մասին, որպեսզի յուր համապատումների մեջ ներմուծե՛։

Այդ նպատակին հասնելու համար պատկառելի գիտնականն դիմում է թղթակցությամբ ամեն մի հայու և օտարի, որ կարող է մի որևէ տեղեկություն հաղորդել և ստացած ծանոթությունները հմտությամբ շարահարում է։ Դեռևս նոր էի մտնում ուսանողական շրջանն, երբ Լայպցիգում առիթ ունեցա այդ իրողությունը ճանաչել։ Իմ ղինակից Սիսակ Սահակյանը Լայպցիգից թղթակցություն ուներ հայր Ղևոնդի հետ, որին նա ամեն շաբաթ ուղարկում էր իր ստացած կովկասյան թերթերն, որոնք ինձ անհայտ պատճառով վենետիկում չէին ստացվում։ Իսկ երբ ես Բեռլինից թղթակցություն բացի մեծանուն գիտնականի հետ, նրա անմիջական խնդիրն էր Բեռլինի գրատան հայ ձեռագրերի հիշատակարանների ընդօրինակությունը, որ մեծ սիրով կատարելով ուղարկեցի իրեն, որի արած սրամիտ դիտողություններն այդ ընդօրինակությանց առթիվ համոզեցին ինձ, որ հարգելի գիտնականի մեծամեծ արժանավորությանց մեկն է նրա ԳՐՉԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, որ ձեռքն է բերված կիսադարյան փորձով։

Մեր խոսակցությանց ընթացքում զարմանքով դիտեցի, որ հայր Ալիշանը ծանոթություն ուներ թղթակցությամբ մեր գրեթե բոլոր գործիչների հետ, վանքերի միաբանությանց, գրատանց տեսուչների, թեմական առաջնորդների և առանձնապես գրագետների հետ, որոնք ամենքն էլ նրան նյութ էին մատակարարում յուր մեծ գործի համար։ Հարկավ կային և այնպիսիք, որոնցից նա դժգոհ էր. ցավ էր նրա սրտին, որ հայրենյաց նշխարները ի լույս հանելուն չէին նպաստում այնպիսի

անձինք և հիմնարկություններ, որոնց պարտքն էր այդ։ Սուրբ Պրոպագանդայի ձեռագրաց հարուստ ժողովածուի մասին տեղեկություն ստանալու համար ստիպված էր մի հույնի աջակցություն դիմելու։

Նույնիսկ առաջին տեսակցությանս ժամանակ հայր Ղևոնդի հետ բարեկամացանք. ինչպես ինձ թվում էր, նա կողմնակի կերպով ուրախանում էր, որ այժմ հայերս սկսել էինք հետաքրքրվել մեր անցյալով և հայրենական գիտություններով զբաղվելու վանքերի ևս ընդունելություն էր գտնում։

Խոսելով հայերին ուսանելու մասին, հայր Ղևոնդն հիշեց, որ պարոն Գրիգոր Արծրունին ևս մի անգամ այդ մտադրությամբ իրանց է դիմած և քանի մի ամիս աշակերտել է հայր Գրիգորյանին, բայց այժմ թե հայր Կյուրեղյանն և թե ինքն հրաժարվում են նրա գրած հայերենից, որովհետև «Անիկա հայերեն չի գրել, այլ հայերեն բառերով և երբեմն իսկ հայերեն տառերով միայն և օտար լեզվով»։ Ինքն անչափ ցավում էր, որ երբեմն առիթ ունի այնպիսի հայերու այցելությունն ընդունել, որոնք հայերեն մի բառ անգամ չգիտեն և օտար լեզուներով են խոսում միայն. բայց ավելի ևս ցավալի էր տեսնել, որ այժմյան գրականության մեջ հայկական գրագետի հավակնություն ունեցողներից շատ քչերը միայն հայերեն գրել գիտեն։

Այս ընդհանուր խոսակցություններից հետո ես առաջարկեցի հայր Ղևոնդին իմ զբաղմանս ծրագիրն և խնդրեցի նրանից աջակցություն, որ ամենայն սիրով հանձն առավ։

Հինգ ամիս շարունակ ամեն օր առավոտյան ժամը 8-ին վանքի նավակով Սուրբ Ղազար էի գնում և առանձնանում ինձ տրված վարդապետական խուցն, ուր խնդրածս ձեռագրերն հանձնվում էին ինձ և ես մինչև զբաղվում էի նրանց ուսումնասիրությամբ, որի ընթացքում պատահած բոլոր տարակույսներս փարատելու համար կամ հայր Բարսեղ Սարգիսյանին էի դիմում և կամ հայր Ալիշանին։ Առավոտյան յոթ ժամից սկսած մեծանուն գիտնականը առանձնանում էր յուր խուցը և զբաղվում, կարգավորում էր տարիների ընթացքում ժողովված նյութը։ Այն օրերն, երբ ես այնտեղ էի, «Այրարատի»

վրա էր աշխատում, որ արդեն տպագրված է և շուտով կտեսնենք[8]։

Մտնելով հայր Ղևոնդի խուցը, որևէ բացատրության համար, զմայլում էի տեսնելով նորա տոկունությունն ու անսահման սերը դեպի յուր ընտրած գործը. երբեմն նա զննում էր որևէ դրամ, կամ խորասուզված էր մի ձեռագրի քննության մեջ, կամ գրում էր և կամ բազմահատոր և օտարալեզու գրքերն էր խուզարկում։ Գրավիչ էր նաև նրա բացատրության եղանակը. պարզ և գիտնական համեստությամբ, սիրով հաղորդում էր յուր գիտեցածն և մատնանիշ անում աղբյուրները։ Տեսնելով նրա այդօրինակ գրավող ու հայրական և ընկերական ուսուցանելու եղանակը, չէի զարմանում, որ վանքին մեջ և դուրս նրա աշակերտներն անչափ սիրում էին իրանց վարդապետին։ Պեշիկթաշլյանի՝ հայր Ղևոնդին նվիրած բանաստեղծությունն առաջինը չէ աշակերտական երախտագիտության ապացույցների[9], չեմ մոռանալ ամենևին հայր Ղևոնդի աշխարհական աշակերտին, որ Վենետիկումն էր ապրում և յուր վարդապետի համար ամեն ինչ կզոհեր, եթե կարևոր լիներ։ Այդ աշակերտը Պոլսո հարուստ ընտանիքներիցն էր և ուսման ընթացքն ավարտելուց հետո Փարիզումն էր բնակվել, որտեղից հայր Ղևոնդի համար բազմաթիվ հիշատակարաններ էր արտագրել և ուղարկել, չնայելով այնքան օտար էր նրա համար ձեռագրով զբաղիլն, որքան և լուսանկարչության, որով զբաղվում էր Վենետիկում, այդ արվեստն ևս յուր գիտնական վարդապետի աշխատությանց ծառայեցնելով։[10]

Սուրբ Ղազարու միաբանությունը զուրգուրանոք հսկում է յուր Նահապետի կենաց վրա. ամենքն ևս հետաքրքրված են նրա առողջությամբ և հանգստությամբ։ Յուր ծերության հասակում միայն հնարավոր է լինում մի անգամ Հայաստան գնալու պատրաստվիլ, իսկ երբ այդ չէ հաջողվում, Նահապետն այլևս շղթայված է մնում սուրբ Ղազարում, որովհետև ո՞վ կհամաձայնի նրան այդ հասակում թողնել այնպիսի ճանապարհորդություն անելու, որ այնքան դժվարություններ ունի։

Զարմանալի է արդարև, որ Հայաստանի ամեն մի քարի տեղը ճանաչող անձն ինքը չէ տեսած երբեք այդ երկիրն և կարծես թե շղթաի տեսնի խակ։ Պատմում էին, որ Հայր Ղևոնդը Բագրատիոնյան դպրոցի տեսուչ եղած ժամանակը պարտիզում ձեռքնել էր տված յուր սիրեցյալ հայրենիքն, Սևանա, Վանա և Արմենիա լճերն, Մասիսներն ու Երասխը, վերջապես Հայաստանի հոգաշեն քարտեզը։

Նոր գերագույնտ Կյուրեղյանին ճանապարհ էինք դնում դեպի Ռ. Պոլիս, և հայր Ղևոնդը նավակով եկավ մինչև նավի նստարանը, ամենքը բարձրացան նավի վրա, բայց հայր Ղևոնդը մնաց նավակի մեջ և վերև չբարձրացավ, այնքան բուռն էր նրա իղձն, որ կարծես թե դեպի հայրենիք գնացող նավը ելնելով շղթաի կարողանար այլևս ցած իջնել և յուր մենարանը դառնալ։ Վերջն իմացա, որ նա ուխտել էր չբարձրանալ արևելք ուղևորվող որևէ նավ, որովհետև մի անգամ բոլորովին պատրաստված է լինում ուղևորվելու հայրենիք և չէ հաջողվում։

Երբ շրջում էի Սուրբ Ղազարու պատկերաց սրահն և տեսնում այդ տան՝ Մխիթարա միաբանության նախնյաց պատկերներն, Ադոնցի, Ջամչյանի, Ավգերյանների, Բագրատունու և այլոց, միշտ ասում էի, որ անհնարին է, որ այս վանքի մեջ դուրս չգան այլևս այդպիսի երևելի անձինք։ Կրթության և դատարակության մեջ օրինակն առաջին տեղն է բռնում, այն նորընծա արեղան և կամ դպիրն, որ շրջում է այն վեհ անձանց պատկերների առջևով, կցանկանա, անշուշտ, նրանց նմանիլ և նրանց նմանիլ։ Ազնվականների պատկերաց դահլիճներն միշտ խթան են եղել ապագա սերնդյան համար, այդպիսի նախնյաց դահլիճ է միաբանության համար այդ պատկերների սրահն։ Բայց ի՞նչ կարող է պատկերի ազդեցությունը համեմատվել կենդանի անձնավորության հետ։

Հայր Ղևոնդը կենդանի և լուսավոր ջահ է ամբողջ միաբանության համար։ Նրա աշխատասիրությունը, հանճարը, համեստությունը, բարերարությունը, գիտությունն ու հոչակը խթան է ամեն մի երիտասարդ վարդապետի համար։ Հայր Ալիշանը օրինակելի է նաև իբրև միանձն աբեղա, բոլոր միաբանության հետ ամենայն աղոթից ժամուն ներկա է, ամեն վանական պատրաստությանց լրիվ կատարող և ամենայն արտոնություն մերժող։ Նա ներկա է բոլոր միաբանից և աշակեր-

տաց սեղանին, նոցա հանգստյան ժամերին նրանց մեջն է, իսկ գրաղմանց հետևելու առաջին օրինակն ինքն է տվողը։ Նա օրինակ է թե՛ մեծերին և թե՛ փոքրերին, ուստի շատ հասկանալի է այն հոդսը, որ տանում են նրա մասին գրեթե բոլոր միաբանակիցները։

Սուրբ Ղազարու կղզին գրեթե մի ուխտատեղի է։ Ամենայն օր աշխարհիս բոլոր ծայրերից մարդիկ կտեսնեք այնտեղ, ամեն օր տասից տասներկու զոնդոլ է կանգ առնում վանքի դռանը, և հետաքրքիր օտարականները շրջում են վանքի բոլոր անկյունները։ Առաջին տեղը, հարկավ, բռնում են այցելուների մեջ անգղիացիք և ամերիկացիք, նրանց առաջնորդն էր զվարճախոս, ծերունազարդ Թարգմանիչն Թյուկիդիդեսի, հայր Ճարյան[11], երկրորդ տեղը բռնում էին իտալացիք, որոնց առաջնորդում էր պերճաբան և գեղեցիկ իտալերեն խոսող հայր Զարբհանալյանը, գաղղիացիներին առաջնորդում էր այլ ոք չեղած ժամանակը, ինքն հայր Ալիշանը։ Տեսնելու էր այդ մեծ գիտնականի համբերությունը, ինչպես նա մի հասարակ վարդապետի նման ամեն ինչ բացատրում և ամեն տեղ առաջնորդում էր հյուրերին։ Մի գերմանացի այցելու պատմեց ինձ մի օր քաղաքում, ինչքա՜ն հիացած է մի ծերունի վարդապետի վրա, որ իրան Սուրբ Ղազարը ցույց էր տալիս. նկարագրությունից իմացա, որ ծերունին հայր Ղևոնդ Ալիշանն է եղել և երբ պատմեցի գերմանացուն յուր առաջնորդի գիտության և գործերի մասին, նրա ապշությանը չափ չկար։

Իտալական գահակալի ընտանիքը, մասնավորապես Թագուհին, շատ են հարգում Մխիթարյանց վանքը, ամեն տարի Թագուհին Վենետիկ եղած ժամանակը մի անգամ պատարագ է լսում վանքում և վարդապետների հյուրասիրությունն ընդունում։ Այն ամառն (1887 թ.), երբ ես այնտեղ էի, Հումբերտոյի կինը դարձյալ այցելեց վանքը, բոլոր միաբանությունը ընդառաջ գնաց հյուրին և առաջնորդեց եկեղեցի։ Պատարագից հետո, Թագուհին ներքին գավթի պարտիզում վայելում էր վանքում պատրաստած վարդի մուրաբան, երբ նրան ընծայեցին փառակազմ «Սիսուանն»։ Թագուհին հարցրեց թե ո՞ւր է հեղինակն, շուրջ նայեցին և տեսան, որ համեստ աբեղան արդեն յուր մենարանն է առանձնացել, որ-

ոնցից կանչեցին նրան։ Թագուհու՝ յուր աշխատանքին տված տարբերանքներին պատասխանել է հայր Ղևոնդը, թե յուր աշխատանքը մի փոքրիկ գործ է, այնքան փոքրիկ, որ մրջյունները էլ կարող էին անել, որովհետև ինքը մրջնանց նման մի-այն հավաքել է և կուտակել։[12]

Ցույցերը շատ են վրդովում ծերունի Նահապետին. նա սաստիկ նեղացել էր տպարանապետի վրա, որ յուր պատկերով էր հրատարակել «Սիսուանը», և երբ այդ իմացավ, բոլոր օրինակների միջից հանել տվավ յուր պատկերն։

Երկու տարի առաջ, երբ ձայն կար նորա հոբելյանը տոնելու, ինքը խնդրել էր շանել այդ, ինչպես երևում է միաբանությունը վճռել է, այնուամենայնիվ, տոնել այդ երախտագիտության մեծ հանդեսը, որին հուսամ, բոլոր հայերը կմասնակցեն և ցույց կտան, որ ճանաչում են ազգային գրականության հերոսի արժեքն և գնահատում են։

Կիսամյա կեցության ժամանակ Վենետիկում այնպիսի սիրալիր ընդունելություն գտա ես Մխիթարյան միաբանությունից և այնպիսի օգնություն թե՛ բոլոր միաբանությունից և թե՛ հայր Ալիշանից, որ չեմ կամենում առիթը փախցնել և հրապարակով շնորհակալություն եմ հայտնում նրանց խստական հայրենի-հայկական հյուրասիրության և եվրոպական քաղաքավարության համար։ Անշուշտ, կարմանալի կլիներ այստեղ ասածներիցս հետո, եթե հայտնեի, որ հայր Ղևոնդի կենսագրությունը չէ հետաքրքրել ինձ. այդ հետաքրքրությունը շատ բնական է, թեև երբեմն դժվար հաղեցնելու։ Մինանձանց կենսագրությունը դյուրին չէ իմանալը և երկրորդ՝ շատ էլ բարդ չէ։ Ահա այն տեղեկությունները, որ ես կարողացել եմ ժողովել հայր Ղևոնդի կենսագրության մասին։

Հայր Ղևոնդ Մարգար Ալիշանը ծնվել է Կ. Պոլսում, 1820-ին, հուլիսի 10-ին, որդի է նշանավոր դրամագետ և հնահավաք Պետրոս Ալիշանի։ Տասներկու տարեկան հասակում, 1832-ին, Քերովբե Ալիշանյանը, ինչպես նա այն ժամանակ կոչվում էր, մտնում է Սուրբ Ղազարու վանքը, և 1836-ին, սքեմառության ժամանակ, կոչվում է Հ. Ղևոնդ, միաբանության անդամ է դառնում 1838 թվականի հունվարի 28-ին, քահանայանում է 1840 թվականի հունիսի 7-ին, որից

առաջ (1839 թ.) արդեն սկսել էր բանաստեղծություններ գրել։ Վարդապետական գավազան է ստանում 1845-ին, մինչդեռ 1841-ից սկսած արդեն ուսուցիչ էր կարգված Ռափայելյան դպրոցի, որի տեսուչը դարձավ 1848-ին։ Տասն տարի հետո, 1858-ին, վերատեսուչ դարձավ Փարիզու Մուրադյան վարժարանին. իսկ 1876-ին ընտրվեցավ միաբանության աթոռակալ, որ մինչև այժմ էլ վարում է։

Ձուր ամբողջ կյանքը Եվրոպայումն է անց կացրել, բացի Վենետիկից, ուր վարել է յուր կյանքի մեծագույն մասն, գիտնական և պաշտոնական ճանապարհորդություններ է արել դեպի Փարիզ, Լոնդոն, Բեռլին, Մյունխեն և Վիեննա։ Հայր Ղևոնդը հին Մխիթարյանների այն սերնդիցն է, որոնց մի արժանավորությունն էլ լեզվագիտությունն է, նա բացի հունարենից և լատիներենից գիտե քաջ գաղղիերեն, իտալերեն, անգլիերեն, գերմաներեն, տաճկերեն։

«Արձագանքն» արդեն հրատարակեց նորա գործոց ցուցակը, որից կարելի է մեծ գիտնականի բազմատեսակ գործերի մասին մի գաղափար կազմել[13], թեև նորա անկապտելի երկու արժանավորությունները այնքան մեծ են, որ եթե այդ բազմատեսակ գործերն էլ չլինեին, նա դարձյալ պիտի արժանանար նոր քերթողահայր կոչման։ Հայր Ալիշանը հայր է մեր նոր քնարերգության և հին աշխարհագրության ու պատմության։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ Հ. ՂԵՎՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆԻ

Վենետիկ, 12/24 մայիս, 1890

Ձուր որ է Վենետիկ եմ և կրնակիմ Ս. Ղազարու վանքը, որը կրնամ անվանել «Սրբոյ խաղաղութեան օթևան»։ Ապատային կվերապահեմ, Պոլիս վերադարձիս, ընդարձակորեն ծանոթացնել այս վանքի ժամանակակից կյանքը, նկարագրել վանքն ու վարդապետները. այժմ միայն օրվան խընդիրներով կզբաղիմ։ Ուր որ ըլլամ, միշտ օրվան խնդիր մը կա հոն, այս իմ բախտս է, որով չեմ կրնար առատ տեղեկություններ տալ հիմնարկություններու և անցքերու մասին։

Այս առավոտ եկեղեցիի զանգակներն, որք զարնվեցան սովորական ժամանակե դուրս, և շատ հանդիսավոր կերպով, ծանուցին վանականաց, թե սկսած է հոբելյանի տոնախմբությունը։ Մերթ ընդ մերթ զանգակները պիտի հնչեն այսօր, միշտ հիշեցնելու համար հանդեսը։

Երեք վարդապետներու քահանայության հիսնամյակն է. Հ. Ղևոնդ Ալիշանի, Հ. Աբրահամ վ. Ճարյանի, և Հ. Ղուկաս Լազյանի[1]։ Հանդիսին դյուցազնը բնականաբար Հ. Ղևոնդ վ. Ալիշանն է։ Արդեն երեկ իրիկվանե սկսյալ նամակներն ու հեռագիրները կտեղան, այլ չեմ գիտեր, թե կարելի պիտի ըլլա՞ տեղեկություն առնուլ ամեն նամակներու և հեղինակներու մասին։ Այն նամակներ ու հեռագիրներ, որք «Բազմավեպի» խմբագրության հասցեին եկած են, պիտի կրնան հրապարակ ելլել, իսկ անոնք, որ ուղղակի Հ. Ղևոնդ վ. Ալիշանի հասցեին եկած են, շատ հավանական է որ ծածուկ մնան։ Հ. Ղևոնդ վ. Ալիշան, բանաստեղծ ըլլալե առաջ քրիստոնյա է, քրիստոնյա մը, որ կատարելապես խոնարհ է և կխորշի ամեն պատվե, ամեն փառքե. վանականներն այնպես քաջ գիտեն իրեն այս հոգեկան կացությունը, որ

շվարած են, թե ի՞նչ ընեն։ Այսպես, «Բազմավեպի» մեջ հրատարակել տվավ, բռնի կերպով, որ իրեն համար հանդես պետք չէ կատարվի։ Իրմեն ծածուկ կպահվեր հանդիսի պատրաստությունները, սակայն տեղեկություն ունեցած է և հանդիսի կարգադիր մասնախմբին ըսած է, թե ի՞նչ կընեն, չըլլա թե բան մը ընեն։ Մասնախմբի անդամք պատասխաններ են, թե հոբելյանի հանդեսը պիտի կատարվի նաև մյուս վարդապետներուն համար, եթե ինքն ուզե արգելք ըլլալ, բնականաբար մյուսներն ալ պիտի զրկվին այդ հանդիսեն։ Հ. Ղևոնդ վ. Ալիշան այս պատասխանին վրա հարկադրվեր է ըսել. կփափագի, որ իր ընկերակիցներուն ամեն պատիվ ըլլա, իսկ իրեն համար ոչինչ կուզե։ Իր իղձն է, որ հանդեսներուն համար եղած ծախքը աղքատներուն տրվի, բայց խնդիրն իր իղձովը չմնար։

Հոգեկան այսպիսի կարողության տեր անձն մը պահանջել, որ հրապարակ հանե այն գովաբանական նամակներն ու հեռագիրներն, որք իրեն զրկված են, անհնարին է. պարզապես կնեղանա ու կքաշվի իր սենյակն. այսօր վանքին մեջ կմտածվի, թե ի՞նչ միջոցներու դիմելու է, կերպով մը զայնս առնելու համար հ. Ղևոնդ վ. Ալիշանի ձեռքեն. տեսնենք թե կարելի պիտի ըլլա՞ ճարտարամտություն մը գտնել։

Վենետիկեն գրած այս առաջին նամակովս չեմ կարող երկար խոսիլ հ. Ղևոնդ վ. Ալիշանի մասին. եթե թղթակցությունս հրատարակվի և Վենետիկ հասնի, մինչդեռ ես անդ կգտնվիմ, վիճակս շատ նախանձելի չըլլար։ Ուրիմն առայժմ լռեմ։ Բայց լռելովս սա չափ ըսեմ, թե չեմ կարող հաղթանակ անդադար նշմարելով այդ ծերունիի դեմքն. մեծ տաղանդ մը, հայրենասիրական մեծ ոգի մը և գերբնական առաքինություն միացած, ստեղծեր են այդ դեմքն, որուն թողած առաջին տպավորությունը անմեղությունն է։ Հ. Ղևոնդ Ալիշանի դեմքն անմեղ մանուկի մը դեմքն է։

Սակայն շատ առաջ գացի. խոհեմություն չէ այսքանը։ Խոսի՞մ իր նոր հրատարակության վրա. այլ այդ ալ խոհեմություն չէ, պիտի ըսեն։ Վանք հասնելուս երկրորդ օրը անմիջապես այդ նոր հրատարակությունը տեսնելու, աչքե անցընելու հետևեն եղա. հրաշալի բան, պատմություն,

աշխարհագրություն և պատկեր։ Ասկե ավելի ոչինչ կըսեմ։ Հոս ապրող ի՞նչ ահագին զումարներ ալ որ վատներ, այդպիսի հրատարակություն մը չպիտի կրնար ձեռք ձգել, եթե Ս. Ղազարու վանք մը պատրաստած չըլլար մի հ. Ալիշան վարդապետ, որ հիսուն տարի իր կյանքը նվիրեր մեր պատմության ուսումնասիրությանը։ Եվ երբ այդ նոր հրատարակությունը տակավին նոր դուրս կուգա մամուլի տակեն, արդեն հ. Ղևոնդ վ. Ալիշան պատրաստած է ՍԻՍԱԿԱՆ-ը, Երանյաց աշխարհի պատմությունը, զոր դրած է աբբահոր պատվանդանի առջև, տպագրության հրաման ընդունելու համար։ ՍԻՍԱԿԱՆ-ը ՍԻՍՈՒԱՆԻ շարքին մեջ չորրորդ կըլլա։ Եվ ամեն մեկ աշխարհի պատմությունները պատրաստ են։ Բայց կարելի պիտի ըլլա՞ հրատարակել։ Ներունի պատմաբանն արդեն հոգնած է, բայց երբեք չխուսա տար աշխատանքն, վասն զի կսիրե բոլոր հոգվովն ու սրտովն այն երկիրն, զոր ուսումնասիրելու նվիրած է իր կյանքը։

Այդ սակայն զանազան արգելքներ կըլլատեն ոչ միայն հ. Ալիշան վարդապետի, այլև Մխիթարյանց ուժը։ Շատ մեծ ծախքեր կան եղած և պիտի ըլլան. եթե դրսեն դրամական աջակցություններ ըլլան տպագրության համար, կարծեմ թե հ. Ալիշան վարդապետ առանց վարանելու կպատրաստի իր հատորներն ալ։ Շատ ժամանակ չունինք. ծերունին արդեն անցուցած է յոթանասունը. աչքերը տկարացած են. եթե նկատենք, որ մեր պատմության ամեն գավառի ՍԻՍՈՒԱՆՆերն ունենանք, փոքրալու ժամանակ է. առայժմ այսքան։

Վենետիկ, 12/24 մայիս

Ազգային մեծ տոնախմբություն կատարվեցավ երեկ կիրակի։ Տարակույս չունիմ, թե ո՞ր հայն որ բախտավոր ըլլար ինձ պես մայիս 12-ին գտնվիլ ի մենաստանն ս. Ղազարի, անհուն բերկրություն պիտի զգար և պիտի մեկներ աստի լի հույսով և հավատքով։ Կատարելապես ազգային էր հանդեսն արդարև. առաջին անդամն էր, հորմե հետե հիմնարկված էր Մխիթարյաններու վանքն, որ Ս. Ղազար կեդրոն

կդառնար ընդհանուր հայության սրտի բաբախումներու։ Երեկ, հայոց համար ո՛չ կրոնքի խտրություն կար, ո՛չ քաղաքի տարբերություն, ո՛չ սեռի զանազանություն, այլ միայն հայություն կար. էջմիածնեն Հռոմ ամենքն հայ էին։

Շատ զգայլալ էին Մխիթարյան վարդապետները. ամենուն ալ, երիտասարդներուն ու ծերերուն ալ, սրտերը լի էին հրճվանքով. երբ հանդիսատես կըլլան ազգային այս մեծ եռանդին, որ կարտահայտվի ազգանվեր Մխիթարյանի մը շուրջն, ինձ այնպես կթվի, որ նոր ուխտ մը ևս կընեն, ավելի ևս անձնվեր ըլլալու այն ազգին, որ այնքա՛ն ազնիվ է, որ այնքա՛ն երախտագետ է։ Երբ ժողովուրդ մը երախտիք կճանչնա, երբ ժողովրդի մը սիրտը սիրով կբաբախ վասն անոնց, որք նվիրած են իրենց կյանքն այդ ժողովրդին ծառայելու, պետք է հավատալ այդ ժողովրդի առաքինությանն ու բարոյականին, որ առաջադիմության ու զարգացումի գրավականն է։

▲

Արդեն մայիս 12/24 շաբաթ օրեն եկեղեցիի զանգակները ծանուցած էին հոբելյանի սկզբնավորությունը. նույն իրիկունը եկեղեցի իջանք և «Լույս զուարթ»-ը մտիկ ըրինք։ Ամեն ատեն, կիրակնամտի այդ նախատոնակ մելամաղձությամբ կհամակե մեր ոգիները. տխրության, բայց և հույսի շեշտ մը ունի «Լույս զուարթ»-ը, որ կգալարե մեր սրտերն. իսկ հիմա, կղզյակի մը մեջ, եվրոպական մթնոլորտի ներքև ու եվրոպական կյանքի մեջ, անցյալին ստվերները կբերե աչքերուս առջև այդ «Լույս զուարթ»-ն ու դառն խոհերով կպաշարե միտքս։

Ժամերգությունը կավարտի. երբ դուրս կելլենք եկեղեցիեն, կտեսնեմ նոր դեմքեր։

Ներկայացուցիչ երիտասարդ մը ևս եկած է. հունգարացի հայ պրոֆեսոր մըն է, պարոն Ղուկաս Բաղրուպանյան[3]. եկած է իբր պատվիրակ Հունգարիո հայոց, հ. Ալիշանի հոբելյանին։ Սրտի զեղումով իրարու ձեռք կսեղմենք. պարոն Բաղրուպանյան հանդարտ-հանդարտ, երկչոտ-երկչոտ կխոսի

հայերեն, այլ լեզուն ավելի արյունեիս է որ կխոսակցի. միևնույն արյունը կկրենք, դարերը զայնս չեն փոխած, կըրնանք շհամակրիլ ու չսիրել գիրար։ Պարոն Բաղրուպանյանեն վերջ կտեսնեմ մի ուրիշ վարդապետ, որ Մխիթարյան շքանունը ծանոթ է, հ. Հովհաննես Միսքճյան, Թրթագեղցի, որ ի Հռոմ կգանվեր. եկած է իբր ներկայացուցիչ Ագարյան պատրիարքի[4]։ Մայիսի 7-ի երկուշաբթի օրը Հ. Մխքճյան կընդունի Ագարյան պատրիարքեն հեռագիր մը, որ հրահանգ կուտար իրեն գալ ի Վենետիկ, հոբելյանի հանդիսին։ Շատ ուրախ եղա երիտասարդ վարդապետը հոս գտնելուս. երբեմն ԱՐԵՎԵԼՔ-ին հոդվածներ գրած է Հռոմեն, այդ հոդվածներու մեջ արդեն իր հմտությունը ցույց կուտար։ Լեզվագետ և ուսումնական վարդապետը կաշխատի այժմ բառարանի մը, լատիներենեն ի հայ. մե՞ծ աշխատություն մը, զոր մեզմե ոչ ոք կրնա ընել և ոչ ոք ալ կրնա ըմբռնել, թե ուրիշ մը ինչպե՞ս կրնա ընել։ Ինձ այնպես կթվի, թե այս հայ կաթոլիկ վարդապետներն իրենց մտավոր կարողություններն,— որ շատ ուժեղ են,— կզոհեն այսպիսի տաժանելի աշխատություններու, որպեսզի արժանի ըլլան աստուծո արքայության։ Այս իդեալե զատ ուրիշ նեցուկ չունին իրենց այս գրական տառապանքի մեջ։ Ուրիշ մաղթանք չենք կրնար ընել, բայց եթե ըսել, որ «աստված վարձահատույց ըլլա»։ Մարդիկ անկարող են վարձահատույց ըլլալ լատիներենեն ի հայ բառգիրք շինողին։

Գիշերը հանդարտության ու խաղաղության մեջ անցուցինք, ըստ սովորության։ Կիրակի առավոտ ծագեցավ, անամպ, զվարթ, հոբելյանի մը արժանավոր օր։

▲

Միջանկյալ պետք է մի քանի տեղեկություններ տամ։ Մխիթարյան միաբանությունը կկատարե «Քահանայական հոբելյան» և ոչ թե գրական ու գիտական հոբելյան։ Այն վարդապետներն, որոց քահանա ձեռնադրվելու հիսնամյակը բոլորած է, կտոնվին իբրև հոբելյար։ Վանքին համար խտրություն չկա այսինչ վարդապետին, այնինչ վար-

դապետին միջև. ամեն վարդապետ իբր քահանա միևնույն է. հիսնամյակի մը բոլորումն ալ շատ սովորական բան չէ։ Այս տարի երեք վարդապետներու հիսնամյակը միասին կուգար, հ. Ղևոնդ վ. Ալիշան, հ. Աբրահամ վ. Ճարյան և հ. Ղուկաս վ. Լապյան։ Երեք ծերունիներն ալ վանքին մեջ են, հանդեսն երեքին համար ալ է։ Հ. Ղևոնդ Ալիշանի համար ազգային ցույցերը միայն խոտորմունք էին։

Հոբելյանի հանդեսը կատարվեցավ, ուրեմն, այս երեք վարդապետներուն համար. երեքն ալ միասին ձեռնադրված են միևնույն օրը։

▲

Կիրակի առավոտ վարդապետներն ոմանք ուղեցին գնալ հ. Ղևոնդ Ալիշանի քով, բայց զգուշացան. հ. Ղևոնդ վարդապետ նույն օրը պատարագ պիտի մատուցաներ, առանձնացյալ կաղոթեր ու կմտածեր. ոչ ոք ուզեց վրդովել զնա։

Պատարագն սկսավ կեսօրեն երկու ժամ առաջ։ Կհավատամ, որ ամեն հայ պիտի զգացվի, երբ տեսնե պատարագելն սրտագրավ ծերունին, որ անկեղծ հավատացող մըն է։ Կպատարագե չերմեռանդ երկյուղածությամբ, հավատով հուզյալ։ Ձայնը դողդոջուն է, բայց կբխի հոգիեն, ու կհնչե մեր սրտին խորը, որպես մելամաղձիկ մեղեդի մը։ Պատարագի արարողությունը կկատարվի շատ ծանր. ո՛չ մեկ դպիր կամ վարդապետ կհապճեպե. ինձ այնպես թվեցավ, որ Սևանի վանքի մեջ եմ, ինչ եղանակ որ միասին բերած է Մխիթար Սեբաստացի, մնացած է անաղարտ։ Երբ վերջացավ պատարագը, արբահայրն սկսեց հանդարտ ու լուրջ ձայնով «Զքեզ աստուած գովաբանեմքը», որ լսվեցավ խորին չերմեռանդությամբ։ Կեսօրին եկեղեցիեն ելանք. մեկ ժամ վերջ պիտի սկսեր դահլիճին հանդեսը։

Այս միջոցին հեռագիրները կհասնեին հետզհետե, մեծ մասը Ռուսաստանեն. առավոտուն ալ արդեն բավական թվով հեռագիրներ հասած էին։ «Բազմավեպի» խմբագրությունը, որ այս հոբելյանի կարգադիր մասնախումբն է, կնեղվեր այդ ամենը կարգադրելու և ներկայացնելու համար Ռուսաստանի հեռագիրներուն ամենատվար մասը է հայերեն լեզվով և ֆրանսերեն տառերով. ասոնցմե բան մը հասկանալու համար պետք է արտաքո կարգի կարողություն։

Դահլիճի հանդեսը կսկսի, բայց հոն երթալե առաջ կմբռնենք ճեմարանը, ուր գետեղված են քանի մը ընծաներ։ Պոլսեն զրկված ոսկեհուռ բարձ մը կա, ու մի քանի եկեղեցական զարդեր։ Գեղեցիկ շրջանակի մը մեջ է հ. Աբրահամ վ. Ճարյանի պատկերը, զոր Պոլսեն գծագրած ու զրկած է էդգար էֆենդի Շահինյան[5], որ Գատըգյուղի Մխիթարյանց վարժարանին աշակերտ եղած է հ. Ճարյանի տնօրինության միջոցին։ Ամենքն ալ կհավնին այս գեղեցիկ նկարին։ Ի տես դրված է նաև «Հայկական նոր օրացույցը», մեծ շրջանակ մը ժամացույցի ձևով, զոր հորինած է «բարձրաթռիչն» էմմանուել էֆ. Եսայան[6]. հետաքրքրական ու ազգասիրական օրացույց մը, որու մասին կարժե ավելի ընդարձակ տեղեկություններ տալ, բայց հիմա տեղը չէ, մանավանդ որ ես կարող չեմ։ Էմմանուել էֆ. Եսայան կնվիրե այս գործը հ. Ղևոնդ վ. Ալիշանի։

Օրացույցը սքանչելի գեղագրությամբ գրած է մեր արվեստագետ Հովսեփ էֆ. Վասիլյան։ Երբ «Թառոմինա»[7] Վենետիկ հասավ, մաքսատան պաշտոնյաները եկան քննելու մեր ինչքը. բացին նաև այն փայտե մեծ տուփը, որուն մեջ բանտարկված էր ազգասիրական օրացույցը. մաքս ուզեցին։ Այդ օրացույցին համար կըսեին թե փորագրյալ է։ Չէին հավատար, երբ ըսինք թե ձեռագիր է։ Երիտասարդ պաշտոնյա մը եկավ, ուսյալ էր, գեղարվեստական գործերու հսկող, չէր կրնար հավատալ, որ այսպիսի գեղեցիկ գործ մը ձեռքով շինված ըլլա։ Նավին նավապետներն ու ուրիշ պաշտոնյաներ եկան, ամենքն ալ փորագրված է կըսեին. վերջապես նավապետը, որ կհավատար իմ խոսքիս, ապահովցուց մաքսավորներն, որ ձեռագիր է.

— Քոսբե՛թթո— կըսեին զարմացած[8].

▲

Մեծ դահլիճը պատրաստված է շքեղապես. ճակատը զրված է ագևոր դաշնամուր մը, որուն դեմը նստած է իտալացի նվագածու մը և բոլորը շարված են Մուրադ-Ռափայելյան վարժարանի աշակերտք։ Փոքրիկ անջրպետ մը կբաժնե հանդիսականները նվագարանի մասեն։ Սեղան մը զետեղված է սրահին ձախակողմը։ Առաջին կարգը նստած է իր թիկնաթոռին մեջ աբբահայրը, ձախ կողմը հ. Աբրահամ վ. Ճարյան, աջ կողմը հ. Ղևոնդ վ. Ալիշան, իսկ հ. Ղևոնդի քամակը նստած է հ. Ղուկաս վ. Լազյան։ Հ. Ղուկաս վարդապետի կարգը նստած է պարոն Բաղրուպանյան, հ. Աբրահամ Ճարյանի քովն է հ. Միքսճյան և հ. Ղևոնդ վ. Ալիշանի քովն իմ տեղս է որոշված։

Վարդապետք, աշակերտք, հյուրեր զրաված են դահլիճը. հանդեսը կսկսի ազգային երգով մը, զոր կերգեն Մուրադ-Ռափայելյան աշակերտները։ Երգը լմննալե վերջ, սեղանին քով կկանգնի հ. Բարսեղ Սարգիսյան[9] և կկարդա գրաբար մի ճառ, որ արդեն տպագրված կբաշխվի հանդիսականներու։ Երիտասարդ վարդապետն արդեն մոտ է մեր գրականության մեջ մեծ համբավ ստանալու. տարին չբոլորած օրվան հետաքրքրական նորությունը պիտի համարվի հ. Բարսեղ։ Կորովի շեշտով, առույգ ձայնով կկարդա իր ճառը, կարծես թե վսեմ երաժշտություն մը կլսեմ. մտքովս չեմ կրնար հետևիլ ըսածներուն, գրաբարի լաբյուրինթոսին մեջ կկորսվիմ, բայց ականջներս զմայլած են. օտարականներն ալ նմանապես զմայլած են։ Հետո կարդացվեցան Վիեննայի Մխիթարյան միաբանության շնորհավորագիրը։ Այդ նամակ, որ գրաբար գրված է, շատ ցուրտ է,— գեթ ինձ այնպես թվեցավ։ Ընթերցողներն անշուշտ պիտի զարմանան լսելով, որ Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայրը՝ Այտընյան գերապայծառ[10], չէ բարեհաճած ստորագրել այս թուղթ, այլ փոխանորդի մը միջոցավ կշնորհավորե զԱլիշան։ Կարծեմ թե Այտընյան մը ինքզինքը Ալիշանե մը շատ բարձր նկատելու հավակնությունը պետք չէ ունենա։

Երաժշտություն ու երգ կընդմիջեին այս ընթերցումներ։

Երբ կարգն եկավ հանդեսի զուտ ազգային մասին, երիտասարդ վարդապետ մը կարդաց այն նամակ, որով Պոլսի Հայ հասարակության մեջ հ. Ալիշանի հոբելյանին համար կազմված մասնախումբը կծանուցաներ Մխիթարյանց աբբահայրը, թե Արփիար Արփիարյան զրկված է իր կողմանե իր ներկայացուցիչ այդ հանդեսին։ Այս գրե վերջ մասնախումբի կողմե ներկայացուցիչը կարդաց այն բարեմաղթության գիր, զոր ստորագրած էին բազմաթիվ հայեր։ Շատ կարճ էր այդ բարեմաղթություն գիրն, այլ իր կարճության մեջ շատ իմաստալից, շատ սրտալիր. թողած տպավորությունը լավ եղավ։ Կարդալով ստորագրությունները մի առ մի, հայտարարեցի, թե շաբաթ իրիկուն ընդունած նամակներս կծանուցանեն, որ Պոլսի հայոց մեջ անսահման խանդ և ողևորություն կտիրե, թե այդ բարեմաղթական գրի ներքև պիտի դրվեր բյուրավոր ստորագրություններ, բայց մեկ կողմանե ժամանակի կարճությունը, մյուս կողմե զանազան նկատումներ հարկադրած են մասնախումբը բավականանալ այսքան ստորագրություններով. այլ այդ ստորագրություններ կրնան համարվիլ Պոլսի հայոց զանազան դասակարգերու ստորագրությունները։ Ստորագրած են այդ թուղթի ներքև մեր արվեստավորներու դասին, վաճառականներու դասին, դրագետներու դասին, խմբագիրներու դասին շատ ներկայացուցիչներ։

Բարեմաղթության այս գրի ընթերցումեն վերջ, վարդապետը կարդաց նաև մասնախմբի ուրիշ մեկ նամակն որով կհաղորդեր թե Պոլսի հայ հասարակությունը կպատրաստե դուքնաքյա հիշատակ մը հ. Ղևոնդ վ. Ալիշանի հոբելյանի առթիվ, սակայն անհնարին եղած է հասցնել ժամանակին, ուստի պատրաստվելով, պիտի զրկվի առաջիկա հունիս ամսի մեջ։ Պետք է ըսեմ, թե այս հապաղումի պատճառն առկախ է մասնախումբի կամքեն։ Նախապես որոշած էր հունիսի մեջ տոնել հ. Ալիշանի հոբելյանը և այսպես ալ ծանուցվեցավ, պատրաստություններն ալ ըստ այսմ սկսան տեսնվիլ, սակայն հետո թվականը փոխվեցավ և ուշ հաղորդվեցավ այդ փոփոխությունն։

Պոլսի բարեմաղթությունները վերջանալն հետո, Հ. Թադեոս վարդապետը[1] կարդաց, Մխիթարյան ձայնով, սրտագրավ բանաստեղծություն մը, երգերը կշարունակվեն. ապա ուրեմն, անցավ ի գլուխ սեղանին, որ կծառայեր բեմի տեղ, պարոն Բաղրուպանյան և իբր ներկայացուցիչ Մաճառիստանի հայոց, կարդաց հետևյալ բարեմաղթական դիրը, որ գրված էր մաճառերեն լեզվով, և թարգմանությունն ալ էր ի միասին։

Առ գերապատիվ հայր Ղևոնդ Ալիշանյան,
Տեր արոռակալ ի Վենետիկ.

Մաճառիստանի ազգագրական ընկերություն առնելով ի նկատի, որ սույն մայիսի 25-ին, սուրբ դալստյան տոնին պիտի կատարվի Ձեր գրական գործունեության հիսունամյա տարեդարձը, կողջունե Ձերդ գերապայծառության, որպես ամենանշանավոր հայ գիտնականներու և ամենամեծ բանաստեղծներու մինին, և սույն տոնին առթիվ պիտի դա ի Վենետիկ, իբր ներկայացուցիչ մեր ընկերության նորա հայկական ճյուղի ուսուցչապետ Տեր Ղուկաս Բաղրուպանյան, որ երբեմն ուսել է հայոց լեզուն ի Վենետիկ։

Մենք չկամինք մի առ մի հիշել ասա այն մեծ ծառայությունք, որք վերաբերին Մխիթարյանց միաբանության, ի միջի անոնց և Ձեր գերապատվության, որպես փայլուն աստղին այն միաբանության, ընդհանուր մարդկային քաղաքակրթության և հայոց լուսավորության, մասնավորապես արած ծառայությունք, որք լուսավոր աշխարհի քաջ ծանոթ են։ Մեք, համաձայն որոշման մեր ընկերության, կշնորհավորենք Ձեզ, գլխավորապես որպես հայ ազգագրագետին և միջնադարյան ռամկական երգոց հայոց հրատարակչին[2], որո գործունեությունը բազում կողմանե ունի կապ ազգագրության հետ։ Այսպես, Ձեր գրվածքներու շարքի մեջ կհիշենք մեր միայն «Շիրակը», որ կպարունակե մեր բնավայրի այն կողմի տեղագրություն, ուսկից որ կծագին մաճառաբնակ հայերը և որ աչքի պիտի առնենք մաճառահայերի ազգագրությունը ուսումնասիրելու ժամանակ, որ մեր ընկերության նպատակներեն մինն է։

Ընդունեցե՛ք, հեղինակդ «Շիրակի», Ձեր տարեդարձի առթիվ մեր ջերմ ողջույն ուսումնական ընկերություններու մինեն այն ազգի, որո գրկի մեջ ու հողի վերա մաճառահայերը՝ որդիք Շիրակի, ժամանակի ընթացքին հետևելով, մի ավելի նոր ու խաղաղ հայրենիք գտել են։

Կեցցե՛ Ղևոնդ Ալիշան, անմահ բանաստեղծ ու գիտնական, թո՛ղ ծաղկի ու ծլի գիտնական Մխիթարյանց միաբանությունն։

Բուդապեշտ, 21 մայիսի, 1890 թ.
(Ստորագրությունք)

Մաճառիստանի մեր եղբայրներու այս բարեմաղթական հանրագիրը խորապես հուզեց ամեն սրտեր. քանի՜ հիշատակներ արթնցան մեր սրտերու մեջ, մեր մտքերու մեջ. ամենուս աչքերը երիտասարդ Բաղրուպանյանի երեսն հառած էին։ Երիտասարդ ուսուցչապետն ունի կատարելապես հայկական տիպար։

Այլ ո՞վ պիտի նկարագրե այն խորին հուզումն, երբ ծերունի հ. Ղևոնդ վ. Ալիշան ոտքի կանգնեցավ և կարդաց այն բանաստեղծությունն զոր կդնեմ հոս։

Կարմրցած էր ծերունին. աչքերն արցունքով լեցված, ձայնն հուզյալ ու դողդոջուն, փոքրիկ բանաստեղծությունը կկարդար աչքերը խփած։ Անոնք, որ ապրած են հ. Ղևոնդ Ալիշանի հետ, իր նախկին աշակերտներն, անոնք միայն կրնան գաղափար մը կազմել բանաստեղծին այս բոպեին զգեցած դեմքի մասին։ Հ. Ալիշան այդ բանաստեղծությունը գրած էր նույն միջոցին, թուղթի մը կտորի վրա։ Բայց առանց հ. Ալիշանի ձայնին ու դեմքին, ինչպե՞ս այդ բանաստեղծությունն առաջ բերել. այլ ո՛չ ձայնագիր ունիմ քովս, ոչ լուսանկարիչ գործիք։ Ահավասիկ այդ բանաստեղծությունն, որ հ. Ալիշանի շնորհակալությունն է.

Հոլովելով ընդ զասիվայր կենցաղոյս՝
Ի թռան կառաց խորտակելոց դիր և տար,
Որոց վերայ յարևաւ աշխարհ նոր, նոր լոյս
Ցե՞րբ ի՞մ, զաղիտդի ոնիւ զլիցիս անդադար։

Քանի՞ ամրոխ աղաղակի այս կես դար,
Որոտացին, վրդովվեցին գնայս եւ կոյս,
Եւ դու դանիռուլ վարեալ յԱջոյն անվրիպաբ՝
Անցեր ընդ հին հասակս, ընդ տիս դեռաբոյս։

Որք բոլորեալ ըզքեզ ի մօտ եւ հեռուստ,
Անխնայապէս սիրէն օրհներգս այդ հարուստ
Զեկեղեցւոց եւ զհայրենեաց՝ յաւերժ մարց

Զի՞նչ այսքանեաց երախտեաց ասց ես տրիտուր...
Ո՞վ, որ զնոսա ինձ նոցա զիս նուր,
Աղրի՞ւր սիրոյ, ըզքեզ տամ քեզ, տո՞ւրք անդարձ։

Ո՞չ ոք կրնար տեղը նստիլ, երբ հ. Ալիշան, աչքերը արցունքով լի, երկինք հառեց և ըսավ.

Աղբի՞ւր սիրո.

Այդ բոպեն անմոռանալի պիտի մնա ինձ համար, որ հ. Ալիշանի քովն ըլլալով աչքերովս տեսա իր աննման դեմքն այդ բոպեին։ Միայն լսելու համար այս բանաստեղծությունն հ. Ալիշանի բերնեն և զինքն այդ բոպեին նշմարելու համար Պոլիսեն ի Վենետիկ գալ կարժեր։

Դահլիճի հանդեսը վերջացավ. շարունակելի հանդեսը կշարունակենք։

Վենետիկ, 15/27 մայիս.

Դահլիճի հանդիսի հուզումը հոգնեցուցած էր զամենքն. այդ հանդես տևած էր ավելի քան երկու ժամ, հանգչելու ատենն էր։ Մեկ ժամի չափ հանգչելե վերջ հնչեց սեղանի զանգակը։

Հացկերույթը փառավոր է. վանքի սեղանատունը, որ կրնա հոյակապ ըսվիլ, գրված էին Մուրատ-Ռափայելյան աշակերտներն, վանքի աշակերտներն. իսկ մեջտեղը դրված էր վարդապետներու և հրավիրյալներու սեղանը. փառավոր պատրաստված սեղան մը, որու կնախագահեր արբահայրն Իգնատիոս Կյուրեղյան։ Աբբահոր դեմ նստած էր Վենետիկի պատրիարքը, կարդինալ Ակոստին Տոմենիքո։

Կարդինալին հետ են՝ մի քանի ԲԱԴԵՐԱՆԵՐ[13], եկած է նաև Բենեդիկյան կրոնավորներու աբբահայրն մի քանի վարդապետներով։ Աչքս ուր դարձնեմ, կտեսնեմ բադերամենքն ալ առույգ, կորովի, գեր։ Եթե այդ եկեղեցականներ անձնվեր են իրենց ժողովրդին, չեն մոռանար իրենց անձը, հակապատկեր մը կկազմեն Մխիթարյաններու հետ։ Առողջ են Մխիթարյանները, բայց գրեթե ճգնավորական կյանք կվարեն, սակավապետ են. ի՞նչ անհուն տարբերություն մարմնի մասին ի մեջ բադերաներու և Մխիթարյան վարդապետներու։

Բոլոր հանդիսականները կարգավ նստած են, պատվո տեղերը պահված են այն հյուրերու, որք հեռուեն կամ մոտեն եկած են։ Սեղանին ծառայելու համար քաղաքեն եկած են մասնավոր ԳԱՐՍՈՆՆԵՐ, սեղանն համաշխարհական է, հակառակ իր եկեղեցական դույնին։ Ի՞նչ նկարագրեմ այդ սեղան. մեծ և փառավոր հացկերույթի մը կատարյալ սեղանն էր, որուն վրա տեսակ-տեսակ գինիներու մեջ մարսալան ու շամպանիան առատ էին։ Սեղանը շարունակվեցավ զվարթ կերպով, բայց միշտ եկեղեցական ծանրությամբ։ Երբ ճաշը կես եղավ, աբբահայրը խոսք առավ. խոսեցավ իր դաշն ու մեղմ համակրելի ձայնովը. շնորհակալություն հայտնեց մի առ մի եկեղեցական պետերուն, որք հոբելյանին առթիվ իրենց օրհնություններն ու բարեմաղթությունները ղրկած էին։ Շատ զգացյալ շեշտով շնորհակալություն հայտնեց աբբահայրն Պոլսի հայ հասարակության և հայ լրագրության, որոնք այնքան փափկանկատությամբ ներկայացուցիչ մը ունեին այս հանդիսին. երբեք Մխիթարա վանքին մեջ հոբելյանի մը առթիվ այսպիսի պարագա չէր ներկայացած։ Նույն զգացյալ սրտով շնորհակալություններ Հունգարիո հայոց, որք նման Պոլսի, ղրկած էին իրենց ներկայացուցիչը։ Սիրալիր ու ջերմագին շնորհակալություններ ամեն անոնց, որք նամակով ու հեռագրով շնորհավորած էին վանքի բազմարդյուն աշխատավորներն և մասնավորապես հ. Ղևոնդ վ. Ալիշանը։

Հանդիսականներու կողմանե ջերմագին շնորհակալություններ։

Ճաշը շարունակվեցավ։ Այդ միջոցին մի վարդապետ ներկայեց գեղեցիկ նկար մը, որուն վրա լատիներեն գրված

էր հիշատակություն երեք հոբելյարներու համար։ Այդ նկար կնվիրեին Վենետիկի Բենեդիկյան վարդապետները։ Հետո ոտքի ելավ հ. Սամվել վարդապետ[14], Մուրադ-Ռափայելյան վարժարանի ուսումնապետն, և իր «Ոսկեդարյան շեշտովը» կարդաց մի ջղուտ բանաստեղծություն։ Ճաշը փոքր-ինչ շարունակվելն վերջ, ես փափագեցա խոսիլ։

Շնորհակալություններս հայտնեցի առ աբբահայրն իր հայտնած զգացումներուն և ինձ բրած ընդունելության մասին և մի քանի խոսքեր արտասանեցի օրվան հանդիսին առթիվ։ Հանդիսին նկարագրության մեջ, պարտական եմ, իբր թղթակից, այդ խոսքերն համառոտել այստեղ։

Ըսի թե, քրիստոնեությունը կտոնե իր սուրբերուն մահվան օրն. Մխիթարյան միաբանությունն ալ, երբ կտոնե իր քահանաներուն հոբելյանը, կարծեմ թե տոնած կըլլա միանգամայն անոնց մահվան հոբելյանն։ Արդարև, այն որ երիտասարդ մը այս վանքին մեջ քահանա կձեռնադրվի, այդ օրն արդեն իր մահվան օրն է, իր աշխարհական կյանքին։ Հրճվանքի, վայելումի կյանքը վերջնականապես թաղած է այդ օր։

Այս իմաստով համառոտ հառաջաբանե մը վերջը պարզեցի հ. Ղուկաս վ. Լազյանի բարեմասնություններն։ Այդ ծերունիի համար կրնամ ըսել, թե խոստովանանքն իր մասնագիտությունն է, հազարավոր պատանիներու և երիտասարդներու ուղղություն տված է կյանքի մեջ։ Իսկ իբր արվեստագետ նշանավոր ծառայություններ բրած է վանքին բարեկեցության համար. Մխիթարյան վանքի բարեկամները խնդակից կըլլան հ. Ղուկաս վարդապետի հոբելյանին և երջանկություն կմաղթեն իրեն։ Խոսելով հ. Աբրահամ վ. Ճարյանի մասին, հայտնեցի, թե իբր տեսուչ ինչպես նշանավոր հանդիսացած է և ազգին տված է քանի՞-քանի՞ աշակերտներ, որք իրենց տեսչին պես անկեղծ ու համարձակ ոգիով տոգորված սփռվեր են ազգիս զանազան դասակարգերու, վաճառականության, գրականության, դասատվության, սեղանավորության մեջ և ամենուրեք հանդիսացած են նշանավոր։ Իսկ իբրև մատենագիր հ. Աբրահամ վ. Ճարյան, մեր գրականության տված է լավ գրաբարով թարգմանություններն հույն և լատին հեղինակներու։ Այդ հեղինակներու արժանիքն ոչ միայն իրենց գրական պարզ ու կորովի լեզուն և ոճն է, այլ նաև այն ոգին, որով Եվրոպա կրթեց հարյուրավոր սերունդներ, իրենց օրինակ ընծայելով այդ մատենագիրներու դյուցազներն. ուրեմն երջանկություն կմաղթեի այդ արդյունավոր վարպետին շնորհավորելով իր հոբելյանը։

Հ. Ղևոնդ վ. Ալիշանի համար շվարած էի, թե ի՞նչ ըսել։ Տիեզերական այս ցույցին հանդեպ մի՞թե լռելս խոհեմություն չէր։ Բայց Պոլսեն մինչև Վենետիկ չէի եկած լռելու համար։

Ծանր է վիճակս, ըսի. միշտ անհաշտ թշնամի հանդիսացած եմ անոնց, որք հավակնոտ են ու հպարտ. այդպիսիներու դեմ կռված եմ ու պիտի կռվիմ, վասն զի հավակնոտներն ու հպարտներն երբ օրինակելի տիպարներ հանդիսանան, ընկերակցությունն անհնարին կդառնա, հասկանությունն ու խնդծավորությունը կտիրապետեն, և ժողովուրդը կքայքայի։ Սակայն հիմա փորձությունս կշարժի, թե արդյոք համեստության, խոնարհության, անկեղծ առաքինության ալ թշնամի հանդիսանա՞մ դեթ մեկ օրվան համար։ Ի՞նչ ըսեմ, որ չվիրավորվի հ. Ղևոնդ վարդապետ Ալիշան. շվարումես չեմ դիտեր ի՞նչ ըսել։ Վստահ եմ, թե հ. Ղևոնդ վ. Ալիշան երջանիկ պիտի համարի ինքզինքն, եթե մենք Խորենացին հալածող հայերուն արժանավոր զավակներն ըլլանք ու այնպես վարվինք հ. Ալիշանի հետ, ինչպես մեր հարք Խորենացիի հետ։ Իբր խոնարհ քրիստոնյա՝ անտարակույս հ. Ալիշան պիտի գոհ մնա կրած հալածանքեն, բայց իբր հայ, իբր մարդ որ կցանկա ընդհանրության բարոյական զարգացումին, կրնա՞ գոհ ըլլալ, եթե մենք հայքս անտարբեր մնանք հանդեպ իրեն, կամ թշնամանենք զինքը։ Արդարև, հայերն հ. Ալիշանի անտարբեր ըլլալու համար, կամ զնա թշնամանելու համար, պետք է որ վերին աստիճանի բարոյական անկումի մեջ գտնվին. ապերախտ կըլլան միայն ապականյալ անհատներն ու ժողովուրդներն. կըդձա՞ր հ. Ալիշան, որ մենք գտնվինք այդ բարոյական անկումի մեջ։ Ո՛չ։ Արդ, քանի որ մենք բարոյապես անկյալ

չենք, բնական է, որ ի խորոց սրտի պաշտենք զԱլիշան, իր բոլոր ժողովինք, դրվատենք զինքն ու մեծարենք։ Ուրեմն թող ներողամիտ ըլլա ինձ հ. Ալիշան, եթե չեմ կարող ի դիմաց հայոց նախատել զինքը։

Այս խոսքերե հետո համառոտ կերպով մը նկարագրեցի այս հիսուն տարիներու ոգին. այս հիսուն տարիներու մեջ հայ ազգն ունեցավ իր մեծ քերթողները, քարոզիչներն, հրապարակագիրներն, արվեստագետներն, վիպասաններն ու դրագետներն. պատմական անհերքելի օրենքները ցույց կուտան, թե ժողովուրդներու կյանքի մեջ կա դարուն մը, ուր զորավոր մտքերը պետք է ծլին ու ուռճանան և սնունդ տան այդ ժողովրդին։ Այդ գարնանային արևը առաջ բերավ հսկա ծառ մը, որ կկոչվի Ալիշան և որ կըլլա հայ ազգին մեծ հովանիներեն մին։ Ի վերջո ակնարկություններ ընելով հ. Ալիշանի ունեցած ազդեցությանը վրա, վերջացուցի խոսքս սրտագին բարեմաղթություններս ընելով ի անուն իմ ներկայացուցած հայ հասարակության, ի անուն իմ ներկայացուցած լրագրության։ Ամեն բաժակներ բախեցան հ. Ալիշանին և իմ բաժակներու, անխառն, անապակ խնդությամբ։ Երգերն ու բանաստեղծությունները շարունակվեցին։ Մխիթարյան տպարանը պատրաստած էր իր կողմե գեղեցիկ ձոներ. աշակերտները նույնպես պատրաստած էին գեղեցիկ նկարներով գրություններ. փոքրիկները խմբովին երգեր երգեցին։

Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշակերտք հետամնաց չէին։ 21-րդ դասու (դասերը կհամրվին Ռափայելյան դպրոցը բացված օրեն) աշակերտք մատուցին շքեղագիր ուղերձներ. պարոնայք Աստուրյան Հակոբ, Հյուրմյուզյան Սերովբե, ներկայացուցին սքանչելի շքեղագիրներ. Պ. Պողոս Յուսուֆյան կարդաց բարեմաղթական գիր մը շատ լավ գրված. 22-րդ դասեն Պ. Միքայել Թնկրյան ներկայացուց ինքն ալ ամենաշքեղ ծաղկենկար մը։ Այս ամենը ի դիմաց վարժարանին էին։

Իտալացի երիտասարդ փաստաբանի մը բաժակաճառը ընդհանուր ոգևորություն ստեղծեց։ Համակրելի երիտասարդ մը՝ այդ փաստաբանը, պ. Ջերուդդի, հուզյալ խոսեցավ պերճ

լեզվով, պերճագույն ձևերով։ Դրվատեց Մխիթարյաններն, շատավ թե ինչպիսի՞ ծառայություններ կմատուցանեն Վենետիկի գավառին, ինչպե՞ս տակավին իրենց շնորհիվ Վենետիկի անունն անմահ կմնա արևելքի մեջ. հայտնեց իր զարմացումը հ. Ալիշանի համար. ի՞նչ դյութիչ անձնավորություն է, որ մինչև իսկ իրեն համար Պոլսեն իր աշակերտը կուգա Վենետիկ, ուրախակից ըլլալ հանուն իրենց (Վենետիկի լրագիրները հրատարակած էին, քիչ մը չափազանցորեն իմ դալուստս և պաշտոնս)։ Պ. Ջերուդդի, իբր Վենետիկցի իր երախտագիտությունն հայտնեց առ Մխիթարյանս. հանդեսը փակեց պատրիարք կարդինալը իտալերեն բանաստեղծությամբ մը, ոտանավոր մը, զոր ինքն գրած էր։

Օդը մթագնեցավ. որոտումը սկսավ հանկարծ. անձրևը տեղատարափ կիջներ. լուսավորությունը պիտի փճանար։ Բայց շուտ կպարզի երկինք. զով հովը կփչե. պարտեզն հիանալի կերպով լուսավորված է. կփայլի էլեկտրական լույսը. վենետիկյան լապտերները դույնզդույն ամենուրեք կհրճվեցնեն աչքերն ու մինչ կես գիշեր խրախճալիր կճեմենք, կխոսակցինք, կուրախանանք։

Հետզհետե հեռագիրներ կհասնին։ Կես գիշեր է, պետք է հրթալ ննջել։

Վենետիկ, 15/27 մայիս.

Գեղեցիկ առավոտ մը ծագեցավ, երկուշաբթի առավոտը. հրճվալի էր վաղորդայնը։ Այս օրն հատկացած էր նվագահանդեսի։ Առավոտուն պատարագեց հ. Ղուկաս Լազյան. հետո ճաշ, և կեսօրեն վերջ նվագահանդես։ Չկարծվի թե նվագահանդեսը էր ԼԻԹԱՆԻԱՆերու և ՕՐԵՄՈՒՄՆերու[15] անընդհատ շարունակություն մը. ընդհակառակն, Վենետիկի թատրոններու լավագույն երաժիշտներն եկած էին, թվով տասնևչորս, որոց խմբապետ էր սինյոր Ռաֆաելի Քարքանո, հրիտասարդ դաշնակահարը։ Երգիչ ԹԵՆՈՐԸ տա Քարրիլե, Ֆինիչեի թատրոնի երգիչն էր։ Անոնք, որ գաղափար ունին Եվրոպիո թատրոններու մասին, գիտեն թե ի՞նչ դիրք ունի Ֆինիչեն, և ինչ կըլլա տենոր ԹԵՆՈՐԸ[16]։

Նվագահանդեսը տևեց երեք ժամ։ Տխուր ու ուրախ տասնեվեց հատվածներ նվագեցան ու երգվեցան, և հանդեսը փակվեցավ Մուրատ-Ռափայելյան վարժարանի աշակերտներու ԲԱՀՄ. ՓՈՐՈՏԱՆ[17]-ովն։ Ազգային երգը կրկնվեցավ. ես, որ կարոտ էի այդ երգին, անպատում հրճվանք զգացի։ Եվ այս պահուս հեռագիրներ ու նամակներ հետզհետե կհասնեին. կիրակի օրվան ուրախությունը կշարունակվիր. այսօր տակավին ԱԲԵՂԱԹՈՂ էր։ Վանքի կանոնները թուլցած էին գեթ երկու օրվան համար։ Շնորհիվ ԱԲԵՂԱԹՈՂԻ տրված իրավունքին, այս գիշեր վարդապետները կրցան ճաշել սովորական սեղանատունեն դուրս, ճեմարանի մեջ։

Ուրախակցության սեղանն էր. մի քանի հեռագիրներ ևս կարդացվեցան։ Գերապատիվ աբբահայրը վերստին կրկնեց առանձինն-առանձինն իր շնորհակալություններն, հանուն միաբանության, այն ընդհանրական ցույցին համար, զոր ազգն ըրավ Հ. Ալիշանին։ Այս իրիկուն հասավ մի գեղեցիկ բանված «Ոգի ընակավայրի» զոր Նապոլիեն կղրկեր պ. Շահլամյանց[18], որ կցավեր անձամբ այս հանդիսին ներկա չկարենալ գտնվելուն։ Մի կույս է այդ «Ոգին», որ տխրագեմ ու հերարձակ նստած է ավերակներու վրա։ Մետաքսով ու մարգարիտով բանված են կույսն ու ավերակներն և անունները։ Նահապետի սրտին շատ հուզիչ էր այդ պատկերը։

Կես գիշերը կմոտենա, ամենքը խոնջ կքաշվին իրենց սենյակները. վաղը պիտի սկսի վանական կյանքն իր բոլոր խստությամբ ու... հրապույրով։ Հրապուրի՞չ կյանք վանականներու համար. և պիտի ըսեմ թե հրապուրի՞չ նաև ինձ։ Եվ ես ալ, քովս առած նամակներու և հեռագիրներու կույտն, անոնցմե պատրաստեմ նյութեր մեր ժողովրդյան համար։

Պոլսեցիք տակավին կշարունակեն և պիտի շարունակեն իրենց պատրաստություններն հոբելյանի առթիվ. հոբելյանը եթե վերջացավ վանքին համար, բայց ոչ ազգին համար։ Պոլսեցիք այդ ավուր հիշատակը պետք է հիշատակով մը պահեն ս. Ղազարու վանքին մեջ։ Նամակներն ու հեռագիրները մխիթարական են. իրավ է, որ կպակսին մեր պաշտոնական անձերու շնորհավորությունները. բայց պաշտոնական անձինք այն ատեն կարևորություն ունին, երբ թարգման կհանդիսանան իրենց ժողովրդի զգացումներուն և գաղափարներուն. երբ այդ ժողովուրդ կարող է անգուսպ կերպով հայտնել իր սրտին տրոփումներն ու հոգիին բաբախումներն, այլ ի՞նչ նշանակություն ունին պաշտոնական անձինք։ Այն ատեն լոկ անհատներ են, ինչպես կան բյուրավոր ուրիշ անհատներ. կարող չենք յուրաքանչյուր անհատի մեջ կարևորություն տալ, երբ «Ազգ բարբառեցաւ»։ Մեր եկեղեցականությունը թե՛ ի Թուրքիա և թե՛ ի Ռուսիա իր ժողովրդական ներկայացուցիչներու միջոցով կարող եղավ ներկայանալ Ս. Ղազարու վանքի հանդիսին։ Ամեն կրոնական նախապաշարում «Հալին և հալածին» ազգության գաղափարի հանդեպ։

Հոբելյանին առթիվ ընդունված նամակներեն հիշատակություն մը կընեմ միայն, մեկ-երկու նամակ ընդօրինակություններ ընելով, իսկ հեռագիրներն ամբողջապես կներկայացնեմ, քիչ տեղ, իհարկե ստիպյալ, մի քանի բառ ջնջելով, կամ մի քանի բառի տեղ ուրիշ բառ դնելով։ Ընդունած հեռագիրներ կպարունակեն ամբողջապես 2527 բառ։

Ուրեմն նախ՝ նամակներուն դանք[19]։

▲

Առանց կարգի կանոնի կառնեմ ձեռքս ինկած նամակները։ Դիպվածն է, որ ինձ կուտա առաջին նամակը։ Պարոն Տնկանցի նամակն է, Փարիզեն գրված։ Այդ նամակի մի մասն, առաջին մասը կօրինակեմ, զոր մեր սրտերը ցնցեց։

21 մայիսի, Փարիզ.

Հայր հոգեշունչ.

«Այս գիշեր մեր Թնավայրի մեջ, Համբարձման տոն կկատարեն. կհիշեմ, որ մեր մամիկները կրսեին մեզ.— Վաղեք, տղեյներ, վազե՛ք Վարագա սարերն ի վեր ելեք, այս գիշեր սար ու քար զմեն, զմեն ծառ-ծաղկունք լեզու կառնեն ու կխոսին, և այն բոպեին ինչ որ ուզեք, աստվածը ի բարին կկատարե»։

Մեր հարց ու մարց հավատքով պիտի հսկեմ այս գիշեր ողջույն, և պիտի խնդրեմ, որ Գրիգորի, Ներսեսի, Սահակա, Եղիշեի, Շնորհալվո, Վարժապետյանի, Ալիշանի, Հայրիկի աստվածը ի բարին կատարի սուրբ կենացդ մասին։

Համբուրիվ սուրբ աջույդ
մնամ

Ս. Տ. Տեկանց.

Տեր Ղևոնդ Մ. Ալիշան.

Ի Վենետիկ.

«Ի խորոց սրտի շնորհաւորեմ ղյիսնամեայ յոբելեան արդիւնաշատ կենաց մեծի վարդապետիդ ի գրագիտութեան, ի քերթողութեան, ի տեղագրութեան և յիմաստասիրութեան Շիրակայ, Սիսուանայ և Այրարատայ և հանուրց Բնավայրաց։ Եւ մաղթեմ կրկնակի ունել ձեզ կեանս ամենայն արդասեօք հայրենաւանդ հնութեանց լուսանորոգ պայծառացուցեալ և պայծառացուցեալ յուխտին Մխիթարայ՝ գլարատեւութիւն հնագարեան նուիրական Ուխտից և յիշատակաց Բնավայրի[20]։

Մեծաւ սքանչացմամբ, եմ և,
մնամ հայրենախոս Պլպուլիդ
Աւարայրի սիրատենչ օրհնաբան
Յովհ. քահանայ Մկրեան.

Մոսկվայեն պարոնայք Մ. Էմին և Գր. Խալաթյանց կգրեն շնորհավորական նամակ մը, զոր կվերջացնեն հետևյալ տողերով.

«Գալիս ենք և մենք հեռու հյուսիսից խնդակից լինել Ձեզ՝ մեր դրականության այս նշանավոր տոնի օրը, մաղթելով որ նախախնամությունը դեռ երկար տարիներ ձգե Ձեր թանկագին կյանքը և պահպանե ձեր անխոնջ ուժերն ի բարգավաճանս հայոց դպրության և ի սփոփանս Ձեր բազմաթիվ հարգողների և բարեկամների»։

Ուղերձ մը և ի դիմաց Մանչեստրի հայ գաղթականության։ Այդ ուղերձ ստորագրած են ի դիմաց հայ գաղթականության Մանչեստրի.

Առաջնորդ Սուքիաս վարդապետ Պարոնյան.

Հոգաբարձուք
Մ. Փափազյան
Գ. Գրիգորյան
Գ. Քույումջյան

Ուղերձ և Կահիրեի Բարեգործական ընկերության կողմե, զոր ստորագրած է ատենապետը՝ Բարթիկ Նահապետյան։

Ֆոքշանու հայք իրենց ազգային հոգաբարձության ատենապետի՝ Հակոբ վ. Մեսիրի ստորագրությամբ կշնորհավորեն հ. Ալիշանի հոբելյանը. «Ձեր խանդավառ գրությունները,— կըսեն հ. Ալիշանի,— միշտ և հանապազ կարատարեն կայծեր մարած և շիջած հայ սրտերի մեջ։ Անգին են Ձեր գործերն, առ որս կարող չենք փոխարինել»։

Շա՜տ խանդավառ է, շա՜տ սրտագեղ ուղերձն Արցախու հայոց։ Որքա՜ն կփափագեի այդ ուղերձն ամբողջապես հրատարակել։

Մեկ քանի տողերն.

«...Եվ այս նամակի հետ մենք մտքով փոխադրվում ենք Վենետիկ, Մխիթարյանների մենաստանը, որի Միաբանությունը այնքան պարտական է մեր դրականությանը, հարգանքով խոնարհվում ենք ձեր առաջ, երախտագետ սրտով համբուրում ենք ձեր աջը, որ արժանի է ոսկե գրիչ կրելու, որպիսին ուղարկում ենք Ձեզ, որ դեռևս երկար տարիներ ոսկե գրերով գրեք և գրոշմեք հայ սրտերում պարտականություն, ճանաչել և սիրել բոլորը, ինչ որ յուր վրա կրում է հայության անցյալի կնիքը»։

(Ստորագրություններ)

Սրտահույզ,— և ո՞րը չէ սրտահույզ,— է ուղերձն Տրապիզոնի երիտասարդության, որ Պոնտոսեն յԱդրիական կըձայնե առ հ. Ալիշան, թե «Ի սփիւռս աշխարհի ցրված ամեն հայոց սրտերեն ի Ձեզ յանկուցեալ կան այսօր (13/25 մայի-

սի) իբր ի բեւեռ համայն հայութեան»։ Եվ ուրիշ տեղ մը իրենց երախտագիտութիւնը կհայտնեն առ այն, «որ վերջապես միութեան գիծ մը եղած է ամեն դավանանքի և վիճակի հայոց միջև»։ Այդ ընդարձակ ուղերձ ստորագրած են աշխարհական ու եկեղեցական բազմաթիվ երիտասարդներ։ Զանց կրնեմ այդ ստորագրութիւնները առաջ բերել։

Իսկ ի՞նչ ըսեմ ի մասին Տրապիզոնի նույն երիտասարդներու ուրիշ մեկ ուղերձին։ Ժողովրդական նահապետին կգրեն ժողովուրդի լեզվով։ Կցավիմ, որ ժամանակս կարճ է ու չեմ կարող այդ սիրուն և նորօրինակ ուղերձն ամբողջապես օրինակել։ Իրենց սարերեն ծաղիկներ կղրկեն։

Վենետիկ, 16/28 մայիս.

Երեք թղթակցութիւններով զրկեցի Հոբելյանի հանդիսին նկարագիրը. այդ առթիվ գրված նամակներն հաղորդեցի. այժմ կներկայացնեմ հեռագրերն[21]. այսպես ահա, «Արևելքի» ընթերցողներն իրենց աչքին առաջ կտեսնեն այն մեծ Ալբոմը որուն մեջ ստորագրած են աշխարհիս հայերն, որուն մեջ նկարված է հայոց սիրտը։ Ահավասիկ հեռագիրները, զորս կբաժնեմ խումբերու։

Թիֆլիզ, 24 մայիս

«ՄՇԱԿԻ» խմբագրության անդամք և Ձեր վրա սքանչացողներու մի խումբ կներկայացնեն իրենց ջերմագին բարեմաղթություններն Ձեր հոբելյանի ազգային մեծ տոնին առթիվ».

Գրիգոր Արծրունի, Գաբրիել Սունդուկյանց, Առաքել Սարուխանյան, Խաչատուր Մալումյան, Վրթանես Փափազյան, Միքայել Թամամշյան։

Իզմիր, 26 մայիսի.

«Ձեզ հարգամեծար մեծ արժանավոր պատմագիրն, աշխարհագետն, հնագետն, վիմագետն, թարգմանիչն, բանաստեղծն, գրագետն առաքե ջերմագին բարեմաղթություն».

Մ. Օրմանյան.
Հալբի 24 մայիսի.

«Ի խորոց սրտի կպաշտե զՁեզ, անկեղծորեն կսքանչանա Ձեր վրա և իր բարեմաղթությունները կրնե Ձեզ».

Ադամյան, ողբերգակ.
Բերա, 24 մայիսի.

«Հաճեցեք ընդունիլ բարեմաղթություններս. միշտ խորին մեծարանքով եմ»

Ձեր անձնվեր
Հ. Այվազովսկի.
Բաղու, 25 մայիսի.

«Բազմաջան, արդյունաշատ Նահապետիդ սրտագին շնորհավորություն»

Եղիշե Մատաթյան.
Երևան, 25 մայիսի.

«Ջերմագինս մեծարելով Ձեր դրական գործունեության, արդյունաշատ պսակյալ, կուզամ մատուցանել իմ հարգանքներս»

Կարապետ Կոստանյան.
Փարիզ, 25 մայիսի

«Հայրենիքի սիրող մեծ պատմագրին, բանաստեղծին, շնորհավորում եմ հոբելյան, ցանկանալով երկար կյանք»

Սանասարյանց.
Հռոմ, 25 մայիս.

«Կամեի որ դարեր ապրիք. տրուպ ձեր հիացող

Ա. Ֆեթվաճյան.
Գերբենտ, 24 մայիս

«Շնորհավորում եմ Ձեր հիանամյա գրական գործունեությունը»

Մակար Բարխուդարյանց.

Կգոցեմ ԱԼԲՈՄԸ[22], մաղթելով բոլոր հայոց, որ հ. Ալիշանը կարենան իրենց քովը տեսնել, կարենան զնա շրջապատել և համբուրել այն նկարչի ձեռներն, որ 19-րդ դարու հրաշքներն է։ Ճշգրիտ լուսանկարչի մը պես նկարել բնակավայրը, զոր չէ տեսած, մի՞թե հրաշալիք չէ այս։ Բայց մի՞թե սրտի համար կա հրաշալիք։

Սիրտը աստուծո մասն է. ամենազոր է։

ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Ուշադրության արժանի դեպք մ'է հ. Ալիշանի հոբելյանը։ Նոքա, որ ի վաղուց և ի մոտո կճանչնան զինքն, պիտի գրեն անշուշտ այս առթիվ յուր կենաց մանրամասնություններն, և կարող գրիչներ պիտի գան ի վեր հանել նորա անժխտելի արժանիքն իբր գրագետ, իբր հնախոս, իբր պատմաբան։ Իմ նպատակս է նշանակել աստ հապճեպիկ հիշատակ մը, զոր ներկա առիթն կզարթուցանե յիս այնքա՞ն աղդվապես։

1887 տարվույն հուլիս ամսույն սկիզբն մի քանի օրեր անցուցի ի Վենետիկ, այդ եզական քաղաքն, որ Ադրիականի նազելի թագուհին կոչված է իրավամբ՝ նշանավոր յուր պատմությամբն, արվեստին, շենքերովն, և երկիցս այցելեցի անապատում հաճությամբ Ս. Ղազարու վանքն, ուր այնքան հարգելի անձինք՝ Մխիթար Աբբա, հ. Արսեն Բագրատունի, հ. Էդուարդ Հյուրմյուզյան, շնչած են ու աշխատած, ուր լույս տեսած են այնքան գրական հմտալից գործեր, զորս մեր դպրոցական դրասեղանից վրա արդեն սկսած էինք թղթատել ու գնահատել։

Առաջին օրն իսկ, շնորհալի գոնդոլ մը, ոլորուն, անվրդով, նեղ ու լայն ջրանցից վրայեն սահելով, սպրդելով, տարավ զիս Ռափայելյան վարժարանն, որ քաղաքին մեջն է, հոյակապ շենք մը, երբեմն պալատն ազնվական գերդաստանի մը, ընդարձակ սենյակներով ու սրահով, ոսկեզօծ ձեղունով ու փայլփլուն հատակով։ Տնօրենն հ. Գրիգոր[1], վայելչակազմ ու ազնվարարո անձ մը, հաճեցավ ինքն անձամբ ցույց տալ ամեն ինչ։ Հաջորդ առավոտուն, վանքին

զոնդոլովն ծերունի աշխատավոր եղբայր Օգոստինիոսի[2] ընկերությամբ, գնացի ի Ս. Ղազար, որ գրեթե կես ժամու չափ հեռի է քաղաքեն, մեկուսի անդորր հրապուրիչ վայր մը Ագրիկանի արհեստեր ջուրերովն շրջապատյալ։

Ինչո՞ւ ծածկեմ զգացմունքներս. հուզված էի խոր, գրեթե զգլխած, դանելով ինքզինքս այսպիսի հայկական շրջանակի մը մեջ, օտար ափանց վրա, այս վանուց շրջապատին մեջ, որ միշտ վիպական հզոր հրապույր մը ունեցած էր ինձ համար։ Որչա՜փ ուրախ եղա տեսնելով իմ հայրենակիցս (Պարտիզակցի) հ. Հովհաննես Թորոսյան, որ պատանի մ՚ էր ամչկոտ, երբ բաժնվեցավ յուր գյուղեն և այժմ եղած էր երիտասարդ մը կորովի մարմնով և կորովի մտոք, սիրելի ամենեցուն[3]։ Շատ ուրախ եղա տեսնելով վերստին զհ. Աբրահամ Ճարյան, հ. Ալիշանի բազմահմուտ աշակերտակիցն, որի հետ ընդ երկար խոսեցանք եռանդյամբք ազգային ու գրական այլևայլ հետաքրքրական նյութոց վրա, ճեմելով բոլոր ատենն բնական գիտությանց սրահին մեջ, որո ձեղունը կղարդարեն ուշագրավ նկարներ ու մեծանուն արանց կիսանդրիք։ Պատահություն ունեցա նույնպես ծանոթանալու հ. Քաջունիի, հ. Բարսեղի[4] և այլոց հետ։

Բայց ժամանակիս մեծագույն մասն անցուցի հ. Ալիշանի հետ և չեմ կրնար այժմ առանց հուզման հիշել այն քաղցր, այն թանկագին ժամերն, այն ազգամեծար ընդունելությունն, այն գրեթե հայրական համակրությունը, զոր ցույց տվավ ինձ։ Մանոթ էի արդեն յուր աշխատությանց, յուր հանճարին, զմայլեցա դանելով զինքն այնքան հեղահամբույր, այնքան խոնարհամիտ, գորովագին, երիտասարդ-ծերունի, երիտասարդական ավյունով, երիտասարդական զվարթությամբ։ Տարավ զիս ձեռագրատունն, որի ինքն է պահապան հոգին, կոկիկ շենք մը կիսաբոլորակ, ամեն ինչ մեծ խնամքով ու հոգածությամբ կարգավորյալ։ Եվ ինչպե՞ս կգուրգուրար այդ ձեռագրաց վրա, ի՜նչ հպարտությամբ, ի՜նչ հաճույքով։ Որդեգորով ծնողն կրնա՞ր ավելի խանդավառ զգացմամբ զգվել ու ցույց տալ յուր սիրասուն զավակունքն։

Վանքին մեջ ունին 1500-ի չափ ձեռագրեր տասներորդ, մեռասաներորդ, երեքտասաներորդ դարուց գործեր, Ավետարան, Մաշտոց, Սաղմոս, Մեկնություն և այլն, գեղեցիկ նկարներով ու զանազան ոճով գրերով։ Ցույց կուտա ինձ հ. Ալիշան սոցա գլխավորներն, յուրաքանչյուրին կենսագրությունն ընելով մանրամասնորեն։ Ահավասիկ շորս ավետարանք Լամբրոնացվույն համար և յուր եղբոր հրամանով պատրաստված, համին Ռոթ թվականին հայոց (1193), մանր երկաթագիր, նկարներով, խորան կոչված, զորս Շնորհալին մեկնաբանած է։ Մասնավոր ուշադրության արժանի են Մկրտության պատկերն, Խաչելության պատկերն. այս պատկերները շինողն էր Կոստանդին ոմն։ Սաղմոսի մեկնություն, գործ Լամբրոնացվույն, յուր կենդանության ժամանակ ընդօրինակված, նմանապես յուր վարքն, թվական 1190, բոլոր գիր, նկարիչն Կոստանդին։ Ավետարան Արծրունի Գագիկի Մլքե թագուհվույն հրամանով պատրաստված, ամենեն հին վանքին մեջ, զոր չեմ հիշեր այժմ, ո՞ր իշխան կրսեր թե նվիրած է վանքին։ Գեղեցիկ է համբարձումն նիրկայացնող նկարն։ Պատկերներեն զատ զարդ չունի, երկաթագիր։ Այս առթիվ կհիշեցներ Ալիշան նախանձով մը, զոր չէր կրնար ծածկել, թե Մոսկվայի մեջ կգտնվի հայերեն հնագույն ձեռագիրն, Աշոտ Ա-ի ժամանակ գրված, որ յուր հազարամյակն տեսավ դեռ անցյալ տարի, Ճաշոց մը, 1327 թվականեն։ Ոսկեբերանի ճաշերն, թերևս ամենեն հին ձեռագիրն, նուրիճան պատրիարքեն ընծայյալ։ Վարդան պատմիչ, բոլոր նախնի պատմչաց ձեռագիրներեն հնագույնն։ Պողոսի թղթերն և Եսայի մարգարե, որո գեղեցկությենեն և խնամքեն կեզրակացնե, թե հավանորեն Ռուբինյան իշխանի մը համար պատրաստված էր և այդ իշխանն Հեթում Բ. կկարծե լինել։ Մեկնություն Պողոսի թղթոց, 1000 թվականեն։ Ճանիկ ամիրային զրկած Ավետարանն, թվական 1007, որ կպարունակե պատկերն հույն իշխանի մը, որ թերևս, զրել ավոդն էր։ Մանր ուսումն կամ Կցուրդք, Կոստանդին Լամբրոնացի իշխանին համար պատրաստված և այլն։

Ուրիշ ձեռագիր մ'ալ դուրս կհանե Հ. Ալիշան խնամքով, կսեղմե զայն իր կուրծքին վրա գորովով «Պագնելու ես որ ցույց տամ» կըսե ժպտելով։ Հարկ չէ ըսել թե ես, որ առաջին անգամն ըլլալով կտեսնեի մեր նախնյաց այսքան ձեռագիրներն ի մի հավաքված, և նոցա բացատրություններն կլսեի շրթունքներեն նույնիսկ այն անձին, որ անտարակույս ամենեն ավելի հմտություն ու ամենեն ավելի գորով ուներ նոցա մասին, որչա՜փ հոժարությամբ ու եռանդյամբ իսկ համակերպվեցա յուր առաջարկին։ Ավետարանի մեկնություն մ'էր, Ոսկեբերանեն և ուրիշներեն քաղված և նույնիսկ Լամբրոնացվույն ձեռամբ գրված։ Հնդկաստանեն եկած էր այս. «Ավա՜ղ,— կրսեր Ալիշան,— որ յուր մյուս ընկերներն օվկիանոսի կոկորդն սուզեցան»։ Ուրիշ հավաքածու մ'ալ կա, Ս. Աթանասի ճառերեն, որ խիստ հավանականաբար գրված է նույնպես Լամբրոնացվույն ձեռամբ։ Բացատի Հ. Ալիշան ինձ հաղորդեց հույժ կարևոր ծանոթություններ այն ձեռագրաց վրա, որք կգտնվին ի Փարիզ և ի Լոնդոն, զորս ապա պատեհություն պիտի ունենայի տեսնել։

Կանցնինք անցքե մը, ուր երկուստեք կդիտենք պատկերներն այն միաբանից, որք երբեմն ապրած են հոս։ Ի՞նչ ոսկեղեն տեղ մը կա, կրսեմ յուրովի, պահված հոս այն անձին համար, որո ընկերությունը կվայելեմ այժմ։ Կմտնենք յուր խուցն, որո առջև կտարածվի վանուց ծաղկազարդ պարտեզն, և ի բացուստ ծովն լայնասփյուռ ու մարգարտաշար կղզիներն։ Ազգային պատմության խնդիրներ ունիմ, որք ընդերկար զբաղեցուցած են միտքս և դեռ կմնան հոն անլույծ։ Խորենացին, մանավանդ, շատ մը հարցեր կհարուցանե։ Հ. Ալիշանի պատասխանները ցույց կուտան այնպիսի հմտություն մը, որո վրա անկարելի է չսքանչանալ։ Եվ եթե կանխավ թույլտվություն ստացած լինեի հրապարակել յուր հայտնած կարծիքներն ու համոզումներն, նոր և ազդեցիկ ապացույց մը տված պիտի լինեի այն կարևոր, բայց հաճախ մոռացված ճշմարտության, թե կատարյալ հմտությունն նվազ անձնապաստան կընե միշտ զմարդ և առավել ազատամիտ, առավել ներողամիտ։

Ի՞նչ օտարազգի հեղինակներ կան, որք գրած են մեր ազգային պատմության այս կամ այն շրջանին վրա,— Հ. Ալիշան զգրոցեն կհանե ծրար մը քարտեզներու, կարծեմ այբուբենի կարգավ շարված, ուր այս հեղինակաց անվանքն ու գործերն են նշանակված։

Երբ չեմ գիտեր թե ինչպես կրնամ իմ երախտագիտությունն հայտնել, յուր այսքան մարդասիրության համար,— «եթե երբեք որևէ հայկական հնություն, ձեռագիր կամ այլ ինչ ձեռքդ անցնի, մի՛ մոռանար ինձ հաղորդել» այս է յուր ակնկալած փոխարինությունն։ Կտեսնես դյուրավ, թե հայկական հնությանց սերն ինչպե՜ս կտիրե յուր հոգվույն մեջ։ Այդ սերն է, անշուշտ, որ կարողացուցած է զինքն ի գլուխ հանել յուր սովար աշխատալից հատորներն։

Առիթ ունեցած եմ ճանչնալու Ալիշանի աշակերտներեն շատերն ամեն դասակարգե, վարդապետ, վարժապետ. ծանոթացա ի Վենետիկ միայն, համբավավոր լուսանկար մը, մյուսի մը ի Լոնդոն, որ պատվավոր հայ տան մը ներկայացուցիչն էր հոն։ Հաճելի էր տեսնել, թե ինչպե՜ս ամենքն ալ հարատևած են յուրյանց դասատուին որդիական սիրով։ Երբ այս տողերս կգրեմ, աչացս առջև ունիմ Հ. Ալիշանի մի գեղեցիկ լուսանկարն, զոր ինքն նվիրեց ինձ յուր ձեռամբ նշանակելով յուր անունն ի ստորև. մեծ գլուխ մը, որու գագաթն կծածկե գտակ մը հազիվ նշմարելի, լայն ու վսեմ ճակատ, խոշոր աղու աչքեր, երկայն մորուք մը սպիտակափայլ. «Ի՞նչ հանճարեղ և միանգամայն ի՞նչ համակրական քաղցր դեմք մը» կրսե օտարազգի բարեկամ մը, նայելով այդ պատկերին։ Արդարև, յուր մտաց ու սրտի չքնաղագյուտ բարեմասնությունքն կցոլան յուր վայելչակազմ դիմաց վրա, և դիտողին ուշն ու համարումն կգրավեն անդին։

«Արարատ աշխարհ,— կգրեի դեռ նոր առ Հ. Ալիշան երկտողի մը մեջ,— զոր սերտած եք եռանդագին, զոր սիրած եք կաթոգին և սիրելի ընծայած, զոր օժտած եք ճոխաբար ձեր անմման անմահ երկերովն, երբ կդարձնեի յուր շնորհապարտ հայացքն ձեր գրական արդյունաշատ գործունեության երջանիկ հոբելյանի առթիվ առ ձեզ, յուր

բազմերախտ վաստակավոր, կփափագիմ ես ևս մատուցանել Ձեզ խոնարհությամբ իմ անկեղծ խնդակցության ու հիացման զգացումներս և մաղթել, որ հայ դպրությունն վայելե դեռ ընդ երկար հովանավորությունն յուր անզուգական պաշտպանին»։

Այս է անտարակույս, սրտագին մաղթանքն ամեն հայու, որ կբաղձա տեսնել յուր ազգային դպրությունն զարգացյալ, ճոխացյալ։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ

Երբ Հ. Ղևոնդ Վ. Ալիշանի ծանր հիվանդության բոթը տարածվեցավ՝, ամեն հայ, որ սրտի տեր է, խռովեցավ. ամենքս ալ սրտատրոփ մեջ էինք։ Տխրության, թախծության այդ ժամերուն մեջ երբ կսպասեինք հեռագրի մը, նամակի մը, որ հանդարտեցնե մեր վրդովումը, ինքնին կրսեի, թե այդ հիվանդության տեղեկացնողներուն մեջ միայն մեկ հոգի կար, որ անհոգ կժպտեր առանց տրտմության և այդ անհոգ անձն ալ ինքն հիվանդն էր, Հ. Ալիշան։

Ու մտքիս առջև պատկերացուցի հիվանդին վիճակը ճիշտ այն պահուն, երբ մահը կդեգերեր անոր անկողնին շուրջը։ Մենաստանին մեկ անշուք խցիկը, հրկաթե պարզ մահիճի մը մեջ տարածված, խալեությունն մը գլխին վերև, կժպտի անխռով։ Կզգա թե մահամերձ է, բայց ո՛չ կվախենա, ո՛չ խռովի, ո՛չ կհուզվի։ Եվ ինչո՞ւ վախենա, ինչո՞ւ խռովի, ինչո՞ւ հուզվի։ Վախ կունենա՞ մահեն մարդ մը, որ իր բոլոր կյանքը նվիրած է. բարիք ընելու, կատարելապես առաքինի եղած է, բարի, ազնիվ, անձնվեր։ Վախ կունենա՞ մահեն մարդ մը, որ խորապես համոզված է, թե հավիտենականություն կա, թե հանդերձյալ կյանքը ճշմարտություն է, թե ասված պիտի կանչե դինքն և իրմեն հաշիվ պիտի պահանջե աշխարհիս վրա բրածներուն համար, ու ինքն ալ ամեն բոպե պատրաստ գտնված է այդ հաշիվը տալու։

Որչափ ալ սկեպտյան ըլլանք, բայց և այնպես նախանձ կունենանք այսպիսի մահճի մը քով, վասնզի այն երանությունը զոհ Հ. Ալիշան կզգա երբ մահն իր գլխուն վերև կտեսնե, մենք այդ երանությենեն հավանորեն միշտ զրկված պիտի մնանք։ Աստվածահաճո կյանք մը վարե-

լով միշտ մահվան պատրաստ դանվիլը եսականության վերջին կատարելությունն է. բայց սուրբ եսականություն մը։ Արդարև. ով որ շատ կմտածե, եթե կուզեք ըսենք, ով որ շատ բծախնդիր է իր հոգիին համար, ով որ կուզե միշտ խիղճը հանդարտ պահել և հոգեկան տանջանք չունենալ, եսական մըն է. բայց հոգիի այդ եսականությունը հիմնված է բարության, զոհողության անձնվիրության վրա, և շատ ու շատ կտարբերի մյուս եսականություններեն, մարմնի եսականություններեն, որ կենանի ուրիշներուն կողմե զոհողություն պահանջելով և եթե չարիք ալ չընե, ինչ որ հազվադեպ է, բարիք երբեք չըներ։

Հայ ազգը կպաշտե Հ. Ալիշանը իբր բանաստեղծ, իբր պատմաբան. հայ ազգին համար հանճար մըն է Հ. Ալիշան, հանճար մը, որ մտքե ու սրտե հավասարապես բաղկացած է։ Բայց Հ. Ղևոնդ Ալիշանի համար բանաստեղծությունն ալ, պատմությունն ալ, հանճար ըլլալն ալ, այդ ամենն ալ ունայնություն են. այդ ամենը պատարագի մը հետ չփոխանակեր։ Համոզված է, թե երբ աստծո առջև ներկայանա, անչառ դատավորն իրեն չպիտի հարցնե թե ՞ի՞նչ աշխարհին մեջ պատմությո՞ւն գրեցիր, բանաստեղծությո՞ւն ըրիր. այլ պիտի հարցնե, թե հոգիիդ համար ի՞նչ ըրիր։ Թեպետև աստուծո խորհուրդներուն թափանցած ըլլալու շնորհը չունիմ, ինչպես Հ. Ալիշան ալ չունի, բայց կկարծեմ թե պատմություն գրել, բանաստեղծել ու անով ժողովրդի մը հոգին բարձրացնելը, սիրտը ազնվացնելը պետք չէ համարել աշխարհային ունայնություն։ Այդ աշխատություններն ալ առաքինություններ են և կնպաստեն հոգիի փրկության. և անոնք, որ շատ կմտածեն իրենց հոգիին համար, թո՛զ վստահ ըլլան թե իրենց արդարադատ աստվածը գիտե, թե գրական մեծ աշխատություններն ալ բարերարության մասմը կկազմեն և աստված ալ աղոթքեն ու պատարագեն ավելի կսիրե բարերարությունը։

Հ. Ալիշան մեղ գրեթե անծանոթ է իր աստվածավախության ու առաքինության կողմե, վասն զի շատ հայտնի է թե ճշմարիտ առաքինությունը կխորշի աշխարհի թատերաբեմին վրայեն ծափահարվելու։ Եվ այդ մեծ անձնավորությեն հոգիի նկարագիրն ո՞վ պիտի կարենա ընել։ Մխիթարյանն՞ը։ Ո՛չ. վասն զի անոնք այնպես կկարծեն, թե անձնագովություն մը ըրած կըլլան, եթե իրենցմե մեկուն վրա շատ խոսին հրապարակավ. ամենքը մեկ մարմին կկազմեն, իրենցմե մեկը գովելով ինքզինքին գոված կըլլան. և հետո, այնքան վարժած են Հ. Ալիշանի կյանքին, որ իրենց աչքին շատ բնական բան մը սկսած է երևնալ անոր կենցաղավարությունը։

Իսկ օտարնե՞րը. անոնք ալ չեն կարող շատ բան մը գրել. անցորդներ են, որք կերթան մերթ ընդ մերթ ս. Ղազար, կտեսնեն Ալիշանը, կզմայլին, կսքանչանան և զարմացման ներքև կմեկնին։

Եվ սակայն այդ վանական՝ մին է այն երեք-չորս անձնավորություններեն, որք 19-րդ դարու կեսեն սկսյալ ամենամեծ ազդեցություն մը ըրած են հայ ժողովրդին վրա. պետք էր, որ այդ դեմքը կատարելապես ուսումնասիրելու կարող ըլլայինք։ Գուցե այդ ուսումնասիրությունը երբեք չկատարվի, եթե ամեն ոք Ալիշանեն ունեցած իր հիշատակներեն, իր տպավորություններեն բան մը չդնե հրապարակին վրա։

Իմ հիշատակներս Հ. Ալիշանի կյանքեն կսկսին քառորդ դար մը առաջ, 1867-ի մայիս ամսեն, երբ մտա Ռափայելյան վարժարանը։ Հոն անցուցած եմ երեք տարիներ ու շրջանավարտ եղած։ Հրապարակագրի կյանքիս մեջ շատ անգամ առիթ ունեցած եմ խոսիլ Վենետիկյան հիշատակներուս վրա։ Ամեն ատեն և այժմ ալ, երբ ուզած եմ վերլուծել այն զգացումներն, որք սիրտս կկապեն Ռափայելյան վարժարանին հետ, երբ ուզած եմ փնտրել, թե ինչո՞ւ համար այնքան խորին կերպով կսիրեմ Վենետիկն, աչքիս առջև ներկայացած է Հ. Ալիշան, որ Ռափայելյան վարժարանի տնօրենն էր։ Կհիշեմ զինքը խոհուն, մտածող, միշտ խորասուզված իր մեծ աշխատություններուն մեջ, բայց միշտ սրտի տեր, միշտ հիշող թե այդ տղաքներն հանձնված են իր խնամքներուն, անոնց միտքը, անոնց սիրտն իսկ պիտի կրթե ու ազնվացնե և անոնց կյանքն ալ, առողջությունն ալ իր խնամքներուն հանձնված են։ Եվ ահա, կմոռնա անց-

յալն ալ, պատմությունն ալ, ապագան ալ, ամեն ինչ, և իր ժամերուն մեծ մասը կզոհե այդ տղաքներուն, առանց տըրտունջի մը, առանց դանգատի մը, այլ ընդհակառակն ուրախության և գոհության զգացումներով, կկատարե ինչ որ ուրիշներուն պարտականությունն էր և ոչ տեսչին, որ միայն վերին հսկողություն մը ունենալու պարտավոր էր։

Կհիշեմ գինքն, որ երբ հիվանդ էինք, անոտնաձայն, լռիկ-մնջիկ կուգա մեր անկողնին քովն ամեն օր, կհոգա մեր առողջության համար, կքաջալերե զմեզ ու կխնամե իր ձեռքերովը։ Կհիշեմ թե ինչպե՞ս հոգ կառներ, որ ամեն մեկերնիս բանի մը կարոտ չըլլանք։

Կհիշեմ գինքը քիչ մը անաչառ դեմքով, բայց միշտ երկնային հրեշտակային ժպիտով մը, որ կշանա միշտ աշակերտներն «Աստվածահաճո» ուղղության մեջ դնել։ Գուցե իր տված ուղղությունը «Աստվածահաճո» ըլլար, բայց մեզ միշտ հաճո չէր. սակայն այնքան բարությամբ, այնքան խղճի մտոք և այնքան ներողամիտ ոգվով կվարվեր, որ մինչև հիմա ալ ուրիշ բան մը չեմ պահած սրտիս մեջ, բայց եթե ամենաքաղցր հիշատակ մը։

Բայց ինչ որ ինձ համար անմոռանալի է և խորին կերպով ազդած է սրտիս վրա, այդ հ. Ալիշանի հավասարություն սիրող ոգին էր։ Դպրոցին մեջ կային աշակերտներ, որք ձրիարար ընդունված էին, Ռափայելի կտակին տոկոսովը, կային ալ, որք կիսաթոշակ կամ լիաթոշակ էին, այսինքն՝ տարեկան երեսունեն մինչև հիսուն ոսկի կվճարեին։ Ընդհանրապես բոլոր եկեղեցականները, մանավանդ վանականները, քիչ մը շատ դրամասեր են, ոչ թե իրենց անձին համար, այլ իրենց միաբանության համար և ընդհանրապես պետք էր, որ Ռափայելյան վարժարանին մեջ ալ հատուկ ուշադրություն դրավեին լավ վճարողները։ Բայց բնավ որևէ խտրության հետք չէր տեսնվեր։ Ոչ ոքին հայտնի էր, թե ո՛վ է լավ վճարողն, ո՛վ է դեշ վճարողն, ո՛վ է ձրիաամենակատարյալ հավասարություն կար։ Քրիստոնեական բարձր դաղափար մը կտիրեր, հ. Ալիշանի այդ ոգին կներշնչվեր ամենուն ալ։

Ու հետո, քսան տարի վերջ, 1890-ի մայիսին, վերատին

տեսա հ. Ալիշանն, երբ իր հոբելյանին առթիվ Վենետիկ գնացի[3]։ Սրտի տրոփումով մտա իր սենյակը ու երբ ձեռքն համբուրեցի ու ինքն ալ զիս համբուրեց, անպատմելի բերկրություն մը և հուզում մը զդացի. քսա՞ն տարիներու հիշատակներն էին, որ այդ բոպեին կարթննային։ Քսա՞ն տարիներ անցած էին 1870-ի ամառեն ի վեր, և հիմա կտեսնեի հ. Ալիշանը բոլորովին սպիտակ մորուքով, ավելի փափկացած մորթով, բայց շուներ այլես հին օրերու քիչ թե շատ անաչառ դեմքը. մանկական ժպիտ մը իր դեմքին վրա, որ սրտի բարության, հոգիի խաղաղության անսխալ նշանն էր։ Բարի ու ազնիվ սիրտ ունեցող հշմարիտ առաքինիները որքան որ ալ ուզեն ուրիշներե գաղտնի պահել իրենց սըրբությունը, բայց և այնպես միշտ կմատնվին, վասն զի այնպիսի խաղաղություն մը կա իրենց դեմքին վրա, այնպիսի ժպիտ մը ունին, զոր անհնարին է դտնել վրդովյալ սիրտ ունեցողներու, տանջվող, կամ թե կուզեք ըսենք, քիչ մը անհանդիստ խիղճ ունեցողներու դեմքին վրա։

Տասն օր անցուցի ս. Ղազարի վանքին մեջ. այդ միջոցեն ամենեն ավելի օգուտ քաղեցի ուսումնասիրելու հ. Ալիշանը։ Ա՛լ դյուրաղգաց սրտով պատանի մը չէի և ո՛չ ալ անփորձ մտքով դեռահաս մը։ Կարծրանալ սկսած սրտի մը, կռվելու վարժված մտքի մը պահանջումներովը պիտի զգայի ու պիտի դատեի։ Եվ սակայն վանքեն մեկնեցա հմայված։

Ժամանակը եթե ոչ փոխած, դեթ բարեփոխած էր հ. Ալիշանի գաղափարները շատ մը խնդիրներու մասին. միշտ նույն աստվածասերն էր, միշտ նույն մարդասերն ու երկյուղածը, բայց գործնական, մինչև իսկ հանդուգն մտածություններ ուներ. մարդկային անիրավություններե զգացած դայրույթը պահ մը կկատղեցներ այն քրիստոսախոր կակղած սիրտը։ Ժամանակն, եթե ներելի է ինձ այսպես ըսել, ավելի ընդարձակած է հ. Ալիշանի մտածությանց ու զգացմանց շրջանակը։ Հ. Ալիշան ս. Ղազարու ոգին է, իր դրկին մեջ ապաստանարան կփնտրեն հուզյալ ու եռանդուն երիտասարդ վարդապետները, տարեցներն անոր խորհուրդներուն մոտիկ կընեն, ծերերն իրենց զորությունը իրմեն

կխնդրեն։ Ամենուն զորավիգն է, ամենուն մխիթարանքն է, ամենուն սերն է։ Տեսնելու արժանի բան է, թե ինչպես է՛ն մեծեն է՛ն պզտիկը կպատկառին հ. Ալիշանեն և կզուրգուրան անոր վրա, վասն զի վանքին միայն փառքը, չէ, այլև սիրո ու միաբանության ոգին, բարի օրինակն ամենուն համար։ Այժմ այնպես մը զանգած է հ. Ալիշան վանքին բարոյականը, որ իրմեն վերջն ալ շատ ու շատ տարիներ իր ված զարկն ու ուղղությունը կենդանի պիտի մնա։

Կրոնավորի բարի օրինակն է ամենուն։ Առավոտ մը կանուխ, դեռ լույսը չճեղքած, երբ խուցես դուրս ելա, դեմս ելավ հ. Ալիշան, որ ձեռքը ՖԱՐԱՇ մը բռնած տեղ մը կերթար։ Նույն օրն երիտասարդ վարդապետի մը հարցուցի, թե ի՞նչ կրներ հ. Ղևոնդ վարդապետ այնքան կանուխ և ի՞նչ էր ձեռքինը։ Երիտասարդ վարդապետը պատասխանեց, թե շատ կանուխ կարթննա և իր խուցն իր ձեռքովը կավլե և ՁՈՓԵՐՆ ալ ինք իր ձեռքովը կտանի կթափե։

Այո՛, բոլոր երիտասարդ վարդապետները, բոլոր եղբայրները որք կսպասավորեն, չեն ուզեր, որ ծերունին կատարե այդ ծառայական աշխատությունները. կուզեն ամեն բան իրենք ընել, բայց հ. Ալիշան անողոքելի է. երբեք չուզեր որ իրեն համար բացառություն մը ըլլա, որքան ատեն որ ձեռքն ու ոտքը կրնեն, ինք պիտի կատարե վանականի պարտականությունները։ Բնավ երբեք չուզեր որևէ բանով տարբերիլ մյուս վարդապետներեն. կատարյալ հավասարություն։ Ինչպես ծառայության մասին, նույնպես ուտելիքի, զգեստի, ամեն բանի մեջ երբեք իր անձնական հանգստությունը, դյուրությունը չփնտրել։ Ստեպ կհիվանդանա, բժիշկը կտնօրինե մասնավոր Ռեժիմ մը՝ ուտելու համար, բայց որովհետև խոստունք պիտի ընե, չուզեր հետևիլ բժշկին պատվիրած դրության։

Երբ այսպիսի հոյակապ անձնավորություն մը օրինակ կուտա իր գործովն ուրիշներուն, ինչպե՞ս կարելի է, որ այդ վանքին մեջ չտիրե կատարյալ կարգապահություն, անդորրություն, սեր և միություն։ Եվ տեսնելով այդ ամենը, դառնությամբ կհիշեմ մեր վանքերն ու միաբանությունները։

Ինձ այնպես կթվի, որ հ. Ալիշան եթե խորապես հավատացյալ մը չըլլար, գուցե ամենամեծ թերահավատ մը ըլլար. իր մտքին համար միշտին ճանապարհ չկա։ Շատ կկասկածիմ, որ մինչև հիմա ալ երբեմն փորձություններ կունենա չհավատալու և այդ փորձանքն անցնելու համար ամեն ուժովը կփարի կրոնքին։ Այվազովսկիին վանքեն բաժնվիլը հուզիչ տպավորություն մը թողած էր երիտասարդ Ալիշանին վրա։ Շատ կսիրեր ու կհարգեր, ինչպես կպատմեն, այդ բարձր անձնավորությունը. ցնցվեր էր անոր մեկնելեն։ Կրսվի թե այդ օրն, որպեսզի չթողու կրոնավորությունն ու մենաստանը, հոգվովն ու սրտովը փարած է կրոնքին, անոր մեջ գտած է իր մխիթարությունը։ Երանի՞ չտա՞նք իրեն, որ կարող կըլլա կրոնքի մեջ գտնել կորսված բարեկամության մը մխիթարանքը։

Մ. ՉԱԼՅԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ

(Տպավորություններ)

Մի շաբաթից ավելի շրջելով Իտալիայի գլխավոր քաղաքները սեպտեմբերի 12-ին, մի բավական շոգ օր, Նեապոլից հասա Վենետիկ։ Նույն օրն արդեն ուշ լինելով Մխիթարյան վանքը այցելելու համար, այդ մտադրությունս թողեցի մյուս օրվան, ցանկանալով առաջին դիշերն հանգըստանալ այդ՝ ըստ երևույթին քնելու և հանգստանալու համար ստեղծված քաղաքում, մի քաղաք, որը մեր սովորական փողոցների փոխարեն ջրանցքներ միայն ունենալով, դաղափար չունի թե ինչ բան է կառքը, ուրեմն և նրանից առաջացած զզվելի աղմուկն ու փոշին։ Բայց որովհետև աշխարհիս ճակատագիրն է, որ ոչ մի տեղ կատարելություն չլինի, ուստի և այստեղ դիշերը հասնելուն պես հայտնվեցին այնպիսի անապատելի և անախորժ տարրեր, որ ես մնացի շվարած։ Եղելոք ո՞րն է ավելի լավ, կառքերով և սայլերով լի քաղաքը, իր փոշիով ու աղմուկով, թե՞ բանաստեղծական Վենետիկը իր անձայն գոնդոլներով, բայց դիշերվա ձայնավոր... մոծակներով։

Դիշերը մի կերպ լուսացնելուց հետո, մյուս օրը, ժամը 11-ին, գոնդոլ նստելով, ուղևորվեցի դեպի Ս. Ղազարի կղզին։ Ուղիղ կես ժամ անցած նավը կանգնեց վանքի դռան առջև։ Դռները բաց էր, բայց մոտերքում ոչ ոք չէր երևում։ Ցավելով դեպի ձախ, բակ-այգում տեսա մեջքից կռացած, թեպետ և միջին տարիքով մի աբեղա՝ մշակների հետ զբաղված։ Դիմեցի նրան, հարցնելով, թե ինչպե՞ս անել վանքն այցելելու համար։ «Դիմեցեք դոնապանին, ես ժամանակ չունեմ» պատասխանեց նա լուրջ, իսկապես գործով զբաղված մարդու տոնով, որը բավական կոշտ լինելով, միևնույն

ժամանակ բոլորովին վիրավորական չէր։ Այնուամենայնիվ, չբավականանալով այդ կարուկ պատասխանով, նա շտապով մոտեցավ դռնապանի սենյակին և, դուրս կանչելով նրան, իտալերեն (վանքի բոլոր ծառաները իտալացի են, հայերը չեն դիմանում հայրենիքի կարոտից) պատվիրեց նրան իմաց տալ ում հարկն է, «հայ» այցելուի մասին։ Դռնապանը հրավիրեց ինձ նույն տեղ գտնվող մի բավական շքեղ կահավորված ու մեծ քանակությամբ յուղանկարներով զարդարված սենյակ և ինքը հեռացավ։ Հինգ րոպե չանցած, մտավ բոլորովին սպիտակած, մեջքից կռացած, սպիտակ ակնոցներով մի ծերունի, մի հին կապա հագին, կաշվի զոտին վերևից կապած և գլուխ տալով հարցրեց, թե ինչ եմ կամենում։ Պատասխանեցի, որ կկամենայի վանքը տեսնել։ «Խնդրեմ, գնանք միասին»։ Գնացինք։

Դռնից դուռ անցնելով և ամեն մի քայլում մի նոր բան ցույց տալով (ամեն անգամ նոր դուռ բանալիս ծերունի ուղեցույցս անպատճառ կանգնում ու սպասում էր՝ մինչև ես առաջ մտնեմ ու հետո ինքը) հասանք վանքի մայր եկեղեցին։ Այստեղ ուղեցույցս ցույց տվեց ամենից առաջ երջանկահիշատակ Մխիթար աբբայի գերեզմանը սեղանի դիմաց, և ապա սկսեց մեկ-մեկ բացատրել եկեղեցու մասերը։ Տեսնելով սեղանի առաջ, աջ ու ձախ, երկու բազկաթոռներ, հարցրի ծերունուն, թե ո՞ւմ համար են դրանք։ Պատասանքով մատնացույց անելով աջակողմյանի վրա, ասաց, որ դա աբբահոր բազկաթոռն է, իսկ մյուսի մասին կարծես արհամարհանքով և ակամա փնթփնթաց, թե դա էլ նրա տեղակալինն է։

— Իսկ հ. Ալիշանի տեղը ո՞րն է,— հարցրեցի ես, նրա այդ տոնից շփոթվելով և կասկածելով, որ գուցե նույն ինքն Ալիշանը լինի տեղակալը։

— Է՛հ, նա ծերացել է, հազիվ ժամ կուգա,— պատասխանեց ծերունին, հարցին ուղղակի պատասխանելուց խուսափելով։ Բայց ես դրանով չբավականացա։

— Այնուամենայնիվ, եկեղեցի եկած միջոցին ո՞րն է նրա տեղը,— հարցրի ես։

— Սա,— պատասխանեց նա, նույն արհամարհական

ժեստով ցույց տալով փոխանորդի բազկաթոռի վրա և տեսնելով իմ առանձին ուշադրությունն ու հետաքրքրությունը, ժպտալով ավելացրեց. «Ես եմ, ես եմ»...

Տեսարա՜ն... ինչպե՜ս. համաշխարհային գիտնական, բոլոր հայերի պարծանք, այժմյան Մխիթարյան վանքի զարդ հ. Ղևոնդ Ալիշանն էր դիմացս, հասարակ ուղեցույցի դերում, այս ողորմելի հագուստով։ Այն Ալիշանը, որին տեսնելու համար ես մտադիր էի վանքն այցելելուց հետո առանձին ունկնդրություն խնդրել և երևակայում էի գտնել նրան իր գրասենյակում բազկաթոռի վրա բազմած, ինչպես վայել է ինքն իր գինն իմացող գիտնականին։

Առաջին տպավորությունից սթափվելով, ես նոր ուշադրություն դարձրի համեստ ուղեկցիս գծագրության վրա և, նշմարելով հանրածանոթ լայն ճակատն ու խոշոր աչքերը, համոզվեցի, որ այո, նա ինքն է։ Հուզված ու հիացած հռչակավոր ծերունու այդ աստիճան անսովոր, նահապետական համեստությունից, սպիտակ ու չորացած ձեռքերը համբուրելով, չկարողացա զսպել իմ զարմանքս և մասամբ վրդովմունքս, թե ինչպես մյուս, ավելի երիտասարդ միաբանները թույլ են տալիս պատկառելի ծերունուն այդպիսի դեր ստանձնել։

— Ոչինչ, ոչինչ, ես ինքս խնդրած եմ, կախորժիմ ազգային մը տեսնելով։

Դուրս եկավ, որ այդ օրը, մյուս միաբանները կամ զբաղված, կամ բացակա լինելով, ինձ պատահմամբ վիճակվել էր հ. Ալիշանին ուղեցույց ունենալու բախտը։ Այնուհետև հարաբերություններս իհարկե փոխվեցին. սրանից հետո ծերունուն այլևս չէր հաջողվում ինձ առաջ գցել նոր դռնով մտնելիս... Ինչքան էլ ճնշող լիներ այն դերը, որ կատարում էր իմ առաջ հ. Ալիշանը, նույնքան և մխիթարական էր տեսնել մոտ 80-ամյա ծերունուն այնքան ժիր, աշխույժ, զարմանալի թեթևությամբ պատահած սանդուխները բարձրանալիս, ոչինչ հոգնածություն չցույց տալով, ամբողջ մի ժամ ինձ հետ վանքի զանազան հիմնարկությունները պտտելով։

— Յոթանասունինն տարիս լրացավ, «Ձեր» Խրիմյան

ինձնից հարյուր օրով մեծ է,— ասաց նա հմուտ հնագետի ճշտությամբ։

— Ինչո՞ւ «մեր» և ոչ թե «ձեր»— նկատեցի ես։

— Ինչպե՞ս թե «մեր»։

— Չէ՞ որ նա էլ տաճկաստանցի է։

— Այո՛, ճիշտ է,— պատասխանեց նա ծիծաղելով։

Ճիշտ ժամը 12 1/2-ին զանգակի ձայնը հաղորդեց, որ ճաշը պատրաստ է։ Ինձ էլ հրավիրեցին ճաշի։ Մտանք մի մեծ, բարձր, պատերն ու առաստաղը կրոնական բովանդակության նկարներով ծածկված սենյակ։ Երեք պատերի երկայնքով ճաշի երկար սեղաններ էին դրված։ Սեղանների ներքևի մասում, մուտքի կողմից, արդեն նստել էին վանքի վարժարանի աշակերտները (մոտ երեսուն հոգի, մի մասն էլ ամառանոցումն էր), իսկ վերևում՝ միաբանները։ Մուտքի դիմաց գտնվող աբբահորը հատկացրած սեղանն ու բազկաթոռն այնպես էլ մնացին թափուր, որովհետև նա էլ ամառանոցումն էր։ Սեղանները ծածկված էին սպիտակ, մաքուր սփռոցներով, յուրաքանչյուրի առաջ առանձին դրած էր իր բաժին հացը, պանիր, մրգեղեն, ջուր և կես շիշ գինի։ Հ. Ալիշան օրհնեց սեղանը, և ճաշն սկսվեց։ Ճաշին ունեին սուպ, ձվածեղ, ինչ-որ շաքարով տապակած հաց, տեղական, երևի վանքում պատրաստած պանիր և խաղող։ Ճաշի միջոցին, լռության մեջ, աշակերտներից մեկը վերևում, ամբիոնից կարդում էր սկզբում Ս. Գրքից, իսկ հետո, ինչ-որ կլասիկական պատմություն։

Ի միջի այլոց, ծանոթացրին մի երիտասարդ աբեղայի հետ, որը նույն այդ օրը վերադարձել էր Կ. Պոլսից։ Նա, մի քանի տարի ապրելով վանքում և սաստիկ հայրենիքի կարոտ զգալով, մի քանի ամիս առաջ գնացել էր հայրենիք, ազգականների հետ տեսակցելու։ Երկու ամիս ապրելով սովորական քաղաքային կյանքով՝ նա այնքան ձանձրացել էր, որ այժմ վերադառնալով, անդադար կրկնում էր, թե այլևս երբեք չի բաժանվի իր սիրելի կղզուց։ Եվ արդարև, դժվար է երևակայել աշխարհիս երեսին մի ուրիշ, ավելի աջող անկյուն, որ կարծես բնության ձեռքով դիտմամբ հարմարեցած է գիտությամբ պարապելու և առհասարակ

բարձր, ընդհանուր գաղափարներին նվիրվելու համար։ Գեղեցիկ բնություն, առողջարար օդ, միշտ պայծառ երկինք, շուրջը խորին լռություն, ո՜հ, սքանչելի, սրբազան լռություն, որպիսին կարող է լինել միմիայն կղզու և այն էլ փոքրիկ կղզու վրա։ Բնական հարմարություններին ավելացրեք և բարձր կուլտուրան. նուրբ, առողջ ճաշակ, աշխատասիրություն և անպայման անդորրություն (աղատություն), որ վայելում է միաբանությունը իտալական հողի վրա,— այն ժամանակ դժվար չէ համաձայնվել հիշյալ երիտասարդ աբեղայի հետ, որ մի անգամ ընկնելով այդ երջանիկ կղզին, անկարելի է հետո հաշտվել մեր սովորական քաղաքային աղմկալի, անկանոն, անհանգիստ, մեծ մասամբ մանր և գծուծ՝ կյանք մաշող հոգսերով լի կյանքի հետ։

Վերջապես, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը ամենևին չէ ներկայացնում որպես զուտ կրոնական, իր նեղ, կրոնական շահերին նվիրված համայնք, գիշեր ու ցերեկ տաղտկալի ժամասացությամբ զբաղված։ Այստեղ, ընդհակառակն, ամբողջ օրվա ժամասացությունը (լի օրերին) տևում է ընդամենը երկու կամ երկուսուկես ժամ. մնացած ժամանակ միաբանությունն զբաղված է կամ վանքի հրուշակավոր տպարանում, կամ վարժարանում, կամ ամեն մեկն իր առանձնասենյակում և կամ վերջապես այգում ու ագարակում։ Այնպես որ, այդ վանքն ավելի շուտ ներկայացնում է մի հայկական ճեմարան, Ադրիատիկ ծովի բերանում, արևմտյան Եվրոպայի և Արևելքի սահմանում, քան թե մի սովորական կրոնական հիմնարկություն։

Եվ արդյոք այս լայն, լուսավոր աշխարհայացքը չէ՞ պատճառն այն ընդհանուր հարգանքի և լայնածավալ հրուշակի, որ վայելում է Ս. Ղազարի կղզին ոչ միայն հայերի, այլ առավել ևս ամբողջ քաղաքակրթված աշխարհի կողմից։ Յուրաքանչյուր տարի վանքում լինում են վեցից մինչև յոթ հազար այցելուներ, որոնց թվում հայերը չնչին տոկոս են կազմում։ Պատմում են, որ անցյալ դարու վերջում, երբ Նապոլեոն Ա, հյուսիսային Իտալիային տիրելով, փակեց բոլոր կաթոլիկ վանքերը, հիվանդանոցների կամ զինվորանոցների վերածելով նրանց, և Մխիթարյաններն դողալով բոպե առ բոպե սպասում էին նույն վիճակին, մի օր հանկարծ մոտենում է կղզուն մի նավակ, որի միջից դուրս է գալիս Նապոլեոնի սպաներից մեկը, հետը բերելով նրա հրովարտակը (դեկրետ), որի մեջ մեծ գորավարը հայտնում է, որ հարգելով վանքի գիտնական գործունեությունն ու լուսավոր նպատակները Արևելքի վերաբերմամբ, թույլ է տալիս նրան շարունակել իր գոյությունը։ Միաբանությունը մինչև այժմ տոնում է այդ օրը, իբրև փրկության օր։

Դառնանք մեր պատմությանը։

Սուրճը վերջացնելուց հետո միաբաններն սկսեցին ցրվել ամեն մեկն իր գործին, իսկ ես Հ. Ալիշանի և մի երիտասարդ աբեղայի (կովկասցի) հետ, դուրս եկանք այգի։ Այդտեղ, կղզու ափի մոտ, մի կույտ գերանների վրա նստած (թեպետ մոտներիս կար մի սիրուն ծածկ, բայց մենք նախադասեցինք այդ պարզ, մեր պապենական նստարանը) զրուցում էինք առօրյա հարցերի մասին։ Այդ բոպեները կմնան անմոռանալի հիշողությանս մեջ։ Խոսակցությունն, իհարկե, չէր կարող անցնել առանց Թուրքահայերի վիճակի մասին հիշելու, և ես հարց տվի պատկառելի խոսակցիս, թե նա ի՞նչ է մտածում այդ մասին, ինչո՞վ պիտք է վերջանան մեր եղբայրակիցների տառապանքները։

— Ալ մի՛ ըսեք, կսարսափիմ,— բացականչեց նա, երկու ձեռքով երեսը ծածկելով և իրավ կարծես սարսափած,— ամեն բան կործանվելու վրա է. ժողովուրդ, վանքեր, հնություններ...

Շատ ափսոսալի՝ ծերունուն ակամա վիշտ պատճառելով։ Դուրս եկավ, որ ծերությունը մի կողմից և վերջին դեպքերը մյուս կողմից, սաստիկ ազդել են նրա վրա։ Նա այլևս չէ կարողանում պարապել, պարբերական հրատարակություններ բոլորովին չէ կարդում. երբ պատահում են իրան հետաքրքրող տեղեկություններ, ուրիշները կարդում և հաղորդում են իրան։ Դանգատվում էր, որ վերջին 5—6 տարին կյանքը միայն ձանձրություն է պատճառում և կարծես դժգոհ էր, որ մի քանի տարի սրանից առաջ հիվանդացած լինելով խոլերանման ինչ-որ հիվանդությունով, միաբանությունն ամեն ջանք գործ է դրել նրան մահից

փրկելու. «Ներութիւն յոյժ ապականէ զմարդ», ասաց նա, կրկնելով առաքյալի խոսքերը։ Այժմ զբաղված է իր «Սիսուանի» ֆրանսերեն թարգմանությունով, որը վերջանալու վրա է։ «Ընկերներս կթարգմանեն, իմ հսկողությամբ միայն», ավելացրեց նա, իրեն հատուկ բարեխղճությամբ[2]։ Այդ մարդու համեստությունը, պարզությունը և խոնարհությունը միանգամայն առասպելական են։ Իտալական այժմյան թագուհին մեծ երկրպագու է մեր մեծ գիտնականի։ Հ. Ալիշանի ամեն մի նոր աշխատությունը դուրս գալուց, մի օրինակ ուղարկվում է թագուհուն։ Եվ սա ամեն Վենետիկ գալուց այցելում է Ս. Ղազարի կղզին։ Գալով վանքը, նա առաջ կարգադրում է անհանգիստ չանել ծերունուն, իսկ վերջը, վանքը շրջելուց հետո չդիմանալով, խնդրում է կանչել նրան իր մոտ։

— Հայր Լևոն, ինչպե՞ս ես դու կարողանում գրել այդքան մեծ գրքեր,— հարցնում է թագուհին մի անգամ։

— Ես ոչինչ չեմ գրում,— պատասխանում է Ալիշան, երեխայի նման շփոթվելով, կարմրելով,— ես միայն նյութեր եմ ժողովում[3]։

Վերջապես հասավ բաժանվելու րոպեն։ Տեսնելով այդքան սիրալիր ընդունելություն և հյուրասիրություն, առանց ակնկալության որևէ նշույլի, ես մասամբ քաշվելով, հայտնեցի, որ կուզենայի իմ լուման գցել վանքի արկղը։ Առաջարկեցին տալ հ. Ալիշանին*։ Այդ առիթ եղավ տեսնել հ. Ալիշանի առանձնասենյակը. մի ընդարձակ սենյակ երկրորդ հարկում, երկու պատուհանով դեպի ծով նայող, պատուհանի տակ ծաղիկներ և խաղողի վազեր, կահ-կարասիքն, իհարկե, ամենապարզ և հասարակ։ Այստեղ, իր սենյակում առաջարկելով ինձ իր պատկերը՝ սեփական մակագրությամբ, նա պատմեց և իր ապրելու եղանակը, որը ոչնչով չէ զանազանվում մյուս միաբանների կյանքի պայմաններից։ Առավոտյան ութ ժամին ամենքն ստանում են մի-մի բաժակ սուրճ՝ կաթով և հացով, ժամը 12 1/2-ին ճաշ (ինչպես վերև նկարագրեցինք) և վերջապես՝ երեկոյան ութ ժամին ընթրիք, մի տեսակ կերակուրից։ Ինն ժամին հ. Ալիշան մտնում է անկողին և զարթնում առավոտյան ժամը երեքին և սկսում պարապել։ Հիվանդություն ասած բանը համարյա թե անծանոթ է կղզու վրա. երբեմն հիվանդանում են վանքից հեռացողները, օդափոխության ենթարկվողները, իսկ այստեղ մշտական ապրողները գրեթե չեն հիվանդանում և ինչպես տեսնում ենք, շատ երկար են ապրում և մեռնում են իսկապես բնական մահով։

Վերջապես հաղորդեցին, որ Լիդո կղզին (որի մի մասում վանքային ագարակներն են գտնվում) գնացող նավակը պատրաստ է։ Հրաժեշտ տալով նավահանգստում այդ միջոցին ժողովված հարգելի միաբանության անդամներին, ամենամխիթարական և սիրալիր ապավորության տակ ժամը 3-ին նստեցի նավ միաբաններից մեկի հետ, խոստանալով և հաստատ մտադրվելով օգտվել առաջին իսկ դեպքից, կրկին տեսնելու այդ խաղաղ, երջանիկ անկյունը և ավելի մոտիկ ծանոթանալու այդ հետաքրքրական հասարակության հետ։ Հ. Ալիշանը մի քանի վայրկյան դեռևս նավահանգստում կանգնած՝ աջ ձեռքը բարձրացրած, մատները արագ կերպով բացուփակ անելով, իտալական սովորությամբ հրաժեշտի նշաններ էր անում մեզ ափից...

---

* Դուրս է գալիս, որ վանքի հազարավոր այցելուները, նրանց թվում և հայերը, նույնիսկ շատ հարուստ հայերը, տեսնելով նրա այդքան ծաղկած և բարեկարգ վիճակը, ուրեմն և ապահովված համարելով նրան, համարյա ոչինչ չեն նվիրում վանքին։ Այնինչ մեր հարցափորձից երևաց, որ միաբանությունը նյութապես ամենևին ապահովված չէ (որոշ գրամագլխով կամ մշտական եկամտի աղբյուրներով) և իր այժմյան բարեկեցությամբ պարտական է միայն սեփական մտավոր և ֆիզիկական աշխատանքին։

[ՆԱԽԱԲԱՆ]

Նոյեմբերի 21-ի երեկոյան էր, ժամը 6-ին,— ո՞վ կգուշակեր թէ վերջին երեկոն և վերջին ժամերը պիտի ըլլային անոնք,— մեր սիրելի, ալեզարդ աթոռակալը[1], հ. Ղեոնդ Վ. Ալիշան, սենեկին մէջ առանձնացած, որմահեց գրասեղանին առջև, ոտից վրա կանգուն, հոգևոր գրքույկ մը դիմացը,— ինչպես սովոր էր ընել,— ընկղմած էր երկնավոր խոհերու մէջ, երբ հանկարծ դուռը կզարնվի, և կմտնե միաբաններեն մին՝ ընդհատելով անոր խոկումը։ Այն երեկո, սովորականեն ավելի զվարթ, ոգևորյալ կթվեր. ներշնչող բան մը ուներ այն պատկառելի դեմքը, հորդահոս զեղում մը կենաց՝ իրեն բոլոր շարժումներուն մէջ։ Ձայնը՝ հուզիչ, խոսքերուն մէջ խորհրդավոր՝ քողարկյալ բան մը կար, զոր չէինք ըմբռներ այն պահուն։ Հակիրճ խոսակցության մը մէջ՝ քանի մը անգամ մահվան ակնարկություն կընե, կհիշե հառաչանքով մեր հանգուցյալ հարքը, մանավանդ որոնք իրեն ավելի սրտակից եղած էին, յուր դասակիցները, աշակերտները, որոնք կանխեր էին քան զինքը դեպի հավիտենականություն և կերանե զանոնք։ «Խաղողի ճիւ մ'եմ, կըսե, մոռցված. քանի՞ անգամ մահը մոտես անցավ և չտեսավ զիս. չուշանար, հուսամ, ձմռան հով մը՝ զիս հողին մէջ նետերու»... «կսպասի, որ լմննային,— կշարունակե,— ձեռքի աշխատությունները, և ահա, գոհությո՞ւն աստուծո, վերջացավ ՀԱՅԱՊԱՏՈՒՄԻՆ տպագրությունը, ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆՆ ալ պատրաստեր և հանձներ եմ. լմնցավ նաև ԱՐՇԱԼՈՒՅՍԸ[2], Կբավե այսչափ ժամանակ դեգերիլս մաքով երկրավոր հայրենիքին վրա, քիչ մ'ալ վերինը մտածենք...

այսուհետև հոգևոր գործերու ձեռք պիտի գարնեմ, եթե աստված կյանք տա, որ շահիմ, ինչ որ ցարդ կորսնցուցի»...

Եվ ինքը կորսված կհամարեր այնքան թանկագին ժամերը, որոնց մէջ մեզի անչափ հատորներ շահեցուց. և անոնց հետ ոչ սակավ հոգեշահ ճառեր, գրքեր, աղոթքներ, ՏԵՐՈՒՆԻ և ԿՈՒՄԱԿԱՆՆ[3] հոգեշունչ նվագներ, որոնցով ոչ միայն ինքզինքը՝ այլև զայլս կվառեր ի սեր երկնավոր հայրենյաց։ Ցույց տալով հետո ձեռագիր տետր մը, 1841-ին գրված Ռափայելյան վարժարանին մէջ[4], հոգևոր քերթվածիկներու հավաքածու մը, կըսե. «Որչա՞փ ավելի հոգևոր էի այն ժամանակները»... և նշմարելով, թե դարմանք կազդեն յուր խոսքերը, կավելցնե. «Այո՛, այն ժամանակ երիտասարդ էի, սիրտս ավելի տաք էր. հիմակ ծերացեր եմ, միտքս՝ հոգներ, սիրտս պաղեր է»... Եվ այնպիսի ոգևորությամբ կըսեր այս խոսքերը, որ կզդաս, թե Նահապետին ճերմակ մազերը չեն պաղեցուցած տակավին ներսի ջերմությունը։ Ինչպիսի՞ պարզություն, հստակություն սրտի հեռնչալ խոսքերուն մէջ. երբ կհարցվի իրեն. «Ի՞նչ պիտի ընեք այդ քերթվածիկները, տպե՞լ պիտի տաք».— «Ոչ առ ժամն, կպատասխանե. վերջերս Փրանցիսկոս Ասսիզացվույն սիրուն քերթվածիկ մը թարգմանեցի, աստուծո սիրուն վրա, զոր կոչեցի ես «Ջառանցանք աստվածային սիրո» և տպարանապետին հանձնեցի զայն, որ եթե պատշաճ տեսնե՝ տպագրել տա։ Տպարանապետն առաջարկից ինձ գերապատիվ Աբրահոր տոնին առթիվ տպել և իրեն ընծայել. և ես հավանեցա այդ առաջարկին, և նույնն է իմ փափագս ալ»[5]։ Կըսե, և խոսքը ուրիշ նյութի վրա կդարձունե։

Սույն տետրս ահա՝ մեր սուրբ, լուսահոգի հ. Ալիշան վարդապետի գրչին վերջին խայրիքն է, տնկված և ծլած՝ հեղինակին գրչով, ծաղկած և հասունացած թարգմանչին շնչով, որ և այնպես յուրացուցեր է անոր ղդացումները, որ հոն ավելի Ալիշանին խոյանքը կգտնենք, քան Ասսիզացվույն զմայլանքը։ Այդ աստվածային սիրո հալոցին մէջ՝ երկու մաքուր սրտեր ի մի ձուլված, կընծայեն մեզ սույն հրաշալի ՕՐՀՆԵՐԴԸ, որ պիտի ըլլա մեր սիրելի հոր վերջին ավանդը մեզ՝ որդիքներուս, յուր հրաժեշտի ողջույնը, հետին բոցը՝



Ալիշանի նամակը Մկրտիչ Էմինին

հառաչը այն հոգվույն, որ մեղմիկ, վերջալույսի նման մարեցավ։ Բայց այս օրհներգին թրթռմունքը՝ քան ուրիշ ամեն տեղ՝ անուշ արձագանք պիտի գտնեն անոր սրտին մեջ, որուն կընծայվի ի դիմաց և ըստ ըղձից սուրբ և սիրելի Ողբացելույն, որ պիտի շարունակե երկնքեն՝ սփռել մեր վրայուր հայրությունը և օրհնությունը և ըլլալ նեցուկ և մխիթարություն Գերապայծառ և Արհիապատիվ հորս, զոր շնորհեն մեզ երկինք վայելել համայր ամս։

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ԿՂԶԻՆ 1884 ԹՎԱԿԱՆԻՆ

Տրդատ Լիսեցին (այսպես էր ստորագրում հանգուցյալ Տրդատ Լիսիցյան) և ես տաս տարի շարունակ ընկերներ էինք։ Մտերմացել էինք իրար հետ 1876 թվականից, երբ միաժամանակ սովորում էինք Թիֆլիսի նկարչական ուսումնարանում։ Պետերբուրգ գնացինք և Ակադեմիա մտանք համարյա նույնպես միաժամանակ և վերջը Իտալիայի երկրնքի տակ ավելի ամրացավ մեր բարեկամությունը։

Մեծ հույսեր ունեի աշխույժ, երիտասարդ ընկերոջս վրա, բայց մեծ հույսերը ե՞րբ են իրականանում։ Նրան վիճակված էր քանևերեք տարեկան հասակում օտար հողի տակ հանգչելու։

Հասանք Վենետիկ։ Այս արտիստիկ, օրիգինալ քաղաքը տպշեցրեց մեզ։ Եվրոպական բոլոր քաղաքները փոքրիշատե միմյանց նման են, բայց սա մի տարօրինակ բացառություն է կազմում։ Առաջին օրևեթ այցելեցինք դեղարվեստական մուզեյները, ուր պատահմամբ ծանոթացանք Հ. Հովսեփ Մարգարյանի[1] հետ։ Նա մեզ տարավ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը ու ծանոթացրեց Հ. Գաբրիել Նահապետյանի և Հ. Համազասպ Սափարյանի[2] հետ։ Սրանք ամենքը կովկասցիներ էին, ուրեմն հեշտությամբ պետք է հասկանայինք իրար։ Մեր խոսակցության նյութը գլխավորապես Հ. Ալիշանն էր։ Այս երիտասարդ վարդապետները ոգևորված ու հափշտակված պատմում էին նրա մասին իրանց գիտեցածը։

Վենետիկը ընդհանուր կերպով պատելուց հետո, մի պայծառ հունիսյան առավոտ, նստեցինք գոնդոլը և դիմեցինք դեպի Ս. Ղազարի կղզին, որը հեռվից նկատվում էր իր միակերպ, կարմրագույն շինություններով։ Նավավարը շատախոս էր. նա շարունակ պատմում էր հայ վարդապետների մասին հազար տեսակ բաներ, որոնց մեծ մասը չէինք հասկանում և այդ պատճառով ի սրտե ծիծաղում էինք։ Իտալացին ենթադրելով, որ իր պատմությունն է մեզ ծիծաղ պատճառում, կրկնապատիկ ոգևորվում էր։

Հասանք կղզին։ Հյուրընկալ վարդապետը, որի անունը մոռացել եմ, ուրախությամբ մեզ ընդունեց։ Սովորական և ընդունված կարճ խոսակցությունից հետո հայտնեցինք իրան մեր ցանկությունը։ Ս. Ղազարի կղզին և Ալիշանը մեզ համար միևնույն բանն էր, ուստի ամենից առաջ ուզում էինք Հ. Ղևոնդին տեսնել։

Հյուրընկալը «Իսկույն» ասելով հեռացավ։ Մենք մնացինք միայնակ, մի մաքուր սենյակի մեջ։

— Գուշակի՛ր, ի՞նչ տեսակ մարդ է Ալիշանը,— հարցրեց Տրդատը։

— Միջահասակ, սպիտակ մորուքով և լուրջ դեմքով,— պատասխանեցի ես։

— Իսկ իմ կարծիքով նրա արտաքին տեսքը այսպես է,— այս ասելով իր մագերը ուղղեց, հոնքերը կիտեց, նստեց աթոռի վրա, որ սեղանի մոտ դրված էր, և ճակատը ափի մեջ առավ։

Նա ուներ և դերասանական ընդունակություն։ Մեծ ճարպկությամբ ներկայացնում էր զանազան տիպեր։

— Ո՛չ,— ասացի ես,— դա խիստ է. իմ կարծիքով նա բարի է։

— Ուրեմն այսպես...

Նա արդեն ձեր փոխել էր, և ես պատրաստվում էի կրկին նկատողություն անելու, երբ ներս մտավ արագ քայլերով մի կարճահասակ, նիհար ծերունի փարաջավոր, որ շատ նման էր մեր պաշտոն ունեցող հոգևորականի։ Բարև տալուց հետո բռնեց մեր ձեռքերից ու տարավ գրադարան։ Ըստ երևույթին նրա ցանկությունն էր մեզ զբաղեցնել մինչև Հ. Ալիշանի դուրս գալը։ Ցույց տալով մի քանի տասնյակ ձեռագիր հայերեն գրքեր, հարկավոր բացատրություններ տվեց։ Վերջը ավելացրեց, որ այս կողմից Ս. Էջմիածնի գրադարանը անհամեմատ հարուստ է։

Ժամանակը անցնում էր, իսկ Հ. Ալիշանը չկար։ Մեր համբերությունը հատավ. չէ՞ որ շատ երիտասարդ էինք։ Տրդատը, բոթելով ինձ, հասկացնում էր, որ ես խոսք ասեմ։

— Բայց մենք ուզում ենք նախ և առաջ Ղևոնդ վարդապետին տեսնել...

Խոսքս չավարտած, ծերունին առավ ձեռքս ու իր հետևից քարշ տալով տարավ մի ընդարձակ սեղանի մոտ, ուր դարսված էին նոր տպագրվող գրքի թերթեր ու պատկերներ։ Ընկերս, որ տաքարյուն տղա էր, զայրացել էր ծերունու վարմունքից ու այլևս չէր ուզում իրան լսել։

— Սա «Այրարատն» է, որ այժմ տպագրվում է,— ասաց հոգևորականը,— ինչպե՞ս եք հավանում նկարները։

— Հիանալի է,— պատասխանեցի ես,— սա Հ. Ալիշանի աշխատությո՞ւնն է...

— Այո, մենք ամենքս կաշխատենք։

— Мы пахали,— փնփնթաց Տրդատը ու հեռացավ մեր մոտից։

Վարդապետը բան չկասկածելով, առաջվա պես ոգևորված ցույց էր տալիս զանազան բաներ։

Ընկերս բոլորովին առանձնացավ։ Նա կանգնել էր մոտ քսան քայլ մեզանից հեռու ու աշխատում էր ձևերով նախատել ինձ իրան չհետևելու համար։

Հոգևորականը տարավ ինձ թանգարանը։ Նա այնտեղ միայն նկատեց, որ Տրդատը մեզ հետ չէ։

— Ո՞ւր է ընկերդ։

Ես Տրդատի նման քաջ ու համարձակ չէի, ես ամաչկոտ էի։ Մի փոքր շփոթվեցի ու ինչ-որ հիմար պատասխան տվի։

Այդ միջոցին Լիսիցյանը ներս վազեց թանգարանը, բոլորովին այլայլված մոտեցավ ծերունուն, առավ նրա աջ ձեռքը ու սեղմեց իր շրթունքներին։

— Ի՞նչ կընես, տղաս,— զարմացած արտասանեց վարդապետը ու կարմրեց։

— Ինչո՞ւ չասացիք, ինչո՞ւ չասացիք... ներեցե՛ք...,— հուզված ձայնով խոսեց Տրդատը։

Ինձ համար էլ պարզվեց, որ նա ինքը Հ. Ալիշանն էր։

Մեր խոսակցությունն ավելի կենդանություն ստացավ։ Ղևոնդ վարդապետը իր բարի ու անմեղ աչքերով դիմում էր մերթ ինձ, մերթ ընկերիս, ու իրան հետաքրքրող հարցեր առաջարկում։ Ի միջի այլոց հարցրի իրան, թե ինչո՞ւ Հայաստան չէ գնում ճամփորդելու։

— Երուսաղեմ կերթամ[3],— ժպտալով պատասխանեց նա։

Չնայած նրա սիրալիր առաջարկության, մենք չմնացինք վանքում ճաշելու և շատ դուրեկան տպավորության տակ մեկնեցինք այնտեղից։

— Ինչպե՞ս հավանեցիր Տրդատ, Հ. Ալիշանին,— հարցրի ես, նստելով գոնդոլի մեջ։

— Առաջին անգամն եմ տեսնում այդ աստիճան բարի ու խոնարհ աչքեր։

— Մանկական անմեղություն է գրված նրա դեմքի վրա,— ավելացրի ես։

Այն օրից հետո անցել է տասնյոթ տարի։ Հ. Ղևոնդ Ալիշան այլևս չկա։ Նա գերեզման իջավ իր մարդկային պարտքը լիովին կատարելուց հետո։ Երջանիկ մարդ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Հաղիվ լռած էին Ս. Ղազարու կղզեկին մեջ՝ Մխիթարյան երկհարյուրամյակի հանդեսներուն արձագանքները, և ահա կհնչեր հոն դանդյուն մը, տխուր, ողբացիկ, սարսռուն, որ կզուժեր կորուստ մը, աղետ մը, մե՜ծ և շատ մեծ՝... մահը այն անձին, որ վաթսուն տարիներե ավելի Ուխտիս մեծագույն փառքը եղած իրեն սրբությամբ և ըեղուն գրչով, բոլոր ազգին սիրելի և պաշտելի դարձած, մեր պատմության ամենեն ընդարձակ էջը պիտի գրավե, և պիտի մնա ամբողջ հայության ամենեն մեծ միտքը։ Մահը խլեց մեզմե կյանք մը, որ ամբողջապես նվիրված կրոնքին, ազգին և գիտության,— կյանք մը, որ ութսուն տարիներու ծանրության ներքև՝ այնքան ժիր, առույգ և աշխատող, ինչպես դալար հասակին մեջ,— որ մինչև վերջին րոպեն՝ ժամադիրքը և գրիչը ձեռքին մեջ, ինչպես զինվոր մը սուր և դրոշը պինդ բռնած, ինկավ հարվածին ներքև։ Ո՞վ Ալիշանեն ավելի ազգեն հեռու ապրեցավ, և ո՞վ իրմեն ավելի սիրեց և սիրվեցավ ազգեն։ Ո՞վ Ալիշանեն ավելի համեստ և ներանձնասեր եղավ,— կենաց մեծագույն մասը՝ քառասուն տարիներե ավելի Ս. Ղազարու խցիկին մեջ փակված,— և կա՞ անուն մը, որ իրենեն ավելի լսված՝ հռչակված ըլլա։ Կա՞ հայ մը, որուն սիրտը չբաբախե, չհուզվի Նահապետին անունը լսելուն և չթափե կաթիլ մ'արցունք անոր գերեզմանին վրա։ Մարդ մը, որ գիտության ընթացքին հետ հավասար քայլերով հառաջեց միշտ, և մտքին ընդարձակությամբը անոր շատ մը ճյուղերը միանգամայն ընդդրկած, զանազան նյութերու մեջ ցըցուց գրչին ուժը. և այս վաթսուն տարիներու մեջ՝ ի՞նչ պատմական կամ գրական խնդիր հուզված է, զոր ինքը շոշափած չըլլա։ Նա հնա-

խոս էր, պատմագետ, աշխարհագիր, գրագետ, բանաստեղծ, իմաստասեր, աստվածաբան. նա զարմանալի կերպով միացուցեր էր յուր վրա իրարու անհաշտ կարծված գիտությունները, նա բուսագետ էր, բարոյախոս, բանասեր, թարգմանիչ, լեզվագետ, հրատարակիչ և դաստիարակ միանգամայն։ Կրավե ակնարկ մը տալ անոր երկասիրած քառասունեն ավելի մեծ ու փոքր հատորներուն, և ամեն մարդ պիտի համոզվի բսածիս, առանց չափազանցություն մը նըշմարելու խոսքերուս մեջ։ Եվ որչափ մեծ կպատկերանա հ. Ալիշանին դեմքը մեր մտքին մեջ, նույնչափ խոր և անմխիթար կըլլա սրտերնուս ցավը այսպիսի կորուստի մը առջև, որ մերը չէ միայն, այլ բոլոր ազգին և մեր դեռ աղքատիկ գրականության։

Ասկե իբր տասը տարի առաջ, 1892-ին սկիզբը, ԻՆՖԼՈՒԵՆՑԱ կոչված հիվանդությունը ծանրապես վտանգեց հ. Ալիշանին առողջությունը, գրեթե գերեզմանին ափը մոտեցուց և հաղիվ իրեններուն և օտարաց աղոթքով և դեղերով ազատեցավ մահվանե։ Այն ժամանակեն սկսած՝ խանգարվեցավ առողջությունը և մերթ ընդ մերթ կտկարանար, մանավանդ այս վերջին ձմեռները, մինչ առաջներն երկաթի առողջություն ուներ, հակառակ իրեն տկար և փափուկ կազմվածքին։ Նա, որ առաջ ուղղաբերձ հասակով, կթռչեր կարծես քայլելու միջոցին, վերջին տարիներս՝ կորացած, ծռած, դանդաղեցան իրեն քայլերը. կդգայինք, թե տարիներուն ծանր բեռը կկքեր խեղճ ծերունին։ Անցած ձմեռը հինգ-վեց անգամ սաստիկ շնչարգելություն ունեցավ, բայց դեղերով և խնամքով կրցավ ազատիլ։ Ամեն բռնվելուն այդ հիվանդությամբ՝ առաջին մտածությունը կըլլար հոգեոր պատրաստությունը տեսնել և հետո խաղաղ և արի՝ կսպասեր մահվան։ Անգամ մը նույնիսկ իրեն մոտ գտնվողներեն մեկուն հաշիվ և տեղեկություն տվավ սենյակին և դարաններուն մեջ գտնվածներու մասին և կարևոր կարգադրություններն ըրավ, այն ժամանակ Ուխտիս Արհիեպատիվ Գլուխը բացակա գտնվելով վանքեն, Հռովմ քաղաքը, ուր ինքն ալ նույնպես մահվան դեմ կկռվեր[2]։ 1901-ի ամառը շատ լավ անցուց, չհաշվելով մերթ ընդ մերթ ունեցած փոք-

բիկ նեղութիւնները, որոնք ամեն հասակի՝ ևս ավելի իրենին կրնան պատահիլ։

Ընծայման տոնին օրը (Նոյեմբեր 21 Ն. Տ.) տխուր օր մ՚էր, մառախլապատ. օդին մէջ խտացած խոնավութիւնը կկաթկթեր, իբր թե արցունքի շիթեր ըլլային։ Բայց հ. Ալիշան կայտառ և զորավոր կերևնար այն օր. ձայնավոր պատարագին մինչև կեսը դասին մէջ կեցավ, մինչ ուրիշ անդամներ սկիզբեն կամ ավետարանեն վերջը դուրս կելներ։ Հետ ճաշուն՝ նույնիսկ կեցավ մտիկ ընելու եղած խոսակցութիւնց և ժպտելով մի քանի խոսք ուղղելեն վերջը ասոր կամ անոր՝ սենյակը քաշվեցավ։ Երեկոյան ժամերգութենեն վերջը, փոքրիկ հոգևոր հանդես մը կատարվեցավ Գերապատիվ Աբրահոր մատրան մէջ, նույն օրվան տոնին առթիվ. ինքն ևս ներկա գտնվեցավ և հետ հանդիսին, երբ քահանայք Գերապատիվ Աբրահոր սենյակը հավաքվեցան, խորհրդածեց նա, թե ինչո՞ւ ԼԻԹԱՆԻԱՅԻՆ մէջ դրված չէ Ս. Աստվածածնի համար՝ «Հանգուցիչ ննջեցելոց» բացատրությունը։ Կդպա՞ր արդյոք բան մը, թե ինքն ևս, ուր-ինը ժամ վերջը ՆՆՋԵՑԵԼՈՑ թվույն մէջ պիտի մտներ և այդ հանգուցիչ մորը կարոտ պիտի ըլլար... Այն երեկո վերջին փայլփլումն էր իրեն կենաց ճրագին. սովորականեն ավելի զվարթ էր, ոգևորված, աչկունքը կվառեին և երիտասարդի ավյունով կբաբախեր սիրտը հալումաշ կուրծքին ներքև։

Նույն երեկո ժամը վեցին, պատահմամբ մեր միաբաններեն մին իրեն սենյակը երթալով, գրեթե քառորդի մը չափ ընտանեբար և աշխուժիվ խոսեցավ, ցույց տալով իրեն մի քանի ինքնագիր կամ թարգմանած հոգևոր քերթվածիկները, և հատկապես գոհություն հայտնելով, որ վերջապես ավարտեց ձեռքը ունեցած երկու աշխատությունները՝ ՀԱՅԱՊԱՏՈՒՄԸ և ԱՐՇԱԼՈՒՅՑԸ[3]։ Հետո խոսակցությունը դարձավ Կոնիբիր հայագիտին վերջերս հրատարակած տետրակի մասին, գրված Մովսես Խորենացվո գրքին վրա «որում,— ըսավ,— ինչ-ինչ կարծիքներու մէջ ինձ համաձայն է, և ես ալ նման կարծիք հայտներ եմ «Հայապատումին» Ա մասին մէջ, ուր որ Խորենացվո գոյության ժամանակին վրա

կխոսիմ», և այլն. և զայս ըսած պահուն՝ գոհության ժպիտ մը կփայլեր շնորհալի դեմքին վրա։

Ընթրիքեն վերջ, ժամը ութին, փոքրիկ ընտանեկան հանդես մը կատարեցինք, որուն ներկա էր և հ. Ալիշան, որ զվարթ կերևեր, կխոսեր և կծիծաղեր, հակառակ յուր սովորության։ Ժամը 8 1/2-ին առանձնացավ սենյակը, առանց որևէ նշան մ՚ունենալու տկարության, այնչափ հանգիստ էր։ Աղոթքները կընե և անկողին կմտնե ժամը իններին։ Հանկարծ սաստիկ շնչարգելություն կունենա, ճիշտ անցած տարվան պես, և կնեղե զինքը։ Մոտիկ սենեկին պատը կդարնե. կհասնի դրացի վարդապետը և, տեսնելով պաշտելի ծերունվույն տագնապիլ վիճակը, կվազե ձայն տալու միաբաններուն, որ դեղ և օգնություն հասցունեն։ Իրարանցումը կըսկըսի լրիկ սրահից մէջ, ամեն մարդ սենեկեն դուրս կվազե, բոլոր վանականք կխռնին հիվանդին շուրջը և շվարած, դալկացած, իրարու կնային՝ մոտալուտ և սպառնացող վտանգին առջև, չկարենալով օգնություն մը ընել խեղճ ծերունվույն, որ կտանջվեր։ Կաճապարեինք բժիշկը կանչել և նույն պահուն պետք եղած դարմանը կրնենք։ Եվ ամենքս ալ հույս մը ունեինք, աղոտ հույս մը, թե այս անգամ ալ պիտի հաղթեր հիվանդության,— ինչպես ուրիշ անգամներ,— մանավանդ երբ սակավ մը կմեղմանար շնչարգելությունը։ Կհասնի բժիշկը, կգնե երակը և մենք բժշկին դեմքին վրա կուզենք կարդալ տալիք վճիռը։ Բայց նա լուռ է. կարծես չհամարձակիր դուժել մոտալուտ վտանգը, դիտնալով թե որչափ թանկագին կյանք մ՚էր, զոր պիտի կորսնցնեինք։ Սակայն բավականեն ավելի կխոսեր այն շարազուշակ լռությունը, և մենք ևս սիրտ չենք ըներ հարցնել։ Բայց վերջապես բժիշկը կթոզե լռությունը. «Լավ չեմ գտներ,— կըսե,— կրնաք հոգևոր պատարաստությունները տեսնել» և կհեռանա։ Այն ժամուն օրհասական ծերունին շունչի տագնապալից տուրևառի մէջ էր, աչքերը փակ, լեզուն կես մը բռնված, հազիվ կրնար հոգևոր հառաչներ ընել հատկյալ ձայնով։ Կզգայինք անոր ներքին տագնապը, թեերուն անդադար ասա անդ շարժումը նշմարելով։ Կհարցնենք, թե կփափաքե՞ր արդյոք, որ սուրբ խորհուրդները մատակարարեինք։

Նա խսկուն աչքերը կբանա, թևերը կրարձրացնե, գլխուն շարժումով և խոր հառաչանքով մը կհայտնե փափաղը։ Բայց միշտ կհուսայինք թե պիտի ապրեցուցնենք զինքը, այնչափ սրտանց և եռանդուն էին մեր աղոթքները։ Հիշողությունը տեղն էր, միտքը՝ արթուն, կհասկնար ամեն հարցում և կպատասխաներ։ Անոր տանջանքները սփոփելու ուրիշ դեղ չունեինք, բացի անհուն գութգութանքը և ցավը, որով շրջապատեր էինք զինքը։ Մերթ կփայլեր դեմքը երկնավոր հանդարտությամբ մը, և կպատասխաներ մեր աղոթքներուն։ Չլսվեցավ երբեք բերնեն ա՞խ կամ ո՞հ մը, ամենափոքր գանգատ մը. ընդհակառակն, ամենեն դառն վայրկյաններուն, սրտի անդորրության և համակամության ժպիտ մը կերևեր շրթանց վրա, որ հուսալից բան մը ուներ մեզի համար։ Եվ սակայն շորս ժամ անցավ և կտևեր դեռ շնչարգելության հեղձուցիչ տառապանքը։ Կես գիշերն անցեր էր, ժամը մեկ հնչեց, երբ փոքր մի մեղմացավ տագնապը։ Գերապատիվ Աբբահայրը և ուրիշ քահանայք, որք հիվանդին շուրջը կհսկեին, տեսնելով թե մերձավոր վտանգ մը չկար, քաշվեցան սենյակեն։ Ժամը երեքին տիրեց դարձյալ լռությունը. մնացին հիվանդին մոտը երկու քահանայք, որք պիտի հսկեին և ծառայեին մինչև առավոտյան ժամը հինգ, երբ ուրիշները գալով պիտի փոխանակեին զիրենք։ Այն ժամերը կանցունե անխոս, անքուն, գրեթե անշարժ, միայն կուրծքն էր, որ կելներ ու կիջներ շնչառության բուռն տագնապեն, և մերթ ընդ մերթ աչքերը բանալով երկու կողմը կհառեր։ Արշալույսը ծագելուն մոտ, կարծես խոր քունե մը կարթննա, կուզե գիտնալ. թե ժամը քանի՞ էր։ Իրեն ժամերը և վայրկյանները համրված էին. նա գիտեր զայդ։ Ձեռքը կկարկառե մոտիկ սեղանին, որուն վրա դրված էր գրպանի հնչող ժամացույցը. ձեռքը կառնու, կուզե բանալ՝ չհաջողիր. այն ժամանակ կմղե զսպանակը և ահա կհնչե ժամը չորս։ Դեռ հասած չէր ժամանակը իրեն մեկնելուն, կլռե և կսկսի դարձյալ տագնապիչ հեքը։ Ժամը հինգին կսկսի սենեկին մեջ այցելուներուն երթևեկի շշուկը, որոնք գոհ կերևեին, որ հիվանդը վտանգն անցուցեր էր։ Ժամը վեց կհնչե. հիվանդն աչքը կբանա, կնայի

շուրջը և կհարցունե «ժամը քանի՞ է»։ «Ժամը վեցն է» կպատասխանվի. «Ո՞ւր հասավ առավոտյան ժամերգությունը» կըսե. «Հիմակ սկսավ անմիջապես» կպատասխանվի։ Կզարմանա և կարդե դուրս նայվածք մը կձգե և իբրև թե աճապարանք մ՚ունենար ժամերգության հասնելու, կուզե կապան հագնիլ և անկողնեն դուրս ելլել։ Մոտը կանգնող վարդապետը կդժվարի հնազանդելու, հասկցնելով, որ կարողություն չուներ ելլելու։ Նա կկրկնե խնդիրքը, և իրեն ձեռքով և ուրիշներուն օգնությամբ կհագնի կապան, անկողնեն կելլե և դողդոջուն քայլերով կուղղվի դեպի աղոթարանը. կիսաչակնքե ինքզինքը և բազկատարած, եռանդագին կհամբուրե խաչելությունը։ Հազիվ թե կգտավի անկե, սաստիկ սարսուռ մը կբռնե զինքը և բերնեն արյուն և սև հյութ մը դուրս գալով, կմարի առկայծ ճրագը,— կավանդե մարուր հոգին՝ յուր հոգեսուն որդվոց թևերուն մեջ։ Եվ դեռ չէին հանդչեցուցած անկողնին վրա անոր մարմինը, արդեն հոգին խառնվեր էր սրբոց դասուն մեջ. «Երանի՞ որք ի Տէր ննջեցին»։

Նոյեմբերի քսաներեքին էր, կեսօր։ Մահվան զանգակը կհնչեր տխուր, լալագին ձայնով մը։ Սգավոր թափոր մը, հրազներ ի ձեռին կանցներ համրաքայլ վանքի սրահներու միջեն, թողելով իրեն հաև ողբական նվագներու խուլ դանդյունը և խունկերու գալարուն ծուխը։ Հոն, այն պահուն, ամեն բան սև էր, տխուր՝ հուղարկավորաց դեմքերը, օդը, որ կարտասվեր, և մոմերուն երերող բոցերը,— ամեն բան տխուր էր, բացի այն մեկեն, որ ձգեր էր ամենուս վրա տխրության քողը. և ինքը կհանգչեր խաղաղիկ, արդարաց քնով ծաղիկներու ներքև, պսակներով բոլորված, ոսկեթել նափորտի մեջ, շքեղ սաղավարտով, գավազան, խաչ և սկիհ ի ձեռին, կարծես նոր օծված քահանա մ՚էր, որ կերթար երկինք, հավիտենականին զոհը մատուցանելու... Հուղարկավոր թափորը կկազմեին երեք շուրջառավոր քահանայք, շահակիր և խաչակալ շապկավոր դպիրք, բոլոր Ուխտիս անձինքը, Մուրատ-Ռափայելյան վարժարանին աշակերտք, Պադուայի համալսարանական հայազգի ուսանողք, ազգային ընտանիք քաղաքիս, հայագետ ուսուցչապետն Տեղա[4],

Վենետիկո դիտութեանց կաճառին ներկայացուցիչը, վանքիս բժիշկը, փաստաբանը, զանազան կարգերեն կրոնավորք, և այլք։ Այո՛, սակավ էին հուշարկավորք բախտաւոր հանդուցելոյն բարեկամաց և հարազատաց թվոյն հետ, սակայն այդ սակաւները անկեղծ զգացումներով լի և հուզված սրտով եկած էին քանի մը կաթիլ արցունք թափելու անոր դագաղին վրա։ Կհասնի թափորը եկեղեցի. ծաղիկներու մեջ կղեսեղվի դագաղը։ Աղոթքի և ցավի ձայները կկրկնվին կամարներեն, երդերը և սաղմոսները կհնչեն մեր հոգվույն խորերեն, երբ հանգուցելոյն սրտաշարժ «Ողջույնները» կլսվին։ Հանկարծ ծանոթ ձայն մը,— հայագետ Տեզային,— հուզիչ շեշտով մը կըսե. «Այլևս չրաբախեր անզվական սիրտ մը, չմիխիթարեր անուշ ձայն մը, իմաստուն խոսք մը շառաչնորդեր, անստգյուտ առաքինության մ'օրինակը չմնար՝ բայց հիշողության մեջ. սակայն հավատարիմ հիշողություններ հարգող բարեկամներու, աշակերտներու, զավակներու Երեակայության թեևերուն վրա կճախրեր ինքը, բարեպաշտ մարդու գորովանքը ավելցնելով իրեն ուժը. հայրենյաց հիշատակարաններուն մեջ, կամ մարմարներու կամ խոսքերու մեջ, կկարդար և կվերանորոգեր սիրելաբար անոր պատմությունները. երբ և հզոր, դարձյալ կխոկար և կորոհար մեծ և թշվառական ազգի մը դարերուն մեջ ունեցած բոլոր մտածությունները։ Սիրեց զայն՝ իբր խաչակիր մը ըլլար, անոր սատացումը արգիլված ըլլալով, և իրեն զենքերն էին խոր հետազոտությունները անոր՝ որ կհուսա, սուր դատողությունները անոր՝ որ կհուսա, և կենդանի պատմությունը անոր՝ որ կհուսա. արդարության և ճշմարտության հաղթանակը կուզեր։ Ամենքն ալ կուլան և ամենքն ալ կհիանան։ Այս՝ փառք մ'է, ո՛վ ցավակիր հայեր, զոր ոչ ոք կրնա խլել ցեղն մը, որ արժանի է ունենալու զավակներ, ինչպիսին եղավ երկրիս վրա Ղևոնդ Ալիշան։ Մարեցավ հանդարտիկ յուր գրքերուն և եղբայրներուն մեջ, ինչպես որ ապրած էր երջանկորեն. խոնարհ և հստակ, գրեթե արհամարհող պատիվներու, որոնց արժանացեր, բայց չեր փափագած։ Սփռեցե՛ք սպիտակ ծաղիկներ, քանդակեցե՛ք անոր ոսկերաց վրա հանգչող մարմարին վրա. «Շատ ազգեր կհամաձայնին, թե սա միայն եղավ ժողովրդին գերագույն մարդը»։ Դագաղն տարվեցավ գերեզման, նույն վսեմ և սրտաշարժ եղանակներով, որոնք ավելի ազդեցիկ և խորհրդավոր կդառնային մառախուղին և փչող ցուրտ հովին մեջ, կարծես բնությունն ալ ուզելով մեր կոծին հետ խառնվիլ։ Օրհնվեցավ կճյա դամբարանին խորշը, ուր ամփոփեցինք մեր մեծ հանգուցյալը, և զուրը կնքվեցավ։ Հոն պսակներ կախվեցան, ծաղկյա և հախճապակյա պսակներ, որոնք ադամանդի պիտի փոխվին երկնքի ցողին ներքև։ Հոն պիտի գա պլպուլը, ծառոց ոստերու միջեն, իրեն երգիչը գեղգեղելու. պիտի գա հոն Մասիսի սարերուն հովը՝ ողջունելու Նահապետին նշխարները. հոն պիտի գա Հայրենյաց Ոգին, յուր մեծ զավակին շիրիմին վրա սավառնելու. պիտի գան հոն բոլոր հայության հառաչները, սգալու ազգին մեծ կորուստը։

Հուշարկավորները մեկնեցան խոր թախիծով համակված, որոնցմե մին օտարազգի մը,— կզրեր մեզի երկրորդ օրը. «Չեմ կարող ըսել թե ինչպիսի՛ տխուր և անուշ զգացումներ բերի հետս Ս. Ղազարեն։ Կզգամ թե այդպիսի եղբայրներու մեջ ոչ միայն ապրիլը այլև մեռնիլը անուշ է»։

▲

Հ. Ալիշանի դագաղին առջև բոլոր ազգը սուգ բռնեց։ Շատերը լացին, թուղթեր և հեռագիրներ ուղղեցին արցունքով գրված, անկեղծ և սրտագին ցույցեր ըրին, հոգեհանգիստներ կատարեցին, սգավոր հանդեսներ կազմեցին. և այս բոլորը պատիվ կընե ոչ միայն հանգուցելույն, այլև ամբողջ ազգին, որ գիտցավ սիրել և հարգել իրեն մեծ երախտավորը, առանց կուսակցական ոգիներե ազդվելու[5]։ Ի՞նչ ուներ հ. Ալիշան, որ կրցավ այսպես ամբողջ ազգի մը սիրտը գրաւել։ Ի՞նչ էր անոր ներքին կյանքը, ինչպիսի՞ բնավորության տեր էր, որ հեռուեն ու մոտեն, օտարներուն և իրեններուն հավասարապես սիրելի, հարգելի և պաշտելի եղավ։ Այս է ահա, զոր կուզեմ հոս քանի մը տողով բացատրել։

Հ. Ալիշանի ներքին կյանքը կարելի է բացատրել երկու

բառի մեջ, առաքինություն և ուսումն. անոր բոլոր կյանքը այդ երկու բառերուն ներդաշնակ միությունն եղավ։ Զգիտեմ, ժամանակին հա՞րգն էր, որ ինքը մենավոր և լռասեր ըրավ, թե՞ յուր մենասիրությունն էր, որով գիտցավ ժամանակին հարգը և զայն շահեցնելու հնարքը։ Գիրքը և գրիչը դյութական ազդեցություն մ'ունեին վրան և կմոռանար ամեն բան, աշխարհ, կյանք, դյուրություն, պատիվ, զբոսանք և այլն։ Նույն էր իրեն համար՝ եթե Ս. Ղազարու լռիկ խցիկին մեջ գտնվեր և կամ Փարիզի նման բազմադղորդ քաղաքի մեջ, նա նույնչափ խաղաղիկ՝ իրեն ժամգիրքով և գրիչով կզբաղեր։ Իրեն օրերը ժամացույցի մ'անվի նման կգառնային. յուրաքանչյուր վայրկյանը և բոպեն՝ իրենց հատուկ պաշտոնը ունեին, որոնք խիստ հարցաքննության մը կենթարկվեին օրը լմննալուն։

Ինքը, որ իբրև բանաստեղծ խույս պիտի տար միօրինակությենեն, ընդհակառակն, շափազանց կանոնավոր էր յուր օրական գործերու կարգին մեջ։ Ամառ ու ձմեռ առավոտյան ժամը 3-ին, ամենեն ուշ՝ 3 1/2-ին կելլեր անկողնեն։ Զմեռները, ցուրտին ու մութին, ճրագ մը բռնած ձեռքը, փիլոնին ծալքերուն մեջ փաթթված, գլուխը անցուցած կնգուղը, երագ քայլերով կանցներ վանքի լռիկ սրահներու միջեն, «Տեր զի բազում»-ը մրմնջելով և ժամը 4-ին արդեն եկեղեցին էր, ավանդատան աղոթարանին վրա ծնրադիր, կպատրաստվեր սուրբ խորհրդուն մասնակցման։ Այն սրբազան պահուն ինչպիսի՜ ամփոփածություն, ինչպիսի՜ երկյուղածություն և հրավառ եռանդն, որ կցոլանար դեմքին վրա, ձայնին և շարժումներուն մեջ։ Սրտագրավ տեսարան մ'էր դիտել զինքը խորանին վրա։ Պատարագը ավարտելեն վերջը, կես ժամի չափ գոհության աղոթք կըներ, տեսնելով ուրիշ քահանայի մը պատարագը, որուն հաճախ ինքը կսպասավորեր։ Հետո, նույն ոճով սքեմին մեջ փաթթված դարձյալ, սենյակը կդառնար, ուր տասը բոպեի կամ քառորդի չափ մրափելով անուշիկ մը, ճիշտ սահմանած բոպեին սթափվելով կփութար եկեղեցի, նույն օրվան հիշատակին կամ տոնելի սուրբերուն վրա համառոտ մտածական մը ընելու, իբր նախապատրաստություն ժամերգության։

Հետ ժամերգությունը վերջանալուն, երկու պատարագ կտեսներ, իրեն մտածականը և աղոթքները կըներ, որոնցմե միայն տկարությունը կրնար զինքը ազատ ընել, և կդառնար սենյակը կարգավորելու և անմիջապես նախաճաշի կիջնար։ Առաջին ժամանակները, երբ դեռ տարիները չէին ծանրացած վրան, քալելով կըներ նախաճաշը,— որ ուրիշ բան չէր, բայց սակավ մը կաթ և սուրճ և պատառ մը հաց,— լռությամբ, և միայն կտրուկ պատասխան մը տալով, եթե երբեք հարցում մ'ուղղվեր իրեն։ Նախաճաշը լմննալուն պես, եթե ձմեռ էր՝ սենյակը կելլեր, իսկ մյուս երեք եղանակներուն՝ պարտեզ կելլեր, վայելելու գեղեցիկ, արևոտ, պաչծառ երկինքը, խաղաղ լճակը և Վենետիկ մոգիչ տեսարանը։ Եվ այդ վայրկյաններն իսկ դիտեր շահեցնել. գրպանեն գրքույկ մը կհաներ, և այսպես մերթ գրքին, մերթ բնության էջերուն վրա կարդալով խորհրդածելու նյութեր, կորոճար զանոնք, կընկղմեր յուր խոհերու մեջ և կատարելով իրեն շրջանը, կդառնար սենյակը՝ սկսելու իր ուսումնական աշխատությունները։ Սենյակը շատ անշուք և պարզ էր, չափավոր ընդարձակությամբ, որուն զարդերը կկազմեին խաչելություն մը, քանի մը պատմական պատկերներ, և իրեն կարևոր գրքերը. նույնպես կահկարասին չափազանց անպաճույճ էր, երկաթ մահճակալ մը, երկու գրադարաններ, գրասեղան մը և երկու աղոթարաններ։ Սենյակը կնայի դեպի արևմուտք, որուն առջև կտարածվի ընդարձակ հորիզոն մը, ուր ամեն երեկո կպարզվին իրարու անմման հիանալի տեսարաններ, երբ ի մայր կմտնե, ծիածանին բոլոր գույները թափելով լճակին ջուրերուն վրա, կամ իբրև մեծ հնոցն մը կրակի սլաքներ արձակելով ամպերուն վրա։ Այդ սենեկին մեջ արտադրեց նա յուր բոլոր վիթխարի երկասիրությունները, ուր ոչ ոք կերթար զինքը խանգարելու։ Այն պատկառանքը, զոր կազդեր մեր վրա յուր ներկայությամբ, կարգելուր զմեզ հախուռն մոտենալ իրեն, այնքան թանկ էին իրեն վայրկյանները մեր աչքին։ Բայց այսու՝ չկարծվի թե անմատչելի մեկն էր նա. ընդհակառակն, ընտանի, կարեկցող, զիջանող՝ մանավանդ կրտսերագույնից, կատարելով սիրակամ ինչ խնդիրք, որ ըլլար իրեն։ Կսրբա-

գրեր ինչ բան որ տարվեր, երբեք զլանալ չէր գիտեր՝ ինչ բան որ տարվեր, երբեք զլանալ չէր գիտեր՝ ինչ բանի որ ձեռնահաս էր։ Կշնորհեր հոժարությամբ՝ ինչ գիրք կամ ձեռագիր կամ նույնիսկ յուր գրություններեն, որ ուզվեր։ Այսպես անընդհատ ուսումնասիրությամբ, ընթերցմամբ և գրությամբ կանցուներ իրեն աշխատության ժամերը, մանավանդ իրեն ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պատրաստելու ժամանակ, շորս կողմերը շարած նախնյաց տպագիր կամ ձեռագիր մատյանները, մեր ընտանիքի մասին հայերեն կամ օտար լեզվով գրված ճանապարհորդությունները, ուսումնասիրությունները կամ նկարագիրները։

Ամառ ու ձմեռ, երբ կներեր օդը, առավոտյան ժամը 10 1/2-ին կամ 11-ին միջոցները, ձեռքը գրքույկ մը, գլուխը սպիտակ թաշկինակով մը ծածկած, կշրջագայեր պարտիզին մեջ։ Հոն, ընդարձակ հորիզոնին առջև, կսավառներ բանաստեղծ մտքով, մերթ ընդ մերթ աչքերը դեպի վեր, կամ շուրջը հածեցնելով և շարք մը վսեմ կամ սրբազան խորհրդածությանց տարուբերելով հոգվույն մեջ, մինչ ինքը կանցներ երկու շարք նոճիներու և դափնեվարդերու միջեն, կանցներ ծառերու մոտեն, կամ որթատունկերու խիտ ստվերներու ներքևեն։— Միտքը կազդուրած, սիրտը թարմացած, զգացումներով ողողուն, կառանձնանար սենյակը և թույլ կուտար, որ սահի գրիչը թուղթին վրա և հասցունե մեզի «ՍԻՍՈՒԱՆԻ», «ԱՅՐԱՐԱՏԻ» նման գոհարներ։ Միջօրեին մոտ, փելոնը ձախ թևին վրա առած, աճապարանքով կվազեր եկեղեցի. տեսնողը պիտի կարծեր թե ուշ մնացեր է և կուզե ժամերգության հասնիլ. և սակայն քառորդ կամ տասը վայրկյան կա դեռ ժամերգությունը սկսելու, և նա գիտեր շահեցնել գերազանցապես այդ վայրկյանները, զորս ուրիշ մը կորսված վայրկյաններ պիտի համարեր։

Հետ ճաշուն, դարձյալ պարտեզ կելներ, և ընդհանրապես ամառները ՉԻԹԵՆՅԱՑ ՊԱՐՏԵԶ կոչված փոքրիկ հողատափին վրա կմեկուսանար, ուր անգլիացի մեծ բանաստեղծին տնկած ձիթենիներուն ստորեն ուռճացած միակ ձիթենվույն շուքին տակը նստած[6], կարդալով և մտածելով կանցուներ իրեն հանգստի ժամը։ Երբ ժամացույցը երկուք կըլլար, իրեն ուսումնական աշխատության ժամն ալ կհնչեր. կփութար սենյակը և ինչ որ կարդացած էր կամ հավաքեր էր՝ թուղթի վրա կառնուր, իրեն մտածության և զգացումներուն գույները և ձևերը տալով անոնց։ Ամառվան ամեն տաք եղանակին,— որ շարչարվելու եղանակն էր իրեն,— թմրություն մը զգալով՝ քանի մը վայրկյան կմրափեր թիկնաթոռին վրա և հետո սթափվելով՝ կշարունակեր իրեն գրությունը մինչև երեկոյան ժամերգության մոտենալը։ Հետ ժամերգության և մտածականին՝ դարձյալ խցիկը կառանձնանար, եղանակին համեմատ բաժնելով այն երկու ժամերը, կհսը. գրավոր աշխատության և կհսն ալ ընթերցանության նվիրելով։ Եվ այսպես, աշխատությամբ կսկսեր և աշխատությամբ կփակեր օրը։

Ընթրիքեն վերջը ՇԵՄԱՐԱՆ կոչված ընթերցարանը կերթար, ուր կխմբվին ընդհանրապես քահանայք և կգտնվին հոն կարևոր գրյանք և ուսումնական թերթեր։ Նա, աչքերը կիսափակ և ձեռները իրարու ագուցած, վերուվար կքալեր, կմասնակցեր մերթ ընդ մերթ ուսումնական խոսակցությանց կամ խնդիրներուն և կհայտներ համեստորեն իրեն կարծիքը։ Ժամը 9-ը հնչելուն՝ կքաշվեր սենյակը և երեկոյան աշխատություններն ու մտածականներն ընելով, որ մեկ ժամեն պակաս չէր տևեր, հանգիստ կուտար խոնջ մտքին և մարմնույն։

Ահա այս էր օրական կյանքը այն մեծ մարդուն, որ իրեն կանոնավորությամբ գիտցավ շահեցնել և կրկնապատկել ժամանակը։ Նա այնչափ ճիշտ էր այս ժամակարգին, որ գիտեինք, թե ուր և ինչ բանով զբաղված էր յուրաքանչյուր ժամերուն և երբեք, երբեք չէինք սխալեր մեր այս հաշվին մեջ։ Այսպես անցուց նա յուր կենաց վերջին երեսուն տարին, որ մնաց անընդհատ Ս. Ղազարու կղզեկին մեջ։

Նա շատ քիչ անգամ ոտքը դուրս կդներ Ս. Ղազարու կղզեկեն, հազիվ ութ-տասը անգամ ամբողջ տարվույն մեջ, այն ալ իրեն եղբայրակիցները զոհացնելու համար։ Քաղաքին մեջ գրեթե աչքերը գոց կքալեր, վարժած ըլլալով այնպես քալելու վանքի սրահներուն մեջ. բարեբախտաբար Վենետիկ դիրքը կներեր այդ, չի գտնվելով հոն կառք, ձի

և այլն։ Այդ ալեոր ծերունին, երբ հովին տված սպիտակ մազերը որոնք կծածանեին գլխուն շուրջը, կ'անցներ Սուրբ Մարկոսի հրապարակին միջեն, ամփոփ և երագ քայլվածքով, առանց ակնարկ մ'անգամ ձգելու երկու կողմը կանգնած շքեղ պալատներուն, ճոխության և արվեստի հրաշակերտներուն, կգրավեր ամենուն ուշը, մանավանդ օտարականներուն։ Երեսուն տարվան մեջ հազիվ հինգ-վեց անգամ ոտք կոխած է ԼԻԴՈ կոչված երկայնաձև կղզին վրա, որ այնքան հրապուրիչ է ջրերու մեջ ապրող բնակիչներուն, և որուն ավազուտին վրա լորդ Բայրոն, Շատոբրիան և ուրիշ մեծ հեղինակներ թողուցեր են իրենց հետքերը, որոնք դեռ ավրված չեն։ Սակավապետ էր ուտելյաց և քունի մեջ. ամառ, ձմեռ հազիվ 5 1/2 ժամ կքնանար։ Յուր ամեն ծառայությունները ինքը անձամբ կբներ, նույնիսկ խոր ծերության ժամանակ. մինչև վերջին օրը ինքը կավլեր սենյակը, ինքը կշտկեր անկողինը։ Տանջանք մ' էր իրեն՝ տեսնել որ ուրիշները իրեն համար կաշխատեին կամ նեղություն մը կկրեին։ Ինքը, որ անհուն գորովանք մը ուներ մեր ամենուս վրա, կնեղվեր, երբ մենք փոխադարձաբար նույնը կցուցնեինք իրեն։ Զափազանց մտադիր էր պատշաճության կանոններուն, որոնց մեջ չէր պականեր երբեք նույնիսկ դեռի ամենեն փոքրը։ Միշտ պատրաստ ուներ բերանին մեջ անուշ, մխիթարիչ և հարմար խոսք մը, իրեն կրոնակից եղբայրներուն։ Ինչպես գրիչը, այնպես և լեզուն, ուներ հատուկ ճկուն դարձված մը, որով ուրիշներուն չհամարձակած բանելիքը, ինքը առանց վիրավորելու կրսեր։ Նա, որ ագահ էր իրեն ժամանակին գործածության մեջ, և երբեք ընկերության մեջ երկար ժամեր չէր վատներ խոսակցության, սակայն որևէ ուսումնական համախմբության մեջ առաջինը կբլլար գտնվելու սահմանյալ տեղը և ժամանակը։ Կնստեր հոն մեկ անկյունը, և այնպիսի համեստությամբ և հոժարակամ կունկնդրեր մեր ճառերուն, իբր թե իրեն համար նորություն մը կամ սորվելիք բան մը գտնվեր խոսվածներուն մեջ։ Անձնանվեր էր հասարակաց որևէ ծառայություն մ'ընելուն։ Չնայելով հասակին և զբաղանց շատության, կերթար ընկերանալու հյուրերուն, նույնիսկ ամենեն սովորական հյուրերուն։ Երբ դիտողություն մ' ըլլար իրեն, թե ինչու կնեղվեր հյուրեր պատցնելու, կպատասխաներ. «Ես ծերացած, լմնցած մարդ մ'եմ, լավագույն է, որ իմ ժամանակս կորսվի, քան թե երիտասարդներուն, որոնք իրենց թարմ մտքով և զրչով կրնան ավելի օգտակար ըլլալ», և կայս այնպիսի պարզությամբ կբսեր, որ կզգայիր թե անկեղծ են իրեն խոսքերը. և մերթ, «օգտակար կտեսնեմ ինձի այս փոքրիկ շարժումը», կբսեր։ Օտարազգի հյուրերեն շատերը, որոնք ոչ անունը լսած և ոչ զինքը տեսած կամ ճանչցած էին, կարգե դուրս հարդանք մը կզգային անոր՝ առաջին իսկ տեսությամբ։ Անգլիացի ընտանիք մը, անոր մահվանեն քանի մ'օր վերջը, վանք կուգա այցելելու, հուսալով գտնել դարձյալ «այն սուրբ ծերունին», որ մի քանի ամիս առաջ պատցուցած էր զիրենք։ Երբ չեն տեսներ զինքը, կհարցնեն հյուրընկալ վարդապետին, թե ո՞ւր է անգղիերեն խոսող ծերունին, զոր քանի մ'ամիս առաջ տեսնելու և ճանչնալու բախտը ունեցեր էին։ Երբ կիմանան թե վախճաներ է, կսկսին լալ և անմիջապես գերեզմանը կերթան աղոթելու և անոր շիրիմին վրա դրված պսակին տերև մ'առնելու իբրև հիշատակ, ցաված սրտով հետ կդառնան։ Այս՝ մին և ուրիշ նման դեպքերուն։ Ազգային հյուրերեն շատերը, որոնք համբավով միայն կճանչնային հ. Ալիշանը, Սուրբ Ղազար կուգային հատկապես զինքը տեսնելու։ Երբ կիմանար ինքը թե ազգայիններ եկեր էին, անմիջապես կթողուր աշխատությունը և կերթար իբր սովորական հյուրընկալ մը ընկերանալու անոնց, առանց ինքզինքը ծանոթացնելու։ Երբ հյուրերը փափագ կհայտնեին հ. Ալիշանին սենյակը երթալու և աչը համբուրելու, կհասկցներ ինքը՝ թե ի՞նչ պիտի ընեին այնպիսի զառամյալ ծերունի մը տեսնելով։ Երբ կվերջացնեին տեսնելու իրերը և պիտի մեկնեին վանքեն և կկրկնեին դարձյալ իրենց խնդիրքը, այն ժամանակ ժպտելով կբսեր. «Արդեն տեսաք զինքը»։ Աննկարագրելի է անոնց զարմանքը, ափշությունը, երբ կմտածեին, թե այն համեստ ծերունին է եղեր հ. Ալիշանը, և կցավեին, թե ինչպե՞ս չէին կրցած պետք եղած մտադրությունը ընել՝ այնպիսի մեծ

մարդու մը ընկերությունը վայելելու պահուն։ Ոչ սակավ անդամ պատահած է այս դեպքս, որ կցուցնեմ անոր կարգի դուրս համեստությունը։

Կարծեմ ազգային լրագիրներուն մեջ՝ ոչ մեկ հայ գործիչի կամ գրագիտի անունը այնքան գովեստներու պատկներ ընդունած է, որչափ Հ. Ալիշանինը։ Լրագրապետներեն ոմանք երբեմն այդ թերթերը ուղղակի իրեն կղրկեին, համարելով հաճույք մը պատճառել իրեն, մինչ հանգեստ կվիրավորեին իրեն համեստ հոգին։ Այդ թերթերը մեջտեղ չէին ելներ, կանհետանային ընդմիշտ. և եթե ուրիշ տեղերե չիմանային և մեկ-մեկ օրինակ չճարեին այդ թերթերեն, բոլորովին անտեղյակ պիտի մնային անոր վրա գրված գովեստներուն։

Հ. Ալիշան ծանոթ էր եվրոպացվոց իբր գիտնական, սիրելի և պաշտելի էր մեզ իբրև բանաստեղծ, իբրև հայության պարծանքներուն երգող. այս է պատճառը, որ ամբողջ ազգը լացավ վանականի մը մահը։ Այո, վանականի մը, որ փիլոնին տակ կկրեր ամենեն ջերմ հայրենասեր սիրտը և կհարցներ ինքնիրեն, թե կրնա՞ արքայություն երթալ մեկը, որ չէ սիրած իրեն ազգը և հայրենիքը։ Ինքը, օտար երկնքի ներքև ծնած ու սնած, իրեն մայր երկրին հետ միության ուրիշ կապ ունեցած չէ, բացի հայրենի պատմությունը և աշխարհագրությունը։ Ինքը դրբերու մեջեն ճանչցած է հայրենիքը, և սակայն ինչպիսի՞ սեր և ինչպիսի՞ հուր կվառեին անոր սիրտը, որուն կայծերը և բոցերը կզգանք իրեն աշխուժ հասակին գրվածներուն՝ ՆՈՒԱԳՆԵՐՈՒՆ և ՀՈՒՇԻԿՔՆԵՐՈՒՆ[8] մեջ, զորս չկրցան մարել ժամանակին և հասակին ցուրտ հովերը։ Զարաչար կվիրավորվեր ան այն նորանոր քննադատությանց հարձակումներեն, որոնք կխլեին մեղմե մեր ազգային պարծանքները, որոնց ինքը ջերմ պաշտպան էր։ Նա ոճիր մը կհամարեր խորհնացվո գոյությունը Ե դարեն տանիլ է կամ Ը դարը, ինչպես ոճիր մ'էր հանել դեհեղմանեն անոր ոսկորները և գետ նետել[9]։ Նա երբեք չներեց անոնց՝ որոնք Մասիսու ծայրեն տարին չգիտեմ ո՞ր լեռան ծայրը հանգչեցուցին Նոյի տապանը, ինչպես նաև անոնց՝ որոնք դրախտին տեղը տարին

Գանգեսի կամ Նեղոսի ափանց վրա զետեղեցին։ Նա իբրև ճշմարիտ ՆԱՀԱՊԵՏ մը, ամենքես ավելի կզգար ու կուլար այն բոլոր սարսափելի աղետները, որոնք արյամբ ու մոխրով ծածկեցին ամբողջ երկիր մը, և երկար դարերու հարվածներուն տակացող ազգ մը օրհասի ճգնաժամերուն հասուցին։

Նրբ մութը կկոխեր, Նահապետը իրեն ուժգին երևակայության թևերը բացած՝ կերթար հայրենի ավերակները դիտելու, լուսնի լուսով կամ աստղերու աղոտ փայլերով։ Կ'անցներ հուշիկ ավերակներու միջեն, կողողեր զանոնք արցունքով, կողնորեր իրեն տաք շնչով, կխոսեցներ, պատմել կուտար յուրաքանչյուրին ղլխեն անցածները։ Եվ ահա, մթության մեջ, ստվերներու նման, կշարժին, կկանգնին, կրարձրանան Անիներ՝ իրենց հազարումեկ գմբեթներով, Արտաշատներ, Արմավիրներ, Դվիններ, կրարձրանան որձաքար ամրոցներ՝ Արտաղերս, Ողական, կկանգնին շքեղ տաճարներ, պարսպավոր վանքեր, որոնք ողբերու պատմություն մը կհյուսեն։ Երկյուղած քայլերով կհառաջեն այն բոլոր նվիրական վայրերուն մեջ, կողջունեն ձյունապատ Մասիսը, Արարատը, սիրուն ծովակները, վանքերը,— կհետևի Երասխի հորձանահոս և մռնչող ալիքներուն,— կլսե մեռյալներուն հառաչը, դյուցազներուն զենքերու շկահյունը, ասվակներուն խոխոջը, Տրմուտի ողբերգը,— կընթեռնու հիշատակարաններ, կօրինակե արձանագրություններ, կչափե սահմանները, կգնեն յուրաքանչյուր տեղերուն դիրքերը... Եվ ահա կծագի արշալույսը, կվերանա տեսիլը, կդանե նա ինքզինքը յուր խցիկին մեջ, առջև ձեռագիր կամ տպագիր պատմիչ մը կամ քարտեզ մը և այս ազգեցության տակ կգրե իրեն ոտանավորները, կգրե իրեն տեղագրությունները։ Նա մղված իրեն բարձր և մաքուր զգացումներեն, մերթ մարգարեի մը ներշնչումները կունենար, և Իսրայելի մեծ տեսանողին նմանելով, կդրկեր իրեն ՇԻՐԱԿ տեղագրության ձեռագիրները Ախուրյանի ալիքներուն հանձնելու[10]։ Նա բանաստեղծորեն կզգար և կգործեր։ Նույնիսկ նախնյաց ձեռագիրները սիրելուն և անոնց վրա դուրգուրալուն մեջ բանաստեղծ մ'էր։ Երջանիկ կզգար ինքզինն-

քը, երբ ձեռագրատան մեջ կգտնվեր։ Կթվեր տեսնել հոն ծերունի, ճգնասուն վանականներ, որոնք խցիկներու մեջ փակված, գիշերային հսկումներու մեջ, մագաղաթին վրա ծռած, ոսկրոտ մատներով կօրինակեին ավետարաններ, սաղմոսներ, շարականներ. կթվեր տեսնել հոն Նարեկացի մը, Լամբրոնացի մը, Սարկավագ վարդապետ մը, Մխիթար Գոշ մը, որոնք լռության մեջ կճոճռացնեն իրենց մաշած եղեղները, ավանդելու մեզի Պատմություններ, Մեկնություններ, Դատաստանագրքեր։ Կարծես զանոնք չվրդովելու համար, լռիկ և երկչուղած հարգանքով կբանար դարանները, կառնուր գրչագիրները, կսրբեր փոշին, կհամբուրեր զանոնք ու կտեղավորեր։

Իրեն առանձնության ժամերուն, մանավանդ պարտիզին մեջ, բնության հետ կխոսեր, կզմայլեր անոր հրաշալիքներով։ Դարունը մոտենալուն՝ կյանքը նոր փթթում մը կունենար իրեն մեջ. գետնին նայելով կքալեր, զարնան առաջին ավետաբեր ծաղիկը գտնելու համար. և երբ գտներ, կառնուր, կցուցներ մեզի հրճվանքով մը, կտաներ սենյակը և աստվածամոր պատկերին առջև կդներ՝ իբրև նախընծա իրեն զարնանազվարճ սրտին։ Կդիտեր պտղատու ծառերուն ծաղկիլը և երբ տեսներ, իրեն դեմքն ալ կծաղկեր անուշ ժպիտով մը։ Շատ կսիրեր թռչնիկները, հատուկ գորով մ'ուներ անոնց վրա։ Իր հացեն միշտ անոնց բաժին կհաներ։ Ճաշեն վերջը սենյակը կելներ և պատուհանին առջև կմաներեր հացը. և ահա ճլվլալով կուգային թռչնիկները, կուտեին, մերթ կռվտելով իհարկե. և ինքը պատուհանին առջև կանգուն՝ կզվարճանար։ Ձմեռները, այդ նույն թռչնիկները ձյունեն և ցուրտեն հալածված, պատուհանին մեջ կապաստանեին, և մերթ բաց գտնելով զայն՝ ներս կմտնեին, բանաստեղծին խանդը վառելով՝ գրիչը կշարժեին քերթվածիկները գրելու, կզվարճացնեին զինքը իրենց ձայներով և ոստումներով, և հետո դուրս կփախչեին։

Այսպես անմեղ, սիրուն, երջանիկ կյանք մ'անցուցելով՝ մեր Նահապետը մինչև իրեն վերջին օրը թռավ երկինք, կտակելով մեզ իրեն առաքինության օրինակները, իրեն հոգին, և ազգին՝ իրեն սուրբ հատորները։

ՍԻՄՈՆ ԵՐԵՄՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆ. Հ. Ալիշանի համբուրելի ճակատը պսակած էին իր ձյունափայլ մազերն. մտավոր աշխատության, անընդհատ գրչի շարժման նշանն էր ժամանակեն առաջ անոր մազերու սպիտակությունն։ 1840-են մինչև 1890 անցեր էին հիսուն տարիներ. այդ կիսադարյան միջոցին մեջ նա ազգին տված էր նախ իր դաստիարակության պտուղ մտքի և կրթության սաներ. հրատարակած էր իր ամենեն գեղեցիկ գործերեն մեծ մասը. իր արուսյակը դիմած էր, բարձրացած գրականության զենիթին, ուսկից շող ի շող ազգին վրա կսփռեր սեր և հուր հայրենի, հանճար և միտք տարփելի։ Հիսուն տարվան մեջ նա իր գրական երկերով հեղաշրջած էր ազգին մտավորական անդաստանը, հանճարեղ գրագետներեն, վիպասաններեն և քերթողներեն մեծ մասը իրմե ազդված, սկսած էին նոր հառաջադիմական կենսական մղում մը տալ ազգային զանգվածին. երախտագետ հայությունը մեծ բանաստեղծ և մեծ մատենագիր հոր Ալիշանի անզուգական գրական վաստակը պսակելու համար, առիթ գտավ անոր քահանայության հոբելյան հանդեսը, որ զուտ կրոնական չմնաց, այլ պսակվեցավ գրական ցույցերով։

1890 մայիս 25-ի օրն Ս. Ղազարու միաբաններուս համար ամենեն նշանավոր օրերեն մին էր. նույն օրը ամբողջ մեր ազգը ոգևորված, հեռագրով, նամակներով, ուղեցին անմահացնել Նահապետի գրական գործունեության հիշատակը. հարգանքի և երախտագիտության ցույցերը պաշտումի կերպարանք առին։ Տակավին նույն օրը իր գեղեցիկ և եռանդուն հիշատակներով, թարմ մնացած է մեր հիշողության մեջ։ Մուրադ-Ռափայելյան աշակերտաց բազմու-

թյան հետ, միանալով հոբելյան հանդիսի հատուկ ազգային նվիրակներ, իտալական պայծառ և ծիծաղկոտ կապույտին տակ, Ս. Ղազար իբրև բեկոր մը Այրարատյան երկրի, կօրորվեր վենետիկյան արծաթաշող լճակի վեհավեհ ալյաց մեջ։ Նահապետին երդերը կինդային երիտասարդ հայ կուրծքերեն, ղանգակներու զանգյունը, հաղթական հնչյուն մը կտարածե. իսկ խորանին վրա բազկատարած բանաստեղծ ծերունին իր հափշտակված դիրքով, հիշել կուտար Ավարայրի դաշտը, իր անվանակիր սուրբի հրաշունչ և հոգեշունչ սրտաբուխ օրհնությունները։ Նույն օրը ակադեմիական հանդիսի առեն, երբ նա ցնցելով իր սպիտակ խոպոպները առյուծի մը թափով սկսավ աստվածային քերթված մը կարդալ[1], հանդիսականաց վրա տարօրինակ հուզում մը պատեց, նա իր գերբնական զգացումը ամենուս զգացուց. նույն վայրկյանին իր հոգեկան զգացմանց հրաբուխը բռնկած էր, ինքզինքը չէր կրնար զսպել. իր կերկերուն, գողգոջուն ձայնը խեղդվեցավ «Կեցցե՜ Նահապետ» հաղթական, որոտընդոստ, երկարատև գոռում-գոչումի մեջ։ Օտարազգի մեծանուն հանդիսականներ կզարմանային առ հ. Ալիշան ցույց տրված սիրո և եղական, տարօրինակ և խնկելի հարգանաց համար. կզմայլեին երբ ընդ մեջ երաժշտական խմբերգներու կկարդացվեին բազմաթիվ հեռագիրներ։ Հեռագրատանց պաշտոնյայք զարմանոք կհարցնեին, ո՞վ է Ալիշան, ո՞վ Նահապետ. անոնց համար տակավին անծանոթ մնացած էր մեր սարերը սասանեցնող, ամպերը բարկացնող և վիհերը մռնչեցնող մեծ բանաստեղծը...

Հոբելյանին առթիվ մեր Նահապետին եղան նաև նյութական նվերներ. Թրքահայք նվիրեցին մի ալաբաստրե մեդալ՝ արծաթ քնարե կախված, մի կողմը քանդակված էր Նահապետին կենդանագիրը, մյուս կողմը գրված «Հ. Ղ. Ալիշանի, ի յիշատակ յիսներեակ յոբելիանի գրականութեան. երախտապարտ հայութիւն», Կ. Պոլիս, 1890, հունիս 7/19»։ Նույն հասարակությունը նվիրած էր նույնպես նորագյուտ ինքնագիր ոսկեզրիչ մը, Մանուել Եսայան էֆենտի[2] օրացույց մը, իսկ Տրապիզոնի ազգային երիտասարդությունը

գավառին և գյուղերու հազվագյուտ ծաղիկներու հավաքածուն, գավառական հարազատ բառերով։ Ռուսահայք նվիրած էին փեսրաձև ոսկեզրիչ մը, Բաշինջաղյան նկարիչն Այրարատա յուղանկարկ գեղեցիկ պատկերն. Կարապետ Շահլամյան[3] ուլունքով բաժնված պատկեր Հայաստանի երփնագեղ ձեռագործը և այլն։ Վարժապետ և հրապարակագիր հոբելյարներու պես չարժանացավ նյութական նվերներու, բայց այդ վաղանցուկ ու մոռցուկ նվերներեն ավելի, անթառամ և անհամեմատ նվերն ունեցավ ամբողջ հայության երախտագիտությամբ զգայուն, սիրուն սիրտը, որոնց թարգման եղան հեռագիրներն, նամակներն և լրագրաց մեջ հրատարակված հոդվածներն։

Հոբելյանի ժամանակ ամբողջ ազգային լրագիրները միաբերան, անխարդախ ովսաննաներ կգոչեին, կգրվատեին ազգին Նահապետը։ Թեև հոբելյան հանդեսի հրավեր ոչ ոքի չէր գացած և կանխավ հայտարարված էր, թեև այդ հանդեսը վանական համեստ բան մը պիտի ըլլա, սակայն այսուհանդերձ, ազգը մասնակցեցավ այդ նշանավոր տոնին։ Գերապատիվ Ագարյան պատրիարքն հայ հոգևոր-կան հասարակության կողմեն նվիրակ ղրկեց զգերապատիվ Միսքճյան Հովհաննես վարդապետ[4], որ հանդիսի առեն կարդաց քերթված մը. Կ. Պոլսո ազգասեր դասակարգին կողմեն հանդիսակից եղավ հ. Ալիշանի սիրելի սանն պ. Արփիար Արփիարյան, իսկ արտասահմանի ղաղթականության ներկայացուցիչ եղավ «Արմենիա» մամառ լրագրի խմբագիր պ. Ղուկաս Բաղրուպանյան. հոբելյանի ժամանակ Նահապետն ընդունեցավ 89 մաղթանաց նամակներ և 88 հեռագիրներ։ Սիրուն սիրտ և զգվելի հոգի հայ հասարակությունը կարող եմ ըսել թե առաջին անգամն է, որ միաբերան երգեց անցյալ դարու հայ մտքի վրա իշխող գրական մեծ դեմքի գեղաքանդակ գործունեությունը. մենք չենք հիշեր, և ոչ ալ պատմությունը, որ հ. Ալիշանի չափ անվիճելի համակրանք մը վայելած ուրիշ մ'ալ ըլլա։ Եվ այդ համակրանքը ծերունի Նահապետին պլպլացող ճրագը բոցավառեց, նա քաջալերվեցավ, սրեց իր գրիչը և դարձյալ արշավեց հայ գրականության անմշակ անդաստանին վրա.

թյան հետ, միանալով հոբելյան հանդիսի հատուկ ազգային նվիրակներ, իտալական պայծառ և ծիծաղկոտ կապույտին տակ, Ս. Ղազար իրրև բեկոր մը Այրարատյան երկրի, կօրհրվեր Վենետիկյան արծաթաշող լճակի վեհափառ ալյաց մեջ։ Նահապետին երգերը կինդային երիտասարդ հայ կուրծքերեն, զանգակներու դանդյունը, հաղթական հնչյուն մը կտարածեն. իսկ խորանին վրա բազկատարած բանաստեղծ ծերունին իր հափշտակված դիրքով, հիշել կուտար Ավարայրի դաշտը, իր անվանակիր ուրբի հրաշունչ և հոգեշունչ սրտաբուխ օրհնություններեր։ Նույն օրը ակադեմիական հանդիսի ատեն, երբ նա ցնցելով իր ոսպիտակ խոպոպները աչյուծի մը թափով սկսավ ատվածային քերթված մը կարդալ[1], հանդիսականաց վրա տարօրինակ հուզում մը պատեց, նա իր գերբնական զգացումը ամենուս զգացուց. նույն վայրկյանին իր հոգեկան զգացմանց հրաբուխը բռնկած էր, ինքզինքը չէր կրնար զսպել. իր կերկերուն, դողդոջուն ձայնը խեղդվեցավ «Կեցցե՜ Նահապետ» հաղթական, որոտընդոստ, երկարատև զոռում-գոչումի մեջ։ Օտարազգի մեծանուն հանդիսականներ կզարմանային առ Հ. Ալիշան ցույց տրված սիրո և եղական, տարօրինակ և խնկելի հարգանաց համար. կգմայլեին երբ ընդ մեջ երաժշտական խմբերգներու կկարդացվեին բազմաթիվ հեռագիրներ։ Հեռագրատանց պաշտոնյայք զարմանոք կհարցնեին, ո՞վ է Ալիշան, ո՞վ Նահապետ. անոնց համար տակավին անծանոթ մնացած էր մեր սարերը սասանեցնող, ամպերը բարկացնող և վհերը մոնչեցնող մեծ բանաստեղծը...

Հոբելյանին առթիվ մեր Նահապետին եղան նաև նյութական նվերներ. Թրքահայք նվիրեցին մի ալաբաստրե մեդալ՝ արծաթ քնարն կախված, մի կողմը քանդակված էր Նահապետին կենդանագիրը, մյուս կողմը գրված «Հ. Ղ. Ալիշանի, ի յիշատակ յիսներեակ յոբելիանի գրականութեան. երախտապարտ հայութիւն», Կ. Պոլիս, 1890, հունիս 7/19»։ Նույն հասարակությունը նվիրած էր նույնպես նորագյուտ ինքնագիր ոսկեգրիչ մը, Մանուել Եսայան էֆենտի[2] օրացույց մը, իսկ Տրապիզոնի ազգային երիտասարդությունը

դավառին և գյուղերու հազվագյուտ ծաղիկներու հավաքածուն, գավառական հարազատ բառերով։ Ռուսահայք նվիրած էին փետրաձև ոսկեգրիչ մը, Բաշինջաղյան նկարիչն Այրարատա յուղանկար գեղեցիկ պատկերն. Կարապետ Շահլամյան[3] ուլունքով բաժնված պատկեր Հայաստանի երփնագեղ ձեռագործը և այլն։ Վարժապետ և հրապարակագիր հոբելյարներու դեմ չարժանացավ նյութական նվերներու, բայց այդ վաղանցուկ ու մոռցուկ նվերներեն ավելի, անթառամ և անհամեմատ նվերն ունեցավ ամբողջ հայության երախտագիտությամբ զդայուն, սիրուն սիրտը, որոնց թարգման եղան հեռագիրներն, նամակներն և լրագրաց մեջ հրատարակված հոդվածներն։

Հոբելյանի ժամանակ ամբողջ ազգային լրագիրները միաբերան, անխարդախ ովսաննաներ կգոչեին, կգրվատեին ազգին Նահապետը։ Թեև հոբելյան հանդեսի հրավեր ոչ ոքի չէր դացած և կանխավ հայտարարված էր, թե այդ հանդեսը վանական համեստ բան մը պիտի ըլլա, սակայն այսուհանդերձ, ազգը մասնակցեցավ այդ նշանավոր տոնին։ Գերապատիվ Ագարյան պատրիարքն հայ հոգևոր-մական հասարակության կողմեն նվիրակ ղրկեց ղեկերապատիվ Միսքճյան Հովհաննես վարդապետ[4], որ հանդիսի ատեն կարդաց քերթված մը. Կ. Պոլսո ազգասեր դասակարգին կողմեն հանդիսակից եղավ Հ. Ալիշանի սիրելի սանն պ. Արփիար Արփիարյան, իսկ արտասահմանի գաղթականության ներկայացուցիչ եղավ «Արմենիա» մաճառ լրագրի խմբագիր պ. Ղուկաս Բաղրուպանյան. հոբելյանի ժամանակ Նահապետն ընդունեցավ 89 մաղթանաց նամակներ և 88 հեռագիրներ։ Սիրուն սիրտ և գովելի հոգի հայ հասարակությունը կարող եմ ըսել թե առաջին անգամն է, որ միաբերան երդեց անցյալ դարու հայ մտքի վրա իշխող գրական մեծ դեմքի գեղաքանդակ գործունեությունը. մենք չենք հիշեր, և ոչ ալ պատմությունը, որ Հ. Ալիշանի չափ անվիճելի համակրանք մը վայելած ուրիշ մ՚ալ ըլլա։ Եվ այդ համակրանքը ծերունի Նահապետին պլպլացող ճրագը բոցավառեց, նա քաջալերվեցավ, սրեց իր գրիչը և դարձյալ արշավեց հայ գրականության անմշակ անդաստանին վրա.

հորելյանին հետո նա 70 տարեկան պատկառելի վաստակավոր ծերունի մ'էր, չկիսատեցան իր ծնկվները, չի կարկամեցավ իր բազուկը, այլ առույգ երիտասարդի մը ամբողջ կորովովն և եռանդովը դարձյալ բազմեցավ իր գրասեղանին առջև. ոքնեցավ, մաշեցուց իր միտքը և հայ գրականության պարգևեց «Հայբուսակ», «Հայ—Վենետ», «Հին հավատք Հայոց», «Աբուսահլ», «Սիսական», «Կամենից», «Արշալույս», «Հայապատում» և այլ փոքր գրքեր ու գրքույկներ։

Ընթերցողը պիտի հետաքրքրվի և պիտի ուզե իմանալ, թե ինչպե՞ս կաշխատեր հ. Ալիշան, որ անհամեմատ արագությամբ դիզեր, բարդեր է այնքան հսկա հատորներ և կույտ մը թարգմանություններ։ Մենք կհագեցնենք ձեր հետաքրքրությունը։

ԱԼԻՇԱՆ ԻՐ ԳՐՔԵՐՈՒՆ ՄԵՋ. Ոսկիին երկրպագու բրիտանական ազգի սովորական առածն Time is money[5] իրագործված կտեսնենք հ. Ալիշանի կենցաղին վրա. ժամանակի ոսկին նա երբեք անտակոս չձգեց. մանուկ հասակեն ըմբռնած էր ժամանակին թանկագին արժեքը։ Զբոսանք, դատարկություն, անգործություն, այդ ամենը իրեն համար հանճարի սնանկություն էին, մաքի ջլատություն, գրչի կարկամություն։ Հաղիվ թե իր մեջ կարթնանա ուման տենչը, ժամանակի շահագործությունը իրեն ղենք առնելով, մանկությունեն մինչև գերեզման կկռվի հեղգության դեմ, կրնկճե պարապորդության թույլ ոգին, և կտիրապետե անկապտելի գրական հաղթանակին։ Իր հայրը կդուրզուրա անոր վրա և երբ պետք ըլլա զինքը կանչելու «Նկո՛ւր, ուսումնասեր զավակս» ըսելով դայն իր քովը կնստեցնե և կհամբուրե այն ճակատը, որ ապագային խավար հայրենիքի փարոսն պիտի ըլլար...

Եվ այն դաղափարով ծնած ու զարդացած մանուկ մը, դյուրին է գուշակել, որ ժամանակին պիտի հաջողեր գլխին մեջ ամբարելու վիթխարի գրական անհատնում պաշար մը։ Նա ամբարեց շատ բան, որով կրցավ նաև շատ գործեր արտադրելու։ Ուսանողական ընթացքեն վերջը ազգին միտքը լուսավորելու, և հայ մատենագրությունը ճոխացնելու ասպարեզը իր առջև բաց էր։ Ժամանակ, գիրք, գրիչ, ահա իր երջանկություններն։ Առօրյա կրոնական խոկումները, եկեղեցական պաշտամունք, նյութական ծառայությունք իր ժամանակը ընթացնելու և սպանելու ուժ չունեին. նա կորովամիտ, համառ աշխատող մ'էր, իր այդ զեղեցիկ բնավորության հետ միացնելով նաև իր տարօրինակ արագությունը, նա կրցավ ծնունդ տալ բազմաթիվ գրքերու։ Իր կյանքը անդադար խոկում էր, իր հանգիստն և զբոսանքը գրքերու ընթերցումն էին, իսկ գրասեղանի հարատաստ բարեկամներն՝ գիրք և գրիչն էին։ Մեր վանքի մատենադարանի ամբողջ ձեռագիրներն (1600) նա կարդացեր և քններ է խղճամիտ հետաքրքրությամբ, այդ անծանոթ մագաղաթներեն քաղեր է հայ պատմություն, գիտություն, արձանագրություն, նա իրեն համար մեր գրչագրաց մեջ ավանդված նյութերուն հատուկ ցանկն կազմած էր, որ իր հնախոսական դրվածքներուն առաջնորդ կըլլար։ Իր մասնաճյուղերուն վերաբերյալ ամեն տպագրված ազգային և օտարազգի գրքերը, հանդեսները և լրագիրները կկարդար, փոքր թղթերու վրա կնշանակեր կարևոր տեղեկությունները. զանոնք հետո կանցներ առանձին տետրակներու մեջ. ուներ մասնագիտության բաժնված դրքեր, ուր կխտացներ օրվան մեջ կարդացված գրքերու կարևոր տեղեկությունները։ Անոնման կարդադրությամբ իր քաղած ընչին ծանոթություններեն հսկա գործեր կազմելու հոյակապ կարողություն մ'ուներ։ Կցկտուր տեղեկությունները իր կորովամիտ տաղանդովը և բանաստեղծական ընդունակությամբը ի մի կձուլեր և անկերպարան նյութին կուտար հոգի, շնորհք ու գեղ։ Իր քաղած տեղեկությանց մեծ մասը կբովանդակվեին տարահատոր, մեծածավալ «Հայկարաններու»[6] մեջ. իր ապագա գրքերու առաղձները ասոնց մեջ հավաքելու համար, միայն իր ուժը և իր նյութական քաջությունը չէր բավեր. միաբանության անդամները օգնության կհասնեին. իր դասընկերներեն սկսյալ մինչև ուխտիս ներկա ուսանողները՝ անդադար հայկարաններու համար ընդօրինակած են տեղեկություններ, պատմություններ, զոր գրչագիր և տպագիր գրքերու մեջ կգտներ ինքն հ. Ալիշան։ Միաբանության

մեջ չէ եղած և չկա մի հեղինակ, որ հ. Ալիշանի չափ իր կրոնակիցներեն արժանացած ըլլա անընդհատ նյութական աջակցության. և այս առանձնաշնորհողները Նահապետ իր գրքերու մեջ մեծ սրտի գոհությամբ հիշած է և երախտագետ մնացած։ Այդպիսի տաղանդավոր և բեղմնավոր հանճար մը արժանի էր այդ տեսակ նյութական աջակցության. մինչև իր վերջին գործը, ՀԱՅԱՊԱՏՈՒՄԸ կազմված էր մեր միաբաններու սիրով ու սրտով, հաճելի անձնանվեր ձեռնտվությամբ։ Գրեթե ամեն երիտասարդ քահանա, երբ իր ուսումնական ընթացքը կավարտեր, կներկայանար Նահապետին, իրեն ընդօրինակողի պատրաստակամություն ցույց կուտար, սակայն շատ անգամ մեր համեստ ծերունին կմերժեր այդ բացառիկ շնորհքը. նա կրսեր. «Իմ աշխատություններս փտած են, ինձի համար ձեր ծաղիկ ու դալար ժամանակը մի զոհեք...»։ Եվ այսուհանդերձ պետք եղած ամեն աջակցություն չէր պլացվեր։ Արժանի էր այդ ծառայության, քանի որ նա միաբանության ո՛րեէ ծառայութենեն խույս չէր տար. իր գրիչը և գրքերը զինքը պախարակելի անձնասիրության (egoisme) չի մատնեցին. հասարակության սերը իր մեջ բռնկած էր, նա հոգվով շատ նվիրված էր միաբանության ամեն գործերուն. օրվան մեջ սակայ հոժարակամ կթողուր գրիչ ու գիրք և վանքի այցելուաց տաղտկալի առաջնորդության պաշտոնը կկատարեր. ամեն օր տպարաններն եկած առհասարակ ամբողջ գրքերու թերթերը կկարդար, կսրբագրեր և կարևոր դիտողություններ կրներ. կարելի է ըսել նա հասարակաց նյութական գործերու ավելի ժամանակ սպառած է, քան թե իր անվամբ լույս տեսած գրքերուն։ Եվ իհարկե այդպիսի մի անձնանվեր պատկառելի հասարակասեր անդամին պարտք էր ամեն մի ձեռնտվություն. և այդ պատճառով մենք իր վրա զուրգուրալու, իր համար աշխատելու ամենամեծ հաճույք կզգայինք և չէինք զլանար մեր նյութական տկար աջակցությունը։

Գրքերու մեջ սնած, կազդուրված, մեծացած ու ծերացած ծերունին, թեև ինքն իր գրական գործերուն մեջ ուներ անընդունելի գեղեցիկ կարգադրություն մը, թեև գիրք մը գրելու, նոր-նոր գրական նյութերու վրա զբաղելու խիստ

կոկիկ և գնահատելի մեծ կարողություն մը ուներ, սակայն դուրիշը այդ գործին մեջ առաջնորդելու հատկություն չուներ և սա զարմանալի չէ, վասնզի այլ է հանճար, հրմտություն, և այլ՝ առաջնորդություն, որով մենք պետք ենք ըսել, որ թեև կկարծվի թե նա միաբանությանս գրական առաջադիմության մեծ հսկող մը և առաջնորդ եղած է, սակայն սխալ է այդ. նա կուզեր, որ ամեն միաբան սիրե գիրք ու գրիչ, աշխատի գրականության, բայց իր քաշված և առանձնացյալ բնավորությունը զինքը այդ գործին առաջնորդ չէր կրնար ընել. եթե մեր հանճարեղ ծերունին ունենար այդ մոգիչ կարողությունը, բնականաբար իր հոյակապ գիտության շնորհիվ, միաբանությանս ամեն մի գրասեր անդամ հսկայաքայլ կհառաջադիմեր գրական ասպարիզի մեջ. մենք ինչ որ դիտենք, նա իր կենաց մեջ միմիայն ամենամեծ առաջնորդ և ձեռնատու եղած է Նորայր Բյուզանդացվո բառարանի կազմության համար։ Շատեր իրմե առաջնորդվելու համար իրեն դիմած են, սակայն հուսախաբ մնացեր են։ Եվ մեր այս հիշածը իբրև թերություն մը իրեն չենք վերագրեր, այլ կուզենք ուղղել քանի մ՝անձանց դադափարը, վասնզի ոմանք կկարծեն և նույնիսկ հրապարակավ դրած են, թե հ. Ալիշան Ս. Ղազարու մտավորական առաջնորդն եղած է, և թե ամեն երիտասարդ իրմե շատ օգտվեր է։ Ո՛չ այդպես։ Այո՛, նա անխոնջ, հարատևակ, անկուզական սիրով գրականության նվիրվելով, ամբողջ միաբաններուն մեջ գրականության տենչը վառ պահելու ամենամեծ օրինակն էր, սակայն դա բարոյական և լռելյայն աջակցություն մ՝էր, որ միայն ուսումնատենչ միաբաններու, գրական հառաջադիմության նախանձախնդիր երիտասարդաց հորդոր մը և ազդու մղում մը կրնար համարվիլ։ Եվ այդ օգտակար էր ու խիստ կարևոր. իր ամբողջ կենոք ներկա եղած գրասեր երիտասարդությունը ազդվեր է անոր աշխատանքի բուռն տենչեն և ըստ այնմ, ամեն անհատ սիրեր է գիրը և գրասեղանը։ Հ. Ալիշան միով բանիվ մեր վանքի գրականությունը հառաջադեմ ներկայացուցած է ինքն իր գրիչով և ոչ հառաջադեմ հաջորդներ պատրաստելով։

Ալիշան մեծ հանճար մը, դերագույն համբավ մը ունենալու համար չհաճախեց Եվրոպայի կաճառները։ Ինքնօգնությամբ, զարմանալի ջանասիրությամբ ստացավ մտքի մեծ զարգացում, նույն ինքնօգնությամբ նա ոչ թե կաճառականներու նախանձորդ, այլ նախանձելի եղավ. իր գիտության համբավը փույթ ընդ փույթ տարածվեցավ նաև Եվրոպայի մեջ. իր ամբարած գիտության կտիրապետեր, քաղած ծանոթությունները կյուրացներ, որով իր ամեն գրածներն իրմե կբխեին. նա չուներ անբնական, զողունի գաղափարներ. կարդալով իր որևէ աշխարհագրական գիրքը, մենք կկարծենք, որ իրոք նա շատ տարիներ ճանապարհորդեր է հայրենիք, հոն երկար ատեն մնացեր, դիտեր, քններ ու գրեր է։ Իր այս աննման հատկությունը ձեռք բերած է անդադար գրքերու մեջ թափառելով. հսկա միտք մ՚էր, որով կարդացածը դյուրավ իր մեջ կտոգորվեր։ Գրքվածքը հեղինակություն էր, վասնզի հապճեպով, հանպատրաստից զայն չէր հրատարակեր։ Իր որևէ հրատարակության անսխալ ըլլալուն՝ վրեժխնդիր էր. պետք էր ամենայն ինչ ստուգեր և զայն հետո հրապարակ հաներ։ Նախ՝ գրքին ատաղձը կպատրաստեր, հետո իր կարդացած գրքերեն հավաքած ծովածավալ տեղեկությունները անոր վրա ճարտար դրչով կաղուցաներ, ի վերջո անոր անծանոթ կետերը կլուսաբաներ բազմաթիվ թղթակցությամբ. և եթե թղթակցությամբ հանդերձ չկարենար ստուգել իր տարակույսները, նույն գրվածքը անգործության կդատապարտեր. և այս անբախտության մատնված էր իր «Եվրոպայի հայ վանորեից պատմությունը» որուն հրատարակվելուն համար մեր երիտասարդներեն մին տասն անգամ ավելի դիմեր է պատկառելի ծերունիին, սակայն նա միշտ մերժեր է այդ առաջարկը, առարկելով թե ստուգելի կետեր կան... և իրոք կային. նա մի քանի անգամ նամակներով աշխատած էր անոնց ստուգության համար, սակայն չէր հաջողած. իր ամենեն վերջին խոսքը եղավ, որ երկասիրության մութ կետերը լուսավորելու համար անպատճառ պետք է ճանապարհորդել։ Եվ այդպիսի խղճամիտ հեղինակ մը բնականաբար նույնիսկ դժվարահաճ Եվրոպայի հռչակավոր դիտնոց պատկառելի և գնահատելի պետք էր ըլլար։ Հայագետները իրեն հետ թղթակցելով կամ իրեն տեսության գալով, հայ գրության և պատմության զոհացուցիչ ծանոթություններ կստանային։ Նույն Եվրոպացի դիտնոց հետ ունեցած հարաբերությամբ, տերության ուսումնական կաճառները կլսեն իր գիտության համբավը և այդպիսի օտարազգի մը իրենց ընկերության անդամակից ընելը պատիվ կհամարին. այս կերպով նա զանազան կաճառներու անդամ կըլլա և տերության պատվանշաններու կարժանանա։

Հ. Ալիշան գրքերու մեջեն հանեց իր չքնաղ գրքերը, իր երկասիրությանց մեծ մասը հավաքումներ են, բայց այնպիսի հավաքումներ, որոնք իրեն հանճարին վայել աննման գերազանցություն մ՚ունին և իրենց կարողության բնատուր։ Իր այդ երկասիրությունները տաղանդի այն բարձր բնագրոշմը կկրեն, որուն ուրիշ մեկը հասնելու համար շատ մեծ հմտություն և մտքի առատ պաշար պետք է ունենա։ Հ. Ալիշանի համար հավաքիչ ըսելով չենք կարող նսեմացնել իր ոսկեդրվագ մատենագրական անհուն հմտությունը. եղան խեղճ գրիչներ, որ իր հսկա գործերուն վրայեն նախանձի արհամարհոտ թույն մը փչեցին. սակայն հոյակապ հեղինակը անվրդով մնաց, և պատասխանեց «Չհավանողը լավագույնը թող ցույց տա»։ Նա իր գրական ընթացքի մեջ ավելի ովսաննաներու և աղգիս միահամուռ պաշտումին արժանանալով, բացառություն կազմող քննադատներու նպատակավոր խայթոցները գինքը չվհատեցուցին. որով նա չհեռացավ իր գրքերեն մինչև ցհետին շունչ, ձեռքեն գրիչը չթողուց, կարդաց, գրեց և դիզեց այն գրքերը, որոց մեծ մասը լույս տեսան և սակավուք միայն անպատրաստ ու անտիպ մնացին։

ԱՆՏԻՊ ԳՐՈՒԹՅՈՒՆՔ. 1) Անտիպ երգեր[8]. Անշուշտ շատեր կկարծեին, թե բանաստեղծ Նահապետը պետք էր ունենալ բազմաթիվ անտիպ երգեր, սակայն կցավինք, որ մենք ալ նույն շատերուն հետ այդ գեղեցիկ կարծիքը ծովը կնետենք։ Իր գրադարանին մեջ գտանք մի վտիտ տետրակ, ուր ամփոփված են մի քանի երգեր, որոնց մեծ մասը արդեն իսկ նվագքներուն մեջ տպված են. կմնան անտիպ քա-

նի մը հատ, որոնք ընդհանրապես կրոնական երգեր են, զոր հրատարակելու անարժան գտեր է, մենք ալ, անշուշտ, անոնց արժեք մը տալու իրավունք չունինք։ Ասոնց մեջ կտեսնենք ոտանավորներ, զոր խղճմտությամբ սրբագրեր է, ասոնք ապացույց մ'են, թե այդ վարժ բանաստեղծը որքան կաշխատեր իր ոտանավորներու գեղեցկության և կատարելության համար։

2. Ժողովք. Հայաստանյաց եկեղեցվո ժողովքներու պատմության համար հավաքածու մ'է. փոքրիկ, մանրիկ թղթիկներու վրա մանրատառ նշանակած է այլևայլ ժամանակ կրոնական խնդիրներու առթիվ կազմակերպյալ ժողովներու մասին խիստ անկատար տեղեկություններ։ Այս հավաքածուին մեջ կգտնվին նաև մի քանի թերթերու վրա նշանակված եկեղեցական վիճակագրության ցանկեր։

3. Հայ վանորայք Եվրոպա. Պատկառելի հավաքածու մ' է այս, ուր խտացած են Եվրոպայի մեջ գտնված ամեն վանքերու, եկեղեցիներու, սուրբերու նկարագրությունն և պատմությունն։ Սա բոլորովին անկազմ է, հավաքած նյութերը ճոխ են, և մեծ մասամբ եվրոպական լեզվով։ Ամենեն ավելի բազմաթիվ հայ վանքեր գտած է Իտալիո ծանոթ և նշանավոր քաղաքներու մեջ։ Ինչ որ կերևի Հ. Ալիշան այս գործին համար շատ աշխատած է. այն քաղաքներու մեջ ուր վանքեր գտեր է, սկսեր է թղթակցությամբ անոնց մասին տեղեկություններ առնել տեղվույն քաղաքական թանգարանի քարտուղարներեն. քներ է յուրաքանչյուր քաղքի տեղագրական պատմությունները։ Վանքերու պատմության հետ հիշած է նաև նույն քաղաքներու մեջ ժամանակավ գտնված աղգայինները։

4. Տեղագրական. Ապագային մտադրյալ հրատարակելիք հայ բնագավառներու պատմությունը ամփոփած էր մեծադիր թերթերու մեջ. այս հավաքածուին մեջ ամեն գավառի վերաբերյալ տեղագրական նյութերն տակավին անպատրաստ վիճակի մեջ էին, անոնց կենդանություն տալու համար նա ուներ առանձին բազմաթիվ հուշատետրեր, ուր նշանակած էր յուրաքանչյուր գավառի գլխավոր աշխարհագրական մասերը, կոկիկ կարգով մը խնամքով շարած

էր ամեն քաղաքներու, գյուղերու և գետերու անուններն, որոնց առջև գրված էր անոնց նկարագրության հին և նոր, ազգային և օտարազգի աղբյուրները։

5. Գրչագրաց զարդերի պատկերներ. Անտիպ երկասիրության մեջ կընանք դասակարգել նաև մի գեղեցիկ աշխատություն։ Հ. Ալիշան շարունակաբար նախնյաց գրչագրաց վրա պարապելով, նա միևնույն ատեն սխրացած է անոնց մեջ գտնված հայ վրձիններու գեղեցիկ ճաշակի սիրուն զարդերու ու պատկերներու վրա։ Նա մտածեր է հայկական գեղարվեստի հատոր մ'ալ կազմելու, բայց այդ ըղձացյալ գործը կատարյալ կերպով հրատարակելու համար նա շատ դժվարությանց կպատահի. բայց գործին հաջողության համար նա կշարունակե իր աշխատանքը. գրչագիրներու ամենեն գեղեցիկ պատկերները և զարդերը առանձին նկարիչներու և վանքիս ու Ռափայելյան վարժարանի հաջողաձեռն աշակերտաց օրինակել կուտա՝ հար և նման մեծությամբ, գույներով և գծերով։ Այս հավաքածուին կազմության համար տարիներ կանցնին, կկազմի բավական կոկիկ մի հատոր. սակայն անոր տպագրության համար հարկավոր էր պատկառելի գումար մը. նա կանխավ կգուշակեր, որ այդ գործը իրոք շատ գեղեցիկ էր, սակայն բազմածախս. «Այրարատ»-ներու հատորին պես շատ բաժանորդներ չէր կրնար ունենալ, որով կրնար տուժել միաբանության տպարանը։ Այս մտածությամբ նա անդորձ թողուց նույն գեղարվեստական աննման գործը։ Սակայն նա կուզեր հայ հրատարակչական արհեստը չզրկել բուն հայ մտքեն բխող ամենեն գեղեցիկ զարդեն։ Մահվանեն մի տարի առաջ նա հայտարարություն մը հրատարակեց, որով կիմացներ, թե հազար տարի առաջ գրված հարգի ավետարանի մը պատկերներն մտադիր է հրատարակելու. և իր գործը կհանձնե մամուլին։ Իր զղվելի գործն չտեսած, նա գոցեց աչքերներն. և այժմ, շնորհիվ ռուսահայ մեկենաս պ. Հովհաննես Պալյանի, նա կպատրաստվի և ի մոտո լույս կտեսնե իբրև նմուշ մը մեր նահապետական ձեռագրաց գեղեցիկ ճաշակին։

ԱՆՄԱՆՈՒ ԳՐՔԵՐՆ.— Մենք ցույց տվինք Հ. Ալիշանի

բեղմնավոր գրչի անբացատրելի արդյունքը, բացինք իր՝ մեզ համար միշտ գոց մնացած այն դարանները, որուն մեջ կգուշակեինք, թե պետք ենք գտնալ չքնաղ գործեր, սակայն մեր հուսախաբութիւնը կատարյալ էր. նա իր անտիպ գրվածոց մեջ չէ թողուցած հայրունիին ազգագրորդ հայրենաշունչ ոգվով մի գործ, որուն վրա հրավիրեր իրեն երկրպագու հայ հոգիներու ուշադրությունը. մենք կմայլեցանք տեսնելով այդքան գրական մեծ ամբար մը, որ տակավին անսպառ գանձարան մը կմնա, կսքանչանանք, մանավանդ թե սքանչացանք, տեսնելով գրչի արդյունք մը, որ քան սոսկական գրագետներ կարող չեն նույնքան տպված գործերու հետ ունենալ այնքան անտիպ գործեր ալ, որ մի առանձին միտք հավաքեր, կազմեր ու գրեր է։ Եղական էր այդ գրիչը, ուսկից եղական ձեռագիր մ՚ալ ակնկալելու իրավունք ունեինք։ Եվ մի՞թե բանաստեղծ հ. Ալիշանը չուներ մի այդպիսի գործ։ Խնդրույն խորը թափանցենք։ Դուք, ընթերցողք, եթե ուշադրությամբ չեք կարդացած իր շողշողուն մտքի «Արշալույսին» վերջալույսը, դարձյալ զայն ձեր ուշադրության կհանձնենք. ահա թե ինչ կգրե, ինչ կրսե հ. Ալիշան։

«Արդ ի վերջանալ յիշատակաւ «Արշալուսոյ» մերոյ, նորուի՞ արդեօք յիշել իբրև երազ մի վաթսուն անցեալ ամաց, կամ իբրև զցնորս մանկութեան և անգիտութեան, եթէ այն կենաց դալար եռանդուն երիտասարդութեան պահում՝ մտածէր ոմն դիւցազներգութեամբ կամ վիպասանութեամբ հրուշակել զՏրդատ։ Արդէն ողջաձևն կազմուած էր և այն ժամանակի հասուն քերթողի մի ցուցուած՝ նորա դատաստանն իմանալու, յորմէ չառաւ խրախոյս. բայց ինքն աւելի իր երկու մտմտուքով հո կեցաւ փափագէն։ Մի, որ դժար երևնար իրեն՝ Տրդատայ երկու կենաց (նախ՝ հեթանոսութեան հրապոյրքն և ապա քրիստոնէութեան շնորհքը) համահաւասար փայլեցնել, առանց ոչնչացնելու առաջնոյն խատուտիկ տեսիլը՝ երկրորդին լուրջ կերպարանոր։ Երկրորդ՝ որ ինքն ինքնին վախեցաւ իր երևակայութենէն, զոր շատ դժար է սահմանապատել այն կանաչ տարիներում։ Ցնդեցաւ երազն, ջնջեցաւ ատաղձն։ Բայց եթէ հիմա կամ

երբևէ ազգային ոք հանձարեղ՝ եռանդուն և խոհական, համարձակի հոմերոսօրէն իրագործել զայսպիսի երազ, դուցե չի գտներ լավագույն նիւթ կամ անձն քան զՏրդատ. միայն թէ իր բանաստեղծութիւնն այլ արժանաւոր ըլլա այդ մեր ամենարժան Տրդատայ»։ Քողարկեալ է այս գրությունը, մենք վար կառնենք այդ քողը և ցույց կուտանք այն գեղեցիկ մտածությունը, որ ամիսներ առաջ նույն քողով «Բազմավեպի» մեջ ներկայացուց հ. Ալիշան, սակայն ոչ ոք գուշակեց անոր գեղեցիկ միտքը, և չկրցավ անդրադառնալ անոր վրա։ Վաթսուն տարի առաջ կանաչ հասակի մեջ բանաստեղծ երազատեսն նույն ինքն է՝ հ. Ալիշան, իր բռնկած երևակայության ամենեն ուժեղ, վառվռուն ու սիրուն հասակին, գրած է վիպասանական ողբերգություն մը, որուն դյուցազն եղած է ազգիս պաշտելի արքայն Տրդատ և օրինակ կուսանաց խնկելին Հռիփսիմե։ Երկյուղածն Ալիշան, զայն իր անկողնույն տակ սապատի մը մեջ ծածկած՝ երկար տարեն կպահե. խղճի փափուկ և նազուկ ձայնը կբողոքե իր երևակայության ծնունդ այդ սիրուն և սիրելի ծնունդին դեմ. նա կարհամարհե այդ բողոքը, սակայն երբ հասակը կառնու, դեռ ավելի խիղճի նույն ձայնը կզորանա, կգոռա, կսպառնա. կորոշե նույն գեղեցիկ ծնունդը զոհաբերության խարույկին վրա նետելու. և լուռումունջ կհանդգնի այդ զոհաբերության, ամբողջ ողբերգության ձեռագիրը թերթի մը մեջ ծրարած, կառնու կտանի խոհանոց։ Կհանձնե զայն աշխատավոր եղբոր մը, (Պեշիկթաշլյան թատրոնի անվանի գործիչ Մեսրոպ Զոհրապյան) և կխնդրե որ կրակ նետե։ Եղբայրը կրսե. շատ լավ, քիչ ատեն կնետեմ. ծերունին կտիպե, որ անմիջապես իր աչաց առջև կատարվի այդ զոհաբերությունը. ընդդիմությունը անհնարին էր, մանավանդ որ եղբայրն ալ արդեն ոչինչ չէր գուշակեր, կհնազանդի. մի քանի վայրկենի մեջ հրո ճարակ կլլա այն մեծ ողբերգությունը, որ ազգային էր, և ազգին ամենեն մեծ ու աննման բանաստեղծի լուսաշողշող, հրավառ հասակին մեջ գրված։ Այս գործը կատարված է երեք-չորս տարի առաջ, և ըստ հիշյալ եղբոր, նույն գործը կազմված էր մեծադիր բազմաթիվ թերթերե, ստվար հատոր մըն էր։

Բայց դուք, ընթերցողք, չի զարմանաք Հ. Ալիշանի այս գործին. ահա նույն պատկառելի գրիչն է, որ այդ ողբերգության կյանք կուտա, կստեղծե զայն, և նույն գրիչն է, որ կխլի անկից կյանքը և զայն կոչնչացնե։ Նա դրվատելի գաղափարով կպատրաստե զայն և արգահատելի որոշողությամբ կփճացնե։ Զարմանալի և տարօրինակ կթվի ձեզ, սակայն դուք կարո՞ղ եք թափանցել երկյուղած ծերունիին հոգվույն մեջ, որուն սիրտը, ի լուր խղճի որոտընդոստ ձայնին, կսկսի աշնանային թարշամած հողմակոծ տերևի մը պես թրթռալ ու ծփծփալ։ Ժամանակը ամենայն ինչ կկերպարանավորե։ Հ. Ալիշան իր հասակին ներշնչած հոգով կրնթանար, երիտասարդության առեն մուսաները իր վառ երևակայությունը կպաշարեին, նա իր պատկառուկ բնավորությամբ կլսեր անոնց ձայնը, քաղցր էր անոնց ադինաշունչ երգերն ու նվագները, քնարի ու սրնգի ձայնով կներշնչվեր ու կներշնչեր. սակայն հաղիվ թե կսկսին սպիտականալ մազերը, կփոխվին իր գաղափարները, բանաստեղծությունը իրեն համար երազ ու ցնորք կհամարվի. նա իր լուրջ տարիքին մեջ կսիրե հաստատուն ուսումնասիրությունները և այդ պատճառավ մենք չենք ունենար իր հրմտությամբ բազմաբեղուն հասակին մեջ պատրաստված բանաստեղծական գործ մը. ժամանակի ազդեցության պտուղն է այս։

Հիշեցինք իր գործերին մին, որ առանց լույս տեսնելու հրո ճարակ կըլլա. այժմ կհիշենք մի ուրիշ գործ, որ միայն իր պաշտելի գլխին մեջ կծնանի և հոն կմեռնի։ Մի օր երիտասարդ քահանա մը իր մի շարունակաբար հրատարակված հոդվածներուն համար տեղեկություններ կխնդրե. ծերունին կպատասխանե, թե այդ հայ մատենագիտությունն զատ, մյուս ամեն ճյուղերու համար ալ աշխատած է և հավաքած բազմաթիվ տեղեկություններ. և միևնույն առթիվ կըսե. «Մտադիր էի իբր անձամբ ուղևոր մը՝ ամբողջ Հայաստանը ականատեսի մը գրչով փոքր Ասիայեն սկսյալ, մինչև Ատրպատական մանրամասն կարդալ նկարագրելու. սակայն այժմ այլևս չեմ կարող այս փափագս կատարել». կհայտներ այս փափագը, իմացնելով, որ նա մտադիր էր դեռ շատ գործելու, սակայն մեր Նահապետին նահապետական դարավոր կյանք պետք էր... Մենք, նկատելով իր այնքան անպատրաստ գործերը, կրսենք, որ նա դեռ պետք էր բազմեր իր գրասեղանին առջև, որ կարենար հոգի փչել այդ անկենդան թուղթերուն։ Բայց երկնքի որոշողության դեմ մենք չենք հանդգնիր ճոզած վճիռներ արձակելու։ Նահապետը երկնային պարգև մ'էր, իր հրեշտակային վարքը և բարքը մարդկային գետնաքարշ ստոր վիճակեն շատ բարձր, գերբնականին մոտ տիպար մը զինքը կներկայացնեին. մենք կանցնինք զինքը իր կրոնավորական սև զգեստին մեջ դիտելու։ Տեսանք զինքը իբրև հեղինակ, բանաստեղծ, աշխարհագրագետ, պատմաբան, ճառախոս, հնագետ ու բազմագետ. այժմ սիրենք դիտել զինքը Ս. Ղազարու կրոնական պարիսպներեն ներս։ Ի՞նչ էր այդ մեծ մատենագրին կենցաղը, բարքը, վարքը։

ԱԼԻՇԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԲԱՐՔՆ.— Հ. Ալիշանի ամբողջ կյանքը եղած է ճգնության խնկարան և գրության թանգարան։ Ան իր աչց առջև ուներ հին միաբաններու ժամանակակից, հոգվով հոգեկից, մտոք փառակից հ. Ավդերյան մատենագիր աստվածաբանն, Ինճիճյան մեծ հայրենագետ և Պինդարական դասուն մրցակից հոյակապ հայկաբանն Բագրատունի։ Նա կարդացած էր իր միաբանության հիմնադրին և հաստատուն ոյանց վարքն ու բարքն. կարդացած էր Հայաստանի մենաստաններու մեջ ճգնող և ապրին ու միտքը վերականգնող Սահակա, Մեսրոպա, Խորենացվույն, Երեք Ներսեսներու[10] և աղավնի Նարեկացվույն և այլ բազմաթիվ հարազատ սուրբերու արևելի և հետևելի վարքն. անոնց ամենուն միտքն ու հոգին իրեն սրտին և գրչին առաջնորդ առած, նա կանցնի պատկառելի ժամանակին վրայեն, թողլով իր ետևը հրեշտակաց նախանձելի խնկարույր հոգվո մշանջենավոր ողջակիզում, և հայ հանճարներու զարմանք ու գմայլանք առթող մտքի և գրչի վաստակ, բարդ ի բարդ գրքեր։ Իր համեստ, ազնիվ, քաղցր և երկյուղած բնավորությունը միանալով բնատուր տաղանդին, հանճարին և հիշողության, ձուլվեցավ անմահ դիտնականն և մատենագիրն՝ Հ. Ալիշան։

Ամբողջ կենաք նա աշխատեցավ նմանելու իր ցանկալի սրբոց. իր երգերեն, իր այն հրացայտ, գոռացող և որոտացող բոմբյուններու ոգիեն, կարող ենք դուշակել, թե ի՞նչ անզուսպ, հրատապ բնույթի, բորբոքած բարքի տեր անձ մ'էր նա, սակայն իր վրա կտեսնենք հակադատակերներ, իր անզուսպ կամքը կզսպեր առանց ցույց տալու իր անձին նվաճումը. բանաստեղծական զայրացկոտ և մաղձոտ արյունը կխաղաղեր, կքաղցրացներ ճարտարորեն և գողունի։ Ամբողջ ազգը անկեղծորեն փառք, ալելու կծափահարեին իրեն, նա ավելի երկյուղածության մեջ կմխեր իր հոգին. կահաբեկեր երկրային փառաբանություններե. իր հանճարի փառքը կուզեր վերադրել մի'միայն երկնքին, ուսկից իր գլխի մեջ կաթած էին տաղանդի բեղմնավոր և հոգևոր կայծակնացայտ ճառագայթները. փառքն իրեն սեփականելու և իրեն յուրացնելու արժանիք մը չէր տեսներ, որով կմնար ու կերևար համեստ մանիշակ մը՝ ծածկված իր փիլոնին տերևին տակը և հանճարով ու համեստության խառն խնկավետ բուրումն էր, որ զինքը կմատներ իր վրա սքանչացող ամբողջ հայության։

Մենք մոտենանք այդ սքանչելի արեղա մանիշակին. վայելենք իր խնկավետ կենցաղին հոգերգու ներդաշնակ ժամերը. իր մի օրը ամբողջ պատկառելի կենաց անթերի պատկերն էր, և ի՞նչ էր այդ օրվան նկարագիրը... Ս. Ղազարու խաղաղ ճգնարանը գիշերային խաղաղության մեջ կենչչ. իր պարիսպները համբուրող վետվետ ալյաց քընքուշ ու մեղուշ օրորներն կհմայեն աբեղաներու երազներն. սակայն հոգվույն մեջ խնկաբույր և գրքերու մեջ քրտնաթոր նահապետը, իր սպառած, հյուծված մարմնույն նույնիսկ չափավոր հանգիստ ու կաղդուրում չի տար. նա գիշերվան ժամը հրեքին արթուն է. օրվան ամենեն գեղեցիկ տեսարաններու կերպարանափոխության ականատես էր, գիշերվան Փարոս Լուսնյակի և աստղիկ լապտերներու տխուր խավարումեն առաջ, կուզեր անոնց ծիծաղկոտ և լուսաշող այտերը դիտել ու հրճվիլ. իր այն գեղեցիկ մուսաներուն մնաք բարով ըսելով, կուզեր ականատես ըլլալ հորիզոնի առավոտյան հրդեհին և բարև բռնել արևին, որ ամեն օր

վառած էր իր վառ երևակայությունը։ Առավոտյան ժամը չորսին նա վեղարը ի գլխին, սև սքեմի մեջ պլլված, և ի ձեռին լապտեր մը բռնած, արագաքայլ կվազեր աստուծո տաճարը, ինքը կբանար անոր դուռը և ինքն էր սրբության սրբոցի առաջին երկրպագուն։ Զյունափայլ, հրեշտակափայլ ամբծությամբ և կերկեր ձայնով ու բեկբեկ սրտով կսկսեր սուրբ Պատարագը. կենդանի սուրբ էր նա, մանավանդ հրբ նույն պահուն սրբություն կշնչեր, սրբություն կշոշափեր, սրբություն կհամբուրեր, և սուրբ սրբությունը կողջակիպեր...

Առավոտյան կրոնական պարտուց լրանալեն հետո, շուտափույթ նախաճաշ մը ընելով, կքաշվեր իր սենյակը։ Իր օրվան ամբողջ քանչորս ժամվան հինգ ժամը կնվիրեր քնո. հանգիստ չուներ, պարտեկը մի քիչ շունչ առնելու ատեն, իրեն մտքին հետ խոսուն ընկերն էր գիրքը։ Պարտեզի մեջ բանաստեղծական էր նա. կհանդչեր Բայրընի ըլրան ձիթենյաց ստվերին տակ[11]. կկարդար, կխոկար. մեզի համար մոռիլ էր այդ տեսարանը. «Զայլտ Հարոլդ»-ի հեղինակ հոյակապ բանաստեղծին՝ հոն կփոխանակեր ապպիս պատկառելի անմահ բերթողը և քերթողահայրը. ոչ ոք կվրդովեր անոր այդ պատնաստական հանգիստը. նա հոն Վենետիկ քաղաքին Սափոն էր, բայց անրիծ սերը, պաշտելի հայրենիքը երգող և հայկականերու սիրտը տրոփող Սափո մը[12]... օրվան վերջալույսի ատեն, մենք հափշտակված կդիտեինք զինքը. ահա նա լայն դանկին վրա դանթեական թաշկինակ մը փռած, ստվերի մը պատկերի նման, նոճիներու խնկավետ ճյուղերուն քսվելով, ման կուգա կղզույս ծառուղիին մեջ. դարձյալ նա բանաստեղծական է, կամ գիրք մը կա իր ձեռքը, կամ բաղումները ամփոփած, գլուխը կախ իրեն պարկեշտ շուշան մը ման կուգա խորհրդաճեմ... Մոգական էր նա, և այդ պատճառով ճշդորեն Հ. Բաղրատունի գայն «Մոգ» կանվաներ. այո, նա մոգ մ'էր, Հայաստանի բախտի աստղը փնտրող մոգ մը... իր մեղմօրոր քայլերը կուղղվին դեպի Բայրոնական հանգստավայր, վանքիս ամենեն գեղեցիկ կողմը՝ Ութանկյուն կոչված գեղադիտարանը։ Նահապետին ստվերեն մենք աչքներիս չէինք հեռացներ. ահա նա օրվան մեջ ամբարած դիտությամբ ծաղրաբեռ-

նյալ գլուխը՝ կիսածալ երկու բազկաց մեջ անշարժ բռնած, պիշ-պիշ կպշնու աղմին մեջեն բարձրուղեշ դիտակետ վեհեռակո վրա, կդիտե խորազգած, կդիտե Ադրիականի այն շիկնող հարսին դեմքն երկնածիծաղ. դքսակորույս, հոյակապ ապրանքները լուիկ-մնջիկ կխոսին իրեն հետ, կպատմեն իրենց վաղեմի արյունոտ խժդուժ փառքն ու պարծանք։ Ապստամբության խիզախ երգերուն և գեղահռչակ Տասսոյի վեհապանծ քնարի արձագանքներուն տեղ[13], կլսե վանքիս պարիսպներու ափունքեն անցուդարձ աղքատ ծերուկ ձրկնորներու կուրծքեն թնդացող հայրենի հաղթական երգերն... սարկության դժոխային շղթան հալած էր, ընկճված կուրծքերը ուռած, Վերդիի երգերով՝ բռնության վրա քմծիծաղ կնետեին[14]... Նա կտեսներ, որ ժամանակը դյութող հսկա մ'է, անոր ափին մեջ է բախտն ծիծաղկոտ և թրշվառությունն արյունոտ. և այս խորհրդավոր խոկումներով դեպի արևելք կդարձներ իր ճակատը. դիմացի հորիզոնը վերջալույսի մաղձոտ, մռայլ շողին մեջ թալկացած ըմբիշ մը կներկայանար։

ԴՐՎԱԳՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ.— Հ. Ալիշան եթե լրլար մեռնասեր, չունենար պատկառուկ բնավորություն մը և ընկերության մեջ կատարյալ լռակյաց մնալն չի հարգեր իր բանաստեղծական կազմվածքովն, այժմ ամբողջ կենաց մեջ, իր հանճարեղ խոսվածքներեն մեզ կմնային գեղեցիկ հիշատակներ։ Կցավինք բսելու, որ նա իմաստասիրական ամփոփված լռակյացության մեջ մնալով, այժմ չունինք իր կենցաղեն սպասված ճոխ դրվագներ, հանճարեղ, կրքուկ զրույցներ։ Անոնցմե մի քանին, որոնք մեր մեջ կմնան, իբրև իր հիշատակին թանկագին և հազվագույտ ավանդ կհիշենք։

Միաբանության անդամներեն մին, Հայաստանեն վանք վերադարձած ատեն, հ. Ալիշան կ'ողջագուրե զայն և առաջին խոսքն կըլլա «Կոշիկնե՞րդ, կոշիկնե՞րդ տուր ինձի»։ Նահապետը կփափագի նույն ուղևորին կոշիկները գգվելու, վասնզի անոնք արժանացեր էին Հայաստանի նվիրական հողերը համբուրելու։

Ըստ իր Մուրատյան աշակերտաց վկայության, ըսած է հետևյալ նշանավոր, ազգավառ խոսքը. «Կրոնք և ազգասիրություն իրարմե չեմ կրնար բաժնել։ Զգիտեմ, թե ազգատեաց ոք ո՛րպես կրնա մտնել յարքայություն երկնից»։

Ուխտիս ներկա աբբահայրը արևելք ուղևորվելու օրը՝ ամբողջ միաբանությունս ի միասին կերթա մինչև շոգենավ։ Ամենքը շոգենավ կբարձրանան, սակայն հ. Ալիշան վարը նավակին մեջ կմնա. չուզեր վեր բարձրանալ, ըսելով, որ մի անգամ պատրաստվեր էր հայրենիք երթալու և պատճառավ մը այդ ուղևորությենեն ետ կեցած ըլլալով, շատ կցավի. և նույն օրեն կորոշե երբեք շոգենավ չմտնել։

Վերջերս մի գրագետ (ինչ որ լսեցի յանգետս), հոդվածով մը կնսեմացնե հ. Ալիշանի բանաստեղծական անզուգական, հոյակապ համբավը. Նահապետ թեև անհամեմատ համեստ, սակայն վշտացած ու վիրավորված սրտով, գրագետին նույն հոդվածը կուտա մեր հասակավոր քահանաներեն միույն և կրտե. «Կարդա և տես, թե ի՞նչ ազգ ենք»...

Վանքի քահանաներեն մին դեպի մեծ Հայաստան ուղևորվելու ատեն, հ. Ալիշան իր տեղագրական գործերեն անդրանիկն՝ «Շիրակայ» ձեռագիրներն կհանձնե անոր և կխնդրե, որ զայն իբրև պարգև հայրենյաց, նեռաև Ախուրյան գետը։

Նահապետը դաստիարակական պաշտոններու ավարտումեն հետո, երբ վանք քաշվեցավ, այն օրեն ի վեր շարունակ սիրեց վանք մնալ, և ոչ իսկ զբոսանքի համար վանքեն մի օր հեռացավ. տարվան մեջ երբեմն կերթար քաղաք, ամենակարևոր գործերու համար. շատ անգամ ամբողջ միաբանքս իրեն առողջության համար՝ աշխատած ենք զինքը մեր մերձավոր Ադրիական ծովափին տանելու, սակայն նա միշտ ուզած է անապատական ճգնավորեն ավելի ճգնավոր մնալ։ Գյուղացնացության եղանակին երբեմն հազիվ մի քանի օր գյուղ կերթար՝ պարզ հնազանդության սրբազանական ձայնին հպատակ մնալու համար։ Անցյալ տարի, իր հիվանդությենեն վերջը, մի օր, տարօրինակ բացառությամբ, երիտասարդ քահանայի մը հետ կերթա վերոհիշյալ ծովափը, ուր ծովը տեսնելուն պես, իր միտքը կիջնան բանաստեղծություններն. մեծ-մեծ հեալով կշնչե Ադրիականի մա-

բուր ու գով օդը և մերձավորին կրսե. ծովը ի՞նչ մեծ գաղափարներ կներշնչե, մեր նախնիք շարականներուն մեջ ծովին վրա ի՞նչ գեղեցիկ ու գողտրիկ բանաստեղծություններ գրեր են։ Եվ կարդավ կկրկնե շարականին մեջ եղած ծովի վերաբերյալ իմաստները։ Միևնույն ատեն կպատմե մի դեպք, որ վաթսուն տարի առաջ կատարված էր և բոլորովին անծանոթ մնացած. կրսե. «Երիտասարդությանս ատեն դեռ հազիվ երկու տարի էր որ քահանա եղած, Ռափայիլյան վարժարանը կգտնվեի. մի օր առանձինն հոս եկա. նույն ատեն հոս բոլորովին անմարդաբնակ անապատ էր, մտա ծով, լողալ չի գիտնալով, քիչ մնաց, որ պիտի խեղդվեի. և ահա դիս դիտող մարդ մը ծով նետվելով, եկավ դիս ազատեց և ըսավ. հասկցա, որ լողալ չես գիտեր և վտանգի պիտի ենթարկվիս. անոր համար սպասեցի, որ փրկության հասնիմ։ Եվ ահա, նույն օրեն սկսյալ, որոշեցի այլևս ծով չի մտնել»։ Կշարունակե իր քայլերը, կծծե Ադրիականի զեփյուռը և ծերունիի՝ այտերուն վայել զգվելի ծիծաղով մը կպատմե, թե նույն ծովափին վրա տարիներ առաջ լորդ Բայրընն և Շատոբրիան ման գալով, իրենց մտքին մեջ կհյուսեին մեծ-մեծ բանաստեղծություններ։

Իր կենաց թելը կտրելու ուրիշ վտանգներ մալ ազատեր է մահվենեն չորս տարի առաջ։ Մի օր, Վենետիկ գյուրատահ կամուրջներեն անցնելու ատեն, վտանգավոր կերպով իյնալու վրա կ'երլլա, ընթերակա անձինք շուտ մը կբռնեն զինքը։ Ծերունին իր անապական հավատքով այդ փրկությունը իր պահապան հրեշտակին վերագրելով, իրեն նոր եկած ընծա գրամները կտանի գերապատիվ աբբահոր և կինդրե, որ անով վանքիս ավագ խորանի երկու արծանե հրեշտակներու գլուխը արծաթե պսակներ դրվին. կրսե. «Պահապան հրեշտակները զմեզ շատ անգամ մահվենե ազատած են, ինչպես այսօր ալ դիս. անոր համար մենք անոնց կերպով մը պետք ենք գոնե նյութական գարդով երախտագետ մնալ»։

Նահապետին համեստությունը արդեն իսկ հանրածանոթ է, սակայն այսուհանդերձ, «Սիսուանի» մեջ, հակառակ իր կամքին, վանքիս տպարանի վարչությունը կդնե իր կենդանագիր պատկերը. գրքերու կազմելու ատեն, Նահապետ վրա կհասնի և տեսնելով իր պատկերը, խոնարհության կրակով բորբոքված կպատռե ձեռքն ընկած յուրական պատկերները և գործավորներուն կպատվիրե, որ բացարձակապես գրքերուն մեջ չդնեն իր պատկերն։

Մի օր ազգային մը զհ. Ալիշան տեսնելու համար հատկապես իր քաղքեն երթալով, կուգա Վենետիկ. կդիմե Ռափայիլյան վարժարան, ուր նույն ատեն Նահապետը տեսչության պաշտոն կվարեր։ Այցելուն փոխ-տեսուչին կիմացնե, որ կփափագի զհ. Ալիշան տեսնել. նա «Շատ լավ» կրսե և իմաց կուտա հ. Ալիշանին. սա վրդովված կրսե. «Ես ո՞վ եմ, որ զիս կուզեն տեսնել». փոխ-տեսուչը վարպետ խոսքերով և ցավոք սրտի կճամփե զանիկա։ Ահավասիկ անհավատալի դեպք մը, որուն ականատեսն դեռ ողջ է և զարմանքով կպատմե։

Մուշեղ սնուն Սասունցի մի քաջակորով երիտասարդ, տասը տարի առաջ վանք գալով, ուզեց տեսնել զհ. Ալիշան. սա նույն ատեն ի սեղանատան սուրճ կխմեր, Մուշեղ հեռուեն զինքը տեսնելով, սկսավ ծնկվներուն վրա բալելով մոտենալ հ. Ալիշանին։ Հուզիչ տեսարան մ'էր. հ. Ալիշան զայն տեսնելուն՝ կմոտենա, վեր կհանե զՍասունցին։ Նահապետի աչին վրա Մուշեղի տաք-տաք համբույրները կշարունակվին. մեր ծերունին շվարած կհարցնե երիտասարդին «Ո՞վ ես, ի՞նչ կուզես». կպատասխանե. «Սասունցի երիտասարդ մ'եմ, այս ձեռքը համբուրելու համար եկած եմ». Նահապետ իր ձեռքով կհրամցնե բաժակ մը սուրճ, Մուշեղ զայն տեսնելուն շվարած կրսե. «Ի՞նչ կընես, հայր սուրբ, ես քու ծառայության արժանի չեմ»։

Մեղի համար իր գրական հիշատակներու ամեն գործիքները գուրգուրալի էին, մանավանդ իր կաղամարը, որ իրեն չափ հին էր ու նահապետական։ Մի օր զայն կուզե ազգային այցելուի մը տալ. իհարկե, այս գանձը առանց դժկամակության չէինք կրնար մեր վանքեն հեռացնել։ Նույն վայրկյանին մերձավոր քահանաները չեն թողուր, որ այս ընծան կատարվի։ Հ. Ալիշան, մի քիչ ներելի, մանավանդ թե բարեպաշտիկ այլայլությամբ կրսե «Ի՞նչ,

կաղամարի՞ս ալ տերը չեմ»։ Սակայն այսուհանդերձ, թույլ չի տրվիր, որ նա նույն վայրկյանին անոր տերը ըլլա։ Զարմանալի էր մեր բանաստեղծը. նա, որ երբեմն սուրբ և զողտրիկ պարծանոք ըսած էր. «Է՜հ, այս կաղամարին մեջեն ելած են Սիսուաններ, Այրարատներ», նույն ատեն մոռանալով իր այն խիստ նշանավոր և անմոռանալի խոսքը, կուզեր անկից զրկել մեզ...

Հ. Ալիշան մեր քահանաներուն միույն ըսած է, որ «Սիմեոն ծերունիին պես պիտի ապրիմ ու պիտի սպասեմ...» Կհասկանաք ընթերցողք. բայց Նահապետին հայ մեսիան չեկավ։ Երգեց, աշխատեցավ և այն մեսիային տենչով հալեցավ, մաշեցավ, սպասեց և ծերացավ. և ոգեառ հոգին ալ սպասեց, բայց չխաբվեցավ երկրիս վրայի կեղծուպատիր խաբեբաներեն[15]։ Եվ հնչեց հավիտենականության հրավերի զանգը... ծերունին պատրաստվեցավ հավիտենականության։

ԱՆԱԿՆԿԱԼ ԵՐԿՆԱՉՈՒ.— Առանց արտասվաց հեղեղներու չէինք կրնար դիտել փարոսի մը վառ ի վառ հրացայտ ճրագին անակնկալ շանթահար շիջումն. առանց սրտախոց հուզումներու չէինք կարող համբուրել այն սիրտը, որ ութսուներկու տարի անընդհատ տրոփեր էր՝ սեր երկնային, սեր հայրենի և սեր եղբայրական, առանց սարսուռի չէինք կարող դիտել այն թալկացյալ լայն ճակատը, ուսկից ցայտեր ու բխեր էր հայ հայրենյաց ավերակաց կյանք, լույս, հույս. կարելի չէր հանդուրժել տեսնելու այն ոսկեթաղանթ շրթունքները, որոնք քարացեր էին, որոնք կես դարեն ավելի սգավոր ազգիս ողբերգու, սրտերգու և հոգերգու սրինգն եղած էին. կարելի չէր առանց օրհասական քստմնելի դողդողանքի գգվել այն ձեռքը, որ մեր ավերակաց վրա ընկած կիթառի լարերն թրթռացնելով, մեր սրտի սուրբ ատրուշաններու կրակը, բոցը արծարծեր էր... Մեզ համար եղեռն մ'էր Նահապետին վերջալույսին վրա մտածելն. կյանք մը, որ լույս և հոգի եղած էր մեզի պես խավար ու ավեր ազգին, պետք էր որ անմահ մնար, սակայն եթե կա սխալ մը տիեզերական ներդաշնակության մեջ, Նահապետի պես անձերու անմահ չըլլալն է... Բայց անբիծ հավատքը տիեզերաց օրենքներու ճշմարտությունը կերգն, և մենք մեր մտաց անդունդներեն խոնարհվելով այդ երկնացայտ օրինաց օրենսդրի դարշապարին, պատկառելով կմոտենանք այն մահճին, ուր հոյակապ միտք մը փլչելու վրա է... Ս. Ղազարու լուսակյաց սրահները անսովոր և տարօրինակ վրդովանքի և հուզման մեջ են. գիշերվան մեռելությունը կ'ողբա հայ ավերակներու սրբազան աճյուններուն մեծ ոգիին՝ մոխրո կույտ դառնալու պատրաստությունը։ Ահա Նահապետն շունչ կուզե քաշել և չառներ, աչքերն դուրս կ' իյնան, դեմքը վարդ ի վարդ կկարմրի իբրև վարդ, սիրտը կգոռա, ամբողջ մարմինը կպատի հավիտենականության մարգարիտ ցողով. ի տես այդ տեսարանիս սիրտերնիս արյուն կուլա, մեկ մեկու կնայինք, դեմք դեմքի վրա կկարդանք վրդով ու գորով... Սիրտս խշխշաց, խույս տվեցի դեպի սենյակս, գրեցի, զուժեցի հետագա բոթը...

Խորտակված սրտով կգուժենք միաբանությանս և ազգիս պաշտելի հոր՝ Ալիշան վարդապետի շանթահար բոթը։ Տարվույս սկիզբները վտանգավոր շնչարգելություն մը կսպառնար Նահապետին թանկագին կենաց. սակայն երկինքը գթաց մեզի՝ մի քիչ կասեցնելով ալեզարդ ծերունվույն հաղթական արևմուտքը։ Ապրեցավ Նահապետը և տեսավ իր անզուգական արդյանց և յուրայնոց անխոնջ վաստակոց պսակը, որ հյուսված էր իր հոգեշունչ երգերով, սնած ու ապրած հրախտաղետ ազգայնոց ձեռքով։ Նույն մխիթարական օրեն վերջը, իր պատկառելի հասակը իրեն երազել կուտար երկինքը, ուր թռավ, թողլով համայն Մխիթարյանքս անմխիթար սգո մեջ։

Ընծայման տոնին (1901 թ. 21/11 Ն. Տ.) ոչինչ չուներ և սովորականեն ավելի ընկերությանս մեջ իր քաղցր ու պատկառելի ընտանությամբ կխոսեր ու կհարցներ. ի միասին զվարթությամբ տոնին առթիվ մի փոքրիկ հանդես կատարելեն հետո, նա իր սովորականին համեմատ քաշվեցավ իր սենյակը։ Ամբողջ միաբանությանս համար ննջելու զանգակը հաղիվ թե զարկավ, վանատանս մեջ արտաքո կարգի հուզում մը տիրեց, երիտասարդք ու հասակավորք շվարած սրահներու մեջ կվազվզեին, անտեղյակներուն հա-

ղորդելով ալեզարդ Նահապետին ծանր վիճակը։ Գուրգուրալի ծերունին անկողին մտնելուն պես՝ խղդվելու աստիճան շնչարգելություն մը կուներա։ Ուխտիս Վեհը և մեծ ու պըզտիկ կխուժենք սենյակը, օրհասական էր իր վիճակը. մինչև որ բժիշկը կհասնի, սովորական դեղերը կմատակարարենք. նորա անկաշկանդ լեզուն կաշկանդված էր, չէր մարած իր հիշողությունը, մեր հարցմանց կպատասխաներ համբուրելի գլխուն շարժումներով։ Հասավ բժիշկը, որոշեց անորոշ վտանգը ու պատվիրեց հանդերձյալ կենաց ամեն պատրաստությունները տեսնել. բժշկի այդ պատվերը քստմնելի անակնկալ հարված մ՝ էր։ Ընդունած էինք, թե մահվան ոգուն դիմադրել չկա, անգութ ճշմարտություն մըն էր.

Քիչ ատենեն ամենուս դեմքին վրա մխիթարության նշույլներ կերևին. ծերունին դեղեր առնելեն հետո մի քիչ կսկսի հանդչիլ և կեսգիշերին գրեթե բոլորովին իր սովորական առողջ վիճակը կստանա. մերթ ընդ մերթ հեղձամղձուկ հազ կուններա, բայց շուտով կհանդարտի։ Արշալույսի մոտ ժամը չորսին իր գրպանի գանգահար ժամացույցը ձեռքը առնելով, ականջին կդնե, կնայի ժամացույցը. մինչև ժամը վեց անկողին կմնա, հետո իր ձեռքով և ընթերակա երիտասարդ վարդապետներու օգնությամբ կանգան կհագնի, անկողինեն վայր կ՝իջնե և ադոթարանին մոտենալով, բազկատարած, եռանդագին կհամբուրի խաչելությունը, կխաչակնքի և միևնույն ատեն վրան սաստիկ գոչդողանք մը կալով և բերնեն արյունախառն հեղուկ մը դուրս տալով, հանդարտությամբ ու անշշուկ կմարի իր հանգիստ կենաց բոցավառ հոգին։

Կարևոր և պատշաճ տեղեր, ազգային և օտարազգի լրագրաց և բարեկամաց հեռագրով և մահազդի թղթերով փութացինք գուժել մեր մեծ կորստի տխուր լուրը։ Հեռավորք հեռագրով և մերձավորք ներկայությամբ մասնակցեցան մեր սուգին։ Տեղական ամեն լրագիրները հուզյալ բառերով տարածեցին մեծ բանաստեղծին բոթը. մահվան երկրորդ օրը (23/11. Ն. Տ.) կեսօրին ժամը երեքին իրրև հուղարկավորք ներկա էին քաղաքիս ազգային ընտանիք, Ռափայելյան վարժարանի բոլոր աշակերտները, Փատուայեն ուսանողներ, օտարազգի բարեկամներին՝ հայագետ Տեգա, Վենետիկ գիտության կաճառին բարձրապատիվ քարտուղար Պերշե, քաղաքային հիվանդանոցի բժշկապետներեն մեր ազնատան ծերունի բժշկին տոքթոր Տա Վեննեցիա (որ տասնյակ տարի առաջ իր վերին աստիճանի խնամքով մահվրնե ազատեց մեր հանգուցյալ լուսահոգի ծերունին), վանատան փատատաբան Ջուզեպպե Ջերոլիմի, քաղաքիս Բենեդիկտյան վարդապետը, երկրագործության վարժարանի աշակերտները, օտարազգի հոդվածագիրներ, իր բազմաթիվ գրաշարները և այլն։ Դագաղը զարդարված էր ոսկեհյուս շուրջառով* վրան դրված էին տերություններե և կաճառներե ընդունած պատվանշանները, ամենահարդի սաղավարտ մը, վարդապետական գավազան մը, սկիհ մը, վանատան աշակերտաց ձեռքով կազմված երկու գեղեցիկ, իրական ծաղիկներով պսակներ և Ռափայելյան վարժարանի արվեստական պսակ մը՝ հետևյալ ձոնով. «Սիրելյալ Նահապետին ազգիս հայոց՝ հայ մանկտին Մուրատ-Ռափայելյան վարժարանի»։ Հուղարկավորության եկեղեցական արարողությունը սովորական պարզությենե դուրս, պատշաճության համեմատ վսեմ էր, ողբական ու լալկան կոչնակը կհնչեր և կհնչեր մեր հիշողության մեջ հանգուցելվույն տխրունի երկու տողերն։

Հնչեա՜ց զանգակ քո, հուսկ զանգակ գիշերի,
Ի յաւիտեանս անցեր և դու յերերի...

Ողբերգու մեղեդիներով Նահապետին դագաղը կանցնի վանքի սրահներեն ու կմտնե տաճարը։ Կշարունակվին երգեր ու աղոթքներ։ Հուսկ ուրեմն հայագետն Տեգա, իր հատուկ դամբանականով շիշյալ հանճարին հաղթական բամբն օրհնալով, կհիշեցնե նորա անցյալին անմահությունը. կմխիթարվինք, կքաջալերվինք։

Կհնչեր Նահապետին անարշալույս դիշերվան սգավոր

* Ի միարանություն սովորության եղած է քահանայից դագաղը սև քողով մը ծածկելու, սակայն Ուխտիս Գերագատիվ արքեպիսկոպոսի հրամանով, ըստ արարողության հայկական եկեղեցվո, հ. Ալիշանի դագաղին սուգի գերպարանք չտրվեցավ։

պղինձը. պաշտելի մարմինը տաճարեն դերեզման կհասնի. հոն, ընծայման տոնին հիշատակով, երկնքին ընծա կընե Մխիթարությունս անպուղական ծերունին...

Մենասեր հոգին մենավոր մնաց, հուղարկավորները դացին հեռացան. տխուր էր օդը, տխուր և օրը. վերահաս գիշերը հասավ, ցուրտ ու մռնչող հողմով. հիշեց լուսնակը Նահապետին այն պատվերը, զոր տված էր իրեն հայոց գերեզմաններին։ Պատռեց ամպերը, վանեց խավարը, բայց քամին սև ամպերը կմղեր, կուգային անոնք գինքը թաղելու. որոտաց ձայն մը մեր գերեզմանեն. կա՛ց, մեկ վայրկյան մ՚ալ կա՛ց իմ լուսնակ, հոս քար մը կա ծանոթ Նահապետիս, եկուր հոս կաթե լույսիդ արտասուք, Նահապետին է այս գերեզման[16]...

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Ղազար եմ գնում։ Մանկությունից եմ երազել այս օրը, այն անդառնալի կերպով անցած ժամանակներից, երբ դեռ չէի հասկանում «որ ի քնար հոգեատափղ»-ը, և երբ սիրաս փղձկում էր «Ո՞վ դու բարեկամ»-ը կարդալիս։ Բագրատունիներն ու Ալիշանները հեռվից ասես դյութում, քաշում են։ Ի՞նչ հաճելի է օտար երկրում հայրենիք զգալ այսպես խորունկ կերպով։

Վենետիկյան գարնանային օր է։ Հյուրասեր մենաստանն իր նավակն ունի ծովափին։ Ուղիղ ճաշ է։ Մի ծեր և մի երիտասարդ իտալացի թիավարների հաղթ բազուկներով սև, կոկլիկ նավակը սլանում է հարավային արևի վառ շողերով ողողված ջրերի հայելանման մակերևույթի վրա։ Շուրջս ամեն բան ժպտուն է, և՛ արևը, և՛ ջրերը և գոնդոլները. իսկ այս երկինքը ի՞նչ հստակ է ու կապույտ։ Մի ուրախ տրամադրություն է իշնում վրաս. թվում է՝ երկար տարիներից հետո հայրենիք եմ գնում, մայր երկրի մի կտորը պիտի տեսնեմ և այնտեղ՝ հուշակավոր ծերունուն, հինավուրց Նահապետին։

Մեզանից դեպի ձախ երևում է մի կանաչ ծառախումբ. դա Վենետիկի միակ պարտեզն է, միակ տեղը, ուր վենետիկցի մանուկը գաղափար է կազմում ծառի, բուսականության մասին։ Ծովը հազիվ է համաձայնել քանի մի շերտ հող տալ տներ շինելու համար. ծառերի, պարտեզների տեղը կատարյալ շռայլություն կլիներ։ Ավելի հեռուն Լիդո պատմական կղզին է, կանաչապատ ու ծառազարդ, ինչպես մի հսկա օձաձուկ կիսաշրջանով պատել է Վենետիկի առաջը և, մեջքը դեմ տված լայնարձակ ծովին, ասես ուխտել է հավիտյան հսկել այնտեղ և մեղմել հեռու խորքերից եկած ալիքների կատաղությունը։

Մեր առջևն է այժմ մի փոքրիկ կղզի՝ կարմիր շինություններով... Ս. Ղազարն է, այն համեստ անկյունը, որ մեր նոր կյանքի վերածնության շրջանում այնքան խոշոր դեր է խաղացել։ Ես այլևս աչք չեմ հեռացնում։ Բոլոր շինություններից վեր բարձրանում է սպիտակ զանգակատունը կարմիր եկեղեցու վրա։ Ջրածեծ ցածր պարսպի հետևից երևում են փոքրիկ պաղատու ծառերի կատարներն ու սավերախիտ նոճիները։ Մի բոպե շինությունների այս վառ կարմրությունը, ծառերի կանաչը, ջրերի փայլը, այս զանգակատունը, եկեղեցին, ծովային հորիզոնի վրա խառնվում են իրար արեգակի վառ շողերի տակ և ստացվում է մի ֆանտաստիկ տեսարան, ուր հայացքը շփոթվում է, և չգիտես, որի՞ն առավելություն տա, ինչի՞ն նայե, ո՞ր կողմը ուշք դարձնե։ Թվում է, թե Ադրիական ծովն ամենից ավելի այս կղզին է գուրգուրում, որպես հեռու երկրից իր գիրկն ընկած մի աղնվազարմ որդ, որը ամենից ավելի է խնամքի կարոտ...։ Գեղեցի՞կ է Ս. Ղազարը։

Նավակը սուրալով կանգ է առնում մուտքի քարյա աստիճանների առաջ. ծեր իտալացի դռնապանը օգնում է հյուրին դուրս գալու նավակից։ Վերին աստիճանի գրավիչ է առաջին տպավորությունը, երբ մարդ ներս է մտնում։ Բակը ներկայացնում է մի քառակուսի, լավ մշակված պարտեզ, ծաղկաշատ և սավերախիտ. չորս կողմից անցնում են երկայն, համաչափ և համանման այունագարդ սրահներ (portique), ծաղիկներն ու կանաչ բաղեղները չորս կողմից եղբայրաբար գալարվում են սպիտակ, նուրբ այունների մեջքին, զեղարվեստական անհոգությամբ փարում են երկաթյա վանդակապատի ճաղերին, տեղ-տեղ պատում են սրահի բաց կողմը ու կամարների տակ ստեղծվում է մի կրոնական կիսաստվեր, որ զուրկ չէ խորհրդավորությունից։

Ճաշի ժամ է. դրսում ոչ ոք չկա. պարտեզի կենտրոնում արվեստական ավազան կա, ծածկված սիրուն վերանդայով, և այդ ավազանի մեջ մի հատիկ կարմիր ձուկ. նա շարժվում է մեղմությամբ, ասես վախենում է իր խղճուկ պոչի թափով աղմկել չորս կողմի լռությունը, երբեմն մնում է անշարժ, թևերը փռած, ասես մտածելով թե ինչպես շարժվի, որ աղմուկ չլինի, որ անհամեստություն չանի. երբեմն իջնում է ջրի խորքը, երբ արևի շողերը շատ են ոսկեգծում նրա փոքրիկ մեջքն ու կարմիր թևերը. համեստ է ու մենավոր, որպես մի վանական։ Ես դեռ այսքան տխուր, այսքան մելամաղձոտ ձուկ չեմ տեսել. և դա հասկանալի է. չէ՞ որ ձկները մենակեցության սովոր չեն. փույթ չէ նույնիսկ, եթե այդ Մխիթարյանների ավազանում լինի։ Խե՜ղճ դժբախտ ձուկ...

Իմ միայնությունը երկար չի տևում։ Ահա մի ծերունի ալեզարդ մազերով ու միրուքով։ Նա քայլում է բավական արագ, բայց տարիների բեռի տակ կռացած է մեջքը։ Նրա պատկառելի դեմքը մերթ ծածկվում է այունների և սաղարթների հետևում, և մերթ հայտնվում է իր բոլոր վայելչությամբ, որպես հին աշխարհի մի ծեր Նահապետ... Ալիշանն է, ինչպե՜ս չճանաչել նրան՝ թեև ժամանակն ավերումներ է գործել, բայց արտաքինը դեռ պահպանում է բանաստեղծական խորհրդավոր դծեր այդ խոշոր, մեղմ աչքերի մեջ, այդ սիրուն ճակատի վրա, որ տարիները բոլորել են ճերմակ մազերի պսակով։ Ես առանց մի վայրկյան կորցնելու նրա առաջն եմ վազում և համբուրում վառակավոր աջը։ Նա կանգ է առնում զարմացած, և խկույն գլխի ընկնելով, առանց սպասելու, որ իմ անունը լսե, կամացուկ ասում է։

— Բարի եք եկել. ինչպե՞ս են, աղե՞կ են ձեզ մոտ։

— Հայր Նահապետ, ձեզ են հարցնում ամենքը, ձեզ տեսնելու ջերմ փափագն ունին։

— Է՜հ, թող դան և կտեսնեն,— պատասխանում է նա ժպտալով։

— Այո՛, բայց նրանք կուզեին, որ Դուք լինեք հայրենիքում, որ ամենքը տեսնեն, որ իրանց Նահապետն իրանց մեջ լինի։

— Է՜հ, երբ գալու լինին այստեղ, ես ալ մեջները կլինիմ,— վերջացնում է նա ծիծաղով։

Ահա և մյուս միաբանները. սեղանատնից են դուրս գալիս, ծանոթանում ենք, ընդունելությունն ամեն կողմից քաղցր է ու բարեկամական։ Հ. Բարսեղ Սարգիսյան, Հ.

Եսայի Տայեցի, Հ. Սիմոն Երեմյան սիրալիր պատրաստակամությամբ իրանց թանկագին ժամերը չեն խնայում ինձ, և մենք, խոսելով ավելի կամ պակաս հետաքրքիր նյութերի մասին, որոնք կապ ունեն ազգային կյանքի հետ, շրջում ենք կղզու բոլոր անկյունները։ Ուշադրավ է, որ խոսակցության կամ, ավելի ճիշտ, վեճի առաջին հարցերից մեկն է ռուսահայ և թուրքահայ բարբառների խնդիրը։ Արդյոք սա այն տարօրինակ հարցերից մե՞կն է, որի վերաբերմամբ մենք դեռ երկար չպիտի կարողանանք իրար հասկանալ և վերջնական համաձայնության գալ մեր թուրքահայ. եղբայրների և մանավանդ Մխիթարյան հայերի հետ։

Մտնում ենք եկեղեցի. փոքրիկ, կոկիկ կամարաորմերը զարդարված են եկեղեցական-ազգային գործիչների նկարներով։ Ահա և գրադարանը, որ իր ձեռագիր ժողովածուով այնքան օտարականների հետաքրքրություն է շարժում։ Չորս մեծ ու լուսավոր սենյակներ են առաջին հարկում, ուր դեղնագույն պահարանների ապակիների ետևում շարված են բազմահատոր գրքերը՝ զանազան լեզուներով։ Ձեռագրերի բաժինը մի առանձին կոկիկ սենյակ է, ուր ազգային այդ հիշատակարանները պահվում են մեծ խնամքով, որպես նվիրական նշխարներ։ Թվում է, թե մի խնամոտ ձեռք օրն ի բուն զրաղված է դրանցով, այն աստիճան կարգ ու մաքրություն կա այստեղ։

Այն սենյակում, ուր աշխատել է լորդ Բայրոն, խնամքով պահվում են մեծ բանաստեղծի մի քանի հիշատակներ. իր հայերեն ու անգլիերեն ստորագրությունը, նկարը, դանակը, թանաքամանն ու գրիչը[2]։ Ուշադրության արժանի է, մանավանդ, հին դրամների պահարանը. զանազան դարերից մնացած մետաղյա այդ փոքրիկ շերտիկները, որոնց վրա շատ անգամ հազիվ նշմարվում են գրերի հետքեր, դասավորված են ժամանակագրական կարգով, և յուրաքանչյուրը կրում է մի փոքրիկ կտոր թուղթ, որի վրա նշանակված է հայերեն դրամի արձանագրությունը։ Մի ընդարձակ դահլիճ է վանքի ընթերցարանը, որ ճեմարան է կոչվում։ Կենտրոնում դրված ահագին սեղանը կորչում է զանազան լեզուներով լրագրերի կույտի տակ, որոնք դասավորված են խնամքով և կարգով։

Դժվար է առանց խորին հուզմունքի անցնել այն դալլերեյով, որի պատերի վրա պահվում ֆն վախճանված միաբանների յուղանկար նկարները։ Ի՜նչ սիրելի, ի՜նչ քաղցր սովորություն. այս մխիթարյան ընտանիքի հաջորդ սերունդները հեշտությամբ չեն մոռանում իրենց նախորդներին և շարունակում են ապրել նրանց մեծ հիշատակներով։ Հետաքրքիր են պատերի վրայից ասես անհունը դիտող և խորհող այդ դիմքերը, արևելքում ծնված և արևմուտքի մտքով մշակված այդ ճակատները իրանց վրա ինչ-որ մի վսեմ բան են կրում, որ պատկառանք է ազդում։ Դեռ օտարականներն են նկատել, որ քաղաքակրթված հայի տիպը խիստ գրավիչ է դառնում, մանավանդ, երբ առևտրի և սաստ վաստակի հոգսը չէ կնճռոտում նրա ճակատը։ Եվ ճշմարիտ, այս դեմքերը մեկը մյուսից ազդու, մեկը մյուսից գրավիչ են և նայում են նրանք ճշմարիտ կրոնավորի, հեզ և դիտուն մարդուն հատուկ խելացի աչքերով։ Շարքով կարդում եմ. Հ. Հյուրմյուզյան, Հ. Ավետիքյան, երկար կանգ եմ առնում այս մեծաչյա, արծվաքիթ պատկերի առաջ, որ կարծես երագում է հին օրերը. հոչակավոր Ջամչյանն է։ Ահա Հ. Ավդերյան, Ջախջախյան, հ. Արսեն Բագրատունի... ո՞ր մեկը թվել. վաստակավոր գլուխների, խորհուն աչքերի ամբողջ երկու շարքեր, մի գիտական պանթեոն, որ մոտծել է տալիս և հուզում։ Այստեղ է նաև Հ. Ալիշան, իր սիրած Շնորհալին իր շնորհալի ձեռքում, երիտասարդ ու կայտառ, գեղադեմ բանաստեղծ. դեռ կենդանի «Ավարայրի բլբուլը» այս անմահների շարքում իր տեղը գրավել է արդեն։ Մխիթարյան միաբանը սրանից մեծ փառք չունի. համեստ, բայց վսեմ փառք։

Անցնում են ֆիզիկական գործիքների, հանքային ժողովածուների դահլիճը։ Ի՜նչ զարմանալի է ժամանակի առաջ բերած փոփոխությունը։ Մտքի հաղթական ընթացքի առաջ պատվար չկա։ Վանական մի ուխտ և այսքան գործիքներ ֆիզիկական, քիմիական փորձերի համար... Այստեղ է նաև Հ. Արսեն Բագրատունու գանգը, որին նայելիս, մարդ ա-

կամա Համլետ է դառնում և միտքը հրաժարվում է հավատալ այսքան անողորմ, այսքան վուլգար իրականության, անկարող է դառնում թեկուզ հեռավոր կապ գտնել այս ողորմելի ոսկերակուցի, և այն վսեմ պատկերի մեջ, որի անունն է Հ. Արսեն Բագրատունի։ Եվ ճշմարիտ, մի՞թե այս չնչին փչակի մեջ են ծնունդ առել այնքան մտքեր[3]...

Վար ենք իջնում ներքև, մտնում տպարան, ուր կյանքը եռում է. արագատիպերը գործում են. տպագրվում են «Պատմություն վարուց և գործոց Տ. Մխիթարա Վ. Սեբաստացվո» Հ. Թորոսյանի. «Հայապատումը» Հ. Ալիշանի. «Հայկական արձանագրությանց ուսումնասիրությունը» Հ. Սանդալճյանի (Ֆրանսերեն) և այլն։

Դուրս ենք գալիս փոքրիկ պարտեզը։ Լավ մշակված խաղողի վազեր կան, որոնք երկար ու գեղեցիկ ճեմելիքներ են կազմում, կամարածածկ ու զով. նրանց կողքին՝ պտղատու ծառերի շարքեր, ավելի հեռուն, կղզու եզերները ստվերախիտ նոճիներ։ Կղզու մի հեռավոր անկյունում մի փոքրիկ թումբ կա, որ Բայրոնի բլրակ է կոչվում. այստեղ, փայտյա փոքրիկ նստարանի վրա նստած, երբեմն երազելիս է եղել ծովերի սիրահար ըմբոստ ու հոռետես բանաստեղծը[4]։ Նկեղեցու հետև, հարավային անկյունում, վանքի գերեզմանատունն է. պատի վրա Հ. Ալիշանը իրան հատուկ գողտրիկ ոճով մի քանի տող բանաստեղծություն է գրել, որ վերջանում է հետևյալ խոսքերով։

«Վաստակեցան և ասա հանգչին»[5].

Այո՛, հանգիստ հավիտյան իրանց աճյուններին, որովհետև, հիրավի, շատ «վաստակեցան»։

...Այսօր, մայիսյան պայծառ և ծիծաղկոտ եղանակով վերջին անգամ այցելեցի Ս. Ղազարը և իմ վերջին նամակը Վենետիկից նրան եմ նվիրում։

Կղզին կարված է մայր ցամաքից և նրան Ադրիատիկի ալիքներն են գուրգուրում. կղզու բնակիչները կտրված են աշխարհից և իրանց կրոնական և գիտական խոհերով են ապրում միայն։ Ինչպես հողի այդ փոքրիկ շերտը կարծես գոռոզ ծովից թողություն է հայցում իր գոյության համար,

ճիշտ նույն համեմատությամբ Մխիթարյան միաբանները իրենց աքնությունների և բեղմնավոր աշխատանքով լի կյանքի համար անգամ ասես ճնշվում են աշխարհի առաջ,— այս է այն տպավորությունը, որ գործում է ուշադիր ճանապարհորդի վրա յուրաքանչյուր միաբան։

Այստեղ կյանքը պարզ է ու ձանձրալի լինելու չափ միակերպ, և սակայն այս արտաքին միակերպության տակ մի շարժուն, հարատև աշխատանքով բռնված ներքին գործունեություն կա, որ փախցնում է ձանձրույթը, և որ իր առաջին մղումը ստացել է երկու դար առաջ և ընթանում է ինչպես մի լավ կազմված և լավ պահված մեքենա։ Ինչ՞ը կարող է անել մի լավ կազմակերպված, ինքնավար, հավաքական մարմին, որ ղեկավար ունի մի քանի սերունդների կտակած մեծ արադիցիաները։ Այս համեստ մարդիկը, որոնց երիտասարդները ծերեր են և ծերերը՝ երիտասարդներ աշխատանքի մեջ, որոնք իրանց անհատականությունը հերքելու այդ զարմանալի կորովն ունեն և փառքը հեգնելու վսեմ հպարտությունը, այս խեղճ կրոնավորները, որոնք գիտնականներ են, իրանց անցյալի հորիզոնի վրա Մխիթարն ու Բագրատունին ունեն, իսկ աչքերի առաջ՝ Ալիշանը. դեպի այդ մեծ դեմքերն են գիմում մի համարյա ինքնարույս մղումով. մի տեսակ բնազդով, ուր փառասիրական ոչ մի նշույլ կարծես դեր չէ խաղում, և ձգտում են, որովհետև այլ կերպ վարվել չեն կարող, ինչպես որ մեղուն չէ կարող մեղրահյութ չհավաքել, թռչունը չէ կարող չերգել, ալիքները չեն կարող իրար չհրհրել։

Իսկապես սա մի հանդուգն փորձ է իմ կողմից, նրանց հոգեբանության թեկուզ հեռավոր ուրվագծերը տալ, որովհետև այս սև հագած մարդիկ մի-մի մութ առեղծվածներ են, չեն խոսում իրանց մասին, չեն բաց անում իրանց հոգին, չեն գանգատվում, չեն ուրախանում, չեն տխրում, չեն հրճվում, որ մատնեն իրանց ներքինը։ Սրանք հարթ, հավասարակշիռ, անհույզ բնավորություններ են։ Սրանց ճանաչելու համար պետք է գուցե տարիներ անցկացնել վանքում, ատոիճանաբար դիտել, սկսած այն երկու խիստ կրոնական-գիտական շրջաններից, որոնցով անցնում է յու-

բաքանչյուր միաբան, նախքան կնդուղավոր խեղճ փիլոնն իր ուսին ձգելը։

Այնտեղ, այն երկու դպրոցներում են դարբնվում այս ընավորությունները։ Երեխան ընկնում է այնտեղ 10—12 տարեկան և Մխիթարյան միաբան դառնալու համար պատրաստվում է մինչև իր քսան տարեկան դառնալը. այնուհետև միայն, ըստ իր կամքի, մնում է կամ հեռանում վանքից, բայց ով որ մնում է, նա լուծվում է Ուխտի ամբողջության մեջ, դաղարում է աշխարհին և իրան պատկանելուց.— զարհուրելի մի զոհաբերություն, որ որքան անախրոնիզմ է այս ժամանակներում, նույնքան ապշեցուցիչ երևույթ է և պատկառանք է ազդում, ինչպես ամեն մի անձնվիրություն որևէ մեծ դաղափարի համար։ Ներկա դեպքում մեծ զոհը բերվում է դիտական-կրթական մեծ միտիայի համար,— ուրիշ raison-d'être[6] այդքան խոշոր զոհաբերության համար անհասկանալի կլիներ։

Սրանք ներկայով ապրող մարդիկ չեն, այդ նրանց քիչ է հետաքրքրում. նրանք անցյալն են փորփորում և այդ անցյալի ուսումնասիրությամբ հեռավոր ապագան պատրաստում։ Սա մի գործողություն է, որ՝ որքան զարմանալի է իր բեղմնավորությամբ, նույնքան տարօրինակ է իր մեթոդով և որի միակ բացատրությունը պիտի փնտրել վանականության մեջ։ Այսպես է կրոնական ազդեցությունը. այս աստիճան դործնական, կենսական նպատակ ունեցող Ուխտն անգամ ավելի դեպի հետ, քան թե առաջ է նայում։ Հայ ժողովրդի ժամանակակից կյանքը խորապես հուզող խնդիրներն անգամ, իբրև եռուն խնդիրներ, որոնք բացարձակապես անմասն չեն փոթորկալի կրքերի ազդեցությունից, շատ էլ չեն զբաղեցնի Մխիթարյաններին։ Նրանք, ասես վախենում են այն բոլորից, ինչ որ ցնցում է, ինչ որ տակնուվրա է անում. փոթորկի ժամին ծածկվող մարդիկ են, բայց երբ փոթորիկն անցնի, երբ արևը վերստին փայլի, ոչ ոք նրանց պես չէ կարող ցույց տալ կայծակի հարվածի տեղը, ոչ ոք նրանց պես ճիշտ չի իմանա զոհերի թիվը, այրված տները, ոչ ոք այնպիսի մանրամասնությամբ չի նկարագրի աշխարհավեր արհավիրքը։

Իրանց անդրդվելի դիտական-բարոյական հասկացողություններն ու կարծիքներն ունեն, բայց չեն վիճում, խույս են տալիս մանավանդ՝ իրանց դիտական պաշարը փռել խոսակցի առաջ, ավելի ուսանում, քան ուսուցանում են, նույնիսկ այն դեպքում, երբ իրանց դիմացինը ըստ ամենայնի ավելի ցածր է կանգնած, քան իրանք։ Միայնակյաց կյանքի արդյո՞ւնք է այդ արդյոք, թե՞ համեստության, ես տրամադիր եմ կարծելու թե՛ մեկը և թե՛ մյուսը. համեստ են և իբրև խսկական դիտուններ, և իբրև խսկական կրոնավորներ։ Միակ դեպքը, երբ Մխիթարյան վարդապետը սիրով է բերան բաց անում, այդ այն է, երբ պետք է պատմել Մխիթարի, Ջամչյանի, Ավգերյանի, Բագրատունու, Հյուրմյուզյանի մասին. իրանց համար խոսքերով ժլատ այդ մարդիկ պերճախոս են, երբ խոսում են իրենց նախորդների, անցյալ սերունդների առաքինություններից ու գործունեությունից։ Մարդ հաճույք է զդում այդ ժամանակ լսել նրանց պատմությունները, հիշողությունները. հափշտակվում են՝ իրանց հայրերի մեծությամբ սքանչացող զավակների պես։

Այս կղզին իր շինություններով, իր պարտեզով, իր միաբանությամբ՝ մի բան ունի, որ դրավում է իր խորհրդավորությամբ և որ բանաստեղծորեն դյութիչ է, մանավանդ երազող հոդիների համար։ Այս հինավուրց կամարների տակից սավերի պես մեղմով անցնող սև-սև պատկերները, այս փոքրիկ, սևազդեստ աշակերտները, որոնք չդիտես որտեղից են հայտնվում և ուր ծածկվում, այս սիրուն պարտեզն իր մուգ նոճիներով, դասական պարզությամբ սաղարթապատ վերանդան, հինավուրց եղևինները, որոնք բլրաձև ոստերով զանդակատան հետ ձգվում են դեպի իտալական մշտածիծաղ երկինքը, ծովի ալիքների շշնջյունը՝ դիշեր թե ցերեկ, այս բոլորը Ս. Ղազարի կղզին դարձնում են մի տեսակ լեգենդային, դյութական վայր։ Չեմ զարմանում, որ Բայրոն, բանաստեղծական այդ մեծ և անհանդիստ ոդին, իր թախծալից, ցավոտ երազների համար այս մենաստանն ընտրեց իբրև ապաստան։

Առաջին րոպեին թվում է, որ սրանից ավելի բախտավոր անկյուն չէ կարող լինել հարատև ապրելու համար, և

որ միաբաններին կյանքը այստեղ նախանձելի է։ Բայց երբ մարդ օրերով է ապրում այստեղ, երբ մոտիկից զգում է այս ձանձրալի միակերպությունը, երբ տեսնում է միաբանների տաղտուկ ապրումը, նրանց միօրինակ կյանքը, որ հույզերի աղբյուր չունի հնշտանալու համար, որ արտաքին աշխարհի աղմկող երևույթներն իրանց չար ու բարիով չեն գալիս երբեք խռովելու այդ սպանիչ խաղաղությունը, ուր կյանքի գոյության պայքարը չկա, որը մարդկային ճակատագիրը հնշտացնում է կրքերի բախումով, այն ժամանակ մարդ չէ կարողանում մի առանձին հարգանք չզգալ դեպի այս մարդիկ, որոնց կյանքը անձնազոհության, և այն էլ՝ խաղաղ, առանց ցնցումների, առանց փառքի, առանց վայելքի անձնազոհության մի անվերջ շարք է։

Ես քաղաքից կղզին էի գալիս առավոտյան ժամի 8-ից հետո. այդ ժամանակ վանական կյանքն արդեն իր կատարյալ եռման մեջ էի գտնում. վարդապետներից ո՛րը դրպրոցում, ո՛րը լիցեոնում, ո՛րը խմբագրատանը կամ տպարանում, ո՛րը սեղանատանն իր գործերով զբաղված է. ով էլ որ որոշ պաշտոն չունի, փակված է իր խցիկում, կռացած է գրասեղանի վրա, քրքրում է մի հին ձեռագիր, կամ եվրոպական մտքի մի նոր արտադրություն։ Այդ ժամին դժվար է պարապ միաբան ճարել. մարդ ցավում է նույնիսկ, երբ դեպի հյուրն ունեցած իրանց քաղաքավարի վերաբերմունքը ստիպում է դրանցից մեկն ու մեկին զոհել իր թանկագին ժամերը, մի բան, որ նրանք անում են քաղցրությամբ և առանց դժկամակության, չնայելով որ հյուրընկալ ունեն։

Հետաքրքրական է, մանավանդ, այդ հյուրընկալը։ Այցելուի նավակը կանգ է առնում վանքի դռանը. իտալացի ծեր դռնապանը վազում է վերև, թրխկացնում է մի դուռ. անմիջապես մանուկի փութկոտությամբ դուրս է գալիս մի ծերունի, ճերմակ մաղերը թափթփված պարանոցին, ճերմակ միրուքը փռած կրծքին, դեմքը խիստ գրավիչ, կարծես հին նահապետներից մի բան է մնացել այդ դեմքի, այդ մեծ, սիրուն աչքերի վրա։ Նա կռացած է, և այնքան նիհար, որ կարծես վերարկուի մեջ էլ մարմին չունի, այլ

մի սավեր է, որը շարժվում է։ Ջնայելով իր ծերության՝ նա քայլում է արագ, երբեմն իր ընթացքի մեջ օրորվում է, կարծում ես թե հիմա կընկնի, հիմա պատին կկպչի. բայց ոչ, նա չէ ընկնում, այլ քայլում է շտապով, ցած է իջնում, ձեռքերը խաչաձև կրծքին ծալած՝ ներկայանում է սպասող այցելուին, որպես մեղադրյալն իր դատավորին և կարծես ներողություն է խնդրում, որ ծերության պատճառով չկարողացավ ավելի շուտ հասնել նրա սպասին. ապա նա առաջ է ընկնում և սկսում է այդ օրական ով գիտե քանի անգամ կրկնվող և վաղուց, շատ վաղուց, տաբիներ առաջ արդեն ձանձրալի դարձած միակերպ շրջագայությունը։ Առանց դժկամակելու, առանց ընչին ձանձրույթի արտահայտության, առանց հոգնածության նշույլ ցույց տալու, անփույթ՝ այցելուի տարիքին, դիրքին, սեռին, մի առաքելական հեզությամբ, մեկիկ-մեկիկ ցույց է տալիս մենաստանի բոլոր բաժանմունքները, պատմում է, բացատրում բոլորն՝ ինչ հարկավոր է, ինչ որ հարցնում են, ինչով հետաքրքրվում են, և այն՝ զանազան լեզուներով։

Այցելուն, իհարկե, խիստ գոհ է մնում, որ այս տակավ, այս կծկված ծերունին կարողանում է նրան բավականություն տալ իր մայրենի լեզվով. այնքան, և ուրիշ ոչինչ։ Այցելությունը վերջանում է, ճանապարհորդը հեռանում է շնորհակալությամբ, հիացած վանքից, գրատունից, տպարանից, պարտեզից, ամբողջ կղզուց, բայց շատ անգամ չէ էլ իմանում, որ այդ հյուրընկալը, այդ կծկված ծերունին, հայ ժողովրդի սիրելի նահապետն է, ինքը՝ Ալիշանը։ Օ՜, ես երբեք չեմ տեսել ավելի վեհ տեսարան, քան այն, երբ այս մեծ ծերունին հեզությամբ առաջնորդում է զանազան այցելուների, որոնք երբեմն շատ փոքր են, համեմատելով այդ պատկառելի դիտնականի, մի տարաբախտ հայրենիքի այդ մեղրաշուրթ երգչի հետ։ Ամեն մի այցելությունից հետո նա կրկին շտապում է իր խուցը, փակվում է, և վերսկսում ընդհատած աշխատանքը, որպեսզի մի ժամ հետո կրկին գրիչը ցած դնի, կրկին ներքև վազի, իր տատրակի քայլերով, և անցնի նույն միջանցքներով, նույն սենյակներով, կրկնի միևնույն բանը, և այսպես անվերջ։

Երբ ես իմ զարմանքն ու ցավը հայտնեցի խեղճ ծերունուն տված այսքան նեղության համար, ինձ հավատացրին, թե շատ անգամ են ասել, խնդրել, որ իր ուժերը խնայի, բայց նրա պատասխանը եղել է՝

— Ես ծեր եմ, դուք երիտասարդ եք, մտքի կորով ունեք, մեղք է ձեր ժամանակը, թող ինձ խանդարեն, իսկ դուք աշխատեցեք։

Անցնում եմ առանձին միաբաններին։

Հ. Ալիշանը, միաբանության ավագագույն անդամը, որ ընդհանուրի հարգանքի և խնամքի առարկան է, այժմ 82 տարեկան է. նա վանքում անց է կացրել 72 տարի, անդուլ ու բեղմնավոր աշխատանքով լի մի կյանք, որ քիչ է մնում դար լինի. սա մի երևույթ է, մի փաստ, որ մենակ բավական է պատկառանք ներշնչելու դեպի վաստակավոր միաբանությունը. օտարներն անգամ հիացմունքով են նկատում այդ և այս զարմանալի գործունեության մեջ հայ ժողովրդի կենսունակության, քաղաքակրթական հատկությունների մի փայլուն ապացույց տեսնում։

Երեկ, վանք գնալիս, ծովափին սպասող նավակի մեջ նստած գտա Հ. Ալիշանին. նա այդտեղ էլ կարդում էր։

— Հա՛յր Նահապետ, քաղա՞ք եք եկել։

— Այս տարի առաջին անգամն է,— եղավ պատասխանը։

Այո՛, հայր Նահապետը քաղաք չէ գնում. նա Վենետիկի բնակիչ չէ, այլ Ս. Ղազարի, ուր նա ապրում է իր երևակայական հայրենիքում, իր կարմրիկ Ավարայրում, ուր ավա՜ղ, դարերը անընդհատ թարմացնում են արյունը, իր Տղմուտի ափերում, որ հազար հինգ հարյուր տարի է՝ էլի վճիտ չէ հոսում, նա ապրում է իր զարմանալի խոհերով, որոնք թանձրանում, ծնունդ են տալիս «Այրարատին», «Սիսուանին», «Շիրակին», ուր ավերակների ծուխն ավելի թանձր է, քան թխպոտ երկնքի ամպերը, և ուր արցունքն ավելի առատ է, քան ջրաշատ Հայաստանի աղբյուրների ջրերը։ Վաղ առավոտից նա ոտքի վրա է և երեքալով եկեղեցի է գնում, մրմնջելով Շնորհալու «Զարթիքը» և ուշ գիշերին

անկողին է մտնում, մրմնջալով իր այրված սրտի զեղումները.

«Ո՜վ դու ի վաղուց մոռացված հայրենիք,
Ո՜վ դու իմ սրբոտիս անմոռաց տեղիք...»[7]

Բայց էլ շրթունքները չեն զորում ասել... «Ահա գարունիկդ եկել է, հասել...»։ Մեծ ծերունուն ես տեսա իր սենյակում, ո՛չ իր խցում. եթե աչքովս չտեսնեի նրան իր բնակարանում, դժվարությամբ պիտի հավատայի, թե մեր Նահապետն է այնտեղ ապրում, այն աստիճան պարզ, անպաճուճ էր այդ սենյակի սարք ու կարգը. ո՛չ մի տարբերություն սովորական սարկավագի սենյակից,— նույն անկողինը, նույն հասարակ աթոռը, նույն սեղանը. ավելին այստեղ միայն գրքերն են։ Բոլոր նրանք, որոնք կրոնական պարզությունից, համեստությունից, առաքելական վարք ու փառքից են խոսում, բայց ճոխ վերարկուների աստառն էլ ատլասից են կարում, և իրանց փարթամ սենյակներում քայլում են պարսկական փափուկ, թանկագին գորգերի վրա, արժե որ գեթ մի անգամ այցելեն այս մեծ մարդու բնակարանը և տեսնեն, թե գաղափարի մարդը ինչպե՜ս կարող է կարվել աշխարհի վայելքներից, և թե ինչպե՜ս հնարավոր է խոսքի և գործի ներդաշնակությունը, երբ առաքինության քարոզները կեղծ շրթունքների մրմունջ չեն միայն, այլ աղնիվ սրտի խորքերից են բխում։

... Ցերեկվա ուղիղ 12 ժամին բոլոր միաբանները եկեղեցի են իջնում աշակերտների հետ. դասում, սեղանի առաջ, աջ ու ձախ տեղ են բռնում աշակերտները, որոնք միևնույն ժամանակ երգիչներն ու փոխասացներն են, իսկ նրանցից ներքև, դասը բաժանող վանդակապատի առաջ՝ միաբանները։ Սկսվում է ճաշու ժամերգություն՝ իր անվերջ «ողորմյա»-ներով, որ քաղում են ցածր ձայնով, բայց արագ-արագ։ Ժամերգությունից անմիջապես հետո դիմում են դեպի սեղանատուն. ամենքը հավաքվում են սեղանատան նախասենյակում՝ սպասելով արքահորը, որը շուտով հայտնվում է. ողջույն է փոխանակվում, նա առաջ է անցնում, մյուսները հետևում են և լռությամբ գրավում իրանց տեղերը։ Արքահայրն օրհնում է սեղանը մի բավական եր-

կար օրհնությամբ, որ լսում են հոանկայս, ապա նստում են, և սկսվում է ճաշը կատարյալ լռության մեջ. միայն լսվում է մի աշակերտի ձայն, որ վերնատնից կարդում է Ս. Գիրքը։ Մխիթարյանների ճաշը նույնպես ուշադրավ է, ինչ ասել կուզի, որ վանական ճաշ է, ճոխությունից շատ հեռու, բայց դրա հետ միասին մաքուր է, սննդարար և ախորժելի։ Ճաշից հետո նույն կարգով դուրս են գնում, զարձյալ սպասում աբբահորը նախասենյակում, որի հետևանքից հետո ետ են գալիս սեղանատուն իրանց մի-մի բաժակ սուրճը խմելու։ Ինձ թվում է, որ Մխիթարյանների սուրճի այդ կարճատև ժամը նրանց կյանքի ամենաուրախ, ամենահաճելի ժամերից մեկն է. այդ ժամանակ է, որ նրանք ուրախ-ուրախ խոսում են, կատակներ անում, մի խոսքով զվարճանում, ինչպես որ կարելի է զվարճանալ Ս. Ղազարում։ Քիչ հետո, այլևս ոչ ոք չի երևում, ոչ սեղանատանը և ոչ պարտեզում։ Լռությունը տիրում է չորս կողմում և աշխատանքը վերսկսվում է, և այսպես օրեր ու տարիներ, և այսպես ամբողջ կյանքը։

▲

Այսպես էլ ապրեց Նահապետը։

Ապրեց... բայց ինչպե՞ս. կրծքում ցավերի մի ծով, հոգում մեղմ, մխացող մի կրակ, կնճռոտված ճակատի տակ հազար ու մի խոհեր, ծածուկ, նվիրական խոհեր, որ նա չէր պատմում, չէր հայտնում, չէր էլ երգում։ Ավարայրի բլբուլը լռել-մնջել էր, բունավեր թռչունը երբ է երգել։

Վեց ամիս առաջ էր, երբ ես նրան տեսա, այդ փխրուն, անմարմին դարձած ծերունուն, այդ ավերակների ողին, որ սավերի պես անձայն, անշշուկ անցնում էր կամարների կիսախավարի միջով, ամեն տեղ մաս ածելով իր հետ մի ցավ, որ տարիների տակ կուացած նրա մեջքը չէր էլ կարողանում կրել. նա շատ էր ծեր, և բեռը շատ էր ծանր։ Ես տեսա նրան իր սենյակում, իր անշուք խցում, ուր ամեն ինչ նրա մեծությունն էր պատմում, և ուր իր ծեր գլուխը, այն հին խոհերից խոսող ալիքները թաղած գրքերի մեջ

աշխատում էր։ Հոգնած, ուժասպառ ծերունին կարծես հևիհև էր աշխատում. նա նմանվում էր այդ ժամին մի ճրագի, որ մոտ է մարելու, որի ազոտ բոցը սակայն դեռ երերվում, պլպլում է և ջանք է անում վերջին թափով, վերջին անգամ լուսավորել իր շուրջն իջնող խավարը մի օրհասական, գունատ փայլով։ Մոտալուտ վախճանի դիտակցությունը չէր կարողացել ղարթնեցնել նրա մեջ անհայտի առաջ դողացող մահկանացուի այն խորին անտարբերությունը դեպի աշխարհի իրերը, որ հատուկ է փոքրիկ հոգիներին։ Անհայտի և իրականի մեջ նա գտել էր այն հրաշալի կապը, որի անունն է իդեալ, և դեպի այդ իդեալը, դեպի հավիտենականությունը տանող ճանապարհը նրա համար էլ անդունդ չուներ. նա աշխատում էր խաղաղությամբ։ Վերջին գործն էր գրում՝ «Հայապատումը» և շտապում էր, ինչպե՞ս էր շտապում։

— Այս ալ վերջացնեմ, այնուհետև խաղաղ կերթամ,— ասաց նա մելամաղձիկ ժպիտով, և այդ ժպիտը նրա ծեր ալիքներով պսակված վշտոտ դեմքի վրա սքանչելի էր, նա մի բան ուներ իր մեջ, որ այլևս երկրային չէր։

Հայրենիքից հարցրեց, լուրեր առավ, մխիթարական չէին, լռեց, քարշ ձգեց երկար թերթերունքները մեծ բիբերի վրա, կախեց ճակատը։

— Հայր Նահապետ, ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ վերադարձիս։

Նա մի բոպե մնաց լուռ, մտախոհ։

— Ասա, որ ես կաղոթեմ նրանց համար։

Եվ որքա՜ն վիշտ կար այդ խոսքերի մեջ։

Նահապետը աղոթում էր իր հայրենիքի համար, աղոթում էր աշխարհի համար, նրա լայն սրտում ամենքը տեղ ունեին։ Ես հաճախ տեսա նրան եկեղեցում. սև կնդղավոր փիլոնը շորացած ուսերին ձգած՝ դողդոջուն քայլերով նա ամենից հաճախ էր հայտնվում եկեղեցում. ժամերգությունը դեռ չսկսված՝ եկեղեցու մի կիսախավար անկյունում նա ծունկի էր շոքում սառը քարերի վրա, ճերմակ մազերը փռում հատակին և մրմնջում էր կիսաձայն։ Ահա այստեղ էր ասում այն, ինչ թաքցնում էր ամենից, այստեղ էր պատ-

մում իր մեծ սրտի ցավերը, այստեղից էր աղերսում կամ բողոքում, այստեղ էր լալիս ու հառաչում և եկեղեցու վերից, նվիրական կամարների տակից նայում էին վար անցյալ երջանիկ և դժբախտ օրերի վկա նախնիքը, նայում էին և զարմանում կարծես, որ իրանցից մեկը դեռ ապրում է, որ իրանցից մեկը դեռ լալիս է. արդարև, Ալիշանը հին դարերից մոռացված մի նահապետ էր աշխարհիս վրա։ Նայելով քարերի վրա դողդողացող այդ սև սովերին, ես ակամա հիշում էի իր խոսքերը.

— Ասա, որ ես կաղոթեմ նրանց համար։

«Աղոթիր խեղճ ծերունի, աղոթիր,— մտածում էի ես,— ոչ ոք քեզ չափ չսիրեց, ոչ ոք քեզ չափ չլացեց, և այժմ էլ ոչ ոք քեզ չափ չի աղոթում հայրենիքի համար. իսկ այդ հայրենիքն էլի սևավոր է, դարձյալ դժբախտ. հի՞ն, շատ հին է այդ աղոթքը, ցավերն են նոր, ցավերն են թարմ...

Այդ ցավերը վերջ կառնե՞ն արդյոք»։

ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Գետի մը աշխարհագրական դիրքն և որպիսությունն իմանալու համար, պետք է ճանչնալ անոր ծագումը. այսպես ալ Ալիշանի բանաստեղծական որպիսությանը լավ հասու ըլլալու համար, հարկավոր է նախ ճանչնալ բանաստեղծի ներքին տրամադրությունները. երկրորդ՝ միջավայրն ու պարագաները։ Ներվի ինձ ուրեմն համառոտիվ գծել զանոնք։

Մեծ բանաստեղծի կենաց գարունն ու ամառն տեսած չեմ, այլ՝ աշունն ու ձմեռը։ Սակայն ասոնք իսկ ենթադրվածին պես տխուր չէին։ Անոր՝ հայրենյաց և հասարակության հոգածությենեն տխրած դեմքին վրա իսկ հաճախ ծաղկած կտեսներ ամեն ոք՝ անմեղ ու համակամ սրտի ղվարթությունն ու ժպիտը, մանավանդ երբ հասարակաց խրախճանքի մը, կամ եկավոր մը ըլլար։ Այդ անմեղ ու անուշակ ժպիտը միայն՝ կերևցներ զինքը աշխարհիս ամենեն ղվարթ մարդը և իրեն կգրավեր ամեն սիրտ, սփոփանք մը կազդեր։ Ալիշանի բնաբանական ու հոդեբանական արտադրիչներն իսկ,— լուսանկարք ու մանրավեպք,— տխրության և ուրախության խառնուրդ մըն են և երբեմն ալ կարծեք թե անոր անցած մանկությունը կպատկերեն. սակայն ես կփափագիմ հետևյալ միջադեպին մեջը ներկայացնել զայն։ 1889 թվականին,— Պոլիս երթալուս առթիվ,— հ. Ալիշանի կողմեն նամակ մ'ունեի հանձնելիք իր ծերագույն եղբորն ու ազգիս նշանավոր հնագետ Սերովբե Ալիշանին՝, որ և ընդունեցավ զայն, իբր հեռավոր սուրբի մը եկած նշխարքը։ Չեմ գիտեր, թե ի՞նչ գողտրիկ բան գրած ու դրած էր մեծ բանաստեղծն այդ թերթին մեջ,— որ իր սրբատեն փրթած էր,— զի իսկույն ուրախության արտասուք

վազցուց ծերուն աչքերեն ու հիշեցուց անոր իր մանկութիւնը։ Երբ ես երանի կուտայի ծերուն այնպիսի եղբայր մը ունենալուն համար, նա խորին հառաչով մը բացաւ իսկուն Ալիշանի կեանքի գեղեցիկ առաւոտը. ա՜խ, վարդապետ, եղբայրս ինձի պես չէր. անիկա անմեղուկ ու սիրուն հրեշտակ մը էր։ Բոլոր իր մանկութեան օրերուն մէջ մեկ անգամ մը միայն հանցանք գործեց, բայց ան ալ իր համեստութեան արդար վրեժխնդրութենեն մղված. այսինքն՝ օր մը մեզի խաղակից աղայոցմէ մեկն՝ անհամեստ խոսք մը զուրցեց, որուն եղբայրս ապտակով մը պատասխանեց, սարսափեցնելով այն փոքրիկ սրիկան։ Բայց կհիշեմ, վերջեն այնքան ցավեցաւ ու տխրեցաւ, որ քիչ մնաց կհիվանդանար, հիմա ըրածդ աղեկ էր ըսելով, մոռցնել չտայինք իրեն։

Իսկ մեր ունեցած տեղեկութեան համեմատ, նույն անմեղության տիպար հրեշտակն էր և մնաց Ալիշան, բոլոր իր կենացը մեջ, թեպետև շորս եղանակներ անցան անոր վրայեն. վասն զի մարդկային կիրքերն ու արյունը չէին կարող փոխել այն մաքրափայլ հոգին ու հայելանման սիրտը, ուր ի միասին կընակեին ու կհրճվեին աստուծո և մեծ հավատացյալի հոգին, երկնային հավատքը կամքի համոզման, ու պայծառ հույսը՝ ջերմ սիրո հետ։ Նամանավանդ,— ներվի ինձ ըսել,— թե ասոնցմով է, որ կմաքրվեին Ալիշանի մեջ նույնիսկ բնության արարչագիր իղձերն ու կիրքերը. զի զանոնք ոչնչացնելու համար ժառանգած չէր բնությունն ու բանաստեղծությունը, այլ աղնվացնելու ու բարձրացնելու։ Հ. Անդրեաս Ծովիզյանի[2] պես հոգեկիր վերակացու մ'էր, որ կոռոզեր և կզարդարեր այս չքնաղ պատանվո հոգևոր պարտեզը։ Հայագիտությունը կարծարծեր ու կբորբոքեր ուսմանց հետ՝ նույնպես հայրենասիրության սուրբ հուրը. իսկ հ. Միքայել Զեմպերեկճյան[3]՝ հին ու նոր լեզուներովն և գեղեցիկ դպրություններն, իր բազմապիսի թարգմանություններովն ու թատերախաղերովը։

Ալիշան բացի բարեպաշտութենեն՝ նաև բնության ամենագեղեցիկ ու ամենաքնքուշ ձիրքերով օժտված մարդն էր։ Բնականապես ինքն իսկ,— ուրիշ մահկանացուներու

պես,— ուներ իր հատուկ զգայումները, մանավանդ թե ամեն մարդե ավելի ջղային էր ու դյուրազգաց։ Կյանքի հմայքին հետ՝ արյունն իսկ կեռար ու կզեռար իր կրակոտ ու ջղուտ երակներուն մեջ։ Ուներ առանձին ըմբռնումներ ու նախապաշարումներ, որոնց հակառակող խոսք մը կամ արգելք մը՝ դյուրավ կշիկներ ու կշառագուներ զինքը։ Սակայն այդ զգայուն և կրակոտ մարդը կարծեք թե կրոնավորական վիճակին հետ՝ իր այն բնությունն ու կիրքերը նվաճող ու աղնվացնող շնորհքն ևս երկնքեն ընդունած էր, հավիտենական անլուծանելի դաշինքով մը, և մինչև կենաց վերջին վայրկյանը հաստատուն պահելու. բան մը, որ քիչերուն տրված է։ Այդ շնորհաց շարժումովն՝ անոր մարմինը ավելի զգեցած կտեսնվեր զհոգին, քան թե հոգին՝ զմարմինը։ Այդ շարժումով է, որ կախորժեր նա խեղճ զգենուլ, խեղճ ուտել, խեղճ ապրիլ, կարոտելոց նպաստելու համար։ Շատ դժվար էր պաշտոնեից համար, անոր ձեռքեն հին գրքյակները կամ կոշիկներն առնուլ ու նորը տալ։ Այդ շնորհքով է, որ ոչ միայն կքակեր կրից ու նասիրության խոր պարիսպները, և զանոնք անձնվիրության ու եղբայրասիրության կվերածեր. այլև կխեղդեր նախանձի, ատելության, ոխակալության ու անարդ վրեժխնդրության հիդրաներն ու իժերը, որոնք այլոց սրտերու հետ՝ զործերն ևս կուտեն ու կապականեն հաճախ։ Վերին աստիճան ատող էր ցուցամոլության, փառասիրության ու նենգության, վասնզի այս ամենայն հակառակ կտեսներ առատնահրաման «Այո»-ին և «Ոչ»-ին։ Ալիշանի սիրտն այնքան պարզ և մաքուր էր այդ և նման ուրիշ հրեշներե, որ փոքրիկ դովեստ մը իսկ այնպես կխրոշեր և կխուսեր, ինչպես թրոչունը՝ հավահալածեն։ Խոնարհությունն ու հրեշտակային մաքրությունը անոր ամենեն ավելի սիրելի ու պաշտելի առաքինություններն էին։ Շատ կախորժեր մեծ մարդը մանկական պարզությունն ու անմեղությունը. անոր համար մեծի ու փոքրի հետ խոսած ժամանակ, անմեղ ու ամչկոտ տղու կերպարանք կառնուր։ Ի դեպ կհիշեմ, որ եղած էին իրեն այցելող ազգային կոկոզաբաններ, որք այդ կերպարը տեսնելով հավակնորեն կվարդապետեին իրեն գիտ-

ցածնին, որոնց նա,— իբրև չգիտցող,— համբերությամբ կմատդրեր։ Իսկ օտարներեն մեկն, երբ օր մը իր հետ վանքը շրջած ժամանակ՝ մեծ զովեստով և հետաքրքրությամբ կհարցներ, թե Հ. Ալիշանն ինչպե՞ս է, նա վրա կբերեր, թե ողջ է, բայց ցնդած։

Ինքը թեպետև նախանձահուլզի մը չափ վրեժխնդիր հասարակաց կարգապահության և պատվին և կուզեր, որ խանդարիչները խրատվին. սակայն մեծապես կզգուշանար մահացնելու[4] որևէ մեկը։ Զինքը չճանչցող և պարսավողներուն ոչ միայն հակակրություն մը չէր ցուցներ, այլ երբեմներբեմն ձեռքը հասած պարսավագրերն իսկ ուրախությամբ ուրիշներուն կհաղորդեր, ինչպես ասոնց հակառակ իրեն շռայլված զովեստներն ալ զգուշությամբ կծածկեր։ Զինքը սիրող ազգային երիտասարդներեն մին՝ անգամ մը ոտանավոր նամակ մը հղած էր իրեն, ուր իր անչափ սիրո ցուցցին հետ, խանդոտ ներբողյաններ ևս շռայլած էր։ Այս բանս նախապես իմացած ըլլալով երիտասարդ վարդապետներն, երեկոյին ճեմարանը հավաքված պահուն՝ խնդրեցինք, որ այդ նամակն Հ. Ալիշանեն ուզվի և կարդացվի ի լուր ներկայից. և կարդացված ժամանակ,— լավ կհիշեմ,— մեծ մարդն այնքան շառագունեցավ ու մահացավ, որ ամենքնիս կարեկից եղանք. և անկեց վերջ կզգուշանայինք որևիցե զովասանական բառ կամ բացատրություն հանելու բերաններնեն։

Հույժ գթած էր և կարեկցող զրկյալներուն. ինչպես անձավները նապաստակաց, այսպես և Ալիշանի սիրտը բաց էր այսպիսյաց. և մերձավորներու պես հեռավորներ ևս անպակաս կդիմեին հոն։ Եվ զինքը ամեն բանե ավելի հաշող ու մաշող ցավն այն կըլլար, երբ չէր կրնար դարման տանել անոնց ու սփոփել զասոնք։ Որչափ որ իր անձնական շահուն կամ պատվին պահանջող չէր, այնչափ ալ ուշադիր էր ուրիշներուն։ Մեկ խոսքով՝ աննախանձորեն ցանկացող էր ամենուն հաջողությանն և հառաջադիմությանը. ուստի երբ անոր հասած կտեսներ իր կրոնակից եղբայրները և կամ ծանոթները, չէր դանդաղեր միշտ գրավոր և գյուտավոր կերպով հայտնել իր սրտի ուրախությունն ու խընդակցությունները։ Ներունիները կհարգեր ու կգուրգուրար վրանին, իբրև իրեն կենաց ընկեր և երկնալու ճանապարհին ուղեկիցներ, մանավանդ հեռվեն եկողները, զորոնք տեսածին պես՝ սրտի անպատմելի ընդարձակումով մը կձայներ ու ոտքի կանգնած կողջագուրեր։ Իսկ երիտասարդները կսիրեր՝ որպես իր կյանքին ու գործունեության հավիտենական հաջորդները։ Անոնց տարաժամ մահն Ալիշանի վրա այն տպավորությունը կթողուր, ինչպես արեգական բոլորական խավարումը կենսունակ բնության վրա։ Թե Մուրատ-Ռափայելյան վարժարաններում և թե վանքը եղած ժամանակ երկուտասնյակներ,— մարդկային կենաց այդ ծաղիկներեն,— Ալիշանի ջերմ բազուկներուն և շնչին մեջ տված են իրենց վերջին շունչը և թառամած։ Սակայն անոնց մեռնելեն առաջ՝ ինքը քանի մ՚անգամ կմահանար սրտով և մեծ անծանոթին մեջ կերթևեկեր. վերջապես, իբրև մխիթարիչ հրեշտակ՝ անոնց հոգին արարիչին կավանդեր։ Որևէ սրտաշարժ վիպասանությենե վեր էին Ալիշանի այդ վայրկյանները. անկարելի է նկարագրել այն առթիվ անոր կրած հուզմունքը, զորս տեսեր և լսեր եմ։ Վերին ատիճանի գիտող էր և բնությունը բովանդակ անոր դիտողության առարկա։ Տեսնելու բան էր,— պարտիզի մեջ,— նոճիներու և դափնեվարդերու տակ անոր խորհրդավոր կերպով շրջիլն ու խորհիլը։ Բայց ամենեն ավելի բույսերն ու ծաղիկները կհրապուրեին զինքը, մանավանդ իր կենաց ձմռան մեջ. որոնցմե դիշեր-ցերեկ, ամառ ու ձմեռ կպահեին իր սենյակին մեջ։ Երկու տարի առաջ ինձ ՄԱԳՆՈԼԻԱՅԻ թերթ մը տված էր, որուն վրա 1850 թվականը նշանակված էր. այս Իտալիա ըրած ճամփորդության այնքան հիշատակներեն մին էր[5]։ Այս իսկ պիտի հիշեմ միշտ, զի մեռնելու նախընթաց օրը օլեանդրի կոկոն մը գտած էր, խամրած ծաղկին առընթեր, զոր հաղթանակով մը ուրիշին ցուցնելով կանցներ ուրախ։ Ո՞վ գիտե, ինչ կմտածեր... Նոյեմբերի 21-ն էր։ Նորեկ մանուկներու կենդանագիր պատկերներն երկայն տարիներ քովը պահելեն վերջ, չէր մոռնար գտնել և հարմար առիթին անոնցմով իրենց անակընկալներ պատճառել։ Կան հազար ու մեկ մանրավեպեր,

որք եթե գրի առնվին, սավար էջեր պիտի գրավեն։ Ահավասիկ Ալիշանի ներքին տրամադրությունները։

Բնությամբ մեր բանաստեղծն այնքան խոսուն չէր, որքան խոհուն և զգայուն։ Թե՛ բնական և թե՛ գաղափարական կարգի մեջ ամեն բան մեծ և հրաշալի կտեսներ, կրզգար կըմբռներ։ Սովորական մահկանացուներուն չնչին երևցած բանն՝ իրեն համար անսովոր տպավորություններու և խոկումներու առիթ էր և աղբյուր։ Ով դիտած է հայելանման լճին վրա հեղանաղ սահող կարապն ու ծառաստաններու մեջ թնածող ու թաքնվող սոխակը, անշուշտ, պիտի չվարանի ըսել, թե բնությամբ տարբեր ձիրքերով օժտված արարածներ են. սակայն երկուքին ևս զգացման գեղեցիկ աշխարհը՝ սեր, նույնն է, թեպետև մեկն իր կարապանձև պարանոցի շնորհալից նազանքովը, խորաշույշ ու անուշ նայվածքովն ու խորհրդաղգած լռությամբը կարտահայտի իր այդ ներքին աշխարհը, իսկ մյուսն՝ իր կրակուրոց բնությամբը, երազաշարժությամբն ու օդը և անտառը հնչեցնող դայլայլիկներով։ Ահա այսպես ալ կըրնանք ըսել Ալիշանի համար, որ՝ թե՛ իբրև հավատացյալ և թե՛ որպես բանաստեղծ, սեր կարտահայտեր գերազանցորեն, բյա այն աստվածային, բյա համամարդկային կամ բնական. և կարտահայտեր թե՛ իր երիտասարդ, խանդոտ հասակին և թե՛ ծերությանը մեջ։

Ալիշան իր արտաքինովն իսկ բանաստեղծության արտահայտություն էր. անոր նոճի նման ուղղաբերձ ու նուրբ հասակը, հերասլանած գլուխն ու ապողոնյան ճակատը, խոշորագեղ ու անուշահայաց աչքերը՝ Մելպոմենեական անուշ տխրությամբ մեկ կողմեն և մյուս կողմեն ալ անմեղության ժպիտովն,— իբրև լուսաստվերներով,— օծված դեմքը, ինչպես նաև խոկումներից և զգացումներու մեջ ընկղմած լռությունն, այլովք հանդերձ, կհորինեին բուն բանաստեղծի դիմագծությունը, ներքին ու արտաքին տրամադրությունները։

...Որոնց ծանոթ չեն Ալիշանի ընդարձակ հարաբերություններն ազգայիններուն և օտարաց հետ, բնական էր, որ անոր աղդեցությունն ալ նվազ համարեին,— ինչ-ինչ տեսակետերով,— հայրենասիրությամբ և հանճարով իրմե վար եղող ազգային ուրիշ գործիչներու ունեցած ժամանակավոր ու մասնական աղդեցությենեն. սակայն ես միայն վերջին 30 տարիներու մեջ տեսածներես ու լսածներես դատելով, կրնամ վկայել, որ Ալիշանի՝ ինչպես արտաքին վերաբերություններն, այսպես ալ աղդեցությունը շատ ավելի տևական, օգտակար ու մեծ է քան ոմանց։ Իրավցնե՝ մեկ կողմեն իրեն եկած և իրմեն ալ անոնց փոխանակված հազարավոր թղթակցություններն,— բյա զրականական, բյա հայագիտական և քաղաքական հարցերու նկատմամբ,— և մյուս կողմեն ալ իրեն տեսության եկող և խորհուրդ հարցնող այցելուներու անընդհատ ընթացքը՝ մեր բսածը լիովին կհաստատեն։ Գուցե անոր ներշնչած խոհական խորհուրդներն ամենուն հավասարապես համոզիչ չբլլային, սակայն ամենքն ալ լիուլի վստահություն ունեին իր վրա, որպես անկեղծ հայրենասիրի, բարեխիղճ մարդու և պաշտելի նահապետի։ Եվ ասոր համար է, որ ինչպես անոր սենյակն ուխտատեղի մը դարձած էր Վենետիկ եկող ազգայիններուն, այսպես և հավատարիմ սիրտը կմնար իբրև պահպանողական խորհրդարան մը՝ բազմապիսի գաղտնյաց. որոնցմե ոմանք եթե իրեն ուրախություն կպատճառեին, ոմանք ալ մեծ ցավ և սրտմաշուք էին։ Ալիշանի,— տեսակցության առիթով տեղի ունեցած,— մանրամասները խիստ շատ էին և սրտաշարժ, բայց ես անոնցմե մեկը կուզեմ մեջ բերել այստեղ, որուն ես ինքս ականատես եղած եմ և մեծապես հուզված։ Թուրք և ռուս պատերազմեն երկու տարի վերջ՝ զարարաղցի մը Վենետիկ հասնելուն պես, ուղղակի Ս. Ղազար կուգար. և վանքի սենյին վրա ոտքը դրած պահուն, անհամբեր կերպով հ. Ալիշանը կհարցներ. սա անդրագետ ղինվորական մը էր, որ հիշյալ պատերազմին մեջ երեք գնդակ ընդունած էր թշնամիե ու երեքն ալ մարմնույն մեջը դեռ դպահեր, բսելով, որ «Ցանկի գնդակը հայի ոսկորին չի հասներ»։ Նա դեպի Վիեննա ուղղված էր, գանոնք հանել տալու համար։ Եվ երբ ծերունի Նահապետը տեսավ, ծնրադրած անոր առջևը՝ ստեպ-ստեպ ծունկերն ու ձեռքերը համբուրելի չէր դադրեր։ Կհուզվեր փոխադարձաբար նաև ալեզարդ Նահապետն, այդ քաջարի

ու ջերմ զորականի անսովոր ցույցեն և շուտով ձեռքեն բռնած՝ կրազմեցներ իր քովը։ Սակայն նա չէր դադրեր կրկնել ու երեքկնել նույնը, տենդոտ սիրահարի մը զորովով և կըսեր. «Հ. Ալիշան, այս ժամս, այս վայրկյանս ինձ համար անմոռանալի պատի մնա. վասնզի չմեռած քեզ տեսա, և իմ ուխտը կատարվեցավ»։ Կհիշեմ, երբ Նահապետն այդ նոր ժամանակաց Հայկակին ձեռքեն բռնած կհիշեցներ Սյունեցիներու դարեր ու ժառանգական քաջասրտութիւնն և մատուցած ծառայութիւնքը, նա կկոչեր իսկույն. «Հ. Ալիշան, Ձեր ազամանդյա գրիչը մեր պողպատյա թուրեն ավելի կարող և ազգօգուտ գործեր տեսել է»։ Ահա այս մանրավեպս հայտնի կտեսնվի, որ եթե Ալիշանի գրական գործերը չի ուսումնասիրող մեկն իսկ այսչափ ազդված էր անկե, ապա ուրեմն, ո՞րչափ ավելի մեծ և խոր եղած պիտի ըլլա անոր ազդեցությունն՝ այն բյուրավոր ընթերցողներուն և գնահատողներուն վրա, նամանավանդ հայ ժողովրդյան մեծամասնության վրա։

Այո՛, այդ մեծ ազդեցության արձագանքն էր՝ որ նախ՝ համին 1890՝ անոր հիսնամյա գրական գործունեության հոբելյանին առթիվ կհնչեր անխտիր բոլոր հայ հասարակության սրտի խորքերեն՝ դեպի Ալիշան, ինչպես 1901 թվականին ալ, դեպի անոր դամբանը։ Փույթ չէ, որ մեկը ուրախության, իսկ մյուսը՝ խորին ցավոց էր արտահայտությունն. զի երկուքին առարկան ևս Ալիշանն էր, որ ողբացյալ ըլլալեն առաջ՝ հայության մխիթարիչն եղավ, նույնիսկ անոր վերջին աշխարհավեր լքման ու տարակույսի ժամանակը։ Քիչեր եղած են Ալիշանի պես բախտավոր. զի Հոմերոս, Դանտե և Միլտոն իսկ՝ իրենց մահվանեն շատ և վերջը ճանչվեցան և հարգվեցան. իսկ մեր Նահապետը, նույնիսկ իր կենդանության ժամանակ։ Այս բանս ինչպես կուզեն թող մեկնաբանեն կրիտիկոսք, մեր կարծիքով հավատարապես պատվաբեր է թե՛ իրեն և թե՛ գինքը մեծարել գիտցող ազգին։ Ահավասիկ մեծ բանաստեղծին, հայրենասիրին ու հավատացյալի նկարագիրն, որ ինչպես արեգակ եղավ ԺԹ դարու երկրորդ կիսում ծաղկող բանաստեղծներուն, նույնպես պիտի ըլլա, կհուսանք, նաև Ի դարու հայ սերնդյան։

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Եթե համայն հայության մեջ անխտիր բոլոր խավերում անկեսալի ենթարկվեր թե ո՞վ է ԺԹ դարու ամենախոշոր, ամենահեղինակավոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խոսքը, կամքը, տենչանքը ու մտորումը համայն հայության բաղձանքի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լիներ, անշուշտ, միաձայն երկու մարդի վրա կանգ կառնեին՝ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ (մինչև կաթողիկոսանալը) և ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ։ Իսկ սրանցից որի՞ն կտար առավելությունը, միաձայն ձեռնպահ կմնար և չէր կարող ձեռքը խղճին ասել, Խրիմյան Հայրի՞կ թե Հայր Ղևոնդ Ալիշան։ Խրիմյան Հայրիկ և Հայր Ղևոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսարար, բուժիչ ու սննդարար ճառագայթներ եղած են, համայն հայության սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կոռոզ կոփողներ։ Գրագետը կարդացել է սրանց հրաբորբոք երկերը, անգրագետը լսել է աշուղի տաղերը, Խրիմյան Հայրիկին ու Հայր Ղևոնդ Ալիշանին ձոնված, և հավատում-պաշտում է նրանց իբրև իր հայրենիքի նախախնամություն։ Սակայն ճակատագիրը խլեց Խրիմյան Հայրիկից նրա իսկական կոչումը։ Բերեցին ՎԵՀԱՓԱՌ տիտղոսը ավին, Վեհարանի չորս պատի մեջ շղթայեցին, պահանջելով, որ չինչ եթերում սավառնող ԱՐԾԻՎԸ թառ լինի Աթոռի վրա։

Եթե հայր Ղևոնդ Ալիշանին էլ բազմերախտ Մխիթարի ժառանգները պսակեին թագով և Գերապայծառ տիտղոսով, գուցե Հայր Ղևոնդ Ալիշանն էլ ունենար մարդկային, անհատական թերություններ։ Բայց Մխիթարյան գիտնական կաճառը իմացել է փայփայել, խնամել, սպասավորել ու մխիթարել իր անզուգական քանքարը և ոչ թե թագով նրա

սուրբ գլուխը պսակել, Գերապայծառ տիտղոսը տալ։ Եթե մի խումբ մարդիկ ուղարկած չլինեին Երուսաղեմ Խրիմյան Հայրիկին, և հնչակյանները մի փոքր վաղ կատարած լինեին իրանց որոշումը՝ Երուսաղեմից Խրիմյան Հայրիկին Լոնդոն փախցնելով, նա չէր կաթողիկոսանալ, և կմնար այն խոշոր դեմքը, որ էր ըստ իս, է և այժմս, ու հավերժ էլ պիտի մնա ՄԵՍ, պաղարյուն պատմագիրների մանրազնին նրա հույժ կենսալից սիրտ ու հոգին ուսումնասիրելուց հետո։

▲

Խրիմյան Հայրիկի, նրա «Վարագի», «Արծվի Վասպուրականի», և Հայր Ղևոնդ Ալիշանի, Ս. Ղազարի, Մխիթարյանների անունները ես լսել եմ օրորոցիցս, և իմ ձեռքին են եղել սրանց նվիրական հատորները, երբ կարողացել եմ գրկել։

Թող լեգենդ չհամարե ընթերցողը խոսքերս։ Ղարաբաղում մեր տունն է եղել առաջինը, ուր մտել են Ս. Ղազարի և Վարագա հրատարակությունները։ Նախորդ դարու կիսից հայրս էր Կ. Պոլսից ջերմ բարեկամ Խրիմյան Հայրիկին և նրա Վարագին տպարանական մեքենա նվիրողը ու մեծ ծավալով այդ մեքենայի արտադրությունները, մանավանդ Ղարաբաղում տարածել տվողը։ Միաժամանակ Վենետիկին և Լայպցիգին էլ շատ մոտ և երկար տարիներ այդ տեղերի հոյակապ հրատարակություններով մեր տունը հեղեղող։ Տատյանների օժանդակությամբ Մխիթարյանների հրատարակություն՝ մեծ երկրագունդ և աղյուսներից երկուական օրինակներ կային մեր տանը։ Եվ սրանք իմ խաղալիքներն էին։ Մեր տան ընդարձակ բակի մի անկյունում էր ծաղկանոցը, ես դեռ ութ տարեկան գծել էի Հայաստանի քարտեզի նման, քաղաքները մի-մի փոքրիկ ածու։ Եվ երբեք չէի կարող ըմբռնել Հայաստան առանց Ս. Ղազարի կղզու։ Բուրաստանիս մի անկյունում Վարագն էր, մեխակ ծաղիկներով, մյուս անկյունում Ս. Ղազար, ճերմակ ծաղիկներով՝ շուշաններով։ Իջման սուրբ տաճարը իր վաղարշապատ

մայրաքաղաքով՝ կարմիր վարդերով։ Բոլորն էլ ունեին իրանց դրոշակները, անունները վրան մակագրված։

Եվ ինչպես այսօր հիշում եմ. ինձ մի կաքավ էին նվիրել, թևերը կարտել ու բակի հավերի պես ազատ էր։ Բայց երբ թևերը բանում են, սա փորձում է թռչել-փախչել, սակայն բարձունքից ընկնում է ու մահանում։ Ես շատ արտասվեցի, սգացի, և վերջը ընկերներիս հավաքեցի, վեղարս դրի (կատակ չհամարեք, մանուկ օրերիս ես վեղար, փիլոն, գավազան ունեի և սիրում էի եկեղեցական հանդեսներ կատարել, քարոզ խոսել), հանդիսավոր հուղարկավորությամբ կաքավիս մարմինը Սուրբ Ղազարի շուշանների տակ ամփոփեցի։ Ճերմակ մի քար էլ վրան գցեցի։ Եվ երկար-երկար տարիներ մնում էր այդ դիրեղմանը, մինչև թաթարը ածուխ ու մոխիր դարձրավ աննման Շուշին, Ղարաբաղի թագ ու պսակ, հայության զարկերակը։

Ավելի ուշ, նախորդ դարում ուխտանական թվականների վերջերը, երբ Հ. Ղևոնդ Ալիշանի փայլուն Սիսվանը Թիֆլիսում տատցվել էր, Հ. Համազասպ վարդապետը մի առավոտ սրտնեղած եկավ ինձ մոտ։ Չթողեցի խոսքը շարունակել, ընդհատեցի, խնդրելով բոլոր օրինակներն էլ ինձ ուղարկել, որ կարճ օրերում սպառվեց։ Թիֆլիսում առաջին գնողը էր ամենաականավոր բժշկապետ, դարաբաղցի Գասպարյանցը և սա էլ իր դեղատոմսերի տեղ Հ. Ղևոնդ Ալիշանի այս սքանչելի ստեղծագործությունն էր պատվիրում անհապաղ հիվանդին բերել։

▲

Հոլովվեցին տարիները և առաջին անգամ 1889 թ. ժյուլ Սիմոնի հրավերով՝ Փարիզում, գրականագետների ժողովից հետո, անցա ինձ նվիրական Ս. Ղազարի կղզին։ Որպիսի՜ ոգևորություն. Հ. Ղևոնդ Ալիշան հենց ինքը եղավ ինձ առաջնորդ և լսեց թախանձանքս, որ երիտասարդ վարդապետներն ինձ ուղեկցին մատենադարան, թանգարան։ Սանդուխներով ինձանից առաջ էր բարձրանում։ Մենաստանում Բայրոնյան անկյունի մոտ՝ հյուրասիրվեցի վարդի քաղց-

բավենիքով, քաղցրահամ ըմպելիքներով։ Մինչև օրս էլ, կարծեք, ցոլում են իմ առաջ Հ. Ղևոնդ Ալիշանի հրաշագեղ արեգ-աչերի ճառագայթները։ Այդ օրը հենց այնտեղ մտքումս ուխտեցի հետևյալ այցիս մեծ հայրենասերին բերել սուրբ Մասսի լանջերից անթառամ ու համասփյուռ ծաղիկներից մի փունջ, Մայր Արաքսուց մի սրվակ ջուր։ Բայց ավա՜ղ, հետևյալ այցիս ես նրա սուրբ շիրիմը ցողեցի արտասուքներով։

▲

Երբ տոնվում էր Հ. Ղևոնդ Ալիշանի քահանայության և գրական գործունեության հիսնամյակը, ռուսահայության կենտրոն Թիֆլիս տարված էր կուսակցական անզուսպ պայքարով։ Ահա այդ օրերին գալիս է ինձ մոտ Ալեքսանդր Քալանթարը և հայտնում, թե Աբգար Հովհաննիսյանը արդեն պատրաստություն է տեսել և հայտարարելու է Հ. Ղևոնդ Ալիշանի հոբելյանի մասին։

— Է՜հ, ի՞նչ կա որ, թող հայտարարե,— պատասխանում եմ։

— Ո՛չ, ո՛չ, մերոնք Աբգարի հետ չեն մասնակցիլ։

Իսկույն կազմում ենք տոնախմբության ծրագիրը։ Հենց այդ երեկո գնում եմ ժողովարանի դահլիճները վարձում, կեսդիշերին գնում երգիչներին, մասնակցողներին, որոնց թվում այն ժամանակ Թիֆլիսում հյուր, Գամառ-Քաթիպայի մերձավոր ազգական, երգչուհի օրիորդ Գ.[3]։ Խե՜ղճ աղջիկը. մայրը վախենում էր անժամանակ հյուրանոցում իրանց սենյակի դուռը բախելիս։ Սակայն հետաձգել չէր կարելի, որովհետև սրանք Աբգար Հովհաննիսյանի էլ մոտ բարեկամներ էին և նա խոչընդոտն կլիներ օրիորդի մասնակցության։ Հետևյալ առավոտ, դեռ ոչ մի լրագրում լուր անգամ չեղած, Թիֆլիսի մեծ խանութներում, քիոսքներում կախված, պատերին կպցված էր մի խոշոր աֆիշ, Հ. Ղևոնդ Ալիշանի հոբելյանի տոնախմբության ծրագիրը։

Աբգար Հովհաննիսյան և յուրայինք մնում են շշմած, այնուամենայնիվ, առանց բացառության ամենքը ներկա են

գտնվում փայլուն հանդիսին։ Ալեքսանդր Երիցյանը փորձ է անում սեղանատանը տհաճ ցույց տարքել հանդեսը նախաձեռնողների դեմ, սակայն չի հաջողվում։ Բացի եվրոպական, ասիական երաժշտախմբերի, կային և Չիվան ու Հազիր ժողովրդական աշուղները իրանց խումբերով։

Երբ բոթաբեր հեռագիրը զուժեց մեզ հայրենասեր Նահապետի երկինք սլանալը, իսկույն մի մեծ ժողով հրավիրեցի իմ (Աղբյուր-Տարազի) խմբագրատունը։ Ներկա էին առանց բացառության Թիֆլիսում գտնվող բոլոր գրականագետները, մամուլի, արվեստի, բարեգործական-մշակութային, ազգային, հասարակական հաստատությունների ներկայացուցիչները։ Ժողովը, կամ ավելի ճիշտ, սգահանդեսը, տևեց մինչև կես գիշեր, պատվավոր նախագահությամբ ռահվիրա, ծերունազարդ բանաստեղծ Գևորգ Բարխուդարյանի։ Որոշվեց ի միջի այլոց, հանդիսավոր հոգեհանգիստ կատարել վանքի մայր տաճարում։ Սակայն թեմական առաջնորդ տ. Գարեգին գիտնական եպիսկոպոսը չթույլատրեց, և պատշաճ գտավ կաթոլիկաց եկեղեցում կատարել։ Այս վեճը սուր կերպարանք կստանար, եթե ես էլ համառեի։ Կրկին պատգամավորներ գնացին առաջնորդին, որոնց թվում բանաստեղծ Հովհաննես Թումանյանը մի բողոք-ոտանավորով, որ տպվեց Տարազում։ Այնուամենայնիվ առաջնորդի տեսակետը հարգվեց, հոգեհանգիստը կատարվեց հայ կաթոլիկ եկեղեցում, ուր ներկա էր և ինքը՝ հնագետ-գրականագետ հ. Գարեգին վարդապետը, Թիֆլիսի այն ժամանակվա առաջնորդ[4]։

▲

Այժմս գորշ ամպերով պատած վերածին Հայաստանը, կրակ ու արյունի մեջ, անկարող է մասնակցել հայրենասեր Ալիշանի հարյուրամյակին։ Սակայն կդադարին արյան հեղեղները, կբացվի կարմիր առավոտը և սրբազան հայրենիքի բոլոր ծայրերից՝ մայր Արաքսու, Տիգրիս և Եփրատի ափունքներից, Մասսի, Սյունիքի, Տավրոսի բարձունքներից,

Էջմիածնից, Սևանից, Տաթևից, Գանձասարից, Հաղպատից, Սանահնուց, հազարամյա նվիրական այդ վայրերից գունդ-գունդ թափորով համայն հայության բոլոր խավերը խունկ ու դափիններով կգան երկրպագելու և պսակելու ԱՆՄԱՀ հայրենատենչ երգիչ Ալիշանին և մատուցանելու հարգանք ու փառք սրբազան այն կաճառին, որ սնուցել ու խնամել է նրան։

Հավերժ պայծա՛ռ դարեր Ս. Ղազարի գիտնական Կաճառին։

ՂԵՎՈՆԴ ՏԱՅԱՆ

Հ. ԱԼԻՇԱՆ ՈՒ ՄԵՂՎԱԾԱՂԻԿ

Ծաղիկներու աշխարհին մեջ 1887-են ի վեր մեր բանաստեղծ Նահապետին մասնավոր ուշադրությունը դրված էր հատկապես Մեղվածաղիկը։

Ինչ որ կերևի՝ առաջին անգամ Հ. Մինաս Նուրիխան՝ վարդապետ լսեր է անոր գոյությունը Պոնտոսի գավառին շրջակա բլուրներուն վրա, մեղվանման գունագեղ տեսքով։ Այս պարագան այնքան գինքն հետաքրքրած էր, որ առիթ չէր կորսնցներ իր թղթակցությանց մեջ հարցումներ ընելու, տեղեկություններ ուզելու ու մինչև իսկ արմատներ խնդրելու։

Դյուրին է ենթադրել, որ այդ եզական բույսը իր բանաստեղծի հատուկ ուշադրության առարկան պիտի բլլար. Հ. Ալիշանի պատկերալից մտքին ու սրտին դաշնակավոր ցոլացումներուն պիտի կարենար հարմարապես միանալ նաև ծաղկին թովքը։

1885 թ. դեկտեմբերի 28-ին վերոհիշյալ վարդապետեն կխնդրեր Հ. Ալիշան արմատ մը այդ ծաղիկեն հետևյալ քնքույշ տողերով. «Առաքելաշիր պատեհիւ զարմատ և զծաղիկ զարմանալի մեղուածաղկին. ունիմք արդ ի պարտիզի (Ս. Ղազարու) մեղուանոց, գուցէ տեսանել զայն կամ մեղուածաղիկն կենդանատցի, կամ մեղուք մեր ծաղկեսցին»։

Բայց հարմար պարագան ուշ կներկայանա։

1887 թվականին Հ. Նուրիխան Ս. Ղազար նորընծայության մեկնող երկու պատանիներու միջոցավ ծաղկամանով կգրկե մեղվածաղիկը։ Ալիշանի ուրախությունը մեծ կըլլա. նորահաս մանուկներու ձեռքեն կառնու անմեղուկ ավանդը և իսկույն կենթարկե զայն իր անմիջական խնամքին, իբրև ծաղկադարման մը, մանավանդ թե ինքն իսկ կդառ-

նա ճիշտ անոր սիրահար մեղուն, ծծելու անոր խորհրդավոր թովքեն. և ո՞վ գիտե, իրարու առնելով ու տալով, ինչպիսի՞ քաղցր օշարակ կըմպեին անոնք իրարմե։ Անընդհատ կըխնամեն ամեն օր. անիկա՝ իր գրավոր աշխատանաց սթափումի պահերուն՝ անմեղ զբոսանք մըն էր այլևս, միշտ ակնդետ մնալով ցանկալի արդյունքի մը։

Այսպես ամիսներ խնամելի վերջ, նույնիսկ ձմռան դժնդակ օրերուն, մինչդեռ մերձավոր գարնանազվարճ եղանակին իբրև փոխարեն կսպասեր անկե նորաբողբոջ կենդանություն մը, հրապուրիչ տեսք մը, և ահա մահատնսիլ վիճակի մեջ կգտնե զայն, բոլորովին հակոտնյա բնության վերազարգումին։ Հուսաբեկ կըլլա Հ. Ալիշան մեղվածաղիկին այդ ավաղելի վիճակեն, ու կփութա ցաված սըրտով մը գուժել անոր մահը, որո պատճառ կնկատեր կասկածանոք նույնիսկ իր տարած խնամքը. «Մեղուածաղիկ բոյդ,— կգրե ան,— զողջոյն ձմեռն և զսկիզբն գարնայնոյնս մնացեալ դալար և ի նոյն չափ հասակի՝ յորում եհաս այսր, ի դէպ ժամանակի աճմանն՝ և մեռաւ. գուցէ իմն են յանցանք, զի շատ ջուր ետու. յուսամ յայլում ևս նուազի կամ զբոյսն ընդունել կամ զծաղիկն։ Ի միջի հողոյն երևեցաւ տկլոր անմազ անարմատ գնտիկ մի, որպէս փոքրիկ գետնախնձոր, և թողի անդ ի կեղակարծ յոյս յարութեան» (Նամակ առ Հ. Մ. Նուրիխան. 1887. Մայիս 12)։

Հ. Ալիշանի ՀԱՅԲՈՒՍԱԿԸ դեռ երկունքի մեջ էր այդ շրջանին. անիկա դեռ պատրաստվելու հետ էր ու լույս պիտի տեսներ տարիներ վերջ, այսինքն 1895-ին[2]։ Այս ծաղիկը լոկ բանաստեղծի վայել զրաղանքը կամ ժամանցը չէր եղած իրեն. անշուշտ այդ հատորին ապագա հեղինակը մոտեն կուզեր զայն ուսումնասիրել՝ անոր ասպնջականություն տալե առաջ իր երկասիրության մեջ՝ ուրիշ շատ մը բույսերու և ծաղիկներու կարգին, որոնց համար ամենուրեք դիմումներ կրներ, տեղեկություններ մը կխնդրեր, ինչպես գիտեն «Հայբուսակի» նախաբանը կարդացողները։

Մեղվածաղիկը՝ նախքան Ալիշանի գրքին երևումը՝ տարիներ առաջ կմտնե ուրիշ երևելի Մխիթարյանի մը՝ Հ. Մանուել Քաջունվո[3] հույակապ երկասիրության մեջ՝ այսպես. «CERINTHE =Մոմածաղիկ, կամ լաւ ևս՝ Մեղուածաղիկ.—Բուս. ծաղիկ ինչ յոյժ հաճոյական մեղուաց, որ և ասի MELINET». վերջնույս համար ալ կգտնե. «Բնկի բարեխառն և հարաւային կողմանց Եւրոպայ, համադիր և պարզ տերևօք՝ և ծայրաբոյս ողկուզաձև ծաղկամբք, որք հաճոյական են մեղուաց, յորոց ժողովեն զնիւթ մոմոյ»*։

Իսկ Հ. Ալիշան Հայբուսակին մեջ սապես կներկայացներ իր սիրասուն ծաղիկը. «Մեղուածաղիկ խոտեղէն մի՝ որոյ արմատն սոխ կամ տակ ունի, իսկ ծաղիկն պէսպէս գոյներով և ձևով մեղուի նմանութիւն ունի, որոյ համար այսպէս կոչեն Պոնտացիք»**։

---

* «Բառագիրք աստուածոց և գիտութեանց», հատ. Ա, Վենետիկ, 1891 թ., էջ 418, հատոր Բ, Անդ. 1892 թ., էջ 60։

** «Հայբուսակ», Վենետիկ, 1895, էջ 341։

ՎԱՐԴԱՆ ՀԱՑՈՒՆԻ

ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆԻ ՀԵՏ

Մտադիր չեմ այս նեղ էջերուն մէջ հայոց նահապետին կենսագրութիւնը և կամ գրական գործունեութիւնը հիւսել։ Հայ ազգն արդէն կճանաչէ այդ երկուքն ալ, ևս ավելի երկրորդը։ Այլ կուզեմ ի մի ամփոփել տակաւ հիշողութեանս խորշերեն՝ անձնական հիշատակները, զոր թողած է ինձ այդ մեծ դեմքը, հավիտենականութեան սեմը կոխելեն առաջ։

Զինքը կճանաչեի հեռուն միայն, ցորչափ աշակերտ էի Սուրբ Ղազարու ուսումնարանին մէջ, որ զմեզ կբաժաներ արտաքին միաբանից հետ անմիջական կցորդութենեն։ Կճանաչեի զինքն յուր ՆՈՒԱԳՔՆԵՐԵՆ և ՀՈՒՇԻԿՔՆԵՐԵՆ, որոնցմով կսնուցանեի պատանեկան ուղեղս դյուրաբորբոք։ Կճանաչեի յուր շոր, բարձրահասակ ու պատկառելի անձեն, որ կանգնած էր միշտ աչքերուս դիմաց՝ եկեղեցվո ու ճաշարանին մէջ, ուր կդանվեր ամբողջ հասարակութիւնն ի մի հավաքված և յուր խորախորհուրդ ու միշտ ամփոփ աչքերեն, որոնք կարծես կաղոթեին անընդհատ և ամենուրեք և որոնց գույնը չեմ նշմարած բնավ աշակերտութեանս շրջանին։ Կճանաչեի, վերջապես, այն մեծ ու խոր ակնածանքեն, որով կշրջապատեին զինքը մեր դաստիարակներն և ուսուցիչները մեզ հետ խոսակցութեանց մէջ։

Տարի մը, կարծեմ 1886-ին էր, դեկտեմբերի մեջ կատնեինք սուրբ Եվստաթիոսյանց տոնը և մեր վերակացուին անունը (Եվգինեոս)[1] և այդ առթիվ հավաքված էինք վերակացուին սենյակը։ Ես դեռ պատանի էի այդ ժամանակ. և ոտանավոր մաղթանքներ իրարու կհաջորդեին իմ ավելի հասուն ընկերաց կողմանե։ Հանկարծ դուռը բացվեցավ թեթևակի և անոր վերին եզերքեն ներս սպրդեցան գույգ մը

ճենճղուկներ ու սկսան թևածել սենեկին մեջ, մագիլներեն կախված ունենալով մի-մի փոքրիկ պիտակներ։ Մեր ուրախության չափ չկար։ Թռչուեցանք անոնց հետևեն ու վերջապես բանտեցինք մեր ափերուն մեջ. քակեցինք պիտակները, որոնք կկրեին Հ. Ալիշանի գիրը, զույգ տողերով.

1. «Յիսուս ըզմեզ դանկի միոջ եառ ի վաճառս»։

2. «Քաջի գնողի՝ մեք ճոուղեմք ըզգանձն անճառս»։

Ցնծագին լսեցինք՝ այն ժամանակ մեզ համար դեռ խրթին այդ տողերը, որոնք սակայն կզգայինք, թե մեր տղայական թոթովանքներեն շատ ավելի կարժեին։ Գգվեցինք բանաստեղծին այդ թևավոր սուրհանդակները, բացինք պատուհանն ու արձակեցինք, որպեսզի երթան շարունակեն «Ճոուղել զգանձն անճառս»։

Քանի մը տարի վերջ արդեն երիտասարդ ուսանողներ էինք։ Եվ երեկո մը սուրբ Վարդանանց տոնախմբությունը կկատարեինք վարժարանի հանդիսարանին մեջ, ուր հրավիրած էինք Աբբահայրն ու քահանայից դասն ալ։ Սրբազան խորանիկ մը պատրաստած էինք, որ կենտրոնը կշողշողար Ավարայրի նահատակին ծանոթ կենդանագիրը, շրջապատված լույսերով և քաջին արծաթափայլ վահանովը, նիզակովը, սրովը, աղեղովն ու կապարճով, զոր պատրաստած էին մեր ձեռքերը մեծ խնամքով։ Համակ քաջություն, համակ հայրենասիրություն կբուրեր այդ բազինը սրբազան։ Ու մեր շրթներեն կհոսեին հրեղեն ճառեր, քերթվածքներ, երգեր, բոլորը շարագրված Ղևոնդի ու Եղիշեի լեզվով։ Եվ ես կդիտեի Հ. Ալիշանը, որ կծկված յուր աթոռին մեջ, բազուկներն ամփոփած լանջաց վրա ու մխրճած թեղանյացը մեջ, ակոսաբեկ նիհար ու լայն ճակատը կախ և խորասույզ ձյունաթույր ալյաց ու խոհերուն մեջ, աչքերը կրկնափակ կնքած կոպերուն և ակնոցին կափարչաց ներքև, կարմիր Վարդանա երանգը նկարված ցամքած այտերուն վրա, կմատներ սոսկալի փոթորիկը, որ կխոովեր այդ պահուն յուր հայրենապաշտ հոգվույն ալիքները։ Կզգայինք հպարտությամբ, որ մեր երիտասարդության բոցով մրրկեր էինք «Ո՞նց գաս իմ լուսնակ»-ի և «Ցանշուք ի ծագս»-ի ոսկեշուրթն հին երգչին սիրտը[2]։ Հաջորդ օրը

նվեր կընդունեինք կոճակաձև մանր կոլահատով լի տուփ մը, զոր Հ. Աթոռակալն էր ղրկեր «Տղմուտի ավազեն»։ Մեր հաղթանակը կատարյալ էր։

Քիչ անգամ լսած եմ Հ. Ալիշանի բանախոսությունները։ Տարի մը, երբ Աբբահայրը բացակա էր վանքեն, նա խոսեցավ տարեգլխոն հորդորը միաբանությանս։ Ես դեռ պատանի, չէի կարող լավ գնահատել յուր խոսքերը. բայց կհիշեմ, որ ազդող խորհրդածություններ բրավ մարդկային երեք հասակներու մասին։ Սակայն խոր տպավորություն մը կրեցինք ես և ընկերներս անոր շորս ճառերեն, զորս խոսեցավ առանձնապես մեր քահանայական ձեռնադրության հոգևոր պատրաստության առթիվ, ցույց տալով պերճախոս և իմաստալից լեզու մը. և յուր ոսկի իմաստներեն դեռ կմնան մտքիս մեջ, երեսունչորս տարիներե վերջ։ Իմ նախկին խոստովանահայր և հայ մատենագրության պատմիչ Հ. Գարեգին Զարբհանալյանի մահեն հետո, որ բարեպաշտ ու եռանդուն խոսող մ'է, ինձ խոստովանահայր ընտրեցի զՀ. Ալիշան և մխիթարություն ունեցա ստեպ լսելու յուր խոսքերը։ Համառոտ, ազդու և սփոփիչ էին անոնք։ Յուր թողած «Ճառք հոգևորք»-ը որ տպագրությամբ ալ լույս տեսած են[3], զմայլելի և անմրցելի կոթողն են յուր աստվածասեր հոգվույն, հոգևոր պերճախոսության և մարդկային սրտին անդնդոց խուզարկու իր խորաթափանց մտքի ալքերուն։

Իսկ ով որ առիթ չէր ունեցած լսելու զինքը հրապարակավ, պիտի համարեր զայն այն գիտուններեն, որոնք գեղեցիկ կդրեն, բայց խոսիլ չեն գիտեր։ Յուր կենաց կանոն ըրած էր ներանձնությունն ու լռությունը։ Անպակաս էր քահանայից ընկերությենեն այն առօրյա կամ պարբերական առիթներու մեջ, ուր ըստ վանական սովորության, միասին կդտնվեինք։ Քանի մը վայրկյան միայն կմնար, լոկ սովորությունը հարգելու համար. և բնավ չէր խառնվեր մեր շաղակրատանց, բայց կուգեր, որ մենք զրուցեինք ու զվարճանայինք, մինչ ինք, ձեռքերը թաղած թեղանյաց մեջ, լռիկ կճեմեր, քիչ անգամ մոտենալով մեզմե միուն կամ մյուսին, և ըսելով կարևոր բան մը, միավանկ և ամենեն սակավաթիվ բառերով։ Յուր կերպը լեզվի խնայող կըներ զմեզ ալ իրեն հանգեպ, որուն կմոտենայինք կարևորին համար միայն։

Այդ լռակեցությունը ժուժկալությա՞ն համար էր արդյոք կամ շատ խորհող մարդոց հատկությո՞ւնը, թե անոր մեջ մեծ բաժին մը ուներ յուր խառնվածքն ալ։ Շատ անգամ խորհած եմ այս մասին և համոզված վերջին պատճառին եմ։ Զղայլին էր վերին աստիճանի և դյուրագրգիռ, թեպետ յուր բարկությունը տեսած չեմ բնավ։ Սրտնեղության վայրկյաններուն կկարմրեր, կվրդովեր դեմքն ու կլռեր։ Գիտեր իշխել յուր անձին, և ազոր համար անհրաժեշտ տեսած էր ամփոփել լեզվին ասպարեզը։ Յուր հնագետ եղբայրը Սերովբեն՝ ճանչցա, միևնույն կազապարեն ձուլված և շատ ալ բարի, բայց զուրկ հարապատին բարոյական ուժեն։ Համբավավոր էր անոր դյուրաբորբոք և միանգամայն դյուրաշեջ ցասումը։ Օր մը յուր քով էի. ծեր ու հիվանդ նրստած էր անկողնին վրա։ Բարձին տակեն ծխագլանիկ մը հանեց և հս փութացի առնուլ մոտակա լուցկետուփն ու վառել։ Այսքան այլայլեցավ ու բողոքեց, որ ես վախցա թե հանկարծամահ լիներ և իսկույն իրեն հանձնեցի լուցկետուփը։ Այդ մարդուն անդրանիկ ու համարյուն եղբայրն էր հեղն Հ. Ղևոնդ, որ գիտցած էր նվաճել ու հպատակեցնել ջիղերը մտքին։

Վաղահարույց էր, և գիշերվան երրորդ ժամին արդեն եկած անկողնեն, մինչդեռ քունը փակ կպահեր տակավին հասարակության աչքերը։ Ու պարուրված փիլոնին ծալքերուն մեջ, աղոտ լապտերիկ մը բռնած կրծոց վրա, մենաստանին սրահներեն կանցներ ստվերի մը նման, խրստակրոն, առաքինի և ջերմեռանդն վանականության այդ ոգին, ու կերթար տաճարին դեռ անլույս կամարներեն վերառաքելու յուր անդրանիկ աղոթից և ըղձից խունկերը։ Յուր աղոթքը խորասուզում մ'էր յուր անձին մեջ. և յուր պատարագի պահուն կանչատվեր երկրես, ու կընկղմեր մատուցած մեծ խորհրդույն անհասանելի հատակները. ինքն իսկ խորհուրդ մը կդառնար։ Սրբազան նշխարի մը պես պահած էի երկար տարիներ և հետո թանգարանապե-

տին հանձնեցի անոր լապտերիկը, որ քսանհինգ տարի առաջնորդած էր յուր անհողդողդ քայլերուն, և որոն ապակիները ծխեն ու մթեն անթափանց դարձած էին։

Սիրահար էր բնության, և ձմռան մեջ գարնան կապտեր անհամբեր։ Ամեն տարի հունվարի սկզբներն ուշադրությամբ կխուզարկեր ու կգտներ վանքի հարավային կողմը՝ մկնականչ կոչված մանրադիտական կապույտ ծաղիկը նորածին և հրճվագին կցուցներ մեզ, ըսելով. «Գարունը մոտեցա՛վ»։ Տարի մը դիպվածով ես դուռ նախքան զայն՝ դեկտեմբերի վերջերը և ձեռքս բռնած՝ փութացի ավետիս տալ իրեն։ Զարմացավ ծաղիկին կանխելուն վրա, և զգացի, որ այդ մեծ մարդը քիչ մը տխրեցավ, առաջնությունն իրմե խլած լինելուս համար։

Մեծ բարեկամ էր անասնոց, այն բարեկամությամբ, որ հատուկ է բանաստեղծ զգայուն սրտերու։ Կատու մը կար Թուխ, որ առանձին մտերմությամբ մը կապված էր անոր հետ և ամեն օր ճաշարանին մեջ իրեն սեղանակից կլիներ։ Ամեն նոր պնակ հասնելուն՝ առաջին թաթիկները կդներ սեղանին վրա, կնայեր պնակին, կնայեր Հ. Ալիշանին, խորհրդակցելով կերակրին արդար բաժանման մասին. և յուր բաժինն առնելով, ուրախությամբ կքաշվեր մեկուսի, անուշ ընելու։ Հետ ճաշին բանաստեղծին կապտեին ուրիշ բարեկամներ։ Բուրը հացի միջուկով լիցուն՝ դեպի սենյակը կշտապեր, որո պատուհանին առջև յուրմե առաջ հասած էին արդեն ճնճղուկներու կայտառող երամ մը։ Պարտիզին կտեսնեի յուր սպիտակ գլուխը, որ պատուհանի սեմին վրա կփշրեր հացը, մինչ թռչնիկները կխնդալին ցնծությամբ իր շուրջ։ Հետո մեկուսի կկանգներ, կդիտեր հաճությամբ անոնց խրախճանությունը։ Կկարծեի տեսնել Նոյ նահապետը տապանին դռան առջև։ Հետո պարտեզ կիջներ, սպիտակ թաշկինակով գլուխը ծածկած, ու գիրք մը ձեռքին մեջ, և կսկսեր յուր ընթերցախառն ճեմը։ Կատուն, որ պարտիզին դռան քով իրեն կսպասեր անպակաս, ճեմակից կլիներ անոր, թիկունքը կամար շինած, ագին անկած ու փաղաքուշ հպումներով։ Բանաստեղծին ոտքերը մերթ կանգ կառնեին՝ ավելի ասպարեզ տալու համար անոր

քծնումներուն։ Եվ երբ հոգնած՝ պետք կզգար պահ մը հենվելու կզզվույն պատին, վեր կցատկեր կատուն, կդառնար աջ, կդառնար ձախ, դունչը, փորն ու ձեռը քաշքշելով անոր գրքին, սպիտակ մորուքին ու ցայտուն քթին առջև, և խափանելով ընթերցումը. որուն բանաստեղծը կպատասխաներ ներողամիտ ակնարկով մը։

Սակայն քան անասնոց՝ ավելի բարեկամ էր յուր հղբայրակցաց. ամենուն կրսեմ։ Չէր կարելի ճշտել՝ զո՞վ ավելի կսիրեր, և ուսկի՞ց կսիրվեր ավելի մեր միաբանության մեջ։ Ամեն մարդ իրավունք ուներ այդ պատիվն իրեն վերագրելու։ Կենդանի սուրբ մը կհամարեինք զինքը։ Քան ժուժկալ լեզուն՝ յուր կյանքը կազդեր մեր վրա։ Յուր ձեռաց մեջ ավելի հաճախ հոգևոր, քան ուսումնական գրքեր կտեսնեինք՝ թե սենեկին մեջ և թե դուրսը և չէի հասկանար, թե ե՞րբ կդիպեր յուր երկոց սուվար ու բազմազումար հատորները։ Յուր կենցաղավարությունն անսաղլուտ էր և տյավորիչ։ Ոչ զոք չէր վիրավորեր. ոչ միայն հանդեպ անհաճո վարմունք չէր ցուցներ։ Իբրև գրաքննիչ՝ կջնջեր Բազմավիպին ինչ որ թեթև մ'իսկ կրնար խայթել օտարները։

Յուր մշտատակ աչքերը նույնիսկ քայելու պահուն,— և յուր քայլերն արագ էին միշտ ու հտեւեն հասնիլը դժվարին,— աջ կամ ձախ չէին դառնար կամ տեսներ և շատ քիչ անգամ յուր կոխած գետինին կնայեին։ Ինքն յուր անձին մեջ կապրեր միշտ և ինչ որ կըներ կամ կրսեր մեկ երբեմն, յուր Աթոռակալի պաշտոնին գիտակցութենեն թելադրված կրներ[5]։ Յուր աչքը համբուրել չէր տար. և եկեղեցվո մեջ արարողական աջահամբուրի պահուն ձեռքը կկարկառեր, ծածկած փիլոնին ներքև։ Բնավ ոպասավորություն չէր ուզեր ընդունիլ. ինք կհոգար անձամբ ինչ որ հարկավոր էր սենեկին մեջ, գոր ինքն իսկ կավլեր ու կմաքրեր։ Որևէ գրական տեղեկություն երբ խնդրեինք յուրմե «կուտամ» կրսեր. և հետո բազմահատոր ՀԱՅԿԱՐԱՆԵՆ[5], որ յուր պատրաստած աղգային ուսմանց շտեմարանն էր, կհաներ խնդրված ծանոթությունը, թղթի կտորակի մը վրա կնշանակեր ու կտաներ կհանձներ խնդրողին, առանց խոսելու նույն նյութի մասին։

12—Ալիշանը ժամանակակիցների հուշերում

Ցուր խոնարհությունն ու պարզասիրությունը կգերազանցեր քան զամենն երևակայություն, ինչպես միաբանության՝ նույնպես և արտաքին աշխարհի առջև։ Ծանոթ է Իտալիս հանդուցյալ Մարգարիտա թագուհվույն մտերմությունը Մխիթարյանց հետ։ Ցուր մեկ այցելությանը տեսնելով զՀ. Ալիշան, խնդակցություն հայտնեց անոր պատկառելի երկասիրությանը համար։ Հին Հայաստանի տեղագիրը շփոթված՝ պատասխանեց. «Վեհափառ տիկին, իմ աշխատությունս խաղալիք մ'է, նման անոր, որով կատուները զվարճանան»[7]։

Անդամ էր եվրոպական երեք կաճառներու։ Ցենայի համալսարանն ալ զինք իմաստասիրության պատվակալ վարդապետ անվանեց, զոր փութացեր իմացուցեր էր իրեն հայագետը Գելցեր[8]։ Հասավ վկայագիրը թավշապատ շքեղ գլանի մը մեջ, զոր Հ. Ալիշան չուզեց տեսնել և ընդունիլ սենեկեն ներս, ու մեր ձեռքը թողուց։ Այդ առթիվ չայասեղան մը պատրաստեցինք, որուն չմերժեց մասնակցիլ։ Եվ հաղորդեց, թե Համալսարանին պատասխաներ է այս ավետարանական խոսքով. «Զի՞նչ ելէք յանապատն տեսանել. եղէ՞ն շարժուն ի հողմոյ»։

Հոս կհիշեմ իր քահանայության հիսնամյա հոբելյանը, որ տոնվեցավ 1890-ին։ Ինք չէր տոնախմբողը, այլ միաբանությունը՝ հայ ազգին հետ։ Տակավին մոքիս առջև է այն մեծ դղրդյունը, ազգային պատվիրակությունը, աշխարհի չորս հովերեն տեղացող հեռագրերը, որոնք տապնապի մատնեցին Վենետիկ հեռագրատունը։ Հ. Ալիշան համակերպիկ և անայլայլ՝ հանդիսատես կեցավ այդ ոգևորության։ Դիտողի մը դերը կատարեց, ոչ տոնախմբյալի։ Հետո որո՞ւն հասներ պատասխանել։ Ընդհանուր շնորհակալություն մը հրատարակեց այն «ամենայն և ամենուստ եկած թոթափած զդայուն նեռերու, որք ոչ միայն ի կորովի, այլ և ի գորովի գրկաց թռան»[9]։ Միակ վրդովումն եղավ այդ տոնն յուր անսեթևեթ ու թաքնասեր կենաց։

Եվ այդ թաքնության մեջ հայոց կուռքն էր նա, և ամեն մարդ կճանաչեր այդ կուռքը՝ բացի նույն ինքն կուռքեն։ Հայ չկար, որ Ս. Ղազարու սեմին վրա կոխած պահուն Հ. Ալիշանը չհարցներ։ Անդամ մը Մուշեղ անուն մշեցի հեղափոխական մը եկավ, աղքատ ի գրոց, բայց սրտով հարուստ։ Եկած էր հատկապես զինքը տեսնելու։ Հասնելուն՝ միաբանությունը ճաշարանն էր։ Մուշեղ չհանդուրժեց ճաշի ավարտելուն սպասել. առաջնորդվեցավ ճաշարանին դռան առջև, ուր որ ցույց տվին սրահին խորն Ալիշանի ալևփառ դեմքը։ Անմիջապես ծունր դրավ հեռվեն այդ նվիրական պատկերին հանդեպ։ Հետո տարինք Նահապետին սենյակը, որտ առջև հասնելուն՝ բոլոր հասակովը գետին փռվեցավ երկրպագեց՝ գոչելով. «Հայր սուրբ, ես քրզի դուրպան»։

Կհիշեմ նաև այցելությունը հայ ընտանիքի մը, որուն առաջնորդեր էր Հ. Ալիշան, առանց ծանոթացնելու ինքզինքը։ Երջելու պահուն հարցուցեր էին իրեն. «Կրնա՞նք տեսնել Հ. Ալիշանը»։ «Զառամած, ցնդած մարդ է նա և ոչ մեկուն չի տեսնվիր»— եղեր էր պատասխանը, որ դայթակղությամբ լեցուցեր էր անոնց մտքերը։ Եկեղեցվույն մեջ կրկին հարցուցեր էին. «Ո՞ւր է Հ. Ալիշանի տեղը»։ «Այն անկյունը կկծկի»— ըսեր էր, կրկնապատկելով անոնց հոգվույն խռովքը։ Հ. Ալիշանի այդ հակառակորդին վարմունքեն հուսահատ, մենաստանին դռան առջև մնկնելու հետ էին անոնք, երբ ես դիպվածով կանցնեի նույն տեղեն։ Իսկույն իրենցմե մին առջևս փութաց և ըսավ. «Կփափագեինք Հ. Ալիշանը տեսնել»։— «Ահավասիկ» պատասխանեցի, ցույց տալով զինքը, որ մոտ էր սրահին ծայրը հասնելու։ Զարմացած՝ ոմանք դռնեն և ոմանք նավակեն, ուր մտած էին արդեն, վազեցին ներս, գնացին հասան բանաստեղծին։ Տեսարանին այս վերջին արարը, բողոքներն ու ցույցերը ավելի դյուրին է երևակայել, քան պատմել։

Հանճարներն իրենց արտառոց կողմերն ալ կունենան, և Հ. Ալիշան զերծ չէր անոնցմե։ Ցուր վանական բազմամյա կենաց մեջ տեսածին ու վարժածին այնպես փարած էր, ինչպես ավետարանի վարդապետության։ Ամեն նորություն կամ բարեփոխություն վանքի սովորությանց, արարողությանց և նույնիսկ շենքի որևէ մասին, զոր երբեմն ժամանակը և հառաջադիմությունն իսկ կպահանջեին, և յուր վարժությանց մեջ փոքրիկ շեղում մը կառթեին, կցնցեին

յուր ջղերը և մերթ նույնիսկ կրողքեր յուր ժուժկալ լեզվով։

Հանգուցյալ Կյուրեղյան աբբահայրն իմ մեջ կուզեր պատրաստել ճարտար «գործակալ» մը. և տարի մը, դեռ շատ երիտասարդ էի, զիս դրավ այդ ասպարիզին առաջին աստիճանին վրա, մենաստանին տնտես նշանակելով։ Հիշատակի օր մ'ապուր մ'էր եփված, որս մեջ հինգ տեսակ խոտեր պիտի մտնեին ըստ սովորության, որ անծանոթ էր ինձ բոլորովին։ Ճաշին հետո Հ. Ալիշան մոտեցավ ինձ և հիշեցուց, որ ՀԱՅԲՈՒՍԱԿ-ի պարտիզպանին քիմքը զգացեր էր սահմանյալ խոտերեն միույն պակասն ապուրին մեջ։ Ես, որ շատ հոգի ու աբբահոր հուսահատություն պատճառող մատակարար մը, ապուրին գոյությունը սեղանին վրա միայն իմացած էի, զարմացա այդ ճգնավորին ուշադրության վրա և միտքս դրի, որ այնուհետև լավ տնտես մը լինիմ և կհուսամ դեռ լինել։ Բայց այդ օրհնած ՍՈՎՈՐՈՒԹՅԱՆ՝ Հ. Ալիշանի ձեռքով ինձ տված նեղություններն այնքան շատցան, որ ստիպվեցա պահ մը զիս խոհանոցային դրականության տալ, և ամբողջ տարվույն կերակրոց ու սեղանի պատրաստության նկարագրական ցուցակ մը հորինեցի պրծա։ Իմ տնտեսությանս դլուխ գործոցն եղավ այդ, որ կմնա տակավին Ս. Ղազարու խոհանոցին մեջ, թեթևացնելու հաջորդաց լուծը։

Յուր ծոցի ժամացույցը, զարթուցիչ էր միանգամայն, գոր գիշերը բարձին ներքև կդներ, և երբ ճնճղկի քնեն զարթնուր, կսեղմեր անոր բռնատեղը և ժամը կհարցներ։ Իմ զարթուցիչս զիս կարթնցներ, իսկ ինք՝ յուր զարթուցիչը կարթնցներ։ Հելվետական թանկագին գործիք մ'էր այն, որուն բնավ լար կամ շղթա չէր դներ. և հաճախ կպատահեր մանավանդ ծերության օրերուն, որ ընկներ ու վնասվեր. ժամագործին ամենեն համառ հաճախորդն էր այդ մեքենան։ Մին խանգարեց և ուրիշ մը գնվեցավ իրեն, քան զառաջինը թանկ, որ սկսավ կրել նախորդին չարչարանքը. և կարելի չեղավ համոզել ծերունին, հրաժարիլ սովորությենեն ու լար գործածել։

Ս. Ղազարու ծովահայաց մեկ անկյունը ձիթենյաց պարտեզը կա՝ երեք ձիթենիներով, զորս լորդ Բայրոնի տնկված կհամարի ավանդությունը[10]։ Կհավատա՞ր արդյոք Հ. Ալիշան, թե ոչ՝ չեմ դիտեր։ Բայց դիտեմ, որ շատ կնստեր անոնց ներքև ու կկարդար։ Տարի մը բլրակ մը շինվեցավ հոն իմ նախաձեռնությամբ, յուր մեջ փակելով հինավուրց ծառերը, և ստացավ շատ հաճելի տեսարան մը։ Հ. Ալիշան ձայն չհանեց բնավ. բայց այնուհետև այլևս ոտք չկոխեց հոն, այդ նորաձև անկյունը։

Յուր պահպանողականության հետ, սակայն, սիրող էր բանաստեղծական նորությանց։ Տարի մը, Ս. Լուսավորչի տոնին օրը ճաշի սեղանը պատրաստված էր պարտիզին մեջ, և ինքն էր սեղանին գլխավորը։ Ճաշին սկիզբը փոխանակ կանոնական աղոթքին, հետևյալ համառոտը շարադրեց. «Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։ Ճաշակեսցուք խաղաղութեամբ ի փառս Քրիստոսի, և ի պատիւ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին» և նստավ։ Մեծապեցինք բոլորս և բաղմեցանք նույնպես։

Այն երանելի հին հոգիներեն էր Հ. Ղևոնդ, որոնք կատաղորկային երկրավոր կյանքեն, ի հուշ և ի տենչ երկնավորին։ Առողջ, երկարատև ու բեղմնավոր գոյության մը պարգևը ստացած, դժգոհ էր, որ ծերացած և հոգնած, տակավին չէր կանչվեր հանգստյան երկիրը։ Աշնանային երեկո մը, կրոգվույն ծովակարկառ պատշգամբին վրա կանգնած, գմայլելի արևմուտքը կդիտեինք։ Հ. Ալիշանի դեմքը տխուր էր, այդ զվարթարար տեսարանին հանդեպ։ Աչքին առջև կբերեր յուր 81 տարիներուն հիշատակները. կխորհեր, որ յուր մոտալուտ արևմուտքը կխուսափեր միշտ յուրմե և վշտագին ձայնով մ'ըսավ մեզ. «Ամենքը գացին. պատանիներ, երիտասարդներ, չափահասներ, որ քան զիս իրավունք ունեին ապրելու, գացին ամենքը, և ես մնացի անարժանությամբ»։ Սրբակրոն, անմեղ պատանի մը վախճանեցավ, որս օրհասին մոտ կատարել տվավ անոր կրոնավորական կենաց ուխտը և անունը ԵՐԱՆՈՍ դրավ, ի խորհուրդ հավիտենական երանության, գոր պատրաստեր էր անոր՝ այն մահն երջանկավետ։

1901-ի աշնան էր. պիտի մեկնեի դեպի Կոստանդնու-

պոլիս, մնայուն պաշտոնով։ Սիրտս կվկայեր, թե այլևս չպիտի տեսնեի պաշտելի ծերունին։ Սենյակը մտա վերջին ողջույնս տալու։ Ալեզարդ գլուխը թաղած էր գրասեղանին վրա խռնած գրքերու և թղթերու կույտին մեջ։ Մեկուսի՝ դղրոցի մը վրա կար խաչելություն մը մեծ, որո առջև ավելի հաճախ կտեսնեի գինքը խորամուխ և ուր յուր «սրտիկն որ ի խաչ էր կիպ»[11] ապավեն կգտներ, փախստական՝ մոտակա գրասեղանեն իրեն հետապնդող մարդկեղեն փառաց ու գովեստից ունայնության երեսեն։

Զիս տեսնելով՝ ելավ կանգնեցավ աթոռեն։ Հասա առջևը, ծունր իջա և խնդրեցի հայրական օրհնությունը վերջին։ Տխուր էի՝ առաջին անգամ մենաստանես հեռանալուս պատճառավ։ Օրհնեց զիս, և իսկույն խոնարհեցավ սեղմեց երեսնամյա հասակս «Մեր Նահապետի» բազկաց և ալյացը մեջ, ու բարձրացուց։ Հուզված էինք երկուքս ալ։ Յուր խուլ ու դաշն ձայնով սրտապնդեց զիս և հորդորեց ժրանալ առաքելության առաջին ասպարեզիս մեջ, ուր կ'երթայի մտնելու։

Հիշատակ մը խնդրեցի յուրմե, հետին հիշատակն այն մեծ կյանքին, որ ինձ համար արդեն մայրը մտած էր։ Առավ սեղանեն Ս. Պետրոս Ալկանդարացվույն «Բան յաղագս աղօթից և խոկման» կոչված իտալախոս մատենիկը և ըսավ. «Ամենեն սիրված գրքերս մեկը կուտամ քեզի»։ Նստավ, բացավ անոր առաջին սպիտակ էջը, առավ գրիչը, և սեեռաբիբ կքած անոր վրա, այն ձեռքով, որ քնարերգեց ՆՈՒԱԳՔ-ները, և կանգնեց ԱՅՐԱՐԱՏ-ը, այն ցամքած ու կիսադողդոջ ձեռքով, որո միջեն Ալիշանի անծերանելի հոգվույն ավյունը կհոսեր տակավին, դրոշմեց հետագա հուշարձանը յուր լայն սրտին, անոր մեջ հավաքելով վիմաքանդակ վերտառության մը բոլոր կանոնները. և մեն մի նշանախեց թղթին առաջ կքանդակվեր հոգվույս խորը։

Ցիշատակ
Պ. Հ. Վարդանայ Հացունոյ
Զոր սիրտք առողին և տուողին իմանան

Քան զրացատրութիւն գրոյ և բանի։
14 նոկտեմբեր 1901
Հ. Ղևոնդ Մ. Ալիշան

Ամիս մը վերջ Բոսֆորի ափանց վրա կհասներ բոթը՝ հայ հանճարուն այդ կոթողին կործանման, ժամանակին անողոք հարվածին ներքև։ Ութ ամիս հետո կգտներ դրքերու քաղաքին մեջ ուրիշ կոթող մ'ալ, ավետարանչին մեծ աշտարակը հինավուրց։ Ողբացի այս վերջինը «Բյուզանդիոնի» էջերուն մեջ. իսկ առաջինը՝ սրտիս խորը, զի բունությունը կխեղդեր ձայնս[12]։

Երեք տարի վերջ Ս. Ղազար կդառնայի քիչ օրվան համար։ Ամեն մարդ և ամեն բան յուր տեղն էր. սակայն ամայի կթվեր ինձ վանքը։ Հ. Ալիշան կպակսեր։ Դարավոր պերճ մայր մ'ունիս տանդ առջև, որու հեշտ հովանվույն ներքև նստեր են սերունդներ, և դու ինքդ երկար տարիներ վայելեր ես անոր հմայքը։ Կհեռանաս, քիչ հետո կդառնաս, և այդ մայրին այլևս չկա. և անոր տեղ կտեսնես լայն դատարկություն մը, որ կտխրեցնե։ Այս տպավորությունը դործեց ինձ մեծ ծերունվույն պակասը Մխիթարա դարաստին մեջ. պակասն անոր կախարդիչ պատկերին, որ շնորհք և պատկառանք կցաներ մենաստանի յուրաքանչյուր անկյան մեջ։ Խորապես կզդայի այդ պակասը։

Փութացի մենաստանին տապանատունը. միակ վայրն՝ ուր կրնայի դեռ գտնել Հ. Ալիշանը։ Իսկույն աչքիս զարկավ նկուղներու կափարշաց միույն վրա անոր դեմքը մարմարյա։ Այն մեծ մարդը փոքրկացեր ամփոփվեր էր ամենուն համար համաչափ նեղ խուցի մը մեջ։ Կխոռվեր հոգիս այդ քարեղեն գլուխը ցուրտ և անմոռուն՝ հուշարար դրված խորհրդո այն կենդանաշունչ տաճարին, որ վերջին անգամ փարեցավ ինձ ջերմագին։ Հուզված ու տամուկ բիբերս սևեռեցան այդ քարին, ջանալով սրտիս աղաղակը շիրմին ամուր կափարշեն ներս հասցնել՝ անոր նվիրական ոսկերաց, և լսել գերեզմանին խորեն այն խորհրդավոր իմաստը թաքուն, «զոր սիրտք առողին և տուողին իմանան քան զրացատրութիւն գրոյ և բանի»։

ԹԱԴԵՎՈՍ ԹՈՄԱՃԱՆ

ՀՈՒՇԵՐ ԵՎ ՆԻՇԵՐ Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԵՆ

Ազգերու պատմության մեջ ոսկի տառերով կ՝արձանագրվին հաճախ անունները խոսքի և գրչի տիտաններուն՝ որ կրցեր են կերտել և բարձրացնել ժողովուրդներու բարոյականը, առարկա դառնալով անոնց փառաբանություններուն։

Ոչ մեկ տարակույս՝ թե այդ հաղվագյուտ մահկանացուներու առաջին շարքին մեջ էր մեր խոնարհ և անպաճույճ վանականը, որ իր աստվածամերձ վարքովն ու ծովածավալ գիտությամբը պանծացուց հայ ազգը և պատկառելի ըրավ զայն օտարներու։

Շահեկան է Նահապետին առանձնական կյանքը։ Հոն որոշ կտեսնվին անոր հոգեկան մեծությունը և բոլոր հմայքը այն գաղտնիքին՝ որով գիտցավ ապրիլ կոչումին կատարյալ համաձայնությամբ, ու գրավել միանգամայն ընդհանուր հայության հիացումը՝ իր գրական հսկա գործունեությամբ։

Ներկայացնես մեր մեջ տարիքով առաջացածներուն և միջին հասակին ծանոթ են տրված զանազան երեկույթներն ու դրվատիքները՝ ի պատիվ անոր հաղթապանծ կյանքին, թե կենդանությանը ատեն և թե իր մահեն հետը։

Չեմ հուսար ավելորդաբան նկատվիլ՝ եթե անոնց շարքին ուզեմ միացնել իմ այս պարզուկ խոսքերս, «Իբր կաթիլ մի ի դույլ»։ Վասնզի նախ իրեն մոտ ապրողներուս յուրաքանչյուրին մեջ ան թողած է ուրույն հիշատակներ՝ մեկմեկե ավելի դարմանալի և հրահանդիչ։ Հետո պարտականություն է մոռացության չտալ իսպառ անոր բազմաբեղուն կյանքին ամենակարևոր մեկ թվականը, կուզեմ ըսել՝ տարվույս սկզբնավորությամբը լրացած Ուխտադրության հարյուրամյակը, որ ինչպես ամեն Մխիթարյաններուս, կհիշեցնե անոր բոլորանվեր անձնազոհությունը՝ ի փառս աստուծո և ի օժանդակություն մեր օտտածարաշ ազգին։ Արդարև դար մը առաջ՝ երբ տակավին ծաղկահասակ պարմանի մըն էր ան՝ վառվռուն և խոստումնալից, եթե տված չըլլար գինք կանչող տեառն և տիրամոր իր անդառնալի որոշումը, անկեղծ ու խոնարհ եղիցին, Միաբանությունս պիտի զրկվեր իր պանծալի հոգեզավակին անբավ արդյունքներեն, և հայ ազգը պիտի չտեսներ իր հորիզոնին վերև ծագած այս ամենափայլուն աստղը։

Ահա իբր նախաբան՝ իմ գաղափարս, որ ընդհանուրին համոզումն է արդեն։ Իցի՞վ թե գործնապես կարենայի զայն լիովին պատկերացնել։ Սակայն կարելի չէ քանի մը տողերու մեջ պարփակել համառոտը անգամ անոր կենսագրության՝ որ գործ է ավելի ձեռնհասներու և հատորներու կարոտ։

Իմ նպատակս հույժ համեստ է ու պարզ, ինչպես պիտի տեսնեք։ Կուզեմ առիթեն օգտվիլ և հայրենաշունչ տոնին առիթով ներկայացնել անձնական տպավորություններս՝ իր բնատուր ձիրքերուն և հրեշտակակրոն կենցաղի մասին, նշանակելով գանոնք հայտարերող դրվագներ ու մասնադեպեր՝ որոնց ես ինքս եղած եմ ականատես կամ ականջալուր։

▲

Հայր Ալիշանի գրական հսկա գործունեությունը արդյունք է հիանալի կարողության և բնատուր ձիրքերու, որոնցմով օժտված էր մանկութենեն ի վեր։ Ան ուներ ԱՄԵՆԱՍՈՒՐ ՄԻՏՔ ԵՎ ԱՆՎՐԵՊ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ։

Մշտատև և անհագ ընթերցումներով բոլոր նշանավոր հեղինակներու գաղափարներն ու բանաձևերը նույնությամբ իր հիշողության մեջ ամբարելե զատ, մագաղաթներու փոշիներեն և միաձև ու տաղտկալի հայ հուշագիրներե դուրս կբերեր և ինքնահատուկ հնարագիտությամբ իր նպատակին կհարմարցներ պատմական այնպիսի գանձեր, որոնց ան-

տեղյակ էին իրենք գրողները։ Անոր այս մանրախույզ գործունեության իբր պերճախոս վկա՝ կտեսնվեր իր աջակողմի դարանին վերև ձեռագիր ստվար հատորներուն շարանը՝ ՀԱՅԿԱՐԱՆ խորագրով[1]։ Անոնք կբազկանային ցիրուցան անթիվ ծանոթագրություններե, որոնց ամեն մեկը ինք միայն դիտեր գտնել և օգտագործել ի հարկին։ Նույնպես ստվար մատյաններե կազմված բեմ մը կթվեր իր գրասեղանը՝ որու առջև երկար ժամերով կքած ու զբաղած կերևեր ձյունափայլ գլուխը, խորհրդատունը հրաշագործ մտքին, ուր կրցած էր ամփոփել ոչ միայն քաղաքներն ու գյուղերը, լեռներն. ու դաշտերը, գետերն ու ծովակները իր պաշտած հայրենիքին՝ զոր երբեք տեսած չէր, այլ ամբողջ համրանքը անոր այգիներուն, աղբյուրներուն, տուներուն և թաղերուն, և ասոնց վերաբերող պատմական մանր հիշատակներն անգամ։

Այս մասին ունինք արդեն հանրածանոթ ու խոշոր հատորներ՝ ամենն ալ իր գրչեն ելած։ Ես կսիրեմ հիշեցնել միայն դրաբար հանգավոր ոտանավոր մը՝ թողված իր ՆՈՒԱԳՆԵՐՈՒՆ մեկ անկյունը, և գուցե անտեսված շատերե՝ իբր աննշան և անկարևոր։

ԲԱԺԻՆՔ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ խորագրին տակ, հոն 47 էջերու մեջ ամփոփված կգտնենք Հին Հայաստանի 15 աշխարհներն ու 150 նահանգները՝ իրենց բոլոր մանրամասնություններով[2]։

Նորընծայական ընթացքիս օրերուն, բնականաբար ինձ հատուկ շահագրգռության նյութ եղած էր անոր մեջ ծնընդավայրիս վերաբերող բաժինը։ Ամեն անգամ զայն կարդալուս՝ ինձ կթվեր մեկիկ-մեկիկ տեսնել Խարբերդի արգավանդ դաշտին ցանուցիր հայանուն գյուղերն ու ավանները, Հյուսնիկ, Մորնիկ, Եղեգի, Կայսրիկ, Դատեմ, Բազմաշեն, Գառընկերտ, Հավավ, Բերշենչ, և ասոնց նման շատ մը շեն վայրեր ու վանքեր, մանավանդ Ծովքի ծովակին նվիրական Սուրբ Նշանը՝ մանրանկարված սա երկտողիկով.

Յեղր աշխարհին ծածանի ծիածաւալքն ծովակ,
Ուր Գրիգորեանց ամրարձաւ գերաստիճանքն գահակ։
Եվ կրնա՞ր միթե իր սուր տեսությենեն վրիպիլ ծովակին դղեակը՝ որքան փոքրիկ ու մանրադիտական՝ նույնքան մոտիկ հայրենակարոտ սրտին, քանի որ հոն ծնած էր Ս. Ներսես Շնորհալին, և նույնը եղած էր մեծ Հայրապետին և անոր մեծ եղբոր բնակարանն ու կաթողիկոսարանը[3] Հռոմկլայա փոխադրվելե առաջ*։ Գերապատիվ Իգնատիոս Կյուրեղյան աբբահոր ընտրությենեն քիչ հետո, 1876 հոկտեմբերին, Պոլսեն վանք ղրկված էին Հայր Բառնաբաս վարդապետին հետ տաս պատանիներ, ես ինքս ըլլալով անոնց մեջ կրտսերագույնը։ Զգեստ առնելե առաջ՝ ըստ սովորության՝ երեկո մը Շեմարանը ներկայացված էինք՝ Աբբահոր և վարդապետներուն։ Ամենքը հետաքրքրված այլևայլ հարցումներով երբ մեզի երգել կուտային ու կզվարճանային, անդին իմ աչքիս զարկավ ու մանկական ուշս գրավեց հանկարծ ալեզարդ դեմք մը՝ գեղապատշաճ հասակով, շնորհաբույր և պատկառազդեցիկ, որ միշտ ոտքի վրա՝ կերթևեկեր ծանոր և հուշիկ, ստեպ անուշ ակնարկ մը նետելով վրանիս։ Հայր Ալիշանն էր ան, ու թեև անծանոթ էր ինձ անձամբ, բայց ես կկարծեի տեսնել իրականը այն պատկերին, զոր տեսած էի Խարբերդ ասկե ղրկված «Գիրք դպրութեան»-ին սկիզբը։ Դժվարությամբ բաներ մը երգեցին ընկերներս՝ զատ-զատ, և կարգը ինձ եկած ըլլալով՝ մտածեցի մրմնջալ ԱՆԻ ՔԱՂԱՔԸ** որ մտքիս մեջն էր ամբողջությամբ, թեև գիտեի ուրիշ ազգային երգեր ալ և նույնիսկ այս մեր վանքին ելածներ, ինչպես՝ «ՅԱՋԱՏՆ Ի ՎԵՐ Ի ՄԱՍԻՍ», «ԱՐՇԱՎԵՆ ՔԱՋՔ ՅԱՍՊԱՐ Ի ՍՈՒՐ», «ԲԱՀՄ. ՓՈՐՈՏԱՆ», «ՄՆԱՍՑԵՍ ԲԱՐԵԱՒ ՍԷՐ ԻՄ ՍԷՐ» և այլն։ Ես չէի կրնար ըմբռնել այն ատեն, թե ինչ ազդեցություն պիտի ըներ իմ

---

* Միևնույն պատճառով, Գարեգին Սրվանձտյանց անձամբ այցելելով այդ սրբավայրին ու մեծապես խանդավառված՝ կրացագանչեր իր «Համով-Հատուվին» մեջ. «Համբո՞ւյր քարերուն, համբո՞ւյր փլատակաց վրա բուսած խոտերուն... Ո՞վ կրնա բաժնվիլ ձեզմե, ափ ու ավեր Ս. Նշանա։ Ո՞վ կրնա թողուլ զձեզ քարինք և ալիր Ծովք-դղեկիս։ Արդյոք որքա՞ն պիտի ապրինք դուք կամ ես. ստա՞յր փնձ եկինք այն ժրջանիկ առիթն կրկնելու անհատ համբույրս և անհատ արցունքս ի ձեզ»։

** Այդ բառերով կոչի այն հինօրյա ողբաձայն երգը, զոր հորիներ ու առաջին անգամ լալով երգեր է Աղեքսանդր վարդապետն Արարատյան։

այն երգս վարդապետներուն վրա, մանավանդ հայր Ալիշանին, որ՝ ավարտելուս պես քովս մոտեցավ, և իբր թե խարբերդու վրա տեղեկություն առնելու մտքով՝ հարցուց ինձի. «ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԺԱՄՈՒՆ ԴՈՒՌԸ ՄԵ՞Ծ է, ԹԵ ՊՉՏԻԿ»։ Անմիջապես «ՄԵԾ է» պատասխանեցի պատանեկան միամտությամբ։ «Չէ, ՏՂԱՍ, ՄԵԾ Չէ,— հարեց ան,— ԴԵՌ ՊՉՏԻԿ ԸՆԼԱԼՈՒԴ ՀԱՄԱՐ ՔԵԶԻ ՄԵԾ ԵՐԵՎՑԵՐ է»։ Այս իր խոսքը այնուհետև պահեցի միշտ մտքիս մեջ, ու երբ առիթը ունեցա հետո երթալու տեսնելու հայրենիքս, անմիջապես տեսա և ստուգեցի, որ հիշյալ եկեղեցին իր ամեն մասերովը մեծաշեն ըլլալով հանդերձ, անոր արտաքին կամ դեպի փողոց հանող գլխավոր դուռը շատ ավելի փոքր էր քան ներսինները. և թաղականներու ըսածին համաձայն՝ իրենց նախորդները հարկադրված են այդպես ընելու, որպեսզի թուրքերը բռնությամբ չկարենան իրենց ձիերը անկե ներս մտցնել ու կապել դավիթին մեջ։ Այն ատեն հասկըցա, թե որքա՜ն իրավացի էր ռուսահայ խմբագրի մը խանդավառ դրվատիքը 90-ական թվականին, որու մեջ կշեշտվեր ի միջի այլոց. «ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆ ՄԵԾ ՈՒ ՀԵՌԱՏԵՍ ԱՉՔ ՄԸՆ է՝ ՈՐ ՎԵՆԵՏԻԿ ԿԵՑԱԾ՝ ԿՐՑԵՐ է ՀԱՄՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՄԵՆ ՔԱՐԵՐԸ»։

Անոր ինքահատուկ կարողության ոչ նվազ գորավոր ապացույցներ էին ԳՅՈՒՏԱՎՈՐ ԵՎ ՍՐԱՄԻՏ ՀԱՆՃԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, միշտ խորհրդավոր ու կտրուկ, և հաճախ միակ բառով կամ ձևով արտահայտված։ Հիշեմ մեկ-երկուքը իմ կիսացածներես։ 1876 տարվույն վերջերը Կյուրեղյան նորընտիր աբբահայրը Հռոմ գացած էր արքեպիսկոպոս ձեռնադրվելու համար և հաջորդող 1877-ին առաջին օրը՝ մայրավանքիս բոլոր միաբանները սեղանատան մեջ հավաքված էին՝ եկող Կաղանդը բարեբերելու նպատակով, ըստ վանական սովորության։

Այդ առթիվ, ես իբր ամենքեն պզտիկը, հետին աթոռակիս վրա կծկված՝ հետաքրքրությամբ կդիտեի գահագլուխ Հայր Ալիշանը, որ հեզոսկ ակնարկով ու ձեռքերը դաստակներուն վրա ամփոփած՝ կբանախոսեր մատնանիշ ընելով մարդկային տարիքի երեք շրջաններին հատուկ թերություն-

ները՝ ՄԱՆՈՒԿ ԱՆՓՈՐՁ, ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՆԴՈՒԳՆ, ԵՎ ՇԵՐ ՀԱՄԱՌ, այնքան համոզիչ և ազդու շեշտերով՝ որ իմ մատղաշ մտքիս մեջ տպավորվեցան ու կմնան դեռ մինչև այսօր։

Հետո, երբ քահանա ձեռնադրված էի արդեն, երիտասարդ աբեղաներս սովոր էինք աջհամբույրի երթալ իր տոնին օրը՝ նոր բան մը լսելու և օրհնությունը առնելու փափագով։ Անգամ մը սակայն, ինչ առիթով՝ չեմ հիշեր, դուրսը հորիզոնին վերև որոտումներ կլսվեին՝ երբ իրեն ներկայացանք. «Ինչպես էլեկտրական ներհակ հոսանքներու բախումեն լույս կծնանի,— ըսավ,— նույնպես ալ սիրո կայծը առաջ կուգա երկու հակառակորդներու միջև, եթե անոնք ուղղամիտ և բարեսիրտ ըլլան»։

Ասոր վրա մեկ-երկու տարի անցած էր, ու ես Պոլիս Գատըգյուղի մեր վարժարանը կգտնվեի ուսուցչության պաշտոնով։ Պարտականություն համարեցի փութացընել իրեն շնորհավորական անդրանիկ նամակս, որ կերևի քիչ մը կանուխ ձեռքը հասած ըլլալով՝ կպատասխաներ ինձ այցաքարտով մը։ Այդ ատեն հայկական նահանգներու համիդյան ջարդին նախօրյակն էր, և Պոլսո մեջ հայտնի շշուկներ ու նշաններ կային մեծաղույն շարքներու՝ որոնց կընայինք ենթարկվիլ։ Ասով հանդերձ, մեր վարժարանին կանոնավոր ընթացքը կշարունակվեր ակաղձուն հունձքերով՝ ավելի քան երբեք, և ըստ կարգադրության Մուրատ-Ռափայելյան տեսչության և մերինին, ինձ վիճակվեցավ կատարել 12 շրջանավարտներու դեպի Վենետիկ փոխադրությունը, երբ հաղիվ կատեր էր հայարնակ գավառներուն առաջին աղետը։ Արդ ինձ տրված այդ պաշտոնը կատարելիս ետքը կրկին ներկայացա աթոռակալ մեր Հոր՝ օրհնությունը առնելու համար։ Ջերմ աջհամբույրս տալե և իր ողջերթի խոսքը լսելես ետքը՝ երբ փափագ հայանեցի ունենալ իրմե հիշատակ մը, մատով ցույց տվավ քովի գրադարանին վերև գտնվող վանքի փոքրիկ լուսանկարներեն մին։ Առի զայն և հակառակ կողմով առջևը դրի խնդրելով որ հաճի անոր վրա իր գրիչով հուշիկ մը շնորհել ինձ։

Անուշ ժպիտ մը փայլեցավ դեմքին վրա, գրեց անմի-

ջապես սա խոսքը միայն. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՄ, Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ, 26 ՕԳՈՍՏ. 1896, և ձեռքս դրավ գայն իր պաշտելի ձեռքով, զոր կրկին համբուրեցի ու բաժնվեցա տխուր նախազգացումով թե պիտի չտեսնեի գինքը*։ Շատ գոհ մնացած չէի նաև այցելութեանս արդիւնքեն, զարմացեր էի թե ինչու վանքի չնչին նկարը ուզեց տալ ինձ, վրան ալ՝ ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԻՄ գրելով։ Բայց քիչ հետո, նույն ուղեորութեանս ընթացքին հասկցա անոր թաքուն իմաստը։ Անով կիմացներ սրտով ու մտքով միացած ապրիլ մեր մայրավանքին հետ՝ որչափ հեռի գտնվիմ մարմնով։ Այնուհետև իմ սկզբունքս եղավ այդ ոսկեղինիկ ավանդը, մանավանդ գավառային կյանքիս մեջ։

Տարակույս չկա, որ անոր այս ինքնահատուկ և գրավիչ հանճարաբանութիւնները եղած են ոչ միայն խանդն ու ավյունը իր բանաստեղծական թռիչքներուն, այլ գլխավոր զարդն ու հմայքը՝ բոլոր գործերուն։ Եվ ըստ իս, այս է պատճառը անշուշտ, որ իր մեծանուն աշակերտները, Միքայել Փորթուկալ փաշա, Հակոբ Տամատ, Սրապիոն Հեքիմյան, Թովմաս Թերզյան, Մկրտիչ Աճեմյան և ուրիշներ՝ երբեք չդադրեցան փառաբանանքներ հյուսելե մինչև իրենց վերջին շունչը, վասն զի ամեն առիթներու մեջ ալ ան գիտեր նոր կայծ մը ձգել անոնց խանդավառ սրտերուն մեջ։ Շուրջ 1888—90 թվականներուն, ինչպես շատերու ծանոթ է, Թովմաս Թերզյան իր երբեմնի աննման տեսչին նվեր ղրկած էր լուսանկարը իր փոքրիկ զավակին՝ նժույգի մը վրա նստուցած և սառն գրելով իր ընծայականը։

Մկրտիչ Աճեմյան հետևյալը կգրեր իր դասընկեր Թերզյանին.

Ես համբուրեցի շրթամբ ջերմեռանդ
Եվ կազդուրեցավ հոգիս իմ հիվանդ.
Ո՞վ կըրնա լրսել նորա քաղցրիկ լուր
Եվ սիրտ փրղձկելով չի հուզվիր, չի լար։

Եվ հիշած եռյակ տողը սա էր.

«Որպիսի՞ ինչ է այն լար սրտի, որ եւ ետ բազմամեայ

* Նախապես ինձ Պոլիս ղրկած քարտին և ուրիշ կարևոր նամակներուն հետ՝ այդ հիշատակն ալ մինչև այսօր պահած եմ իբրև մասունք։

լռութենանց ոչ նուագէ յառաջնոյ պնդութենէն, այլ եւս առաւելու քաղցրութենամբ». Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան։

Բավական ետքը Վենետիկ կուգա Ավագ Գաբթան անունով հայ նավապետ մը, և սիրալիր վերաբերումներ կըլլան անոր և մեր վանականներու միջև։ Այդ առթիվ ես կշարժի Ալիշանի մեղրածոր գրիչը և ազգային հյուրին ողջերթ կմաղթե։

Անոր իսկատիպ հանճարաբանութեան անվիճելի նմուշներ են նաև թողած վերտառությունները, կարուկ և ազդեցիկ նկարներ մարդկային հոգի բարքերու։ Գաղափար մը տալու համար՝ հիշեմ հոս անոնցմե մեկ երկուքը, աշխարհաբար թարգմանությունները միասին.

ՇԱՂԱԿՐԱՏԻ ՄԸ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱ

Ա՞ստ ուրեմն լուռ կաս
Ծատախօսդ Դիմաս։
Ուռ կկնաս ուրեմն ճո՞ս
Եւ դու Դիմաս շատախոս)։

«Մարդ չի կրնար մեծ ըլլալ՝ եթե ավելի միտք ունի քան սիրտ» կըսե հոգեբան մը։ Այս իրավացի պատգամին մեկ պերճախոս ապացույցը եղավ մեր հոգելույս Նահապետին կյանքը, Ան մեծ էր ոչ միայն մտքով, այլ մանավանդ սրտով, որ բոլորանվեր զոհարանն էր հայրենիքի սիրուն և գլխավոր աղբյուրը իր քերթողական ներշնչումներուն։ Ահա թե ինչու անոր հատուկ գուրգուրանքին առարկա եղած կտեսնեինք հայության վերաբերող ամենաչնչին հիշատակները, դեպքերն ու ավանդները։

Առաջին անգամ իմ Վենետիկ գալես երկու տարի ետքը, 1878 թվականին, բարեկենդանային կյուրակեի մը երեկոյին էր, և ըստ վանական սովորության՝ մեծ ու պզտիկ սեղանատան մեջ կվայելեինք համեստ հացկերույթնիս՝ ազգային երգերով։ Հանկարծ Հ. Դավիթ մեր վերակացուն, վերեն դեպի մեզ դալով՝ «Ձեր մեջ Ան ի՞ ՔԱՂԱՔ երգը գիտցողն ո՞վ է» հարցուց, և ընկերներուս կողմե իմ անունս տրվելուն վրա «Ոտքի ելի՛ր ու երգե՛» հրամայեց ու հեռացավ։ Դյուրին է գուշակել թե այդ պահուն ինչպիսի դժվա-

ռութիւններ ունեցած կըլլար արևելեան ամաչկոտութեամբ տոգորված նորընծա ուսանող մը։

Սակայն հարկ էր՝ կամա թե ակամա, հնազանդիլ։

Ուստի մեղմ ձայնարձակութեամբ եղած հրամանը,— չեմ հիշեր ինչպե՞ս,— կատարելու ետքը, ինձ լուր տրվեցաւ, թե Հայր Ալիշան վարդապետն է եղեր զայն պատգարկողը, և թե հուժգ ղղացվեր է իմ երգելուս առեն։ Զարմանալի թվի գուցե այս բանը, որ արդեն իմ մտքես չէր կրընար անցնիլ. բայց ավելին կա դեռ։ Հաջորդ օրը զրով ալ պահանջվեցաւ ինձմե այդ աննշան երգը՝ Հայր Ալիշանի հանձնարարութեամբ և պատիվը ունեցաւ ցուցադրվելու ՇԻՐԱԿ տեղագրութեան մեջ[4]։

Արդարև իրեն համար անկարելի էր անտեսել ոևէ չնչին պատեհութիւն կամ նշխար որ Հայութեան ներկա թե անցյալ փառքերուն կվերաբերի։ Մտքես բնաւ չելլեր այս մասին տրված զարմանատիպ մեկ օրինակն ալ 1883 հուլիս 14-ի գիշերը, այն սև թվականին՝ որ արցունքով արձանագրված է մեր տարեգրութեանց մեջ[5]։ Մինչ Վենետիկ խրախճանութեամբ և լուսավառութիւններով կտոներ իր նշանավոր մեկ թվականը, ազգին մխիթարակերտ շքնաղ դաստակերտը մեծ մասով բոցերու մեջ կճարճատեր՝ խապտ մոխրակույտի մը վերածվելու վտանգով։ Կյուրեղյան աբբահոր և բոլոր միաբաններուն հետ՝ մենք նորընծաներս ալ թողած մեր խաղաղիկ միայնանոցները, գերագույն ճիգերով կաշխատեինք մինչև առավոտ՝ բան մը ավել փրկելու համար... Այդ դժոխային պահերե մեկին մեջ՝ հանկարծ իմ աչքին զարկավ և պատանեկան ուշադրութիւնս գրավեց նույն Գերապատիվ հոր միակ և հատուկ հոդածութիւնը նախնյաց ձեռագիրներու մասին[6], զորոնք մեկիկ-մեկիկ դարաններեն հանելով՝ ծայր աստիճան փութկոտութեամբ կփոխադրեր վտանգե հեռի ապահով տեղեր։ Դեպքեն տասը տարի ետքը կրցա ստուգել այս բանիս համար իր տված բացատրութիւնը զարմացողի մը ուղղված. «Մեր անդին գանձերը պետք էր ազատել նախ. մյուս բոլորը, որքան մեծարժեք նկատվին՝ կարելի է վերստանալ, բայց նախնյաց ձեռագիրներու կորուստը անդարմանելի է»։

▲

Ալիշան վարդապետին այսքան բնատուր բարեմասնութիւնները հիշեցնելու ետքը, չեմ կրնար զանց ընել ամենեն գերագանցն ու հանրածանոթը։

Ան բանաստեղծ ծնած էր, բառին ամենալիակատար իմաստովը, բարձր և լուսաշող, նման հսկայագոր մեծ դիւաւորներու՝ որոնք դարերու ընթացքին հազիվ երբեք կանանվին։ Այսպիսի մեծ միտք մը սահմանափակ երկրի մը համար չէ անշուշտ։ Իսկ եթե Հայաստանը նախընտրեց ավելի ու գոռացուց ԲԱՄԲԻՌ ՓԱՌԱԳՈՉ, պատճառը անօրինակ հայրենասիրութիւնն էր[7]։

Ո՞ր մեկ գիտակից արդյոք մեր ազգին մեջեն կրցեր է անկիտանալ նահապետի նշանակութիւնը, «անուն մը, որուն ամենն հայ սիրտ, ըլլա այն նույնիսկ ապառաժ, չի զլանար սրտի երկրպագութիւն մը, չի կրնար գոպել անոր համար իր մեջ կուտակված հավիտենական հարգանքը։ Ան իր ամբողջ կյանքով մեր անապատին մեջ վառեցաւ մոմ մը՝ ուղղելով իր բոցը միմիայն իր սիրելի ազգին վրա։ Շատ մը նախնի մատենագիրներե ավելի եռանդուն ու գործոն միտք մը ընդունվեցաւ։ Իր աննման քարը Հայ հովսափայան դիակներուն ոգի փչեց։ Ինքը միայն՝ մինչև իր առեն, հայ մտքի ամենեն պատկառելի ներկայացուցիչն եղաւ Եվրոպայի գիտնական աշխարհի առջև, և ինքը միայն՝ հայրենի հողին հնագետ, ճշգրիտ պատմչ և փառաբանիչը»*։

Ա՛լ ավելի առաջ, ազգային պատկառելի դեմք մը՝ Սըրվանձտյանց Գարեգին վարդապետ[8], որուն «Համով-հոտով» հիշեցի վերև, Հ. Ալիշանին զրկելով իր նոր մեկ գործեն օրինակ մը իբր ուղերձ, վրան կգրոշմեր սա խոսքերը. «Ոսկի ու մարգարիտ կդառնա իմ Գրոցն ու Բրոցն, եթե Ձեր դիմքն ու ծուծքը հպին անոր, որո ծրագրողն անբացատրելի հաճույք, վայելք ու քաջալերս անձին կհամարի, երբ լսե թե ընդուներ ու վերծաներ եք զայն։ ՁԵԶՄԵ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

* Սիմոն Երեմյան, «Բազմավեպ» 1902, էջ 347.

ՄԸ ԿՈՐՉԵԼ՝ ԱՆՄԱՀԱՆԱԼ Է»։ Արդարև անմահության բույր ու կազդույր են անոր գրիչեն ելած մեն մի ծորան ու բան։

Հաճախ միջակ բանաստեղծներ, գինովցած իրենց մուսաներու ներշնչումներեն, կեսառ կեսառ կհեռանին անոնց թելադրությանց, հար և նման ոգեհարցական միջնորդներու (medium)։ Հ. Ալիշան, ընդհակառակն, ազատ համարձակ կարփաթներ. իր Պեգասոսն ըլլալով հանդերձ ամենեն խստերախն ու սանձակոտորը, ինք դիտեր ուզած ուղղությունը տալ անոր մրրկավար ճախրանքներուն, ստեղծել հարմար առիթներ ու խորհրդավոր պահեր՝ հագուրդ տալու համար բոցավառ սրտին անխառն զգացումներուն։ Այս պատճառով կտեսնենք որ ստեպ իր քնարին մեղեդիներով կփառաբաներ Երրյակ և մի աստվածությունը, ու երկնային բնագավառները կփոխադրեր տաղտապած մտքեր ու ականջներ, Մերթ որպես խորհրդաղզած ողբերգող՝ կհածեր մահվան ստվերներուն մեջ իր կենդանի հավատքին ճրագովը և կողբար մարդկության կորուստ անմահությունը։ Մերթ կերևեր անձայն անապատի ամայության մեջ՝ որպես մարգարե մը ամպրոպային ու սպառնալից և Ս. Ղևոնդի բերնով կշանթահարեր հոն հանդիպող ընտանի օձը, հայրենիքի առաջին դավաճանը։ Մերթ՝ որպես խորամուխ հավիտենականին անքննելի ծրագիրներուն, կայցելեր Գեթսեմանի պարտեզը՝ գալկահար լուսնին նվաղկոտ ցոլքերուն հետ։ Մերթ ևս, իբր խորազննին իմաստասեր, բարդ և անել մտածությանց մեջ ընկղմած եղևնիի մը շուքին տակ, կթվեր իր մտքին մեջ ամփոփել ու վերլուծել բնության հրաշալիքները և դարերու պատմությանց բոլոր անցուդարձերը։ Այս մասին կարժե մեջ բերել տպավորությունը մեր երիտասարդ բանաստեղծ Վանատուրին*. «Շատերը լսած են, և քիչեր թերևս ճաշակած Ալիշանի այս փոքրիկ, բայց ոսկեղինիկ գլուխ— գործոց գրքույկը։ Տաք և հոգեխառով խոսակցություն մը բնության և բանաստեղծին միջև, ուր Նահապետին ալեկոծված ներաշխարհն ի հայտ կուգա իր ամբողջ տենչանքներով, հուզումներով և բարդություններով. ՀՈՒՇԻԿՔՆԵՐԸ եթե հայրենակարոտ հուզումներ և կսկիծներ ունին, ՆՎԱԳՔՆԵՐԸ՝ սիրո և զեղեցկին լարը, ԸՆԴ ԵՂԵՒՆԵԱՒ-Ը երկնքի խորությունն ունի, հոգվո աղաղակը և ճշմարտության վեպն է բնության մեջ գրված... Շատ ընդարձակ է Ալիշանի սիրտը, անոր հոգին մի անհագ ծով է. և ահա, անսահման տիեզերքն անգամ իր խորաթափանց մտքին անձուկ կուգա, և ջղաղրգիռ՝ կփնտրե ա՛յլ աշխարհներ, ա՛յլ հորիզոններ, ու բնությունը սանդուղ ըրած՝ կբարձրանա ամպերեն վեր։

Սովորական գրագետներ կդժվարին ամեն նյութի վրա գրելու. Հ. Ալիշանի պարագան ասոր ներհակն էր. այն կարող չէր իր ներշնչումներեն խուսափելու, չէր կրնար չգրել. և իր վրա զարմացողներուն ուրիշ պատասխան չպիտի ունենար, կարծեմ, եթե ոչ Լամարթինի տվածը այն հարցումին, թե ինչո՞ւ կնվագեր միշտ։

Ֆրանսացի քնարերգակին քաղցրիկ ավաշը չի՞ հիշեցներ միթե անձնական կյանքը մեր հոգելույս Նահապետին, որ իր գրական գործքերեն զատ իրեն զբաղանք ըրած էր ՍԻՐԵԼ, ԵՐԳԵԼ ՈՒ ԱՂՈԹԵԼ։ Անոր սիրույն առարկաներն էին՝ նախ և առաջ, ինչպես գիտենք, աստված և հայրենիք. առաջինին համար աղոթարան կմաշեցներ, և երկրորդին՝ գրասեղան։ Սակայն իր սրտին մեջ լայն տեղ մը ունեին նաև ասոնցմե մին կամ մյուսը ավելի զգացնող իրեր՝ շարժուն թե անշարժ, ինչպես ծաղիկներն ու թռչունները, բայց մանավանդ անմեղ մանուկները, որոնց հետ կերևակայեր ըլլալ տոնախումբ հանդիսներու կամ ծաղկավետ բուրաստաններու մեջ, երգել միասին ու զվարճանալ հոգեզմայլ զգացումներով։

Նախապես այս եղած էր արդեն իր դաստիարակչական գաղտնիքներեն մեկը։ Տղայոց կենցաղեն հմայված՝ կսիրեր փոքրանալ և հաճախ անոնց լեզուները փոխ կառներ՝ վերառաքելու համար իր սրտեն թռած կայծերը։ Ըսածս անհավատալի կարծողը կրնա աչք մը տալ միայն Նվագներուն մեջ սա վերնագիրներով հրատարակված ոտանավորներուն.

* Վահան Հովհաննեսյան, որ աշխարհարարի վերածելով ԸՆԴ ԵՂԵՒՆԵԱՒ-Ը, իր հիացումը կհայտներ համառոտ նախաբանով մը (Բազմավեպ, 1930, էջ 35 և հետ)։ Սույն գեղեցիկ թարգմանությունը լույս տեսավ նաև գատեն։

«Առ մանկունս նորամուտս յաշխարհ», «Օրհնեցեք մանկունք զՏէր», «Թոյլ տուք մանկուցդ գալ առ իս», «Ի մանկունս, զրոսնելով ի դաշտի», «Առ Ս. մանուկն Ալոիսիոս» և այլն[9]։

Այս համառոտ նմուշներեն դյուրին է դուշակել իր շունչով սնած ու մարզված սաներուն կրած ազդեցությունը մանավանդ փոքրիկներուն, որոնց որքան սիրելի ու ցանկալի էր իր ներկայությունը, հարկավ նույնքան տրխրությամբ համակված կըլլային, երբ կհարկադրվեր հանկարծ իրենցմե բաժնվիլ ու բացակայել։

Սակայն այդպիսի առիթներու մեջ ալ գիտեր հեռվեն անոնց տխրությունը փարատել՝ ուրախառիթ անակնկալով մը*։

Ըսի քիչ մը վերը՝ թե կսիրեր նաև ծաղիկներն ու թռչունները, որոնցմե հոգևորապես շատ ավելի կազդվեր ու կզգացվեր, քան ոևէ բանաստեղծ. բուրաստաններու, ծործորներու և ծմակներու մասին իր գրչեն ելած այնքան փափուկ ու վեհիմաստ նկարները բավական խոսուն են արդեն։ Ոչ մեկ քերթող, ոչ մեկ նկարիչ հաջողեր է ավելի հրաշագեղ ներկայացնել ծաղկանց թագուհին, անբիծ շուշանը, համեստ ու պարկեշտ մանուշակը և ասոնց համասերները, որոնք իրենց թույրովն ու բույրով թունդ կհանեին անոր երկնավառ սիրտը։

Իրեն շատ դուրգուրալի էին նմանապես օդային երաժիշտները. իսկ ծերության շրջանին՝ հատկապես ճնճղուկներն ու վանդակե դուրս մնացած դեղձանիկները։ Ասոնցմի մեկ քանին, ձմեռ առեն, թռչտելով կու գային կթառեին հաճախ բանաստեղծին խուցի պատուհանին առջև, ու իրենց ճվճիվներով պահիկ մը անոր գգվանքը և պատրաստած հացի փշրանքները վայելելե ետքը՝ կանհետանային ձյունալից ամայության մեջ։ Անգամ մը, սակայն, երբ հույժ զբաղած էր լրացնելու համար իր հոյակապ Տեղագրություններն մին, հանկարծ մեղմիկ կտկտանք մը կհասնի ականջին, պատուհանի կողմեն. իսկույն աչքերը կուղղվին դեպի հոն և կտեսնե սիրուն դեղձանիկ մը, որ դուրսեն թռվրռտելով փակած ապակիներե մեկին, կտուցովը թրք-թրք կգարնե, ոյպես թե ստիպողաբար կթախանձեր ներս ընդունվելու համար։ Անմիջապես կփութա ու կբանա պատուհանը փոքրիկ հյուրին առջև, ու զայն ափին մեջ առնելե, գգվելե և պահիկ մը անով զբաղելե ետքը՝ կարձակե նորեն որ երթա ազատությունը վայելելու ընդարձակ հորիզոնին մեջ։ Այդ թռչնիկին տրված վերջին համբույրին հետ՝ իր ողջերթի քնքուշիկ մաղթանքը նվագքներուն մեջ մտած բարեբախտարար կարժե որ հոս նույնությամբ ներկայացնեմ, աշխարհաբարի վերածելով.

Դարձիր, ձագիկ սիրունակ,
Ազատության դարձիր,
Երկինքն ունիս պարունակ,
Ի՞նչ է ինձմե քու խընդիր։

Չարիք ըրած չես մեկին,
Չեմ կամենար ես ալ քեզ.
Նախանձելով այդ բախտին՝
Կու տամ քեզ քու ազատութեզ։

Թըռի՛ր օդին մեջ ազատ
Հետդ առնելով իմ հատրույր
Ու գեղգեղվդ աքընդհատ
Մաղթե ինձ ալ ելք անդույր[10]։

Բայց բնական ձիրքերուն համար մարդ մը իսկապես մեծ չըսվիր, պետք է ունենա համապատասխան արդյունք և արժանիք։ Այս տեսակետով ի՞նչ հավաստիքներ տված է Հ. Ալիշան։ Ահա կարևորագույն հարցը, որ գլխավոր նպատակն է իմ այս տողերուս։ Մոտեն կենսակիցներու վկայությամբ՝ ի վիճակի եմ անմիջապես հավաստելու որ դրա-

* Ահա նմուշ մը իր այս կարգի հրահանգիչ զվարթաբանություններեն, Փարիզյան սանկտոն դրկած նամակների մեկին մեջ կգրեր. «Գիտնալով որ այլ ինձմե խրատի կարոտ չեք, բայց ես ալ տեսակ մը սովորությամբ վարժած եմ այնպիսի բանի, այս անգամ այլ քանի մը կտոր խորհրդեմ, զոր դուք այլ փոխանակ ականջի, դեպի բերան տանիք և անուշ բաներ խմանալով՝ խմացուցեք։ Սույն երկտող անցուդարձը կառնեմ իր մտաին գրված ընդարձակ հոդվածն մը՝ Հ. Ղևոնդ Տայան վարդապետի առուրագրությամբ, հրատարակված «Բազմավեպ» 1926-ի նոյեմբեր ամսաթվին մեջ։

կան համբավեն ավելի զարմանալի եղած է անոր ներանձնական կյանքը և իր գրիչը ունենալ պետք է զայն պատկերացնել կարենալու համար։ Ան մեր մեջ մարմնացումը եղած է քրիստոնեական առաքինությանց և հառաջամարտիկ ախոյան դեպի կրոնավորական կատարելություն, համաձայն Ուխտիս հիմնադրի ոգվույն։ Հանճար և գիտական հմտություն իրեն համար միջոցներ էին արդյունք շահելու, ոչ թե նպատակ։ Անիկա մեկն էր արևուն տակ երևցող այն հոյակապ դեմքերեն, որոնք մարդկային իմացականության մինչև խորերը թափանցելով հանդերձ՝ կկարծեին թե ոչինչ գիտեն։ Հակառակ իր տաք ու վառվռուն խառնվածքին, գործնական օրինակովը կդգացներ, թե ինչպես կրնա մարդ իր անձին հաղթել՝ մեռցնելով չարահոժար կիրքերը։ Համառ աշխատող մը էր, ու ժլատությամբ շահագործող ժամանակի բոպեներն անգամ. և մենք, տեսնելով իր անխափան ներկայությունը ամենօրյա աստվածային պաշտամունքներու և վանական համախմբությանց մեջ, չէինք կրնար ըմբռնել թե ինչպես ատեն կգտներ երևան բերելու համար իր սավարահատոր գործերը։ Խղճամիտ կարգապահությամբ կհետևեր միշտ Ուխտին կանոններուն. էր կատարյալ հնազանդ, սակավախոս և պատկառազդեցիկ, խստապահանջ իր անձին համար և արդահատող ու կարեկից՝ ուրիշներու հանդեպ։ Շատ կսիրեր ու կհարգեր կրոնավորական աղքատությունը. կապրեր սակավապետ ու չարքաշ։ Զմոան խիստ եղանակին, երբ մեծ ու պզտիկ պատսպարված կըլլային թանձր վերարկուներով, ինք կգոհանար բարակ ու կարճ զգեստով մը։ Ծերության ամբողջ շրջանին և կյանքին վերջին տարիներուն անգամ հաղիվ հինգ ժամ կքնանար՝ բնության հարկը վճարելու բռնադատությամբ։ Գիշերանց ժամը չորսին կիջներ եկեղեցի միսմինակ սպասավորով մը և պատարագելի ու առավոտյան ժամերգությանց մասնակցելն ետքը՝ կդառնար սենյակը, և գրավոր աշխատությանց ձեռնարկելն առաջ՝ պահիկ մը կզբաղեր հոգևոր գիրքեր հորինելով կամ թարգմանելով ամեն օր։ Այս գեղեցիկ հոժարամտությանը արդյունք են ահա՛ իր գրչին ելած ու բարեպաշտներու հոգևոր անունդ եղած

ծանոթ գիրքեր, ինչպես. «Հաղորդասէր հոգի», «Աղօթք աբեղայի», «Նմանություն Ս. Ալոզիոսի», «Սնունդք սրտի և հոգւոյ», «Ցոյցք Աստուծոյ», «Կրթութիւն սիրելոյ զՅիսուս», «Իմացք ի չարչարանս Քրիստոսի», «Ճառք հոգևորք վասն միանձանց» և այլն[1]։ Ամոթխածությամբ շառագունած շնորհալի դիմագիծը ներդաշնակորեն լծորդվելով իր քաղցրախոս լեզվին և հեզահամբույր բնավորության հետ, կգրավեր թե՛ միաբանակիցներուն, թե՛ օտարներուն սիրտերը։ Այս մասին կթվեր կրկին ոգի առած ըլլալ Հյուրմյուզ Եդուարդ Գերպայծառին, զոր շատ սիրած էր, և անոր մահվան առթիվ տված կենսագրական ծանոթությանց մեջ կտային այնպիսի տողեր, որոնցմով իր իսկ նկարը կհորիներ անգիտակցաբար։ Գաղափար մը տալու համար՝ ահա կհիշեցնեմ կտոր մը միայն իր այդ գրվատիքներեն. «Ես չունիմ,— կըսեր,— պատշաճագույն բառ և բանաձև, որոնցմով կարելի ըլլա բովանդակել այս անձին բոլոր սեփական և ինքահատուկ ձիրքերը, բազմաձայն ու քաղցր շնորհքներու զուգորդությունը՝ երկնավոր հանգամանքներով օժտված։ Մեկն է այն սակավերևվյաց դեմքերեն, որոնց,— եթե հանդգնություն չէ ըսածս,— թերություն է երկնավոր ծնանիլ, և չմիանալ անմիջապես վերին հարազվարճ խումբերուն հետ։ Վասնզի քաղցրություն կհորդեր ու կբուրեր իր ամեն տարազով, կերպարանքով, ձայնով, զրույցով, կենակցությամբ և զորովական ու մարդասեր սրտովը։ Եվ կարծեմ չկա ոչ ոք որ հետը քիչ շատ կենակից ու խոսակից եղավ՝ առանց սիրելու զայն կամ առանց զմայլելու անոր սրտին ականակիտ պարզության վրա, որ արտաքնապես ուներ մանկության ապակեփայլ պաղպաջը, և ասոր հետ՝ ծերունազարդ խոհականություն»*։

Մարդ այս նկարագրությունը կարդալով՝ չի գիտեր որո՞ւն վրա հիանալ ավելի, դրվատված անձի՞ն թե դրվատողին, որովհետև շատ նման են իրարու աստվածարյալ զույգ հոգիներ, խորաթափանց միտքեր ու մեղրածորան գրիչներ, երկուքն ալ օժտված բնության և շնորհաց բազմատեսակ ձիրքերով։

* Գրաբար բնագիրը տես Բազմավեպ, 1876, էջ 345։

Ալիշանի ոսկեդինիկ առաքինության շարքին մեջ հարկ է հատկապես նկատի առնել անոր ՀԱՍԱՐԱԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, այսինքն՝ եղբայրսիրական ու հայրական անխտիր խնամքները։ Իր ընդհանուր Աթոռակալի հանգամանքով[12], հոգածու էր երիտասարդ արեղաներին, որոնցմէ մին եղած է սույն տողերիս գրողը։ Առիթներու և պարագաներու համեմատ՝ դիտեր յուրաքանչյուրին հասցնել կամ ուրախալի անակնկալներ կամ հարմար քաջալերանքներ։ Հիշեմ մեկ-երկուքը միայն ինձ հանդիպածներին։ Վանքի մեր վարժարանեն դեռ նոր ելած, 1888 թվականին, սենյակիս մեջ կգրազրի անդրանիկ աշակերտներուս տետրակները սրբագրելով։ Օր մը հանկարծ Հ. Ալիշան ներս մտնելով, ինձ կհանձներ նոտագիր թուղթ մը, «Ասիկա քեզի կվերաբերի» ըսելով։ Կարդացի ու տեսա, որ խնդրագիր մըն էր Եղիա Թումանճանյան ստորագրությամբ, խարերդեն Պոլսո Հայ-Կաթողիկե պատրիարքարանին ուղղված՝ իմ ծնանելես 8—10 տարի առաջ։ Բնականաբար՝ մեծապես ուրախացա այդպիսի հայտնության մը համար, ինձ բոլորովին անծանոթ մինչև այն օր. բայց միամտորեն, առանց հետաքրքրվելու անոր բուն նշանակությամբ և ոչ ալ համարձակվելու իրմե տեղեկանալ, կզարմանայի, թե ինչպե՞ս կրցեր է ձեռք ձգել իմինես նման հեռավոր ու անհայտ գերդաստանի մը վերաբերող այդ պաշտոնաթուղթը*։

Այս դեպքեն չորս տարի հետո, Մուրադ-Ռափայելյան վարժարանը անցած ուսուցչության պաշտոնով, սկսեր էի հորինել ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ գրաբար քերականությունս։ Գործը ավարտելուն պես՝ համարձակեցա դայն իրեն ներկայացնել նախքան տպագրությունը, և խնդրել որ աչքե անցնե ու շնորհե իր հեղինակավոր կարծիքն ու հավանությունը անոր հրատարակության համար։ Դեմքին վրա փայլող անուշ ժպիտեն հասկացա որ մերժված չէր խնդիրքս։ Անմիջապես ընդունեցավ հրատարակվելիք ձեռագիրները ու դրավ քովը դարակին վրա, և օրական պահիկ մը սահմանելով շաբաթ մը անոնցմով զբաղելե հաքը, զանոնք ինձ հանձնեց՝ դատ թղթյակի վրա հազիվ մեկ երկու բան նշանակելով, ու ըսավ. «Այս գործդ իր տեսակին մեջ լավ է, ըստ իս, և կրնա նոր միջոց ըլլալ դրաբարի ուսուցման»։ Աջհամբույր շնորհակալությամբ առի գրածներս ու մեկնեցա, և անոնց մեջ անցընելով իր հիշեցուցած մեկ-երկու կետերը, վստահությամբ հանձնեցի տպարանապետին։ Ուրախությունս անսահման էր՝ ունենալով իր գործոն օժանդակությունն ու վավերացումը այդ իմ աննշան աշխատությանս համար, որ եթե հրատարակվեցավ մեկե ավելի անգամներ, առանց հայտնապես իր անունը հիշատակելու, պատճառն էր՝ նախ չվիրավորել իր չափազանց համեստ զգացումը, և երկրորդ, չտալ գործիս արժանիքեն ավելի կարևորություն[13]։

Քանի մը տարի անցած էր նաև այս մասնագետին վրա, երբ հս ժամանակ մը ի վեր արդեն հեռավոր հայրենիքս կգտնվեր, ծանրապես հիվանդ... և ահա կհասնեին ինձ իր քաջալերական նամակները։

▲

Սակայն մեզի ամենեն ավելի հիացում պատճառողը անոր զարմանալի խոնարհությունը եղած է, խոնարհություն ոչ արտաքնահարդար ու ձևակերպիկ, այլ ճշմարիտ ու խորարմատ՝ դարավոր կաղնիի մը նման։ Եվ ավելի պերճախոս են այս մասին գործնական փաստերը։ Մինչ հայեր ու օտարներ կպանծացնեին իր մտավոր կարողությունը, ինք ամենևին չէր ուզեր հավատալ, մանավանդ թե կշղայնոտեր ու կզարմանար իր վրա գարմացողներու վրա։ Մահու չափ կատեր ինքնահավանությունը ու կփախչեր անկե, ինչպես օձե մը։

Ուստի, հակառակ միաբանությանս ընդհանուր բաղձանքին՝ զինք Մխիթար արքահոր դահուն վրա տեսնելու Հյուրմյուզյանի մահվան առթիվ, ոչ միայն իբր անկարող բացեիբաց կհրաժարեր՝ «Գրիչս ձեռքես մի՛ առնեք» առարկելով, այլ իր աշակերտը եղող նորընտիր աբբային

* Հետո ուրիշ հեղինակավոր անձերե և իմ մորես տեղեկացա և ստուգեցի, որ ատիկա եղած է սկզբնավորումը Թումանճանյան մեր ընդարձակ ազգաբանական մեկ ճյուղի դարձին ի կաթողիկեություն։

տեղ մը հանդիպելուն պես գդակը վեր առած գլուխ ծռեր։ Սենյակը հաճախ իր ձեռքով կավլեր, և իրեն համար եկող ուխտավոր ազգայիններուն ինքնությունը կծածկեր։ Մերոնք կպատմեին թե ասոնցմէ մեկը անգամ մը իրմէ ուղղակի հյուրասիրված ըլլալով, անդիտակցաբար կխնդրէ Հ. Ալիշանին ներկայանալ։ «Ի՞նչ պիտի ընես,— կըսե իրեն անծանոթ հյուրընկալը,— անիկա ալ ծերացած է ճիշտ ինձի պես»։ «Բայց ես կուզեմ անձամբ տեսնել կինը և օրհնությունը առնել, ատոր համար եկա» կավելցնե այցելուն։ Այն ատեն, տեսնելով որ այլևս հնար չկա գինք փնտրողի ձեռքեն ազատելու, «Տեսած եք արդեն,— կպատասխանե,— ա՛ն է ձեզի առաջնորդողն ու հիմա հետերնիդ խոսողը»։ Այս խոսքին վրա՝ հայրենասեր հայորդիին աչքերը կբացվին, անմիջապես ծունկի կուգա ու կողջունե անոր աջը ամենաջերմ համբույրներով և կմեկնի, ուխտը կատարած ըլլալու գոհունակությամբ։

Բայց «Պատիվը իրմե փախչողին ետևեն կվազե» կըսե ժողովրդային առած մը, և Հ. Ալիշան իզուր ջանքեր կթափեր անոր հետապնդումեն ազատելու համար։

Երբ 1885-ին, այն ինչ լրացած էր ՍԻՍՈՒԱՆԻ տպագրությունը, Միաբանությունները սարքեց ներքին համեստ գրական երեկույթ մը՝ Կյուրեղյան գերապատիվ արբահոր նախաձեռնությամբ։ Այդ առթիվ կարդացվեցան մեկ-երկու շնորհավորականներ՝ հայրենաշունչ խանդավառությամբ։ Ուրախ և հպարտ էին բոլոր միաբանները, բացի մեր քրտնավաստակ վանականեն, որ միակ նպատակն ու առարկան եղած էր ցույցերուն։ Պարզ հնազանդելու համար և մեծ մահացումով լսեց իրեն տրված դրվատանքները, մանավանդ Գանթարյան Հ. Սամվել վարդապետին գեղեցիկ նվագը[14] հնչուն և գոռ ձայնով արտասանված։

Իտալիո Մարդերիթա մայր թագուհին, սովոր էր տարվե տարի մեր վանքը այցելելու, և փրեն կընծայվեր փառակազմ՝ Հ. Ալիշանի ստվար հատորներե մին։ Անգամ մը, հիանալով ներկայացված գործին պատմական և հնագիտական ամենաճոխ պարունակության վրա, ուզեց տեսնել բազմահմուտ հեղինակը։ Երբ Ալիշան կստիպվի մեծ դըժվարությամբ ներկայանալ, «Ինչպե՞ս լույս աշխարհ կբերես այսքան խոշոր ու արժեքավոր գործեր» կհարցնե թագուհին։ «Վեհափառ դշխո,— կպատասխանե,— ինչպես կատուներ, երբ շարժուն բան մը կտեսնեն՝ անոր հետ կխաղան իրենց բնազդովը, մենք ալ վարժած ենք տեսակ մը սովորությամբ գրիչ շարժելու հանդիպած թուղթերու վրա»։ Այս կըսե և մեկ-երկու վայրկյան շառագունած ոտքի վրա կենալե ետքը խոնարհաբար հրաժեշտ կառնե և իսկույն կհեռանա[15]։

Իսկ քահանայական հոբելյանին առթիվ (1890 թ.) եղած ազգային թե օտար իրարանցումներն անկարագրելի են։ Բովանդակ հայությունը բուռն բաղձանքով ուզած էր տոնախմբել իր նահապետին վերջին հաղթանակը՝ առանց սեռի, աստիճանի և դավանանքի խտրության։ Անմիջապես Վենետիկի վանքը փութացեր էին եկեղեցական և աշխարհական բարձր անձնավորություններ, կրթական պաշտոնյաներ, եպիսկոպոսներ և կաթողիկոսական ներկայացուցիչներ։ Հարյուրավոր նամակներ ու շնորհավորական հեռագիրներ կտեղային աշխարհի ամեն անկյուններեն, շատերը հայերեն լեզվով, և այնքան վրայե վրա, որ քաղաքիս նամակատան պաշտոնյաները ապշած կհարցնեն եղեր. Ո՞վ է այս Հ. Ալիշանը, որ այսպիսի պատիվներու կարժանանա։ Արդարև չափազանց էին շարժումները և դուրս վանական համեստ շրջանակեն. բայց հակառակ հոբելյարի կամքին և միաբանության կանխահայտ ծանուցումներուն, հարկ եղավ համակերպիլ և գոհացում տալ ազգին օրինավոր պահանջին։

Շնորհավորական գգայուն մաղթանքներ՝ արձակ թե ոտանավոր, հնչուն արտասանություններ, կրակոտ բանախոսություններ, հետզհետե վրա հասնող հեռագիրներու ընթերցումներ, մենեթգներ, համերգներ և կեցցեներ ու աղաղակներ կթնդացնեին հանդիսասրահը։ Տիրող խանդավառությունը իր գագաթնակետին հասած էր այն պահուն, երբ Մուրադ-Ռափայելյան սաները իրենց ուսուցչին առաջնորդությամբ և ընկերակցությամբ ընտիր երաժշտախումբի մը, հնչեցուցին անմահանուն հոբելյարին հորինած և 40 տարի

հայութիւնի վերև դոռացող ԲԱՐ. ՓՈՐՈՏԱՆԸ[16]... Բոլոր հանդիսականները, հայ թե օտար, տեղացի թե եկվոր, համայված էլեկտրականացած էին հայրենավրեժ քայլերգին ազդեցությամբ, շատեր աթոռներեն վեր-վեր կցատկեին և bis! bis! կանչելով կրկնել ու երեքնել կուտային զայն։

«Այլ ո՞վ պիտի նկարագրե այն խորին հուզումը,— կդրեր ի միջի այլոց Ա. Արփիարյան,— երբ ծերունի հայր Ղևոնդ Ալիշան վարդապետ ոտքի կանգնեցավ։ Կարմրցած էր ան, աչքերը խփած ու արցունքով լեցուն, ձայնն հուզյալ ու դողդոջուն, փոքրիկ բանաստեղծությունը կկարդար։ Անոնք, որ ապրած են Հ. Ալիշանի հետ, նախկին աշակերտներ, անոնք միայն կրնան գաղափար մը կազմել բանաստեղծին այս րոպեին զգեցած դեմքի մասին։ Հ. Ալիշան այդ բանաստեղծությունը գրած էր նույն միջոցին, թուղթի մը կտորի վրա։

Ահա նույնին աշխարհաբար թարգմանությունը։

Հոլովելով այս կենցաղիս գառիվարեն
Ջարդուփշրուր կառքերու խառն մեջ ցանուցրիվ,
Որոնց վրա եղավ աշխարհ մը լույս նորեն,
Այ մինչև ե՞րբ գլխս դու խախտած իմ անիվ։

Քանի՞-քանի աղաղակներ կեա դարուս մեջ
Որոտացին, վրդովեցին անեն կողմեր,
Եվ դու հառաջ մղվլած Աջեն՝ գաղտ ու անշեջ,
Անցար տեսար հին հասակներ, թարմ տարիքներ,

Որոնք պատած շուրջդ մոտեն թե հեռուեն
Ճոխ մաղթանքներ կարփոնեն արդ անհնայորեն
Եկեղեցու, հայրենիքի՝ մեր հավերժ մարդ։

Ի՞նչ տամ տրիտուր ազաքան բարդաց երախտագիր.
— Ո՞վ որ անոնց գիա՝ գանոնք ինձի տրվիր,
Ալբյո՛ւր սիրտ, ըզՔեզ կուտամ Քեզ տուրք անդարձ։

«Ոչ ոք կրնար տեղը նստել,— կավելցներ հոս նույն հոդվածագիրը,— երբ Հ. Ալիշան, աչքերը արցունքով լի, երկինք հառեց ու ըսավ. ԱՂԲՅՈ՞ՒՐ ՍԻՐՈ...։ Այդ րոպեն

անմոռանալի պիտի մնա ինձ համար, որ իր քովն ըլլալով՝ աչքերովս տեսա անոր աննման դեմքն այդ րոպեին։ Միայն լսելու համար այս բանաստեղծությունը Հ. Ալիշանի բերանեն և զինքն այդ րոպեին նշմարելու համար Պոլիսեն ի Վենետիկ գալ կարժեր»[17]։

Այնուհետև կարդը եկած էր շքեղ հացկերույթին, սեղանատան մեջ և գիշերային լուսավառություններուն, որոնք հաջորդաբար տեղի ունեցան վայելուչ հանդիսավորությամբ։

▲

Հայր Ալիշանի այս մխիթարությունը շատ չտևեց սակայն։ Հազիվ մեկ-երկու տարի սենյակը քաշված կշարունակեր գրել և սիրտ մաշեցնել իր սիրելի ազգին համար, վրա հասան 1895—1896-ի հայկական ջարդերը և սատանիկ տխրությամբ համակեցին զինքը։ Տեսնողներ կըսեին, թե հաճախ խուցը քաշված կուլար՝ ինքզինք պատճառ նըկատելով ազգին գլուխն եկած այդ մեծ աղետներուն[18]։ Մալաթիո եպիսկոպոսը իմ ներկայությամբս իրեններուն կպատմեր թե անգամ մը Վենետիկի վանքը հանդիպելուն առթիվ՝ փափագելով հատկապես այցելել ծերունի Նահապետին, գտեր է զայն տխուր և տագնապալից վիճակի մեջ ու անմիջապես հերքեր է անոր տարապարտ մտատանջությունը այսպես. «Ձեր հայրենասիրական գրությունները, գերապատիվ վարդապետ, սուրբ և նվիրական պիտի մնան առհավետ։ Հայրենիքի ճշմարիտ սերը՝ զոր Դուք արծարծեցիք մեր ազգին մեջ, պատրանք մը չէ՝ այլ երկնային պատգամ։ Բայց եթե եղան մեջերնիս սխալ հասկրցողներ, և գազան թշնամին կոգտվի ու պատրվակներ կհնարե սատակացնելու համար իր հայակեր քաղաքականությունը, ատոր մեջ Դուք մաղաչափ մը իսկ պատասխանատու չեք կրնար նկատվիլ ոչ աստուծո և ոչ մարդկանց առջև»։

Սակայն, որչափ սուրբ է բարոյագետի մը խոսքը, թե մեծ հուզումները մեծ հոգի ունեցողներու համար են, ավելի ևս ճշմարիտ է մեր այս մեծ հոգին, Հ. Ալիշանի սա ոսկեղեն պատգամը, իր իսկ կողմե գործնականապես ապա-

ցուցված, թե «Աբրուությունը անհրաժեշտ արյուն և ոգի է որոշ մը համար, որ սպառազինված է խոնարհության և համակամության անխոցելի զրահներով»։ Հեռի էր այն աշխարհային նպատակներ հետապնդելե և միշտ պատրաստ քամելու իրեն վիճակված դառն բաժակներուն մինչև մրուրը։

Եթե չափազանց հուզված էր ազգին կորուստներուն համար, ատիկա արդյունք է միայն իր ճշմարիտ հայրենասիրության, որուն ի սպաս դրած էր ամբողջ կյանքը իբր աստվածային հրաման։ Ան իրեն տիպար օրինակ ունեցավ ոչ միայն նախամարդարե մը և հեթանոսաց առաքյալ մը, որոնք մինչև իսկ հավիտենական երանութենեն զրկվիլ հանձրն կառնեին իրենց ցեղակիցներու փրկության համար, այլ նույն ինքն ամենողորմ փրկիչի Հիսուս, որ երկնքի ու երկրիս տերն ըլլալով հանդերձ, մասնավոր սեր ու կարեկցություն ցույց կուտար իր մարմնավոր հայրենիքին ու հայրենակիցներուն հանդեպ։

Արդարև խոնարհությունը եղավ ամենեն փայլուն գոհարը մեր հոգելույս Նահապետին առաքինության շարքին մեջ, և իր լուսավոր ուղեգիծը, մանավանդ կյանքի վերջալույսի օրերուն։

Եվ արդեն շատ հեռի չէր այլևս իր ըզգացած այդ ԵԼՔԸ. կզգար, որ տակավ կմոտենար վերջնական հանգստին ժամկետը, երբ հանկարծ փայլակի պես հասավ մահվան երկնահրավեր ոստիկանը՝ 1901 նոյեմբերի 21-ին գիշերը, ու դեպի անանցական հայրենիքը փոխադրեց անոր սրբասնյալ հոգին, դառնակսկիծ ցավ պատճառելով միաբանակիցներուս և տխրեցնելով ամբողջ հայությունը։

Չեմ ուզեր, և ավելորդ իսկ է կրկնել հոս օրհասին բոլոր պարագաները, որոնց համառոտությունը անմիջապես ծանուցվեցավ «Բազմավեպ»-ի միջոցով[19]։ Այդ ատեն ես բացակա էի վանքեն և ազգային թերթի մը մեջ բոթը միայն կարդացի, այսպես. «Հ. Ալիշան Վենետիկի մեջ իր մահկանացուն կնքեր է 81 տարեկան»[20]։

ՄԵՍՐՈՊ ՇԱՆԱՇՅԱՆ

ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃՅԱՆ ԵՎ Հ. ԱԼԻՇԱՆ

Նկարիչ Ա. Ֆեթվաճյանի մահը արձանագրվեցավ մեծ կսկիծով Ամերիկայի և ուրիշ գաղութահայ լրագիրներու մեջ։

Այդ կսկծալի մահը տեղի ունեցած է անցյալ տարի հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի օրվան առավոտը, Մեսֆբրա՝ հանգստյան տան մեջ, ուր երեք ամիսն ի վեր փոխադրված էր քաղցկեղի ծանր հիվանդության մը վերահայտնումով իր մեջ։ Նկարիչ ու բանասեր Արշակ Ֆեթվաճյան իր մահկանացուն կնքեր 84-ամյա հասակին, ամբողջ կյանքովը նվիրված ծառայելու հայրենիքին՝ նկարչական մարզին մեջ։

«Բազմավեպի» այս սյունակներու մեջ վերակենդանացնելով իր հիշատակը և դնելով իր անունը Ալիշանի անունին դիմաց, մենք կուզենք շեշտել թե Ֆեթվաճյան մեծապես ազդված է Ալիշանեն։ Այս կետը ինքնին պիտի լուսաբանվի, երբ խոսինք իր հարաբերություններու մասին մեծ բանասեր, հնախոս-պատմաբան ու բանաստեղծ Ալիշանի հետ։

Ա. Ֆեթվաճյան ծնունդով Տրապիզոնցի (1-ը հոկտեմբերի, 1863 թ.), տասնվեց տարեկան հասակին կանցնի Պոլիս, և հոն կաշակերտի Գեղարվեստից կայսերական վարժարանը, բայց իր զարգացումը տակավին կատարելության պետք ուներ։ Կառաջարկվի իրեն Թուրք կրթական նախարարության կողմեն պետական ծախսով անցնիլ Հռոմ ու շարունակել իր ուսումները և վերադառնալով Պոլիս՝ ստանձնել պաշտոններ թրքական կառավարության սահմաններուն մեջ։ Առաջարկը չի գործադրվիր։ Ֆեթվաճյան, սակայն, հարուստ ազգայինի մը օգնությամբ[1] կհաջողի անցնիլ Հռոմ ու Գեղարվեստից բարձրագույն ճեմարանին մեջ կատարելագործել իր նկարչության արվեստը՝ ստանա-

լով չորս տարիեն Ճեմարանի վկայականը։ Ճոխացնելու համար իր մաքի պաշարը կճամփորդեն Եվրոպայի զանազան արվեստի կենտրոնները, Վիեննա, Բեռլին, Վենետիկ, որուն հանդեպ սքանչացում ունի, և որ կդառնա իր ճամփորդությանց ամենեն կարևոր կայանը։ Երիտասարդ նկարիչ, լի եռանդով արտադրելու, սակայն կպակսեր անոր ուղղությունը, ծրագիրը։ Ս. Ղազարու վանքը կատարած մեկ այցելությունը և Հ. Ալիշանի հետ ունեցած շփումը՝ հիմը կդնեն իր ապագա նկարչական գործունեության։

Եթե Ֆեթվաճյան եղած է սիրահար նկարիչ մը հայկական հուշարձաններու, պատմական հիշատակներու, սիրահար ձեռագրական արվեստի, նկարներու արտատպումներուն, այդ կպարտի Ալիշանին, որ դրոշմած է անոր երիտասարդ ու խանդավառ հոգվույն մեջ՝ սերը դեպի հայկական հին արժեքները, կիսավեր կամ փլած հիշատակարանները, ճարտարապետական կոթողները։

1888-ին է, որ նա ոտք կդնե Ս. Ղազարու հողին վրա։ Ալիշան կընդունի զինքը հայրական սիրով և իր շերմ հայրենասիրությենեն ուժեղ կայծ մը փոխանցե այդ հոգվույն մեջ, որ Ֆեթվաճյանինն էր, պատրաստ ընդունելու գեղեցիկ ներշնչումները։ Ալիշան անոր գեղարվեստասերի աչքին առջև կպարզե ձեռագրական մեր գեղեցկությունները։ Երիտասարդ նկարչին աչքերը կշլանան։ Ալիշան կշարունակե ներշնչել այն հավատքով և համոզմունքով, որ նա օր մը կնվիրվի անպատճառ հայ հին դրշագիրներու դեղարվեստին ուսումնասիրության։ Ալիշան կթելադրե կատարել մեկ քանի արտանկարումներ դրշագիրներու մանրանկարներեն. երիտասարդը տեսնելով ծերունի բանասեր հոր հոգեկան խանդավառությունը, անդուսպ փափագը, կդնե ինքզինքը անոր տրամադրության տակ, ու քանեն երեսուն նկարներ կգծե անոր նախասիրածներեն։

Ալիշան ակնիվ մտածությամբ դրամական կերպով կփորձե նպաստել երիտասարդին կատարած աշխատությանց փոխարեն. նա կմերժե ընդունիլ։ Ֆեթվաճյան Ալիշանի հանդեպ հիացմունք ունի, իր կատարած աշխատությանց փոխարեն միակ խնդրանք մ'ունի անկե. նստիլ իր դիմացը և թույլ տալ, որ դիմանկարը գծե։ Ալիշան չի մերժեր խընդրանքը. Ֆեթվաճյան 1891-ի գարնան վերջ՝ երբ այլևս պիտի թողուր Իտալիան, կու գա անգամ մ'ալ Ս. Ղազար ու կմտնե մեծ բանասեղծին և մեծ հայրենասերին սենյակը ու կգծե անոր նկարը. Ֆեթվաճյան իր իսկ բառերով կըսե. «յուր սենյակի մեջ նկարեցի անմոռանալի մեծ մարդու դիմապատկերը»։

Երիտասարդ նկարիչը իր հոգեկան գոհունակությունը գտած է։ 1895-ին, այդ նկարը կհանձնե Վիեննայի պարսից շահի դեսպանին. այնուհետև կկորսվի առեն մը այդ պատկերին հետքը, ինչպես իր նամակին մեջ, զոր խրմբագրությանս ուղղած է իր մահեն երկու ամիս առաջ, կնկարագրե կենդանի ոճով կորուստը և դյուտը։ Այդ նամակը ստորև պիտի հրատարակենք։

Ինչպես տեսնվեցավ՝ Ֆեթվաճյանի այցելած արվեստի կեդրոններեն ամենեն հատկանշանակը կըլլա Վենետիկ, մանավանդ Ս. Ղազար և հոն ունեցած մշակութային իր շփումը Հ. Ալիշանի հետ։ Այլևս Ֆեթվաճյան նկարիչը գտած է իր հունը, ապագայի բանասեր —նկարիչը, հայրենի ճարտարապետական հիշատակներու ուսումնասեր նկարիչը չի փնտրեր անգիտակից նորեկի մը պես իր ասպարեզը։ 1900-են սկսյալ իր ճամփորդությունը Արևելյան Հայաստանի քաղաքները՝ ծրագրված ուղևորություն մըն է, հավաքելու ատաղձ իր կատարելիք արժեքավոր աշխատանքներուն։ Ամբողջ քսան տարի կշրջի գիտնականի պես հայրենի ավերակներու վրա, իր աչքերով կտեսնե փլած եկեղեցիները, վանքերը, ամրոցները, թուղթին կու հանձնե անոնց ուրվագիծը, երբ տեղվույն վրա չի հաջողիր ամբողջական նկարը մեկեն արտադրել, կժողովե նյութը, կներշնչվի երկյուղածորեն ինկած մեն մի քարի, մեն մի հիշատակարանի առջև։ Զինքը կհմայեն Անիի կոթողային շինվածքներու ավերակները, տաճարները, պալատները։ Այդ ամբողջ ատաղձեն դուրս եկած են երկու հազար հայ ճարտարապետական ու հնախոսական, շինվածական դեղեցկությունները և հնությունները պատկերացնող, իբրև վկայություն և իբրև

գանձարան հին ազգային արժեքներու, որոնք ստուգիվ անսահման կարևորություն ունեցող աշխատանքներ են։

Բացի այս կարգի գործերեն, Ֆեթվաճյան ունի նաև ազգային հին դեմքերու դիմանկարներ, ներշնչված մանրանկարչութենեն և կամ մեծ մասամբ հղացված իրմե։ Այսպես են իր Ս. Սահակը, Ս. Մեսրոպը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Ասողիկը, Մխիթար Գոշը և այլն։ Այս շարքեն է, որ ան բարեհաճած է դրկել մեզի Մովսես Խորենացիի, Եզնիկի, Ստեփաննոս Ասողիկի նկարներուն քլիշեները և զոր մենք հրատարակեցինք մեր 1947-ի Գեղունիին մեջ[3]։

Իր կյանքին վերջին քսանհինգ տարիները անցուցած է Բոստոն, առանձնացած ինքն իր մեջ և նվիրված իր ուսումնասիրություններուն, իր նկարչական գրաղանքներուն։ Անխոնջ աշխատող մը, որ երբեք ուզած չէ ցրվիլ արտաքին գործերով, որպեսզի իր մտածած ծրագիրը ամբողջացնե։

Ֆեթվաճյանի համար կըսվի սովորաբար ԲԱՆԱՍԵՐ։ Ալիշանեն ժառանգած է այդ սերն ալ, և որ միանգամայն բնական հետևանք է իր կատարած պրպտումներուն և ուսումնասիրություններուն Հայաստանի հնախոսական արժեքներուն վրա։ Այս ուղղությամբ կատարված աշխատությունները կմնան անտիպ։ Ատոնք են. «Փոքր հայկական ճարտարապետության պատմության», «Հայ գրքի գեղարվեստը», «Հայ ասեղնագործության և հայ ազգի դասակարգերու հանդերձավորման ձևերը և պատմականը»։ Այս ձեռագիր երկասիրությունները, ինչպես նաև երկու հազար նկարները հայ պալատներու, եկեղեցիներու, բերդերու, հին ազգային ճարտարապետության վերարտադրությունը և հայ հին հեղինակներու դիմանկարները ամբողջապես՝ նվիրված են Հայաստանի Պետական Թանգարանին[4]։ Այնքան զորավոր էր իր մեջ հայրենասիրությունը, որ հակառակ ութսունամյա իր հասակին Հայաստան երթալու իր կատարած դիմումին պատասխանը ընդունած չըլլալուն և հակառակ նկարները և բանասիրական աշխատանքները հայրենի թանգարանին նվիրելու իր ինքնաբերաբար հայտնած փափագին ոչ մեկ պատասխան առած ըլլալուն, ան դարձյալ սիրահոժար

նվիրած է իր երկարամյա մտավորական անդուլ ջանքերուն պտուղը Հայաստանի՝ որուն սիրովը կտոչորեր օտարության մեջ։

Ֆեթվաճյանի մահով հայ նկարչությունը կկորսնցներ ուրիշ կարևոր վարպետ մ'ալ, ինչպես անոր մահեն քանի մը ամիս առաջ Էդգար Շահին, Կարապետ Ադամյան, Սարգիս Խաչատուրյան նկարիչները[5]։

Կովկասի, Եվրոպայի և Ամերիկայի նշանավոր կեդրոններուն մեջ տված է ցուցահանդեսներ, Թիֆլիս, Բաթում, Լոնդրա, Փարիզ, Բոստոն, Նյու-Յորք, Չիքագո, մասնագետ քննադատներու կողմեն արժանանալով միշտ գնահատանքներու։ 1920-ին Փարիզի մեջ իր տված ցուցահանդեսը «Եր Տեքորատիֆի» սրահին մեջ հովանավորված էր նշանավոր բյուզանդագետ Շարլ Տիլեն. այդ առթիվ Ֆեթվաճյան Հայաստանի հնագարյան հուշարձաններեն ներշնչված իր 2000 նկարները կցուցադրեր ի հիացումն արևելագետներու և արվեստագետ հնախոսներու։

Ան սիրող և պաշտող հին արվեստը, դասականները, իտալական վերածնունդի մեծ հեղինակները՝ չէր կրնար հանդուրժել արդի նկարչությունը, զոր կհամարեր խեկական անկում։ Տեղն է հիշատակել հոս իր սրամիտ ու գվարճախոս մեկ հայտարարությունը՝-խոսելով իր մտերիմ բարեկամներեն երիտասարդ արվեստագետի մը հետ. «Դուն, տղաս, Հարրիս, դուն պետք է Հռոմը տեսնես, որպեսզի իմանաս աշխարհի մեծության գաղտնիքը։ Հապա ի՞նչ կը խորհիս, դու կխորհիս, որ կարգ մը ՄՈԴԵՐՆԻՍՏՆԵՐ արվեստի ներկայացուցիչնե՞ր են։ Չէ, կներես, Հռոմը ԲԱՇԵԱՆ է։ Դուն մի նայիր այդ կարգի ՄՈԴԵՐՆԻՍՏՆԵՐՈՒՆ, որոնք պարզ գծագրություն անգամ չեն գիտեր, դու քո ճամփադ շարունակե»։ («Հայրենիք», օրագիր, հոկտեմբերի 24, 1947 թ.)։

Կարժե հիմա, որ հոս հրատարակենք խմբագրությանս ուղղած իր նամակը, անցյալ տարի 8 օգոստոսին։ Գեղունիի պատրաստության առթիվ էր, որ մենք դիմած էինք նաև իրեն՝ խնդրելով իր ալ մասնակցությունը մեր բարեկամ տոքտոր Գասպար Կարոյանի[6] միջոցով։ Մեր դիմումին ան կպատասխաներ շատ գեղեցիկ նամակով մը, շեշ-

տելով գլխավորապես երկու հարց. առաջին՝ իր կապը և հարաբերությունը Ալիշանի հետ, և երկրորդ՝ Ալիշանի նկարին ճակատագիրը, կորուստը և գյուտը։

8 օգոստոս, 1947.

Վերապատիվ և Սիրելի Հայր խմբագրապետ «Բազմավեպ» հանդիսի*

«Թվականես ամիսներ առաջ Բոստոնում Ձերդ և իմ բարեկամ տոքտոր Կարոյանից իմացել էի Ս. Ղազարու Ուխտիդ Միաբանությունը հայտարարել էիք որ առաջիկա օգոստոս ամսիս վերջերը հոբելիանական հանդեսով տոնելու էիք հարյուր տարիի հասակ ունեցող Ձերդ ամսօրյա հանդիսի տարեդարձի օրը։ Ապրիլին էլ, մի երկտողով ինձ հրավեր կարդացիք, որ չի մոռանամ լինելիքը և մի բանով ես էլ բերեմ իմ մասնակցությունը՞։

Հավանելով մտքին վերհիշեցի, որ վերապատվյալ Միաբանությանդ հետ իմ էլ բարեկամության վաթսուներորդ տարին է և մտովի վերապրեցա իմ առաջին գալը Վենետիկ և իմ առաջին հանդիպումը Ս. Ղազար վանքում, այն և հետագա տասնյակ տարիներ Մխիթարի ուխտին միաբան շարք մը պատկառելի հայրերը, մանավանդ լուսահոգի Հայր Ղևոնդ Ալիշանը, որուն համար դեռ ամիսներ առաջ մի գեղեցիկ գործ կատարել էի Հռոմում, Վատիկանի մատենադարանում, ուր արտանկարեցի բյուզանդական Վասիլ կայսեր սեպհականությունը եղած մի monologion-ի պատկերազարդերից մեր Հռիփսիմեի և Գայանեի նահատակությունը ներկայացնել ուզող պատկերները, ապա և մեր Գրիգոր Լուսավորիչը և այլ մեկ երկուսը մանր բաներ, ամենն էլ գույներով և որոնք լույս տեսան մեծահաջող հարազատությամբ աննման Հ. Ղևոնդի աննման «Այրարատի» մեջ, քիչ հետո...[8]։

Այս էր 1888-ին, որմէ հետո, 1889-ին, 1890-ին և 1891-ին ամոան ամիսներ ես նորից նոր ուխտի գնացողի պես եկա Վենետիկ, 23—25-ամյա խանդավառ նկարչի իմ ուսումնասիրությունները լրացնելու այդ երազ քաղաքի մեջ և մտերմացա վերածնունդի տիտանական վարպետների գործերի հետ։

Հայր Ղևոնդը դեռ 1888-ին իմ Ձեր վանքը այցելելու օրերում ինձ ծանոթ պահելու համար գրչագիրների մեջ ձեռք եղած հարուստ պատկերազարդին հետ՝ բազմիցս ցույց տվավ ինձ Վեհապատվելի Միաբանությանդ սեփականությունը եղող 2000-ից ավելի հին ձեռագիրների հավաքածուն և նրանց մեջ իր ամենաշատ սիրած միավորների պատկերները, և հավատացած, որ մի օր ես առանձնապես նվիրվեի նատկապես հայ հին գրքերի գեղարվեստին ուսումնասիրության, թելադրություններ արավ*։ Տեսնելով լուսահոգին խանդավառությունը և այս տեսակ բաները նորից նոր աշխարհք բերելու փափագը և մենակությունը, հաճույքով գրի ես ինձ նրա տրամադրության տակ և երեք տարի ամառնային արձակուրդի օրերս տրամադրեցի իրեն և քսան երեսուն յուր ամենաշատ սիրած բաներեն արտանկարեցի յուր նախասիրած բաներից Ձերդ վանքում, Ձերդ գրչագիրների հավաքածուից։ Կսիրեմ հավատալ, որ Ս. Ղազարու վանքում իրենց օրերը մեր ազգի հանճարի պանծացման համար մատաղ բերած լուսահոգիների հետ մահու թողոնների դեզերը եթե ուզեք քրքրել, այդ իմ գործերը կգտնեք։

Հայր Ղևոնդը քանիցս ուզեց իմ կատարած գործի համար ընդունել դրամ՝ որպես փոխ աշխատավարձ. այդպեսով նա ինքն իրեն մի քիչ թեթևցած պիտի զգար. բայց ես մերժելով մերժեցի և խնդրեցի չանել այդպես առաջարկ, ինքն ամբողջ կյանքով մեզ նվիրված և մեզ համար վաստակած Հայր Ղևոնդը։ Ես նրանից խնդրեցի միայն մի քանի անգամ հատուկ նստել իմ դիմաց և թույլ տալ ինձ յուր

* Առանց օ՞նէ հպումի կհրատարակենք այս նամակը, գրված 84-ամյա ծերունիե մը, որ կմոռնա երբեմն ամբողջացնել նախադասությունը և կկրկնե բառերը։

* Այս տողերու ընդգծումը մեկմե, ցույց տալու համար օր հեն այդ քառերուն մեջ Ծնթվաճյան կրուզե հասկցնել կրած տպավորությունները իր ապագա նկարչի ուղղության համար։

դիմապատկերը նկարել պատատոի վրա յուղաներկ։ Նա չի մերժեց խնդիրքս և 1891-ին, երբ մեկնելու էի Իտալիայից դարձյալ, եկա Ձեր Վենետիկը դարձյալ, մնացի երեք շաբաթի չափ և Ձերդ վանքում, յուր սենյակի մեջ նկարեցի անմոռանալի մեծ մարդու դիմապատկերը։

Հետագային, մինչև 1895-ի ամառը, երբ չհաջողվեց ինձ մնայուն կացարան ունենալ, ես այդ դիմապատկերը ավանդաբար հանձնել էի Վիեննայում պարսից Շահի դեսպան և ինձ մեծ բարեկամություն ցույց տված Նարիման խան Ենիկոլոբյանին[9], երբ կյանքի դեպքեր տարին դեռ շատ երիտասարդ աշխատավորս մինչև Ռուսաստանի մայրաքաղաք Ս. Պետերբուրգ, ուր մնացի մինչև 1903. բարեկամս Նարիման խանն էլ կորուցի, քանի նա կյանքի դժբախտ պարագաների հետևանքով գնացել քաշվել էր Ֆրանսիայի գավառական մի քաղաք և այնտեղ էլ մեռել։ Չգիտենալով դեպքերի ինչպիսի լինելը և չկարողանալով ձեռք բերել ավելի ծանոթություն, ես երկար տասնյակներ տարիներ համարել էի իմ ձեռագործ դիմապատկերը կորսված։ Այսպես եղածը երբ մեկ միտքս կուգար կափսոսայի և կսգայի, բայց ինչպես կլիներ չգիտեմ, մեկ-մեկ էլ կհուսայի, որ իմ պաշտելի Հայր Ղևոնդի դիմապատկերը ո՛րտեղից էլ լինի պիտի գտնվեր մի օր։

Թվականս մի ութ տարի առաջ ձերդ միաբանակից մի հոր հեղինակությունը եղող բանաստեղծությունների մի-մի հատոր երբ հասել էր Բոստոն, բարեկամներիցս մեկը ձեռք բերելով այն, պատահաբար կարդալիս հանդիպել էր և մի պոեմա վերնագրած «Հայր Ղևոնդ Ալիշանի դիմապատկերին դիմաց». գործ նկարիչ Ա. Ֆեթվաճյանի[10]։

Չգիտենալով ոչինչ եղածին պատմականից, երբ ինձ հարցուց, թե ե՞րբ էի նկարել Հ. Ղևոնդ Ալիշանի դիմապատկերը և իմացավ բոլոր եղածը, ձեռքս սեղմեց և ավետեց բարեհաջող լուրը։ Կարող եք երևակայել այդտեղ իմ հոգեկանը, երբ ես հիշելով այդ պատկերի կորուսված լինելուն պատճառով քառասուն տարի իմ սուգը և հետո այս գյուտի ինձ առթած հրճվանքը։ Իմ ձեռաց գործը ոչ միայն չէր կորսված, այլև գտնվում էր իրեն ամենից ավելի վայելուչ

տեղ, Ս. Ղազարու վանքը, Հ. Ղևոնդ Ալիշանի հարազատների տանը։ Փառք տվի աստուծո և նույն օրն իսկ նամակով դիմեցի Հայր Եղիա Փեչիկյանին[11], խնդակցությունս հայտնեցի և խնդրեցի, որ առանց վախենալու թանկությունից՝ անհապաղ ինձ հայտնի լինելիք ծախսի մասին և հոգա այդ դիմապատկերը արտատպել տա գունավոր և ինձ ուղարկե...»։

Ողբացյալ Ա. Ֆեթվաճյան բախտը չունեցավ դժբախտաբար իր վերահաս մահվամբ՝ տեսնելու վերստին իր գործը։ Հավիտյան զաղտինք մը մնաց իրեն, թե ինչպես այդ նկարը անցած է մեր ձեռքը։ Ազգային մը Ֆրանսիայի մեջ նվեր ըրած է զայն Հ. Վահան Հովհաննեսյանի՝ որ հեղինակն է այդ բանաստեղծության, որուն կակնարկե Ֆեթվաճյան իր վերև հրատարակված նամակին մեջ[12]։

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ապրիլ ամսի սկզբներին, 1901 թվին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ, թե՛ Մխիթարյանների վանքի՝ հայագիտությամբ հարուստ գրադարանից օգտվելու, և թե՛ Իտալիան հնար եղածի չափ տեսնելու։

Ուշ երեկոյին հասնում եմ Վենետիկ։ Առավոտ վաղ ոտքի վրա եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը։ Հետաքրքրությանս առաջին գծի վրա սա է կանգնած. պատանի հասակիցս երազել եմ տեսնել Վենետիկը, բայց մանավանդ՝ Ս. Ղազարը։

Նեռում եմ ինձ առաջին պատահած գոնդոլի վրա։ Մի արևավառ օր է. սև գոնդոլը սև կարապի պես ներդաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով։ Սա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասի։ Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիոնով կառուցված վենետիկյան չքնաղ ոճով։ Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքա՜ն անիրական, այնքա՜ն երևակայական են թվում այս բոլորը, սակայն ես հայացքս հառել եմ լագունայի հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին։ Գոնդոլավարը, ճանապարհի ընթացքին հանդիպող կղզիների անունները տալով, առաջանում է և ահա, ցույց է տալիս ոչ շատ հեռվում՝ Սուրբ Ղազարը...

Դանդաղ է քայլում գոնդոլը։ Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գոնդոլավարին։ Մոտենում ենք կղզուն. անհագուրդ նայում եմ կանաչ նոճիների միջից երևացող կարմիր շենքերին.— «Սուրբ Ղազարն է սա»— ասում եմ ինձ և կրկնում։

Ի՜նչ պատկառելի անուններ հնչում են ականջիս՝ Մխիթար Սեբաստացի, Ագոնց, Զամչյան, Ինճիճյան, Բագրատունի և... Ալիշան, որին բախտ կունենամ այսօր իսկ տեսնելու։

Ինչքա՜ն մեծ երախտիք ունի Սուրբ Ղազարի միաբանությունը հայ գրականության, հայագիտության հանդեպ։ Ի՜նչ հոյակապ գործեր՝ առաջին աշխարհաբար հայ գրականություն, Հայկազյան բառարան, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն՝ ստվար հատորներով, հին ձեռագիր մատյանների (մատենագրությունների) հրատարակություններ, կլասիկների թարգմանություններ։

Գոնդոլը կանգ է առնում։ Սրտատրոփ ոտք եմ դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա։ Ինձ դիմավորում է մի առողջ, համակրելի երիտասարդ վարդապետ։ Նսայի Տայեցի՝ «Անվավեր ավետարանների» հրատարակիչը։

Միաբաններից մեկը, ամեն օր հերթով, ընդունում է այցելողներին և ցույց է տալիս Սուրբ Ղազարի տեսարժան տեղերը՝ տաճար, մատենադարան, թանգարան տպարան, պարտեզ և այլն։ Վանքը լավ համբավ ունի Եվրոպայում, և Վենետիկի այցելուները չեն թերանում Ս. Ղազարն էլ այցելելու։

Վանքը շրջելուց հետո Նսայի Տայեցին առաջնորդեց ինձ հյուրասենյակը, ուր ծանոթացա մի քանի երիտասարդ վարդապետների հետ, արդեն անուն ունեցողներ՝ Վարդան Հացունի, Էփրիկյան, Սիմեոն Երեմյան։ Հյուրասիրեցին սուրճով և անուշեղեններով։ Նրանք շատ հետաքրքրվում էին Կովկասի հայերի կացությամբ, հարցնում էին դպրոցների մասին, գրականության և էջմիածնի մատենադարանների մասին, Անիի և այլ հնությունների պեղումների մասին։

Այս զրույցից հետո փափագ եմ հայտնում տեսնել հայր Ղևոնդ Ալիշանյանին։ Այս անգամ Սիմեոն Երեմյանն առաջնորդում է ինձ մեծանուն բանաստեղծի և գիտնականի մոտ։

Ինչքա՜ն, ինչքա՜ն ուրախ եմ, որ պիտի տեսնեմ ամ-

բողջ հայության սիրելի Ալիշանին։ 90-ական թվականների մեր սերունդի համար նա ամենահմայիչ անունն էր. նրա՝ Նահապետի սքանչելի բանաստեղծությունները՝ «Հրազդան», «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ, գարունդ է եկել»[2] մենք անգիր գիտեինք, մեր դասագրքերի զարդն էին նրանք, ոգևորված արտասանում էինք հանդեսներում։ Ալիշանը և ուրիշները վանքում, հին մատենագիրների, մագաղաթների ներշնչումով ստեղծել են մի հոգեկան, գաղափարական Հայաստան և ապրում են ու երգում այդ անգո հայրենիքում, որպես իրականության մեջ, իրական Հայաստանում։ Հայր Ալիշա՜նը. նրա ոտները իրական երկրի վրա էին, իսկ գլուխը հինգերորդ դարում, երազների մեջ։ Նրա գրքերին պատկառանքով էինք մոտենում, որոնք մեզ համար բացարձակ հեղինակություններ էին։ Նրա աշխարհագրական երկերի վրա («Այրարատ», «Շիրակ», «Սիսական») սովորում էինք Հայաստանը, և նրա պես, չտեսած հայրենիքի նվիրական վայրերը, սիրում էինք մի անբացատրելի սիրով։

Մանում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ՝ ծովահայաց լուսամուտով։ Դրասեղանին հակված է մի ալեվոր փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ և... գրում է։

Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը. մի փոքր սեղանի վրա մի ջրաման՝ ջրով լի, կողքին մի բաժակ։ Եվ ուրիշ ոչինչ։

Ալիշանը բարձրացնում է գլուխը. խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր։

Հուզմունքով համբուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկառելի հատորները։

— Ապրիք, զորանաք, ուրկե՞ կուգաք,— հարցնում է Ալիշանը տակավին առույգ ձայնով։

Հայր Սիմեոնը պատասխանում է իմ փոխարեն։

— Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է։

Ես հայտնում եմ իմ մեծ ուրախությունը, որ բախտ ունեցա տեսնելու մեր բոլորիս պաշտելի Նահապետին և այսպես առույգ, առողջ... Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՞ն պիտի մնամ Վենետիկ։

— Ես կրնամ ձեզ սուրճ հրամցնել. վարդապետ, գնա՛ մեղի համար սուրճ ապսպրե։

Ես շնորհակալ լինելով, հրաժարվում եմ սուրճից։

— Սակայն դուն գնա՛,— ասում է Ալիշանը։

— Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր. դուք թեյ կսիրեք։ Ասկե շատ տարիներ առաջ պարոն Միանսարովը[3], հայտնի ազգային մը, գիտե՞ք զինքը։

— «Քնար Հայկական»-ի խմբագիրը, թերևս։

— Ապրես, գիտուն մանչ ես. այո՛, ան Պետերբուրգեն այցի եկած էր վանքը ու ինձի ինքնաեռ մը նվեր բերած էր. ըսավ ինձի.— վարդապետ, թեյ խմել սովորե, աշխատանքի ժամանակ աղեկ է։ Չգործածեցի, հոն կմնա վանքի մեկ անկյունին մեջ։

Տպարանում գնել էի Ալիշանի մեծ լուսանկարը, հիմա խնդրում եմ, որ բարեհաճի իր անունը գրել նկարի ներքո, որ շատ թանկագին հիշատակ կլինի ինձ համար։

Ալիշանը ամուր ձեռքով, դանդաղ ստորագրում է իր ներշընչող անունը։

Ավելի քան կես դար այս խուցում կամ նման խուցում, իր ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Ադրիանի ոսկի ալիքներին և ականջը մշտամրմրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ, երգել է իր «Նվագք»-ները (հինգ հատոր՝ I հատ. «Մանկունի», II հատ. «Մաղթունի» և «Քնունի», III հատ. «Հայրունի», IV հատ. «Տերունի», և V հատ. «Տխրունի»), երազելով հայրենին, տիեզերք, անհունություն, հավերժություն...

Այս խուցում ներշնչված Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու ներկայությամբ, անխոնջ համբերանքով և ավյունով պրպտել է ողջ մատենագրությունը՝ պատմական և աշխարհագրական, արդի հայ գրականությունն ու մամու-

լը, հավաքել է անթիվ տեղեկություններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ հին և նոր։

Ալիշանը դիտնական աշխարհագրագետ էր, անդամ եվրոպական աշխարհագրական ընկերությունների[4]. հմուտ ու շատ կարդացած էր. խորապես ծանոթ եվրոպական գիտնականների գործերին՝ Ա. Հումբոլդի, Կ. Ռիխտերի, Էլ. Ռեկլյուսի[5], այլև հին ու նոր ուղեգրությունների, սակայն, նա գրքերից կոմպիլյացիա կազմող չէր՝ շոր ու ցամաք, այլ, առանց նյութական աշքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը, տեսավ տարածություններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, դղվեց, հիացավ նրանցով։

Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական։

Հայաստանը ոչ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ոչ ոք այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը։ Իրականությունը նրա դրչի տակ երազ էր դարձել և երազը՝ իրականություն։

Լուսանկարը վերցնում եմ խորին շնորհակալությամբ, նորից համբուրում եմ բազմաշխատ ձեռքը, և խուցից դուրս գալիս։

▲

Տակավին վենետիկ էի, երբ Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ ստացա։ Գրում էին, որ ուսանողների այդ խմբակը ձեռնարկել է ժամանակակից հայ անվանի մարդկանց կենսագրությունները գրել ժողովրդական լայն խավերի համար։ Դիմում էին ինձ, որ անմիջապես Ալիշանից կենսագրական տեղեկություններ, փաստեր, դրվագներ խնդրեի, պատմեր ինձ, և նույնպես միաբաններից հավաքեի նյութեր, նաև հարցնեի նրա կարծիքը Թրքահայերի հարցի մասին (Հայկական հարց)։

Այս նամակով զինված, գնացի Ալիշանի մոտ։ Ալիշանը հեգնանքով ասաց.

— Այդ ի՞նչ ծանր քար են դրած քո մեջքին։ Վախեցա՞ր. գրելիք բան մը չկա։ Ես կենսագրություն չունիմ։

Ասաց, որ իրեն 8—9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Սուրբ Ղազար, նվիրել են վանքին։ Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մատաղ տարիքում, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել[6]։— Եվ քանի մը գրքեր եմ դրած։ Ուրիշ ալ բսելիք չունիմ։— Գրքե-գիրք՝ ատ է եղած իմ ճամփան։ Ուրիշ տեղեր չեմ գացած։

Հետո ասաց, որ աշխարհականները կենսագրություն ունին, կարող են ունենալ։ Գործեր կբռնեն, կընկնին, կելնեն։ Ճամփորդություններ կկատարեն, կկռվին, դատեր կվարեն, կամուսնանան, երեխաներ կունենան և այլն, և այլն։

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Ալիշանն ասաց հետևյալը, որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով.

— Իհարկե, հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ինչպես առանց Եվրոպայի օգնության չպիտի կարողանային ազատվել ո՛չ Հունաստանը և ո՛չ Բուլղարիան։ Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել էր քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ, քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա։ Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագույն և բազմաղետ սխալը։

Կոտորածների ժամանակ Թերզյան հայ կարդինալը՝ գընում է Հռոմ, ընկնում է սրբազան պապի ոտները, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որ չարդարար թուրքի ձեռքը բռնեն։ Սրբազան պապն ասում է.— «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»։

Եվրոպական պետությունները ոչ միայն չօգնեցին և չպաշտպանեցին իրենց հուսացող հայ ժողովրդին, այլ պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արյունը։ Հայ

ժողովրդին վաճառեցին Թուրք դահիճին՝ փոխարեն ստացան տնտեսական-առևտրական մենաշնորհներ։ Եվրոպայում «բարոյականը ավերված է». բարոյապես սնանկացած է նա. նախնական՝ մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անգամ։ Նա ստախոս է, շահամոլ է և եսական։

Պետք է ընդմիշտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և դարշանքով երես շրջել։

Թուրքահայերի պատրիարք Օրմանյանը քաղաքագետ մարդ է[8]. բարեկամական հարաբերություններ է մշակում նա սուլթանի հետ։ Պետք է աջակցել նրան։ Մի բանով՝ պետք է համակերպել. ուրիշ ելք չեմ տեսնում հայերի համար։

Հետո ավելացրեց.— Ռուսահայերի վիճակը, համեմատաբար, գեշ չէ. կոտորած, հափշտակություն չկա, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունեք, հայկական դաստիարակություն չկա, լեզու և մշակույթ ճնշման տակ են, այս դրությունը ցանկալի արդյունք չի տալու։ Ռուս պետությունը իր բերանով է ասում այս։

Մի երկու տարի առաջ վանքն է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երևի՝ Պոբեդոնոսցև, սինոդի օբեր-պրոկուրորը[9]) իր քարտուղարի հետ։ Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտքի վրա են և քայլում են նրա հետ։ Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը... Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է.— Ես հիացած եմ ձեր աշխատանքի համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ։ Որի՞ համար են այդ անձնազոհումները. մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի։ Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսաստանում էլ հայերը ոչ-ռուս ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու։

Բոլոր միաբանները սոսկացին, սակայն, աբբահայրը (Իգնատիոս եպիսկոպոս Կյուրեղյան) հանդարտությամբ պատասխանում է.— Հայ ժողովուրդը շատ ավելի ահեղ

ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար։ Մեր հույսը աստծու վրա է, մեր ժողովրդի տոկունության և պատմության անխմանալի ընթացքի վրա։

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծանուն պաշտոնյան, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց։

Ալիշանն ավարտեց խոսքը, ծանր շնչեց. լռեց մի պահ, ապա, ձեռքը մեկնելով ինձ, ասաց.— Բարևներ խոսեցեք Պետերբուրգի ձեր ազնիվ ընկերներին, նաև իմ շնորհակալությունը իմ հանդեպ ունեցած նրանց հարգանքի համար։ Շրջահայաց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստանն աշխարհը և սիրեցեք միմյանց։

Ես խոնարհեցի գլուխս և դուրս եկա նվիրական խուցից։

▲

Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ առնելու։

Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց Խրիմյան Հայրիկին։

— Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,— ասաց Ալիշանը,— բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...

ՔԵՐՈՎԲԵ ՉՐԱՔՅԱՆ

ՀՈՒՇԵՐՍ Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Իրեւ վերջին մնացորդ Հ. Ալիշանը ճանչցողներու, սիրով կուգամ կատարելու պարտականություն մը, իր մահվան վաթսունամյակին առիթով։

1889-ի հոկտեմբերի 3-ին, տասներկու տարեկան կհասնեի Պոլսեն Ս. Ղազար. քանի մը ամիս վերջ, 1890-ի մայիսի 25-ին, տեղի կունենար Հ. Ալիշանի քահանայական հիսնամյա հոբելյանը, իր երկու դասակիցներով, Հ. Աբրահամ Ծարյան, ծանոթ գրագետ և ճարտար դաստիարակ, ու Հ. Ղուկաս Լազյան՝ քաջ մեքենագետ. միասին կտոնեին իրենց հիսուն տարիներու նվիրական ու բազմարդյուն կյանքը։ Մենք, փոքր ընծայացուներս, նույն օրը ճաշարանին մեջ երդեցինք ի պատիվ Հ. Ալիշանի «Արեգակն արդարութեան», Ղևոնդյանց ու Վարդանանց նվիրված շարականը։ Ցնծությամբ կտրոփեր մեր սիրտը, և հայրենիքի սիրույն կայծը առաջին անգամ կզգայի իմ մեջս։ Գիտեին մեր ուսուցիչները այդ հուրը բորբոքել, երբ նման առիթներուն, վանքի կամարներուն տակ կամ Մուրատ-Ռափայելյան վարժարանի դահլիճին մեջ, ամեն հանդես կսկսեր, կամ կփակվեր «Թա՜մ. փորոտան» քայլերգով և հրաշունչ այդ բառերուն հեղինակը կկարծեի, թե ինքնին կմղեր գիս հայրենանվեր հայկազուններու հետ, հառաջ, հառաջ։

Կտեսնեի ալեոր ծերունին մեր մեջ, մեզի հետ, եկեղեցական և ուսումնական ամեն հանդեսներուն. ու մենք, իր քերթվածներեն կարտասանեինք. «Տերունի»-են «Հայրունի»-են[1], բան մը ավելցնելով մեր սրտին խորը իր շունչեն. ճաշարանին մեջ ալ, ամբիոնեն, երիցագույն մեր ընկերները կկարդային «Այրարատ»-են Ղևոնդյանց դրվագը՝ Վարդանանց տոնին[2]. ութօրյա հոգևոր կրթության առթիվ հոգեշունչ իր ճառերը. վերջապես՝ իրմով կհագենար մեր հոգին ու միտքը, մինչ ինքը դլխահակ կունկնդրեր, ծածկված երբեմն իր փիլոնին մեջ։ Ուսումնական տարեվերջին մեզի նվեր կտրվեին իր «Նուագք»-ները, «Յուշիկք»-ները, «Շնորհալի և պարագայ յուր» աշխարհաբար և սիրուն գրությունները, որպեսզի արձակուրդի օրերուն անոնց ընթերցումով զարգանայինք։

Երբ տակավին Ֆիլեստոյի ամարանոցը կերթայինք[3] տարեկան մեր արձակուրդի շրջանը անցնելու, իրը ասուպ մը կերևեր Հ. Ալիշան, առավելապես շաբաթ օրերը, հոգևորապես մեզ պատրաստելու Կիրակի օրվան Ս. Հաղորդության. թանկագին էին իր ակնարկությունները և ամեն բառերը, ուղեցույց և առաջնորդ պատանեկան մեր հասակին։

Նույն ամարանոցի գլխավոր կեդրոնի շենքի երկար սրահին մեջ էր, որ հարդարվեցավ սեղանը բացառիկ օր մը, և Գերապայծառ Կյուրեղյան աբբահոր ու Հ. Ալիշանի հանձնվեցավ Իրանի շահին նվիրած շքանշանը, պատվիրակությամբ Հռոմի դեսպան, իշխան Մալգում խանի, նախկին աշակերտ Փարիզի մեր Մուրատյան վարժարանին[4]։ Այդ պահուն մեր փոքրիկ մտքերը կընդարձակվեին դեպի հեռավոր աշխարհներ, ուր Հ. Ալիշան իր համբավով կծավալեր Մխիթարյան անունը. կզգայինք, որ ան իր անունին մեծությունը և հմայքը կկապեր պարզունակ ու խոնարհ կրոնավորությանը հետ։

Աքեմառությանս առիթով, 1893-ի նոյեմբերի 26-ին, ինչպես սովորություն է փոխել մկրտության անունը և նոր կյանքի համար ընտրել նոր անուն մը, նույն ատենվան առաջնորդ հորս առաջարկած Կոստանդին թագավորական անունը շատ շքեղ երևեցավ ինձի, մինչ իմ փափագս էր Հ. Ալիշանի նախկին անունը կրել, Քերովբե, հուսալով, որ իր հոգին ալ զգենում։ Գիտեի նաև, թե իր աշակերտներեն Քուշներյան երկու եղբայրներուն՝ իր և իր հարազատին Սերովբե ու Քերովբե անունները տալով, առարկա դարձուցած էր զանոնք իր հատուկ գուրգուրանքին[5]։

Քահանա ձեռնադրվելով՝ առիթը կփնտրեի, թեև հազվա-

դեպ, սենյակի առանձնության մեջ հետը խոսելու. մեծ էր ամենուս սերը և հարգանքը իրեն հանդեպ, ու կակնածելինք հանգստյան պահերուն իսկ խանգարել զինքը, երբ սովոր էր երկար քայլերով շրջան մը ընել, սպիտակ թաշկինակը անցուցած գլխուն շուրջը՝ մաքուր օդ շնչելու, կամ ձմեռ եղանակին՝ արևու ջերմությունը վայելելու, պահիկ մը, շուտով վերադառնալու համար իր գրքերուն։

Սովոր էր, ամառ թե ձմեռ, առավոտյան ժամը 4,30-ին, իջնել նկեղեցի, մոմե լապտերը վառած, որովհետև էլեկտրական լուսավորությունը հասած չէր դեռ Ս. Ղազար։ Օվ աշակերտությանս շրջանին ուրախ էի, երբեմն իր պատարագին սպասավորելու. այնպես կավելանար իր վրա հիացումս ու պաշտամունքս։

Առավոտյան ժամերգությենեն վերջ ներկա կըլլար վանքի աշակերտներուն համար մատուցված սուրբ պատարագին, կատարելով մտավորական աղոթք կամ հոգևոր ընթերցում։ Աչքերը տկարացած ըլլալով՝ փոքրիկ մոմ մը կլուսավորեր ձեռքն ունեցած գիրքը։ Անգամ մը շատ, մոտեցուցած ըլլալով ճրագը, բոց առին հանկարծ սպիտակ մորուքը և մազերը. փութացի անմիջապես փիլոնովս ծածկել պատկառելի և սուրբ գլուխը, ազատելով սիրելի Նահապետը։ Կես ժամ վեր, նախաճաշիկի պահուն, մոտեցավ և ըսավ. «Մեծ վտանգ ապատեցիր զիս այսօր, պարտական եմ քեզի»։

Հակառակ իր առանձնասիրության և լռակեցության, հետևող էր հասարակաց կյանքին, առանց արտոնություն կամ զարտուղություն փնտրելու իր անձին համար. խոսուն օրինակ էր ամենուս։ Շատ դժվարին էր կարդալ իր հոգվույն խորը, եթե վանականներուս համար թողած չըլլար իր «Հոգևոր ճառ»-երը, գոհարներու այդ շարքը, որոնք մեր ուխտյա հոգևոր կրթության ուղեցույցն էին, նույնիսկ տպագրվելեն առաջ։ Քահանայական ձեռնադրության մեր ուխտյա պատրաստության ընթացքին՝ ընկերներս ու ես կարոտով կսպասեինք, որ ամեն երեկո գար, փակելու իր հրաբորբոք խրատով նույն օրվան մեր խոկումները։

Ով որ կփափագի անոր սրտին զգացումներուն մեջ թափանցել, բավ է որ կարդա արեղաներու համար՝ այբուբենական կարգով գրած աղոթքները, կամ 1842-ին տողած «Օրագիր առժամայն ալղմանց մտաց և սրտի» (Տես «Բազմավեպ» 1909—1910 թթ.)։

Խստակյաց կյանք կվարեր և թուչունի պես կանաներ, ավանդապահ էր սովորություններուն և պահպանող վանական կարգ ու կանոնին։ Պատահմամբ օր մը զիս տեսնելուն, հարցուց, թե հավնե՞ր էի երկաթյա զարդարուն մեծ դռան, որ փոխանակված էր վանքի մուտքի փայտյա հին դռան հետ, տեղնիտեղը ավելցընելով, թե ավելի պանդոկի, քան թե վանքի մը կհարմարեր այս նորը։

Բնությամբ կրակոտ, դիտեր սակայն սանձել իր մեջ բռնկող հուրը. ծայր աստիճան փափկանկատ էր և զուգ ու կարեկից ոչ միայն իր միաբանակիցներուն, այլև հանդեպ թուչուններուն, որոնք վարժված էին դիմել ձմեռը իր պատուհանին առջև ցանված հացի փշուրները կոցելու։

Խոնարհ՝ ինքն իր աչքին և խուսափող՝ պատիվներեն ու զովեստներեն, գիտեր պատշաճ ակնարկություններով դնահատել իր շուրջը աշխատողներու ջանքը և քաջալերել՝ մանավանդ ընդօրինակությամբ ու սրբագրություններով իր տպագրություններուն օժանդակողները, և արդյունավոր անձերու հորելյանին կամ անոնց մահվան առիթով, իբր հիշատակ իր հարմար դատած մեկ աշխատությունը ընծայել տպագրությամբ։

Շատերու հետ ինքն ալ տարի մը գրիպով բռնվեցավ և ամիսներ մը՝ խնամքով ու ամենուս աղոթքով ոտքի ելավ. կազդուրման օրերեն մեկը երիտասարդներու շուրջը հավաքվեր էինք մեր ուրախությունը հայտնելու. սակայն Հ. Ալիշան, մեզի իբր օրինակ, իր կյանքը կհամեմատեր մատանին մեջ աշխատող եղբայր Ալեքսիսի՝ անցուցած անշուք ու լռիկ կյանքին հետ, նախանձ հայտնելով, թե ինչո՞ւ ինքն ալ անոր չէ հետևած։

Այդ ժամանակները չիար կենտրոնական ջեռուցում, ու Հ. Ալիշան թեթև կհագնվեր և չէր սխորժեր սենյակին մեջ դրված վառարանը գործածել. կդողայինք մենք իր առողջության վրա, նկատելով առաջացյալ տարիքը։ Անգամ մը

արդեն սրտի տագնապ անցուցած էր և հասավ անխուսափելին։

Կատարեց մեզի հետ Տիրամոր ընծայման տոնը, 1901 թվականի նոյեմբերի 21-ին, նույն երեկո դիտողություն ընելով ամենուս առջև, թե ինչո՞ւ Լիթանիային մեջ «Թագուհի ննջեցելոց» ալ չէ գրված։ Ընթրիքեն վերջ, մինչև սենյակին մեջ կպատրաստվեր հանգչելու, սրտի երկրորդ տագնապ մը, շատ ավելի ուժգին, տանջեց զինքը և շուրջը գտնվողները մինչև առավոտ, պատրաստելով զինքը հավիտենական հանգստին։

Փոթորկահույզ օր մը, Ս. Ղազարու կղզյակին հյուսիսակողմը տնկված տարիքոտ նոճիները մեկ անգամով տապալեցան. անոնց փոխարեն նորեր տնկվեցան, որոնք բարձրացուցին իրենց գլուխները, մոռցնելով եղած ավերածը։ Սակայն 1901 նոյեմբերի 22-ի փոթորիկը[8] քանդեց մեր հոյակապ սյունը՝ Հ. Արիշանը, որ անփոխարինելի մնաց միաբանությանս ու ազգին համար։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԵՆԵՏԻԿԻՑ

Առաջին անգամ հրատարակվել է «Արձագանք» շաբաթաթերթի 1883 թ. № 22 (մայիսի 29) համարում, արտատպվում է որոշ կրճատումներով։ Հոդվածի հեղինակ Նիկողայոս Տեր-Հարությունյանը, որը «Հարու» կեղծանունով հրատարակվող իր գործերով լայնորեն հայտնի էր 19-րդ դարի երկրորդ կեսին, «Արձագանքի» սեփական թղթակիցն էր և շրջագայում էր Եվրոպայում։ Տարբեր քաղաքներից (Հռոմ, Փարիզ, Մյունխեն, Վենետիկ) ուղարկած նրա նամակ-թղթակցությունները էլ հաջորդաբար հրապարակում էր շաբաթաթերթը։

1 Նկատի ունի մատենագետ, գրականության պատմաբան Գարեգին Զարբհանալյանին (1827—1901 թթ.) որի աշխատությունները առ այսօր մեծ արժեք են ներկայացնում։

2 Երբ 1701 թվականին Մխիթար Սեբաստացին Վենետիկում հիմնադրեց այն կազմակերպությունը, որը հետագայում պետք է ժառանգեր իր անունը, տրեց ամեն ինչ, որպեսզի նրա գոյությունը լինի հարատև ու անխափան։ Սակայն Սեբաստացու հաջորդ՝ Ստեփաննոս Մելքոնյան (1717—1799 թթ.) աբբահոր ժամանակ, որը կամենում էր որոշ փոփոխություններ մտցնել միաբանության կանոնադրության մեջ, ծայր առան դժգոհություններ ու վեճեր։ Հետևանքն այն եղավ, որ 1772 թ. Մայիսի 25-ին վարդապետների մի խումբ Աստվածատուր Պապիկյանի գլխավորությամբ հեռացան Ս. Ղազարից։ Վերամիավորվելու բոլոր ջանքերն ապարդյուն անցան, և «պառակտյալները» մեծամեծ դժվարություններից հետո կարողացան հաստատվել Վիեննայում և հիմնել ինքնուրույն միաբանություն, որը դարձյալ կրում էր Մխիթարի անունը։

3 1881 թ. վերջերին Թիֆլիսի հնագիտական ընկերությունը որոշեց իր միջոցներով հայ մտավորականներից բաղկացած մի արշավախումբ ուղարկել Սյունիք (Լեռնային Ղարաբաղ), տեղում եղած պատմական հնություններն ուսումնասիրելու համար։ Որպես հնություններին քաջալերական անձնավորություն՝ որոշվեց արշավախմբի կազմում մտցնել նաև Ալիշանին և անհապաղ դիմել նրան, համաձայնություն ստանալու համար։ Հարցին անդրադարձավ և մամուլը։ 1882 թ. № 28-ում, «Մեղու Հայաստանին» հրատարակեց «Մեր աշխարհի հետ մեզ ծանոթացնելու ընտիր միջոց» խորագիրը կրող մի հոդված (հեղ.՝ Ա. Մ. Փ.), որտեղ արծարծվում էր վերոհիշյալ հարցերը և կոնկրետ ուղիներ նշվում՝ արշավախմբի գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար։

Քիչ անց՝ պատասխան հոդվածով հանդես եկավ Ալ. Երիցյանը («Նախկին Հայաստանի ուսումնասիրություններ». «Արծագանք» 1882 թ. ապրիլի 11)։ Ճիշտ համարելով աբշավախիմբի միջոցով հայկական հնություններն ուսումնասիրելու եղանակը, Երիցյանը, սակայն, առարկում էր Ալիշանի թեկնածության դեմ, պատճառաբանելով, որ նա ծեր է և անուսուցչ։ Խոստակցությունը հավանորեն երկար կշարունակվեր, եթե չսայլվեր Ալիշանի պատասխանը ընկերության, որ ինքն առաջիկայում չի կարող դուրս գալ Ս. Ղազարից, խիստ զրպարված լինելու պատճառով։

4 Խոսքը վերաբերում է Ալիշանի «Միսուան և Լևոն Մեծագործ» աշխատությանը, որը հրատարակվել է Վենետիկում, 1885 թ. (592 էջ)։ Քանի որ աշխատության կերակրին մասը նվիրված է Կիլիկիայի պատմության ու աշխարհագրության քննական ուսումնասիրությանը, այդ պատճառով էլ «Միսուանը» երբեմն կոչվել է նաև «Կիլիկիա»։

ՕՐՎԱՆ ԿՅԱՆՔԸ

Առաջին անգամ հրատարակվել է «Մասիս» ազգային և քաղաքական շաբաթաթերթի 1887 թ. № 3875-ում (Շաբաթ, 30 մայիսի), «Հրազդան» ստորագրությամբ, որը, ինչպես հայտնի է, Արփիար Արփիարյանի գրական կեղծանուններից է։

1 1846 թ. հուլիսի 2-ին, Գեորգ Հյուրմյուզյանը ընտրվում է Մխիթարյան միաբանության արբահայր փոխարինելով մոտ հինգ ամիս առաջ մահացած Սուքիաս Սոմալյանին։ Ընդունված կարգի համաձայն, ներքնտիր արբահայրը պետք է նաև նշանակվեր որևէ գավառի հոգևոր առաջնորդ (արքեպիսկոպոս), իսկ քանի որ Մխիթարյան միաբանությունը հայադիտական կազմակերպություն էր, հետևաբար Հյուրմյուզյանը պետք է նշանակվեր որևէ հայկական գավառի (ասենք՝ Սյունյաց, Շիրակի) արքեպիսկոպոս։ Սակայն նույն 1846 թվականին (հունիսի 16) Հռոմում պապ էր ընտրվել Պիոս 9-ը՝ հետադեմ ու մոլեռանդ մի գործիչ, որը ոտնահարելով իրեն ենթակա ժողովուրդների ազգային իրավունքները, վարում էր նրանց ամեն ձևով կաթոլիկացնելու քաղաքականություն։ Այդ պատճառով էլ՝ Հյուրմյուզյանը 1846 թ. օգոստոսի 26-ին, առանց դրա համար որևէ հիմնավոր պատճառաբանության նշանակվում է արքեպիսկոպոս Հայաստանից հետո՝ Մակեդոնիայի Տրայանապոլիս քաղաքում, մի հանգամանք, որը շատ է դառնացնում ինչպես Մխիթարյաններին, այնպես էլ անձամբ իրեն՝ Հյուրմյուզյանին։

2 Խոսքը վերաբերում է պոլսահայության (մասամբ նաև՝ գավառներում) մեջ տարածված այն շարժմանը, որը մոտ հիսուն տարի քշկտեց հայությանը և բազում համազգային դժբախտությունների պատճառ դարձավ։ Այդ շարժումը ձևավորված կերպով հանդես եկավ 1846 թվականից, երբ Պոլսում, զանազան նենգ միջոցներով կաթոլիկ հայոց պատրիարք ընտրվեց Անտոն վարդապետ Հասունյանը (1809—1884 թթ.), որը վայելում էր ինչպես հետադեմ կարդինալներից մի քանիսի, այնպես էլ անձամբ Պիոս 9-րդ պապի հովանավորությունը։ Անողոքաբար վարելով հայությանը կաթոլիկացնելու քաղաքականություն, Հասունյանը բազմիցս հայտարարեց, որ «Հռոմի սրբազան հավատին», այսինքն՝ կաթոլիկությանը հետևող հայերը նոր ազգ են (որոնց նա կոչում էր «ֆրանկ»), որոնք ոչինչ ընդհանուր չպետք է ունենան մյուսների՝ լուսավորչական հայերի հետ, որոնք էլ, իրենց հերթին, որակվում էին որպես «հերձվածողներ», «հերետիկոսներ»։ Հիշյալ հարցերի շուրջը պարբերականներում ծայր առան երկարաշունչ վեճեր, ստեղծվեցին Հասունյանին պաշտպանող («Հասունյան») և նրան հակընդդեմ («Հակահասունյան») կուսակցություններ, որոնք, գիրազանցորեն Հասունյանները, չէին խորշում պայքարի ամենակեղտոտ միջոցներից անգամ (մատնություն, գաղտնի սպանություն և այլն։

Հասունյան և հակահասունյան պայքարը շարունակվեց մինչև 80-ական թվականները, մինչև այն ժամանակ, երբ Հռոմը, համոզվելով, որ Հասունյանի վարած ձախլիկ քաղաքականությունը սուկ մնաս է բերում գործին, հետ կանչեց նրան և կարդինալ օծելու պատրվակով (1880 թ.) ստիպեց հրաժարական տալ։

3 Իր «Պատմություն հայոց» աշխատության առաջին գրքում Միքայել Չամչյանը, ցնոր բազում աշխատանաց» ստեղծել է թվական հաշվումների մի ամբողջ համակարգ, հիմնականում առաջնորդվելով Աստվածաշնչի հաղորդած տվյալներով։ Ըստ Չամչյանի՝ նոյ նահապետն, օրինակ, մահացել է 2006 թվականին (մ. թ. ա.), ջրհեղեղը եղել է 1656 թվականին (մ. թ. ա.), Հայկ նահապետը մահացել է 1973 թվականին (մ. թ. ա.) և այլն։ Այդ նույն հաշվումների համաձայն, հայկական նավատորդը առաջին անգամ հանդիսավորապես նշվել է 2016 թվականին (մ. թ. ա.)։ Այս հանգամանքն է, որ ակնարկում է Արփիարյանը, և միաժամանակ ուշադրություն հրավիրում այն բանի վրա, որ 1894 թվականին լրանալու է հայկական նավատորդի հոբելյանական՝ 4000 ամյակը։ Չամչյանի վիրահիշյալ հաշվարկները դեռ իր ժամանակ ընդունվեցին մեծ առարկություններով ու վերապահություններով, իսկ հիմա, հասկանալի է, միայն պատմական նշանակություն ունեն։

4 Նկատի ունի հոգևորական-մշակութային գործիչ, լիզվագետ Սահակ Ագարյանին 1830 (?)—1899. էջմի ձևով՝ Ստեփաննոս Պետրոս Ժ. Ագարյան, կաթողիկոս պատրիարք տանն Կիլիկիո)։ Իր գործունեությունն սկսելով որպես դիվանատան քարտուղար, 1880 թ. ընտրվեց Պոլսի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդ, փոխարինելով Անտոն Հասունյանին, որին պաշտոնից ազատել տալու գործում զգալի դեր կատարեց։

Հ. ԱԼԻՇԱՆ ԵՎ ՅՈՒՐ ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ հրատարակվել է «Արձագանք» շաբաթաթերթի 1888 թ. № 19-ում (մայիսի 22) և արտատպվում է որոշ կրճատումներով։

1 *Տե՛ս Հարության «Նամակ Վենետիկից» № 3-ը։*

2 Նկատի ունի անգլիացի նշանավոր պատմաբան, հասարակական-քաղաքական գործիչ Թոմաս Մակոլեյին (1800—1859 թթ.), որի բազում աշխատություններից առանձնապես մեծ հռչակ բերեց «История Англии, от вошествия на престол Якова II» հինգ հատորանոց ուսումնասիրությունը։ Չնայած որոշ կողմնակալության, պատմությունն Անգլիայի բուրժուազիայի շահերին հարմարեցնելու իր միտումին, որի համար էլ արժանացավ Մարքսի արդարացի քննադատությանը, Մակոլեյի հիշյալ աշխատությունն ընդունվում է որպես իր կարգի գործերի մեջ լավագույններից մեկը։

3 Հուշապատումի վերջում զետեղված էր հայկական զանազան հուշարձանների ու պատմական տեղավայրերի (օր. Արագած լեռ, Սարդարապատ, Վահան Ամատունու գերեզմանը, Էջմիածնի Մայր Տաճար, Հավուց Թառ և այլն) ինքնուն տեսքից բաղկացած ընդարձակ ցուցակ, որը մենք դուրս թողեցինք։ Ասենք միայն, որ այդ նկարների գերակշիռ մասը, Ալիշանին համակրող այլևայլ անձանց կողմից ստանձնաբար ուղարկվեց նրան։

ՎԵՆԵՏԻԿ 1870 ԹՎԻՆ

Առաջին անգամ հրատարակվել է, «Մշակ» օրաթերթի 1890 թ. № 49 (մայիսի 3) և № 50 (մայիսի 5) համարներում։ Գրիգոր Արծրունին Վենետիկում է եղել 1870 թվականի կեսերին, իսկ հուշերը գրել է մոտ 20 տարի հետո, 1890 թվականին, Ալիշանի հիսունամյա հոբելյանի առիթով։ Հուշապատումը որոշ կրճատումներով արտատպվել է «Մշակի» 1901 թ. № 188-ում, (օգոստոսի 26), երբ նշվում էր Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակը։

1 Լորենց Շտեյն (1815—1890).— Գերմանացի իրավագետ, պատմաբան և տնտեսագետ։ Ալբերտ Շեֆլե (1831—1903)— Գերմանացի տնտեսագետ, սկզբնական շրջանում ասավածաբան։ Վիեննայի, հետագայում Թյուբինգենի համալսարաններում քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ և նույն առարկայի դասախոս։

2 *Տես Աբրահամ Տեր-Հակոբյանի «Հ. Ալիշանի հոբելյանի առթիվ» № 4-ը։*

3 *Խոսքը վերաբերում է Վիեննայի Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս Վարդան Ղազարյանին (1843—1886 թթ.), որն այդ պաշտոնը ստանձնել էր 1884 թ. հուլիսի 12-ին, փոխարինելով ավելի քան ինը ամիս առաջ վախճանված Հակոբոս Պողոսյանին։*

4 Մանդինյան Սեդրակ (1844—1915) նշանավոր մանկավարժ, դպրոցական գործի կազմակերպիչ, թարգմանիչ (գերմաներենից— հայերեն)։ Հայկական պայմաններում արմատավորում էր եվրոպական դաստիարակության մեթոդներն ու եղանակները։ Մանդինյանը Վիեննայից Թիֆլիս վերադարձավ 1874 թվականին։

5 *Մկրտիչ Սանասարյան (1818—1890) գրական-հասարակական գործիչ, խուզար դրամատեր, որն իր միջոցներն օգտագործում էր ազգային բարեգործությունների համար։ Սանասարյանի ֆիննանսական օժանդակությամբ Վանում հիմնադրվեց Մարիամյան օրիորդաց վարժարանը, Կարինում՝ «Աղջեստավորաց» մասնագիտական դպրոցը, Վենետիկի Մխիթարյանները նրա միջոցներով հրատարակել են իրենց մի շարք աշխատությունները (որոնց թվում Ալիշանի «Սիսուանը»)։ Կամենալով ավելի նպատակաուղղ դարձնել իր օգնությունն ազգին, Սանասարյանը բանակցեց նշանավոր բանաստեղծ, ռուսական պետական ականավոր գործիչ* **Կարապետ Եղյանի** *(1835—1905 թթ. նաև՝ Եզով) հետ, իր միջոցներով և ռուսական պետության օգնությամբ Կարինում հայկական վարժարան հիմնելու մասին։ Եղյանը ավելց իր համաձայնությունը։ Նոր բացվելիք վարժարանին ուսուցչական առաջնակարգ ուժերով ապահովելու համար, Սանասարյանը Եվրոպա՝ ուսման ուղարկեց մի քանի ընդունակ երիտասարդների (Փիլիպոս Վարդանյան, Հովանես Մարգարյան, Սարգիս Սոդիկյան և այլն), որոնցից մեկն էր նաև Սեդրակ Մանդինյանը։ Այսպես հիմնադրվեց հանրահայտ Սանասարյան վարժարանը, որը 1881 թ. հանդիսավորաբար սկսեց իր առաջին տարեշրջանը։*

6 *Տես «Հայկական աշխարհ» 1870 թ. № № 5, 6. «Մեծ Մխիթարի մահի տարեդարձը Սուրբ Ղազարի վանքում» հոդվածը (Նույնությամբ արտատպվել է «Գրիգոր Արծրունու աշխատություններ» (հատոր առաջին) Թիֆլիս, 1904 թ. էջ 285—291)։ Հոդվածում արծարծված տեսակետները հեղինակը գրեթե նույնությամբ զարգացրել ու պաշտպանել է նաև այստեղ։*

7 *Նկատի ունի քանասեր Թադեոսիոս Կյուրեղյանին (1833—1921), որն այդ տարիներին վարում էր փոխ-տեսուչի պարտականությունները, իսկ Ալիշանից հետո դարձավ Մուրադ-Ռափայելյան վարժարանի տեսուչը (1872—1873 թթ)։ Կյուրեղյանը 1876 թ. օգոստոսի 2-ին ընտրվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս, փոխարինելով չորս ամիս առաջ մահացած Գևորգ Հյուրմյուզյանին։*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Արձագանք» շաբաթաթերթի 1890 թ. № 11 (մայիսի 6), № 12 (մայիսի 13) և № 13 (մայիսի 20) համարներում։ Հուշագրությունը գրվել է Ալիշանի հիսունամյա հոբելյանի առիթով։

1 Ակնարկում է Գերմանիայի կայսր Վիլհելմ 1-ի ծննդյան 90-ամյակի առիթով կայացած հանդեսը 1887 թ. մարտի 1-ին։ Այդ տոնակատարությունն ամբողջ Գերմանիայում անցավ մեծ շուքով, իսկ Բեռլինում վերածվեց իսկական տոնակատարության։

2 Բերված է ժամանակին լայն տարածում գտած «Nun ade» (Դեհ, մնաք բարով) գերմանական ժողովրդական երգի կրկներգը։

3 Բաղդասար Ադոլֆ (1855—?)— Հայագետ-պատմաբան, որը գերազանցապես զբաղվում էր Խորենացիով։ Նրա առաջին խոշոր ուսումնասիրությունը «Պիտոյից գրքի մասին» հեղինակին մեծ անուն բերեց, իսկ հետագա գործերը նրան դասեցին Եվրոպայի լավագույն հայագետների շարքը։

4 Նկատի ունի բանաստեղծ, տեքստերի քննական հրատարակիչ, գրականագետ Բարսեղ Մարգիսյանին (1852—1921)։

5 Նկատի ունի Մխիթարյան միաբանության արքահորը՝ Իգնատիոս Կյուրեղյանին (Տես նաև Գր. Արծրունու «Վենետիկ», 1870 թ.» № 8-ը)։

6 Դիթիրամբ Հենրի (1818—1899)— Գերմանացի աշխարհագրագետ, Արևելքի պատմական աշխարհագրության տեսաբան, Բեռլինի համալսարանում պատմական աշխարհագրության պրոֆեսոր (1859-ից մինչև մահը)։ Նշանավոր է նրա «Պատմական Հայաստանի առլաս»-ը, որը մնալուն արժեք է ներկայացնում։ Ֆրեդրիխ Էդուարդ (1845—?)— Գերմանացի արևելագետ, սեմական լեզուների պրոֆեսոր նախ՝ Վիեննայում, ապա՝ Բեռլինում։ Ուշադրավ է նրա «Ճանապարհորդություն դեպի Ասորիք և Միջագետք» աշխատությունը, ուր բազմաթիվ տեղեկություններ կան հայերի մասին։ Վերոհիշյալ երկու գիտնականներն էլ մտերիմ էին Ալիշանի հետ։

7 1850-ական թվականներից սկսած Ալիշանը ձեռնամուխ եղավ պատմական Հայաստանի բոլոր 15 «աշխարհներին» (հետևաբար և 191 գավառներին) մասին պատմա-աշխարհագրական ուսումնասիրություններ գրելու գործին, որը, ըստ հեղինակի նախնական մտահղացման, պետք է կազմեր 15—20 մեծադիր հատորներ և ունենար «Համապատում» (վերնագիրը պայմանական էր) ընդհանուր խորագիրը։ Այս վիթխարի նախաձեռնությունը, սակայն, հեղինակը չկարողացավ իրագործել։ Իր ամբողջ կյանքի ընթացքում Ալիշանը հրատարակեց միայն չորս «աշխարհների» («Շիրակ», Վենետիկ, 1881, «Սիսուան», Անդ, 1885, «Այրարատ», 1890, և «Սիսական», Անդ, 1893) մասին իր հանրահայտ ուսումնասիրությունները։

8 Խոսքը վերաբերում է Ալիշանի «Այրարատ Բնաշխարհ Հայաստանեայց» աշխատությանը (590 մեծադիր էջ) որն իրոք լույս աշխարհ եկավ 1890 թվականի վերջերին։

9 Նկատի ունի Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Առ Հ. Ղևոնդ Ալիշան» բանաստեղծությունը (Տե՛ս «Տպագիր», 1903 թ. Թիֆլիս, էջ 56—58), ուր հեղինակը իր համակրանքն ու հիացմունքն է հայտնում ազգերախիչ արծիվ վեհ օդապարը նահապետին։

10 Ակնարկում է արևմտահայ գրական-հասարակական գործիչ Միքայել փաշա Փորթուկալյանին (հայտնի է նաև՝ Փորթուկալ փաշա ձևով), որն Ալիշանի աշակերտն է եղել։

11 Ճարլան Աբրահամ (1819—1892) թարգմանիչ, դպրոցական դասագրքերի հեղինակ, պատմաբան։

12 Խոսքը վերաբերում է Իտալիայի թագավոր Հումբերտո I-ին (1844—1900 թթ.) և նրա կնոջը՝ Մարգարիտա մայր թագուհուն (կամ՝ Մարգարիտա Սավոյացի, 1851—1926 թթ.), որոնք իրոք բարեկամական սերտ կապերի մեջ էին Մխիթարյանների հետ։ Մարգարիտա թագուհին Մխիթարյանների մշտական հյուրերից էր, Ալիշանի մոտ էր հաղորդվում և առհասարակ, ամեն առիթով իր ուշադրությունն էր ցույց տալիս նրան։ Իր հերթին Ալիշանը հրատարակած բոլոր աշխատություններից մեկական օրինակ նվեր էր ուղարկում նրան։ Թագուհու և Ալիշանի միջև եղած այս խոսակցությունը դժվար է ճշտությամբ վերականգնել, որովհետև տարբեր հուշագրողներ տարբեր ձևով են վերարտադրում։

13 Տե՛ս «Արձագանք» 1890 թ. № 9 (22 ապրիլ) «Հայր Ալիշանի գործերը»։ Հոդվածագիրը հիշատակում է Ալիշանի գրչին պատկանող ինքնուրույն և թարգմանական քառերկու անուն աշխատություններ, այսինքն՝ Ալիշանի գրական ժառանգության՝ այդ ժամանակվա համար անգամ փոքրաթիվ մասը։ Այդուհանդերձ՝ հոդվածը հետաքրքրական է այն իմաստով, որ նշված են նաև անստորագիր հրատարակությունները (Օրինակ՝ Շիլլերի «Երգ ի զանգակն», Բայրոնի «Իտալիա»-ն, «Քնար Ամերիկյան» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն), որոնց կազմողի կամ թարգմանչի ով լինելը մինչ այդ անհայտ էր, և որոնց՝ Ալիշանի գործերը լինելը, առաջին անգամ պաշտոնապես հավաստեց Ս. Երեմյանն իր «Կենսագրություն Հ. Ալիշանի» աշխատության մեջ 1902 թվականին։

ՀՈԲԵԼՅԱՆ Հ. ՂԵՎՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԻՇԱՆԻ

Առաջին անգամ հրատարակվել է «Արևելք» օրաթերթի (Պոլիս) № № 1902, 1903, 1904, 1905, և № 1906 համարներում և արտատպվում է որոշ կրճատումներով։ Արփիար Արփիարյանը, պոլսահայ մտավորականության կողմից ուղարկվել էր Վենետիկ, Ալիշանի 50-ամյակի առիթով կայանալիք հոբելյանական հանդեսին մասնակցելու համար։

1 Արրահամ Ճարրյանի մասին տե՛ս Նիկողայոս Քարամյանի «Ղևոնդ Ալիշան» N 11-ը։ Ղուկաս Լազյան (1822—1891)— Մխիթարյան միաբանության անդամներից, վարել է զանազան պաշտոններ։ Հրատարակված աշխատություններ (ինքնուրույն կամ թարգմանական բնույթի) չունի։ Ընդունված կարգի համաձայն, Մխիթարյանները հոբելյանը հաշվում են ոչ թե ծննդյան օրվանից սկսած, այլ այն ժամանակվանից, երբ տվյալ անձնավորությունը քահանայական աստիճան էր ընդունել, այսինքն՝ ճանաչվել միաբանության անդամ։ Ալիշանը և նրա երկու ընկերները քահանայական աստիճան են ընդունել 1840 թ. հունիսի 7-ին, հետևաբար, 1890 թ. լրանում էր նրանց քահանայության հիսուն տարին։

2 Նկատի ունի Ալիշանի «Այրարատ, բնաշխարհ Հայաստանյայց» աշխատությունը (590 էջ), որը հրատարակվել է Վենետիկում, 1890 թվականի կեսերին։ Թե ինչու է Արփիարյանը զգուշանում հիշատակել գրքի անունը և բավարարվում է մշուշապատ ակնարկներով միայն՝ տե՛ս N 20 ծանոթագրությունը։

3 Բագրատյան Ղուկաս (1861—1924)— հունգարահայ գրական գործիչ, թարգմանիչ (հայերենից-հունգարերեն), խմբագիր։ Բուդապեշտի համալսարանի արևելյան բաժնի պրոֆեսոր և այդ բաժնում դասախոս։ Բուդապեշտի «Հունգարիայի ազգագրական ընկերության» հայկական մասնաճյուղի ատֆերենտ։ Լեզվի ոլորտյան վերաբերյալ հոդվածներով հանդես է եկել «Հանդես ամսօրյա»։ «Բանասեր» պարբերականներում, եղել է հունգարերեն լեզվով հրատարակվող «Armenia» ամսագրի ակտիվ թղթակիցը (և ոչ թե խմբագիրը, ինչպես սխալմամբ պնդվել է)։

4 Հովհաննես Միքաելյան— լեզվաբան— բանասեր, արևմտահայ մշակութային գործիչ։ Երկար տարիներ հայոց լեզվի ուսուցիչ Հռոմի Ուրբանյան դպրոցում։ Լեզվաբանական բնույթի հոդվածներով և բանասեղծություններով հանդես է եկել «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Պատկեր» և այլ պարբերականներում։ Ագարյան պատրիարքի մասին տես Ա. Արփիարյանի «Օրվան կյանքը» N 4-ը։

5 Էդգար Շահինյան (ավելի հայտնի է Էդգար Շահին ձևով, 1873—1947)— հայ նշանավոր գեղանկարիչ։ Օֆորտիստ։ Շահինը մտերիմ հարաբերությունների մեջ էր Վենետիկի Մխիթարյանների հետ և նրանց հանձնարարությամբ կատարում էր հայկական ձեռագրերից բազմաթիվ արտանկարումներ։

6 Էմմանուել Եսայան (1839—1907)— դրամատուրգ, թատերական գործիչ։ Գրել է «Արշակ Բ.» (Պոլիս, 1870 թ.), և «Հսիփսիմե» (Անդ, 1872) պատմական ողբերգություններ, որոնք իր ժամանակին շատ են բեմադրվել։ Վենետիկի առարկա դարձավ Եսայանի «Մեծածորի ներշնչումը (Օրագրություն էմմա)» խորագիրը կրող գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուն, որն ընդհանուր առմամբ բաղկացած է թուլլ գործերից։

7 Հովսեփ Վասիլյան— պոլսահայ փորագրիչ— արվեստագետ, Մխիթարյանների համար կատարել է այդ բնույթի զանազան աշխատանքներ։

«Թատրինա»,— իտալական «Ֆլորիո-Ռուբատինո» ընկերությանը պատկանող շոգենավ, որը երթևեկում էր Ադրիատիկ ծովի շրջանում։ Այդ շոգենավով մայիսի 3-ին (1890 թ.) Պոլսից մեկնեց Արփիար Արփիարյանը, Ալիշանի 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար և Վենետիկ հասավ մայիսի 9-ին։

8 «Զարմանալի՜», «Հրաշալի՜» (Խտ.)

9 Բաղանդ Սարգիսյանի մասին տես Ն. Քարամյանի «Ղևոնդ Ալիշան» N 4-ը։

10 Նկատի ունի ականավոր լեզվաբան-բանասեր Արսեն Այտընյանին (1824—1902 թթ), որը 1886 թ. օգոստոսի 16-ին ընտրվել էր Վիեննայի Մխիթարյան Միաբանության աբբահայր (4-ը), փոխարինելով մոտ երեք ամիս առաջ մահացած Վարդան Ընտկարյանին։ Լինելով նշանավոր հայագետ-գիտնական, իրեն վստահված միաբանության ներքին գործերի ջանադիր կազմակերպիչ (նրա օրոք, 1887 թվականից, սկսեց հրատարակվել «Հանդես ամսօրյա» պարբերականը, որը լույս է տեսնում առ այսօր), Այտընյանը, սակայն, վատ դրսևորեց իրեն որպես դիվանագետ-գործիչ։ Նրա ժամանակ, մասնավորապես, ավելի սաստկացին հարաբերությունները Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների միջև, որը, նույնիսկ, քիչ էր մնում վերածվեր բացարձակ խզման։

11 Նկատի ունի բանասեր, թարգմանիչ Թադեոս Թոզմանանին (1864—1948) որը Ալիշանի հոբելյանն անցկացնող հանձնաժողովի նախագահն էր։

12 Ակնարկում է Ալիշանի կազմած և ծանոթագրած «Հայոց երգք ռամկականք» խորագիրը կրող հայկական ժողովրդական երգերի ժողովածուն, որը հրատարակվել է Վենետիկում, 1852 թվականին (համառեղ տրված են հայերեն և անգլերեն տեքստերը)։

13 Բազերա—կաթոլիկ եկեղեցու ատոռին ասոցիանավոր։

14 Նկատի ունի բանասեր, բառարանագիր Սամվել Գանթարյանին (1838—1908 թթ.) որը 1885 թ. օգոստոսից մինչև 1891 թ. մարտը վարում էր Մուրադ-Ռափայելյան վարժարանի ուսումնապետի (ի՛մա. ուսմասվար) պարտականությունները։

15 Լիթանիա-հանդիսավոր արարողության ժամանակ սովող կարճատոս աղոթք, որի հիմքում ընկած են սաղմոսից ընտրված որոշ հատվածներ։ Նայած արարողության հանդիսավորությանը, տարբերվում են փոքր և մեծ լիթանիաներ. օրեմուս, աղոթք, որն արտասանում են ամեն օր, կրոնական-եկեղեցական արարողության ընթացքում։ Թե լիթանիան և թե օրեմուսը հատկանշական են միայն կաթոլիկ եկեղեցուն։

16 Ֆենիչե (ավելի ճիշտ՝ «Ֆենիչե»)— Վենետիկի հնագույն թատրոններից մեկը, որը հիմնադրվել է 1792 թվականին և գոյություն ունի առ այսօր, որպես Վենետիկի քաղաքային դրամատիկ թատրոն՝ արդեն շատ փոքր տեղ ու նշանակությամբ քաղաքի թատերական կյանքում։

17 Նկատի ունի Ալիշանի նշանավոր «Երթ և գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ Մամիկոնեանոյ ի Շաւարշական դաշտին վրէժ (օ՞ն անդր

յառաջ)» բանաստեղծությունը, որն առավել հայտնի է իր առաջին քառյակի առաջին երկու բառերով՝ «Բա՜մ. փոթորկանա»։ Բանաստեղծությունը գրվել է 1840 թ. հոկտեմբերի 26—27-ին, Վենետիկ հեղափոխության թարմ ազդեցության տակ (հրատարակվել է 1850 թ. «Բազմավեպի» № 6-ում), ձայնագրվել է 60-ական թվականներին, Ռափայելյան վարժարանի երգեցողության խառնվածի ասույթով Պիտեր Բիանկինիի կողմից։

18 Շահլամյանց Կարապետ (?—1904 թ.)— նշանավոր երգիչ, Վենետիկի Մխիթարյանների և անձամբ Ալիշանի մտերիմը։ Հանդես է եկել ոչ միայն եվրոպական դասական երգերի կատարմամբ, այլև հայկական-եկեղեցական։ Այլևայլ հարցերի և մասնավորապես երաժշտության անության վերաբերյալ հոդվածներով հանդես է եկել «Մշակ»-ում։ Վախճանվել է երկու տարի տեղ ծանր հիվանդությունից հետո Պետերբուրգում։

19 Հուշագրության այս հատվածում Արփիարյանը բերում է հոբելյարին ուղղված մի շարք հեռագրեր ու նամակներ, որոնք, մեծ մասամբ ստորագրված են մեր մշակույթի ասպարեզում ոչ այնքան մեծ անուն ու հետք թողած անձանց կողմից (օր. Ս. Տեկանց, Մ. Փափազյան, Գր. Գրիգորյան, Դ. Քուլումջյան, Արթին Զամյան, Ստ. Յազըճյան և այլն)։

20 Երևանի Մ. Մաշտոցի անվան Պետական մատենադարանում գտնվում է «Արևելք» 1890 թ. մի հավաքածու (№ 284), որը հավանաբար եղել է Հովհաննես Մկրյանի անձնական սեփականությունը։ Մկրյանը ձեռագրով իր հեռագրի վրա վերականգնել է այն բառերը, որոնք փոփոխել է Արփիարյանը և որի մասին ինքը խոստովանում է իր հոդվածում, Ըստ այդմ՝ տպագրված «Այրարատայ և Հանուրց բնավայրացս»-ը վերականգնված է՝ «Այրարատայ և Հանուրց Հայաստանեայցս։ Վերջում՝ «Ուխտից և յիշատակաց Բնավայրին» պետք է լինի «Ուխտից և յիշատակաց Հայրենեացս։ Հիշյալ փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ հուշագրության մեջ մի քանի տեղ առկա «Բնավայրս» բառը նույնպես նախօրոք եղել է «Հայրենիք» կամ «Հայաստան», որոնք Արփիարյանը փոխել է նշված ձևով։ Եթե լմոռանանք, որ Արփիարյանն իր հուշերը գրել է 1890 թվականին, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն մոլեգնում էր Համիդյան բռնապետությունը, ապա՝ նախ հասկանալի կդառնա, թե ինչն է հարկադրել նրան ձեռագրերի մեջ, իր լեզվով ասած՝ «մի քանի բառ ջնջելու կամ մի քանի բառի տեղ ուրիշ բառ դնելու», որովհետև «Հայրենիք», «Հայաստան» և այլ՝ այս կարգի բառերի կիրառությունն արգելված էր, և երկրորդ, հասկանալի կդառնա, թե ինչու խոսելով Ալիշանի՝ նոր հրատարակած «Այրարատ» մասին, դարձյալ զգուշանում է գործի անունը հիշատակել (Տես նաև № 2 ծանոթագրությունը)։

21 Իր հուշագրության այս մասում Արփիարյանը մեկ առ մեկ նշում է ամենազանազան անձանցից ու կազմակերպություններից Ալիշանին առաքված 82 անուն հեռագրեր, ուղարկողների ստորագրություններով հանգերձ։ Սրանց մեջ հազվագյուտ չեն այնպիսիները, որոնք ունեն 23, 26, 31 և նույնիսկ 40 անձանց ստորագրություններ։ Ցանկալի ենք մի քանի՝ առավել կարևորները։ Ինչպես հավաստում է «Բազմավեպը» (1890 թ. № 7), հոբելյանական հանդեսի ժամանակ Ալիշանի անվամբ ստացվել է «ընդամենն 89 թուղթ և 87 հեռագիրք»։ Թե ինչ պատճառաբանությամբ է Արփիարյանը ստացված 87 հեռագրերից հրատարակել միայն 82-ը և դուրս թողել հինգը՝ դժվար է ասել։ Ամենայն հավանականությամբ նա նկատի է ունեցել թուրքական դրաքնությունը, որը 90-ական թվականներին, մանավանդ ոչ մուսուլման ազգերի նկատմամբ, արդեն հասել էր իր խստության ու անողոքության գագաթնակետին։ Հեռագրերից մի քանիսն ունեն լեզվա-ոճական բնույթի անհարթություններ, որովհետև, ինչպես վկայում է ինքը՝ Արփիարյանը, նրանք տրվել էին հայերեն լեզվով, բայց ֆրանսերեն տառերով, հետևաբար վերծանման ժամանակ սխալներն անխուսափելի էին։

22 Արփիարյանի՝ դուրս թողած հեռագրերից ուշագրավ է Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժանմունքի ավագ հետևյալ շնորհավորական հեռագիրը, որը հրատարակվել է «Кавказъ» թերթի 1890 թ. № 132-ում (էջ 2)։ «Кавказский отдел Императорского Русского Географического общества посылая свои искренние поздравления по поводу пятидесятилетия Вашей деятельности, высказывает пожелания, чтобы эта деятельность, столь полезная для науки, продлилась ещё на многие годы».

сек. Закурский.

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Առաջին անգամ հրատարակվել է «Արևելք» օրաթերթի 1890 թ. № 1896-ում և արտատպվում է անփոփոխ։

1 Խոսքը վերաբերում է Գրիգոր (ավելի հաճախ՝ Գրիգորիս) Ճելալյանին, որը 1885 թ. օգոստոսից մինչև 1891 թ. մայիսի վերջը վարում էր Մուրադ-Ռափայելյան վարժարանի տեսուչի պարտականությունները։

2 Նկատի ունի Օգոստինոս Սիանյանին, որը դպրոցում վարում էր Աշխատավոր եղբոր (Խմա. տնտեսվար) պարտականությունները։ Ինչպես Վենետիկի, այնպես էլ Վիեննայի Մխիթարյան միաբանությունները կազմված են «Հայրերից» և «Եղբայրներից»։ Դպրոցն ավարտած այն աշակերտը, որը կամենում էր դառնալ միաբանության անդամ, պարտավոր էր նախապես անցնել երկու աստիճան (Զգեստափոխություն և Ուխտադրություն) և ապա հանդիսավոր իրադրության պայմաններում կատարել վերջին արարողությունը՝ օծվել քահանա։ Ըստ այդմ՝ նրան տրվում էր նոր անուն, այնուհետև նրա անվան սկզբից, դրության կամ արտասանության ժամանակ ավելացվում էր «Հայր» (կամ, կրճատ՝ «Հ.») հորջորջումը, և նա ընդմիշտ համարվում էր միաբանության անդամ։ Ի տարբերություն այս կարգի անձանց, կային մարդիկ, որոնք չնայած

աշխատում էին միաբանության համար, բայց միաբանության անդամ չէին համարվում (դպրոցների ուսուցիչները, վանքապատկան հողերի կառավարիչները, զանազան առևտրական գործարքների կարգավորողները և այլն)։ Վերջիններս կոչվում էին «Եղբայր» ձևով, նրանց տրվում էր աշխատավարձ, և նրանք ցանկացած ժամանակ կարող էին հեռանալ միաբանությունից։ «Հայերի» և «Եղբայրների» հետ կապված բոլոր կարգի հարցերը տնօրինում էր միաբանության բարձրագույն օրենսդրական մարմինը՝ վարչական ժողովը։

3 Հովհաննես Թորոսյան (1854—1940) արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ։ Ունի «Ընտիր Հայկազունք» արձակ գեղարվեստական ստեղծագործությունը (Վենետիկ, 1873 թ.), «Վարք Մխիթարա Աբբայի» ուսումնասիրությունը (Անդ, 1901 թ.), գերմաներենից թարգմանել է Գեցլերի «Հնաբանություն հայ դիցաբանության» ուսումնասիրությունը (Անդ, 1897 թ.), իտալերենից՝ Էդմոնդո դը Ամիչիսի «Հուշք կամ հիշատակ լոնտրայի» գործը։ Ունի բազմաթիվ հոդվածներ «Բազմավեպում»։

4 Քաջունի Մանվել (1823—1903) Հշգրիտ գիտությունների դասագրքերի հեղինակ, թարգմանիչ։ Առ այսօր մեծ արժեք ունի նրա՝ «Բառգիրք արվեստից և գիտության և գեղեցիկ դպրության» խորագիրը կրող հայերեն-ֆրանսերեն և ֆրանսերեն-հայերեն բառարանը (երկու հատոր, 1891—93 թթ.)։ Դասագրքերից ուշագրավ է «Բնաբանություն կամ ֆիզիկա» երկու հատորանոց ձեռնարկը (Վենետիկ, 1871 թ.)։ Հ. Բարսեղի (Բարսեղ Սարգսյան) մասին տես Նիկ. Քաջամյանի «Զեմոնդ Ալիշան» № 4-ը։

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ Վ. ԱԼԻՇԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է Պոլսի «Հայրենիք» ազգային, դրական և քաղաքական օրաթերթի 1892 թ. № 117-ում (Կիրակի, 19 հունվար)։

1 Ալիշանը հիվանդացել էր շնչառական ուղիների սուր բորբոքումով, որն ի դեպ, տարիներ շարունակ պարբերաբար կրկնվում էր նրա մոտ։

2 Ալիշանը Ռափայելյան վարժարանի տնօրենի պարտականությունները վարեց 1866 թ. մայիսի 11-ից մինչև 1872 թ. օգոստոսի 6-ը։

3 Տե՛ս «Հոբելյան Հ. Զեմոնդ վարդապետ Ալիշանի» հուշապատումը։

4 Ֆարաշ-գեանին գցելու խիր, փոց (պարս.) փոխ.՝ աղքատան։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԵՆԱՍՏԱՆՈՒՄ

Առաջին անգամ հրատարակել է «Մշակ» օրաթերթի 1898 թ. հոկտեմբերի 10-ի համարում և արտատպվում է առանց փոփոխության։

1 Հարցի պատմությունը ծայր է առնում 19-րդ դարի սկզբներից, երբ աստիճանաբար սկսեցին վատանալ Նապոլեոն Ա-ի և կաթոլիկ եկեղեցու հարաբերությունները։ Չհանդուրժելով որևէ այլ բարձրագույն ղեկավարություն իրենից բացի, և «չընդունելով որևէ այլ կամք իր կամքից բացի» Նապոլեոնը 1800-ական թվականներից սկսած ձեռնամուխ եղավ կաթոլիկ եկեղեցու իրավունքները սահմանափակելու և վերջին հաշվով՝ իրեն ենթարկելու գործին։ Ընդհանուր առմամբ խելացի, բայց քաղաքականության մեջ կարճատես Պիոս 7-ը (1742—1823 թթ.) չկարողացավ կռահել, թե ինչպիսի վտանգավոր հակառակորդի հետ գործ ունի ինքը և իրար հետևից մերժեց Նապոլեոնի մի քանի՝ նախկին բարեկամությունը վերահաստատելու նպատակով արված առաջարկությունները, որոնք, փոխ և կարելի էր ընդունել։ Հետևանքն այն եղավ, որ 1808 թ. փետրվարի 2-ին ֆրանսիական զորքերը գրավեցին Հռոմը՝ և Պապական մարզը, որը մշտապես ինքնուրույն էր եղել, միացվեց ֆրանսիական կայսրությանը։ Իր հերթին պապը թանգարեց Նապոլեոնին, հայտարարելով նրան «Ֆրանսիական Հուդա», Նապոլեոնն էլ՝ հարցը վերջնականապես լուծելու համար նախ ձերբակալեց պապին և որպես սովորական կալանավոր փոխադրել տվեց Ֆոնտանեբլո և ապա, 1810 թ. ապրիլի 25-ին հրատարակեց իր հայտնի հրովարտակը՝ բոլոր տիպի կրոնական-կաթոլիկական հաստատությունները ցրելու և նրանց ունեցվածքը բռնագրավելու կամ պետական գանձարկղը մուծելու մասին։

Ինչպես ակնհայտ է, հրովարտակն ուղղակիորեն վերաբերում էր նաև Մխիթարյան միաբանությանը, որի գոյությունն, այսպիսով, սպառնալիքի տակ էր դրվում։ Սակայն գործի դնելով իրենց լայն ծանոթություններն ու բարձրաստիճան ծանոթ-բարեկամներին, նամակ-բացատրականներ գրելով անձամբ իրեն՝ «Մեծ զորավարին» (նամակները Նապոլեոնին հասցնելու գործում խոշոր դեր էր կատարում նրա մտերիմը՝ հայազգի Ռոստոմը (Ռոստոմ Խաչատրյան ?—1845 թ., Շուշի), որը նույնպես բարեխոսում էր կայսրին միաբանության մասին, ինչպես, նաև անձնական կապի մեջ մտնելով Կայսեր հետ (Նապոլեոնի՝ Վենետիկում եղած ժամանակ, Միաբանության աբբահայր Ստեփաննոս Ագոնցը կես ժամ տևող ընդունելության արժանացավ նրա մոտ), Մխիթարյաններն աստիճանաբար կարողացան համոզել նրան, որ իրենց միաբանությունը ոչ թե նեղ կրոնական կազմակերպություն է, այլ գիտական-հայագիտական մի հիմնարկություն, որի նպատակն է արևելքի փոքր ժողովուրդների և հատկապես հայերի մեջ կրթություն ու լուսավորություն տարածել, գիր-գրականություն հրատարակելու և նվրոպական դասական հեղինակների ստեղծագործությունները թարգմանաբար լույս ընծայելու միջոցով։ Հետևանքն այն եղավ, որ Նապոլեոնը 1810 թ. օգոստոսի 17-ի իր հրովարտակով ոչ միայն իրեն բացառություն թույլատրեց Մխիթարյան միաբանության գոյությունը, ի դեպ միակ և եզակի բացառությունը, այլև պայմաններ ստեղծեց նրանց գործունեության համար և ազատեց Միաբանությունը ամեն կարգի պարտադիր հարկերից։

2 «Մխոնանի» ֆրանսերեն համառոտ թարգմանությունը (թարգ. Գեորգ Պայան, թարգմանությունն իրագործվել է Ալիշանի հսկողությամբ) հրատարակվել է 1899 թ. Վենետիկում (540 էջ)։

3 Այս մասին տես Նիկ. Քարամյանի «Ղևոնդ Ալիշան» № 12-ը։

[ՆԱԽԱԲԱՆ]

Առաջին անգամ հրատարակվել է Ֆրանչիսկոս Ասսիզացու «Զառանցանք առավածային սիրո» աշխատության (Վենետիկ, 1901 թ.) հայերեն թարգմանության սկզբում, որպես ներածություն, և արտատպվում է նույնությամբ (Տե՛ս Հովհաննես Թորոսյանի «Ալիշանն իր խցիկին մեջ» № 2-ը)։ Ներածությունը մեզ ուղարկել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Սահակ Ճեմճեմյանը (վերոհիշյալ աշխատությունը Երևանի գրադարաններում գտնելու մեր ջանքերն ապարդյուն անցան), որին հայտնում ենք մեր շնորհակալությունը։

1 Աթոռակալ-Միաբանության արքեպիսկոպոս։

2 Նկատի ունի «Հայաստան. պատմիչք և պատմութիւնք հայոց» աշխատությունը (Վենետիկ, 1901 թ. 792 էջ)։ Ուշագրավ է այն հավաստումը, որ հեղինակը նախ՝ ավարտել և հրատարակության է հանձնել բուն տեքստը (650 էջ), և հետո միայն ներածությունը (142 էջ)։ «Արշալույս քրիստոնեության հայոց» (հայտնի է նաև «Արշալույս» ձևով) աշխատությունը (Վենետիկ 1901 թ. 398 էջ) Հեղինակի՝ իր կենդանության վերջին ամիսներին ավարտած մյուս գործն է։

3 «Տէրունիք», «Կուսական»— «Ընտրագր»-ների չորրորդ հատորի առաջին և երրորդ ենթաբաժինների անվանումներ։

4 Ալիշանը Ռափայելյան վարժարանի ուսուցիչ նշանակվեց 1841 թ. օգոստոսի 23-ին, տեսուչի պարտականությունները հանձն առավ 1848 թ. մայիսի 30-ին (փոխարինելով Ռափայել Թրյանցին)։ Ռափայելյան վարժարանի հետ կապված բոլոր կարգի պաշտոններից ազատվեց 1850 թ. օգոստոսի 29-ին։

5 Խոսքը վերաբերում է Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս (6-ը) Իգնատիոս Կյուրեղյանին։ Վերջինս քահանայական սրբի էր ընդունել 1854 թ. հունվարի 17-ին, և «Զառանցանքին» թարգմանությունը նվիրվում էր այդ հանդիսավորությանը։

Ս. ՂԱԶԱՐԻ ԿՂԶԻՆ 1884 ԹՎԱԿԱՆԻՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Մշակ» օրաթերթի 1902 թ. հունվարի 20-ի (№ 13) համարում, Ալիշանի մահվան տարելիցի կապակցությամբ, և արտատպվում է անփոփոխ։

1 Հովսեփ Մարգարյան (1855—1939)— բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից-հայերեն), Մխիթարյան միաբանության ներսում վարել է մի քանի պաշտոններ։ Թարգմանել է Վ. Բրյուսովի «Հայ բանաստեղծությունը և իր նույնությունը զարերու ընթացքին մեջ» (Վենետիկ, 1923 թ. «Поэзия Армении» -ի հանրահայտ առաջաբանը) և «Յարգդրություն հայ ժողովրդի պատմական հակատագրին» (Անդ, 1931 թ.) աշխատությունները։

2 Գաբրիել Նահապետյան (1857—1939, հանդես էր գալիս նաև «Մնդու Շիրակա» կնքանունով)— լեզվաբան, հարատարապետության տեսաբան։ Գրել է «Ուղղագրություն ազգային հին մատենագրաց» (Վենետիկ, 1907 թ.), «Ս. Մեսրոպ և Հայաստանի ոսկեդարը» (Անդ, 1914 թ.), «Հայկական մենամարտը» (Անդ, 1919 թ.) գործերը։ Ուշագրավ է նրա «Քրիստոնեական հարատարապետություն» աշխատությունը (Անդ, 1930 թ)։ Համազասպ Սարգսյան (1853—? հայտնի է նաև Համազասպ Սարգսյանով ձևով) դպրոցական ձեռնարկների հեղինակ։ Ունի «Բուսաբանություն» (Վենետիկ, 1884 թ.) և «Երկրագործություն» (Անդ, 1885 թ. խորագիրով դասագրքեր, որոնք երկար ժամանակ շրջանառության մեջ էին։

3 Բառախաղ է— ակնարկում է «Վերին Երուսաղեմ» գնալը, այսինքն՝ մահանալը։

Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Գնդունի պատանեազարդ թերթի 1902 թ. № 2-ում և արտատպվում է որոշ կրճատումներով, «Գնդունի»-ի վերոհիշյալ համարն ամբողջապես նվիրված է Ալիշանի հիշատակին։

1 Մխիթարյան միաբանության գոյության երկուհարյուրամյա հոբելյանը տոնվեց 1901 թ. սեպտեմբերի 8—9-ը։ Ալիշանը մահացավ 1901 թ. նոյեմբերի 9-ին, այսինքն հոբելյանից երկու ամիս անց։

2 Խոսքը վերաբերում է Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս Իգնատիոս Կյուրեղյանին, որը 1885 թ. վերջերից մինչև 1886 թ. կեսերը ծանր հիվանդությամբ տառապում էր Հռոմի հիվանդանոցում։

3 Խոսքը վերաբերում է «Հայաստան. պատմիչք և պատմութիւնք հայոց» (Վենետիկ, 1901 թ. 650 էջ) և «Արշալույս Քրիստոնեության հայոց» (Վենետիկ, 1901 թ. 397 էջ) աշխատություններին։

4 Տեղա Էմիլիո (1832—1912)— իտալացի հայագետ (մասնագիտությամբ սանսկրիտագետ), թարգմանիչ, Ալիշանի ընկերը։ Սովորել է Վենետիկում, ապա՝ Փարիզում և 60-ական թվականներից մինչև մահը ավանդաբար էր սանսկրիտ Պադուայում։ Առաջին գործը՝ Ագաթանգեղոսի բնագրի ճշտումն էր և այդ հենքի վրա արվող քննական վերլուծությունը, որը և հայագետ-բանասերի հռչակ բերեց նրան։ Հետագա գործերը

(Մանդակունու հատորի թարգմանությունը, Եղիշեի քննական բնագրի պատրաստում և այլն) ավելի խոշոր չափերով այդ հուշակը։ Տեղան իտալերեն է թարգմանել Ալիշանի «Նուշանն Շավարշանա» պոեմը, որը հայերեն բնագրի հետ մեկտեղ հրատարակվել է 1887 թ. թարգմանչի ընդարձակ դրվատական առաջաբանով, իսկ 1897 թվականին՝ Ալիշանի «Ակնտիք Պատմագրյան, ընթերցող Տիգրանակերտցի» հոդվածի վերջին դուսլը («Վասն, որ կամի ի Հնգեշին երկիրն գնալ այսպես է»)։ Երկու թարգմանություններն էլ հրատարակվել են առանձին գրքով։

5 Ալիշանի մահվան մասին հայությունն խաղաղ հաչորդ օրը՝ նոյեմբերի 10-ին (հ. ա.), աբբահայր Իգնատիոս Կյուրեղյանի հեռագրից։ Ճանկանալով բարձրագույն հարգանք մատուցել հանգուցյալին, «Ազգասեր-Տարազ» ամսագրի խմբագրության նախաձեռնությամբ ստեղծվում է հանձնաժողով (Նախագահ՝ Գեորգ Բարխուդարյան), որը որոշում է տպագրել հանդիսությունների բացի, Թիֆլիսի հայկական ս. Սարգիս եկեղեցում հոգեհանգիստ կատարել։ Իմանալով այդ մասին, կոնսիստորիայի նախագահ և ս. Սարգիս եկեղեցու վանահայր Գարեգին Հովսեփյանը ոչ միայն արգելում է հոգեհանգիստը կազմակերպելու համար տարվող նախապատրաստական աշխատանքները, այլև կարգադրում, որ տվյալ օրվա պատարագի ժամանակ ննջեցյալների անունները հիշատակվեն Ալիշանի անունը չհիշատակվի։ Այս արարքը Հովսեփյանը պատճառաբանում էր նրանով, որ Ալիշանը, լինելով հավատով կաթոլիկ, չէր կարող հայկական լուսավորչական եկեղեցում հանգուցյալների թվում հիշատակվել, առավել ևս՝ հոգեհանգստի արժանանալ։ «Հոգեհանգստի հարցը» շատ շուտ արվեց, դուրս եկավ իր սկզբանական՝ նեղ-կրոնական սահմաններից, դառնալով առաջադիմականների («Ազգասեր-Տարազ», «Մշակ») և պահպանողականների («Նոր-Դար») կատաղի պայքարի ու երկարատև վիճաբանությունների նյութ։ Վերջնական լուծման համար՝ նոյեմբերի 17-ին, Թիֆլիսում հրավիրվեց մշակույթի գործիչների ընդհանուր ժողով, ուր և, երկարատև վիճաբանություններից հետո, որոշվեց հարցը հասցնել կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին։ Իրեն հատուկ ուղղակիությամբ Խրիմյանը, իրազրությանը ծանոթանալուց հետո, կարգադրում է հայկական բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել Ալիշանի հիշատակին, պատճառաբանելով, որ հավատով կաթոլիկ լինելը չի կարող արգելք լինել մեկի համար, որն ամբողջ հայ ժողովրդի նահապետն է։

6 Ս. Ղազար կղզու արևելյան անկյունում, որն, ի դեպ, համարվում է կղզու գեղեցիկ հատվածներից մեկը, առում են մի քանի ձիթենիներ (այստեղից էլ անունը՝ «Ձիթենյաց պարտեզ»), որոնք, ըստ ավանդության, Մխիթարյանների մոտ հայերեն ուսանելու ժամանակ տնկել է Ջորջ Բայրոնը։ Այդտեղ էլ գտնվում է փոքրիկ հուշաքարը, որի վրա պարապմունքներից ազատ ժամերին սիրում էր հանգստանալ մեծ անգլիացին և որն ստացել է «Բայրոնյան բլուր» անունը։ Հոդվածում եղած ակնարկները վերաբերվում են սրանց։

7 Լիդո կղզին գտնվում է Ս. Ղազար կղզուց փոքր հեռավորության վրա և իրենով եղերում է մայր ցամաքը։ Կղզում սիրում էին իրենց հանգստի ժամերն անցկացնել Բայրոնը, հետագայում՝ Շատոբրիանը։

8 Նկատի ունի Ալիշանի հինգհատորյա բանաստեղծությունների ժողովածուն «Նուագք» ընդհանուր խորագրով, որը հրատարակվել է Վենետիկում, 1857—1858 թթ. (բոլոր հատորները հետագայում վերահրատարակվել են), ինչպես նաև «Հուշիկք հայրենեաց հայոց» եռահատոր պատմա-դեղագրագիտական աշխատությունը, որը հրատարակվել է 1869—1870 թթ.։

9 Ակնարկում է Մովսես Խորենացու շուրջը ծայր առած հայտնի բանավեճը, որի նպատակն էր ապացուցել, որ Պատմահայրը ոչ թե 5-րդ դարի հեղինակ է, ինչպես ընդունված էր 14 դար շարունակ, և ինչպես հավատում էր հենց ինքը, այլ ավելի հետագա ժամանակներում։ Այդ քննադատությունը հիմնականում սկսվեց 1890-ական թվականներից, երբ ֆրանսիացի հայագետ Օգյուստ Կարրիերը (1838—1902) առաջնաբար հրատարակեց իր «Մովսես Խորենացին և նահապետներու ազգաբանությունը» («Արձագանք» 1891 թ.), «Նորագույն աղբերք Մովսես Խորենացվո» (շարք հոդված. «Հանդես ամսօրյա» 1893 և 1894 թթ.), «Աբգարու զրույցը Մովսես Խորենացու պատմության մեջ» (Վիեննա, 1897 թ.) և այլ գործերը, որտեղ նախ՝ առաջ քաշեց այն տեսությունը, որ Պատմահայրը է (7-րդ) դարի հեղինակ է և ապա, մանավանդ վերջին հոդվածում պնդեց, որ «Մովսիսի Խորենացվո հայոց պատմությունը չի կրնար Ը դարուն առաջին տարիներեն առաջ գրված ըլլալ»։ Կարրիերի հոդվածները թեր և դեմ մտքերի փոթորիկ հարուցին, այդ տեսակետին կողմ և դեմ հանդես եկան հայ, ռուս և եվրոպական բազմաթիվ գիտնականներ։ Ի վերջո, շնորհիվ Մխաբանի (Գալուստ Տեր-Մկրտչյան) «Հայկականք» խորագիրը կրող հոդվածաշարի («Արարատ» 1894 թ. և հետ.), և «Խորենացու պատմության ուսումնասիրություն» աշխատության (Էջմիածին, 1896 թ.), Նորայր Բյուզանդացու «Քննասեր» խորագրի ներքո լույս տեսնող հոդվածներին («Մշակ» 1898 թ.), անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերի աշխատությունների և մանավանդ՝ Ստեփաննոս Մալխասյանցի մի քանի ուսումնասիրությունների (տես «Խորենացու առեղծվածի շուրջը», Երևան, 1940 թ.),— մեր պատմահոր դեմ ծավալված գրոհը կանգ առավ և նա նորից վերահաստատվեց իր տեղում։ Գալով Խորենացու ոսկորների հանելու և գնալու նեստելու մասին ասվածին՝ կրկնված է Փավստոսի «Թղթում» արված մի պատումը ոմն Մովսես փիլիսոփայի մասին, որի ոսկորները գերեզմանից հանել էին տալիս և գնալ թափում։ Հայ և ռուսերեն գրականության մեջ մի քանիսը ասին Մովսես Փիլիսոփային նույնացրել են մեր Պատմահոր հետ և հանգել այն եզրակացության, որ այդ բոլորը տեղի է ունեցել Խորենացու հետ։ Սակայն, ինչպես ապացուցեց Ս. Մարիաթասյանցը, «Բացեիրաց պետք է Հրաժարվել այն սխալ ենթադրությունից, թե ոսկորները գերեզմանից հանելու տեղեկությունը Խորենացուն է վերաբերվում»։

10 Տես Ս. Երեմյանի «Ղևոնդ Ալիշան» հուշապատումը։

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ալիշանի մահվանից մի տարի հետո, 1902 թվականին, Վենետիկում հրատարակվում է Սիմոն Եր.մյանի «Կենսագրություն Հ. Ալիշանի» աշխատությունը, որը, ինչպես «Երկու խոսք»-ում ծանուցում է հեղինակը «Գործս հոյակապ հանճարին ծովածավալ վաստակոց ստուգաբանությունը չէ, այլ ժողովրդական դրություն մը նահապետին սիրելի Հայկակներուն և հայրենասեր հասարակության համար պատրաստված»։ Երեմյանի աշխատության մի հատվածը նվիրված է Ալիշանի հետ կապված այլևայլ հիշողությունների վերարտադրմանը։

1 Հիշյալ բանաստեղծությունը տես Ա. Արփիարյանի «Հոբելյան Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» հուշապատումի մեջ։

2 Մանվել Եսայանի (նույն ինքը՝ Էմմանուել Եսայան) մասին տես Ա. Արփիարյանի «Հոբելյան Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» № 6-ը։

3 Բաշինջաղյան Գևորգ (1857—1925)— ականավոր հայ նկարիչը նամակագրական կապեր ուներ Ալիշանի հետ և նրա հանձնարարությամբ կատարել էր մի քանի արտանկարումներ (տե՛ս նաև՝ ներկա հատորում զետեղված նրա «Ս. Ղազարի կղզին, 1884 թվականին» հուշապատումը)։ Կարապետ Շահլամյանի մասին տես Ա. Արփիարյանի «Հոբելյան Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» № 18-ը։

4 Հովհ. Մխքճյանի մասին տե՛ս Ա. Արփիարյանի «Հոբելյան Հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» № 4-ը։

5 «Ժամանակը ոսկի է» (անգլ.)։

6 Հայկարան— Ալիշանի, կամ Ալիշանի հանձնարարությամբ Մխիթարյան երիտասարդ հայրերի՝ տարբեր աղբյուրներից հավաքած այլևայլ նյութեր պարունակող հատորները։ «Հայկարանը» բաղկացած է ութ վիթխարի հատորներից (յուրաքանչյուր հատորում մի քանի հազար մեծ ու փոքր նյութեր), որոնց մեջ ամփոփված պատմական, աշխարհագրական, աստվածաբանական, կրոնական, տեղագրական, քաղաքական և այլ՝ այս կարգի ամենայն տարբեր առիթներով Ալիշանն օգտագործել է իր աշխատությունների համար, որպես ասենք։

7 Նկատի ունի Նորայր Բյուզանդացու «Բառգիրք գաղղիերէն լեզուի ի հայերէն» ընդարձակ բառարանը, որը հրատարակվեց Պոլսում 1884 թ.։

8 Այստեղ և հետագայում «երգ» բառը գործածված է «բանաստեղծություն» իմաստով։

9 Ակնարկում է Մլքե Թագուհու հռչակավոր ավետարանը, որը հանդիսանում է հայկական հնագույն ձեռագիր հիշատակարաններից մեկը (գրվել է 902 թվականին) և ունի գեղարվեստական բարձրարժեք նկարագրումներ։ Ալիշանը, որին վաղուց էին հետաքրքրում այդ ավետարանի նկարները, 1902 թ. սեպտեմբերին, մահվանից երկու ամիս առաջ (և ոչ թե մի տարի առաջ, ինչպես նշված է հուշագրության մեջ) «Բազմավեպում» մի հայտարարություն հրատարակեց, ուր տեսական բնույթի վերլուծություններից հետո ակնարկվում էր, որ Մխիթարությունը

և անձամբ ինքը սիրով կկամենային հրատարակել Մլքեի ավետարանի նկարները, եթե ֆինանսական դժվարությունները արդեն չհանդիսանային։ Իմանալով այս մասին հարուստ Հովհաննես Պալյանը որոշում է Միաբանությանը 1500 ֆրանկ, պայմանով, որ գրքի վրա նշվի նաև իր անունը, և Ալիշանը ձեռնամուխ է լինում ավետարանի նկարներն արտանկարել տալու և հրատարակությունը պատրաստելու գործին։ Սակայն վերահաս մահը խանգարում է նրան և աշխատությունը, ինչպես Ալիշանի ցանկությունները ու ցուցումները նկատի ունենալով, ավարտին է հասցնում Մկրտիչ Պոռուրյանը, որը և, 1902 թ. հրատարակում է այն, «Զարդանկարք ավետարանի Մլքե թագուհուս» խորագրով։

10 Նկատի ունի Ներսես Պարթևին, Ներսես Շնորհալուն և Ներսես Լամբրոնացուն։ Ալիշանը այս անձանց մասին ուշագրավ մի հոդված ունի «Գեղունիք» պատկերազարդ հանդեսի 1900 թ. հուլիսի համարում, «Երրորդ Ներսիսյանք» խորագրով։

11 Տե՛ս Հովհ. Թորոսյանի «Հ. Ղևոնդ Ալիշան» № 6-ը։

12 Սապֆո (Ավելի ճիշտ՝ Սապֆո. 7—6 դ. մ. թ. ա.)— հույն բանաստեղծուհի, որի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ էր բռնում սիրո թեմատիկան։ Հայտնի է նրա ջերմ, անկաշառ սերը Ալքեոսի նկատմամբ, որը մշտապես վկայակոչվում է իբրև բարձր զգացման օրինակ։ Այս էլ ակնարկված է հուշագրողի կողմից այն իմաստով, որ ինչպես Սապֆոն էր սիրում Ալքեոսին, այնպես էլ Ալիշանը սիրում էր ծովը։

13 Տասսո Տորկվատո (1544—1595)— Իտալացի նշանավոր բանաստեղծ, որն իր գործունեությամբ վերածնունդը նախապատրաստողներից մեկը եղավ։ Նշանավոր է նրա «Ազատագրված Երուսաղեմ» էպիկական պոեմը (1581 թ.) ներկված խաչակիրների արշավանքին, որը խոշոր չափով խթանեց ազգային հայրենասիրական տրամադրությունները։ Այդ էր պատճառը, որ Վենետիկի Մխիթարյանները 1911 թ. աշխարհաբար թարգմանությամբ հրատարակեցին այն (թարգ. Արսեն Ղազիկյան) որը և վերահրատարակվեց 1927 թվականին։

14 Իտալական մեծ կոմպոզիտորը Մխիթարյան միաբանության բարեկամն էր։

15 Բան Աստվածաշնչի, Երուսաղեմում ապրում էր արդար ու աստվածավախ մի մարդ Սիմեոն անունով, որը երկրի վրա տարածված խժդժությունները տեսնելով, սպասում էր աստծու որդու՝ մեսիային, փրկչին, որը պետք է կարգ ու կանոն հաստատեր, և որ ավելի կարևոր էր՝ ազատեր Երուսաղեմը գերությունից։ Այդ սպասումով նա ապրեց մինչև խորին ծերություն (այստեղից էլ անունը՝ Սիմեոն Ծերունի) մինչև որ տեսավ նորածին Հիսուսին։ Փոխաբերաբար օգտագործված է Ալիշանի նկատմամբ այն իմաստով, որ նա էլ, իր ամբողջ կյանքում տենչանքով սպասում էր այն ուժեղ անհատին, որը պետք է դար ու ազատեր հայրենիքը օտարերկրյա լծից, բայց «հայ Մեսիան» չեկավ, իսկ Նահապետն էլ, իր հերթին, չհասավ այն կեղծուպատիր անձանց

ստերից, որոնք հավակնում էին իրենց ներկայացնել որպես հայրենիքի ազատարարներ։

16 Որոշ աղավաղումով բերված է Ալիշանի «Լուսընկայն գերեզմանաց հայոց» բանաստեղծության վերջին քառյակը։ Ճիշտ ձևն այսպիսին է.

Կա՛ց մնկ վայրկյան մ'ալ կաց իմ սիրույս,
Մեկ քար մ'այլ կա յանձանոթ հովտին
Դնա հոն կաթե զվերջին քո լույս,
Այն գերեզմանն է Նահապետին։

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Մշակ» օրաթերթի 1903 թ. № 159—162-ում և արտատպվում է առանց փոփոխության։ Մեզ չհաջողվեց պարզել, թե ով է հուշագրության հեղինակը։

1 Առաջին տողը վերցված է Ալիշանի «Հարանեաց առագաստի նախածնողացն» գրաբար բանաստեղծությունից, իսկ երկրորդը՝ «Պլպուլն Ավարայրի» հանրահայտ պոեմի նախերգանքից։

2 1816 թ. նոյեմբերի 11-ին, Վերոնա քաղաքից Վենետիկ է գալիս Բայրոնը և ձեռնարկում Մխիթարյանների մոտ հայոց լեզու սովորելու աշխատանքներին։ Նույն թվականի դեկտեմբերի 3-ից նա սկսում է հաճախել Ս. Ղազար (ամեն օր, օրական 2—3 ժամ) և Մխիթարյան միաբանության հայտնի անդամներից մեկի՝ Հարությունն Ավգերյանի մոտ հայոց լեզվի (գրաբար) դասեր առնել։ Ուսումնառությունը տևում է մինչև 1817 թ. մարտ ամիսը և այդ ժամանակվա ընթացքում «Իմ խեղճը» (Ավգերյանը փաղաքշանքով այսպես էր կոչում Բայրոնին) այնքան է առաջադիմում հայերենի մեջ, որ դրաբարից անգլերեն է թարգմանում Աստվածաշնչից մի հատված, երկու գլուխ Խորենացու «Հայոց պատմությունն»-ից, մի հատված Լամբրոնացու «Շարժառանությունն»-ից և այլն։ Բայրոնն ու Ավգերյանը մշտապես պարարել են «Գրչագրաց սենյակում», որն այժմ վերածվել է Բայրոնի թանգարանի։

3 Արսեն Բագրատունու մահվանից հետո նրա աշակերտները, իրենց ուսուցչին առավելագույն հարգանք ցույց տալու նպատակով մասնագետների օգնությամբ հանել ավելին նրա գանգը. ի դեպ միակը Մխիթարյաններից, որն արժանացել է այդ պատվին։

4 Այս մասին տես Հովհ. Թորոսյանի «Հ. Ղևոնդ Ալիշան» № 6-ը։

5 Լրիվ բանաստեղծությունն այսպիսին է.

Ի հայրենեաց երժդհիք, լսժարք յանիրալ կըզգիս,
Ի սպառ փրրկչին, մօրն կուսի եւ հայ ազգիս,
Ուր միաբան վաստակեցին՝ հանգչին և անդ
Հարք եւ եղբարք Մրխիթարեանք յոյս յանվրկանդ,
Յարիթանալ մահահալած կենացն աւուր
Նորադիտակք զուգապարեալ լուսափեսուր։

Ուշագրավը և տվյալ դեպքում մեզ համար կարևորն այն է, որ հիշյալ բանաստեղծության մասին ոչ օր առ այսօր չէր վկայել, որ պատկանում է Ալիշանի գրչին։

6 «Գոյության իմաստը» (ֆր.)։

7 Երկտողը բերված է Ալիշանի «Հայոց աշխարհիկ» (Տե՛ս «Նվագդ» հատ. Գ. էջ 267) բանաստեղծության սկզբից։

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

1905 թվականին Վենետիկում հրատարակվեց Բարսեղ Սարգիսյանի «Երկուհարյուրամյա գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության» խորագիրը կրող ծավալուն (400 մեծադիր էջ) աշխատությունը։ Սարգիսյանի աշխատության մի սավար հատվածը (էջ 305—335) նվիրված է Ալիշանի ստեղծագործությունների (հիմնականում՝ լափածո) վերլուծությանը, իսկ այդ հատվածը սկսում և վերջանում է Ալիշանի մասին հուշերի պատումով։ Այդ պատումներն էլ նույնությամբ զետեղված են մեր ժողովածուում։

1 Սերովբե Ալիշան (1822—1903)— Ղևոնդ Ալիշանի փոքր եղբայրը, մասնագիտությամբ դրամագետ։ Ուսումն ստանում է Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ապա՝ 1845 թ. մեկնում է Ամերիկա դրամագիտության ասպարեզում մասնագիտացումն ավելի խորացնելու համար։ Վերադառնում է Պոլիս 1848-ին, արդեն որպես նշանավոր դրամագետ։ Այդ ընույթի մի քանի հոդվածներ ունի ժամանակի պարբերականներում («Սերովբի Պետրոսյանց» և «Սերովբիկ Ալիշանյան» ստորագրություններով), եղել է եվրոպական մի քանի դրամագիտական ընկերությունների պատվավոր անդամ։ Գր. Օտյանի, Սերենցի, և այլոց հետ մեկտեղ նշանակալից մասնակցություն է ցուցաբերել ժամանակի հայ հասարակական կյանքին։

2 Անդրեաս Սոմիզյան (1769—1849)— Մխիթարյան միաբանության ներքին աշխատավորներից, դպրոցի դասախոսական։ Ֆրանսերենից կատարել է մի քանի կրոնական գրքերի թարգմանություններ։ 1832 թ. օտոմանության համար գալով Վենետիկ, Ղևոնդ Ալիշանը հանձնվեց Անդրեաս Սոմիզյանին մի դաստնարակություն, վերջինս այդ պարտականությունը կատարեց մինչև 1840 թվականը։

3 Միքայել Զեմպերեկճյան (1801—1862 թթ.)— Մխիթարյան միաբանության ներքին աշխատավորներից, վանքի դպրոցում լեզուների ուսուցիչ։ Իտալերեն, լատիներեն ու ֆրանսերեն (ըստ այլ աղբյուրների՝ նաև անգլերեն) լեզուները Ալիշանը սովորել է Զեմպերեկճյանի մոտ, աշակերտելով նրան չորս տարի։

4 «Մահանալ» բառն այստեղ (և մի քանի տող ներքև) կիրառված է «ճնշելու», «հալածելու» իմաստով։

5 Ալիշանը Մխիթարեանների աբբահայր Գեորգ Հյուրմյուզյանի հետ մեկտեղ Հռոմ մեկնեց 1850 թ. սեպտեմբերի 1-ին, հասունյան և հաղորդության վեճերի կապակցությամբ (տե՛ս Ա. Արփիարյանի «Օրվան կյանքը» N 1, 3)։ Սեպտեմբերի 12-ին Հյուրմյուզյանին ու Ալիշանին ընդունում է պապը՝ Պիոս 9-ը և երկարատև զրույց է ունենում նրանց հետ։ Վատիկանում եղած հայկական ձեռագրերը քննելուց և առավել անհրաժեշտներն արտագրելուց հետո Ալիշանը մոտ մի ամիս անց դուրս է գալիս Հռոմից և հոկտեմբերի 15-ին հասնում է Ս. Ղազար (Հյուրմյուզյանը դեռ մնում է)։

ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում 1920 թ. դեկտեմբերի (12) համարում, Ալիշանի ծննդյան 100 ամյակի կապակցությամբ և արտատպվում է առանց փոփոխության։ Հեղինակն է Տիգրան Նազարյանը։

1 Ժյուլ-Սիմոն (1814—1896)— ֆրանսիացի պետական գործիչ, հրապարակախոս, արձակագիր, Փիլիսոփայության դասախոս Սորբոնում (մինչև 1848 թ.) ապա՝ Ֆրանսիայի ժողովրդական կրթության մինիստր (մինչև 1871 թ.)։ 1871-ից մինչև մահը՝ նորից դասախոս Սորբոնում։ Ժյուլ-Սիմոնը մոտիկ ծանոթ էր Տիգրան Նազարյանին և նամակագրական կապ ուներ նրա հետ։

2 Տես Հովհ. Թորոսյանի «Հ. Ղևոնդ Ալիշան» N 6-ը։

3 Խոսքը վերաբերում է Ռափայել Պատկանյանի քրոջ՝ Սոֆիա Պատկանյանի ազգկան, Մագդալինա Գենջյանին, որը ճանաչված երգչուհու համբավ ուներ Թիֆլիսում։

4 Այս ամենի մասին մանրամասն տես Հովհ. Թորոսյանի «Հ. Ղևոնդ Ալիշան» N 5-ը։ Թումանյանի՝ հիշատակված բողոք-ոտանավորը տես «Տարազ», 1901 թ. N 44, էջ 401։

Հ. ԱԼԻՇԱՆ ՈՒ ՄԵՂՎԱԵԱՂԻԿ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում 1926 թ. նոյեմբերի համարում և արտատպվում է նույնությամբ։ Հեղինակն է Ղևոնդ Տայանը։

1 Մինաս Նուրիխան (նաև՝ Նուրիխանյան, 1854—1929)— պատմաբան, բանասեր, երաժշտության տեսաբան։ Գրել է «Պատմություն ժամանակակից» (Վենետիկ, 1878 թ.) եռահատոր աշխատությունը, որ տրված է 19-րդ դարի պատմության առավել հանգուցային իրադարձությունները, «Գուրդին և Դերենիկ» (Անդ, 1879 թ.), «Թեոդորոս Սալ-

հունի» (Անդ, 1882 թ.) պատմական ուսումնասիրությունները, որոնք բազմիցս բեմադրվել են Մխիթարյանների դպրոցական թատրոնում։ Ունի նաև «Սկզբունք ձայնական երաժշտության» (Անդ, 1882 թ.) եվրոպական նոտաներ ուսուցանող դասագիրքը։ Տարիներ շարունակ Պոլսում եղել է Մխիթարյան միաբանության հանձնակատարը։

2 Նկատի ունի Ալիշանի «Հայրենական կամ հայկական բուսաբանության աշխատությունը (698 էջ), որը հրատարակվեց Վենետիկում 1895 թվականին (հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպ»-ում 1893 թ. մարտից սկսած)։

3 Մանվել Քաջունու մասին տես Աբրահամ Տեր-Հակոբյանի «Հ. Ալիշանի հոբելյանի առթիվ» N 7-ը։

ՀԱՅՐ ԱԼԻՇԱՆԻ ՀԵՏ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում 1926 թվականի նոյեմբերի համարում (N 11) և արտատպվում է անփոփոխ։ Հուշագրության հեղինակն է Վարդան Հացունին։ «Բազմավեպ»-ում 1926 թ. նոյեմբերի համարն ամբողջությամբ նվիրված է Ալիշանի մահվան 25-ամյակին, որը հանդիսավորապես նշեցին Մխիթարյանները։

1 Նկատի ունի միաբանության անդամ Եղիշեանց Ասկանյանին (1826—?), որը պաշտոնական ընդունվել էր Մխիթարյան միաբանության անդամ (քահանա էր ձեռնադրվել) 1847 թ. դեկտեմբերին։ Այդ ամիսն էլ, բնականաբար, նշվում էր ամեն տարի։

2 Առաջին պարբերությունը բերված է Ալիշանի հանրահայտ «Պլսոյն Ավարայրն» պոեմից (Տե՛ս «Ինուագք» հատ Գ. էջ 309). «Արքորդի՝ «Նահատակության սրբոյ Ղևոնդեանց» բանաստեղծության առաջին տողի մի մասն է (Անդ, էջ 144)։

3 Նկատի ունի Ալիշանի «Ճառք հոգևորք վասն միանձանց» խորագիրը կրող կրոնա-խրատական բնույթի աշխատությունը (696 էջ) որը հետմահու հրատարակությամբ լույս է տեսել Վենետիկում 1904 թվականին։

4 Սերովբե Ալիշանյանի մասին տես Բարսեղ Սարգիսյանի «Ազգային առաջին բանաստեղծը» N 1-ը։

5 Աթոռակալ (նաև՝ առաջնակա) Մխիթարության Աբբահոր տեղակալը։ Աթոռակալները հինգ հոգի էին (Ալիշանի ժամանակ), որոնք Աբբահոր հետ մեկտեղ, «քվեից մեծամասնությամբ» լուծում էին Մխիթարության հետ առնչություն ունեցող բոլոր հարցերը։ Ալիշանն աթոռակալ էր ընտրվել 1877 թ. օգոստոսի 2-ին և վարեց այդ պաշտոնը մինչև իր մահը։

6 «Հայկարանի» մասին տե՛ս Ս. Երեմյանի «Ղևոնդ Ալիշան» N 6-ը։

7 Տե՛ս այս մասին Նիկողայոս Քարամյանի «Ղևոնդ Ալիշան» N 12-ը։

8 Ալիշանը 1886 թ. Ֆրանսիական Ակադեմիայի կողմից արժանացել

էր Պասվո Լեկոնի (այսինքն՝ ընտրվել էր Ակադեմիայի պատվավոր անդամ), 1887 թվականին նա ընտրվում է Իտալիայի Ասիական ընկերության պատվավոր անդամ, իսկ 1894 թվականին՝ Մոսկվայի հնագիտական ընկերության անդամ։ Վերջինը՝ նույն փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր դոկտոր և այդ ակադեմիայի անդամ ընտրվելն էր, ուր թեկնածությունն առաջ էր քաշել ու պաշտպանել հայագետ Գելցերը։ Հենրիխ (հաճախ նաև՝ Հենրիկոս) Գելցեր (1847—1906)— գերմանացի հայագետ-բանասեր, Ալիշանի ծանոթը, 1896 թվականից՝ ընկերը։ Հայագիտության համար արժեքավոր են նրա «Փավստոս Բուզանդ կամ հայկական եկեղեցվո սկզբնավորություն» (Վենետիկ, 1896 թ.), «Հետազոտություն հայ դիցաբանության» (Անդ, 1897 թ.) և մի քանի այլ աշխատություններ։

9 Ալիշանի հրատարակած այդ ընդհանուր շնորհակալությունը (ունի «Ողջույն և շնորհակալություն առ բարեմտագթող հիմնադիր հորելյանիս» խորագիրը) հրատարակվել է «Բազմավեպի» 1890 թ. № 7-ում (էջ 257)։ Հուշագրության մեջ բերված տողերը վերցված են այդ շնորհակալությունից։

10 Տես այս մասին Հովհ. Թորոսյանի «Հ. Ղևոնդ Ալիշան» № 6-ը։

11 Պարբերությունը վերցված է «Պլպուլն Ավարայրի» պոեմի նեթածությունից։

12 Ակնարկում է «Ս. Մարկոսի գանգակատան կործանումը (նոր մանրամասնություններ)» խորագիրը կրող իր հոդվածը, որը հրատարակել է «Բյուզանդիոն» օրաթերթի 1902 թ. № 1760-ում «Վենետացի» ստորագրությամբ։ Ինչ վերաբերում է Ալիշանի մահվանը (1901 թ. նոյեմբեր), որի մասին Հացունին կարողացել է ողբալ «սրտի խորքում» միայն և ոչ թե հանդես գալ որևէ պարբերականում,— ակնարկը հասկանալի կդառնա, եթե չմոռանանք, որ 1900-ական թվականներին շարունակում էր մոլեգնել թուրքական բռնապետական ռեժիմը, հալածանքների, խստացված գրաքննության պայմաններ ստեղծելով ոչ մուսուլման մտավորականության համար։

ՀՈՒՇԵՐ ՈՒ ՆԻՇԵՐ Հ. ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԵՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ի 1938 թ. №№ 1—2 և 3—5 համարներում և արտատպվում է կրճատումներով։

1 «Հայկարանի» մասին տե՛ս Ս. Երեմյանի «Ղևոնդ Ալիշան» № 6-ը։

2 Տե՛ս «Նվագք» հատ. Գ. («Հայրունի») էջ 196—243։ Քիչ ներքև բերված երկտողը վերցված է «Բաժինք հայոց մեծաց»-ի էջ 232-ից։

3 Ակնարկում է ներսես Շնորհալու եղբորը՝ Գրիգոր Պահլավունուն, որը 20 տարիների հասակում ընտրվեց Սոճքի կաթողիկոս և այնի ընկավ իր եռանդուն գործունեությամբ։

4 Տե՛ս «Շիրակ», Վենետիկ, 1881 թ. էջ 109 (տողատակ)։

5 1883 թ. հուլիսի 14-ին, շաբաթ օրվա երեկոյան, Ս. Ղազարում անհայտ պատճառով ծայր է առնում իր ուժգնությամբ աննախադեպ մի հրդեհ, որն սպառնում էր հիմնովին մոխիր դարձնել ամբողջ միաբանությունը։ Միաբանների համառ ջանքերով և վենետիկից եկած հրդեհաշեջ խմբերի օգնությամբ, առավոտյան կողմ միայն, հնարավոր է լինում հանգցնել հրդեհը։ Բարեբախտաբար ձեռագրատունը և միաբանության արխիվը (դիվան) մնում են անվնաս։

6 Այսինքն՝ Ալիշանի։

7 Բերված է «Ի բամբիռն Հայկազնի» բանաստեղծության (Տես «Ընվագք» հատ. Գ. «Հայրունի» էջ 5) առաջին տողի մի մասը։

8 Սրվանձտյան Գարեգին (1840—1892)— հայ ականավոր բանահավաք, սկզբնական շրջանում՝ գեղարվեստագիր գրող։ Խրիմյանի օգնը ժառանգավորաց դպրոցում, ապա՝ նրա մերձավոր օգնականը։ 1874 թ. Պոլսում հրատարակվում է Սրվանձտյանի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» բանահավաքային բնույթի աշխատությունը, որտեղ առաջին անգամ գրի է առնված հայ ժողովրդի ազգային էպոսը։ Հետագայում հրատարակված ժողովածուները («Ընոց և նորոց», «Մանանա», «Համով-հոտով» և այլն), ազգային բանահավաքի անուն բերեցին նրան։

9 Տես «Նուագք» հատ. Ա («Մանկունք») էջ 111, 113, 73, 66 և 79։

10 Տե՛ս «Նուագք» հատ. Բ. («Հոգունք») էջ 256. («Առ Հայր, որ եմուտ ի խուց իմ. կայայ, գգուեցի և արձակեցի»)։

11 Հիշատակված են Ալիշանի գրչին պատկանող մի քանի ինքնուրույն կրոնական գործերի և թարգմանությունների վերնագրերը։ «Հազարդատեր հոգի» (Մ. Բականիի գրքի՝ իտալերենից կատարված թարգմանությունը) Վենետիկ, 1864 թ.։ «Աղօթք աբեղայիս» (Այրուբենի կարգով դասավորված գրաբար աղոթքներ) Անդ, 1876 թ., «Նմանություն ս. Այոհոհոսի Գոնձակա, պաշտպանի մանկանց» Անդ, 1853 թ., «Մենունդ արտի և հոգվոյ». Անդ, 1888 թ., «Նվեր աղայոց կամ ցուցք առատութեան» Անդ, 1866 թ. և այլն։ Չնայած այն բանին, որ ինչպես հուշագրողը, այնպես էլ Ալիշանի մասին գրող Մխիթարյան մի քանի այլ հեղինակներ աշխատել են վերոհիշյալ գործերը ներկայացնել որպես գիտական նվաճում, որպես վերելքի արտահայտություն հեղինակի ստեղծագործական կյանքում, պետք է ասել, որ վերջիններս ոչ մի դեր չկատարեցին բանաստեղծի գրական կյանքում։

12 Տե՛ս այս մասին Վարդան Հացունու «Հայր Ալիշանի հետ» № 5-ը։

13 Թադեոս Թովմասյանի գիրքն ունի «Առաջին քայլ ի գրոց բարբառ. նոր գրաբնական քերականություն հին հայերենի» խորագիրը և հրատարակվել է Վենետիկում, 1894, 1909 և 1921 թթ.։

14 «Մահանալս բառն այստեղ նույնպես գործածված է արևմտահայ իմաստով՝ «ճնշվել», «հալածվել»։ Գանքարյան Սամվել (1838—1908)— բառարանագիր, թարգմանիչ։ Կազմել է «Բառարան հայերեն-գաղղիերենառանձկերեն» (Վենետիկ, 1886 թ.) «Բառարան իտալերեն-հայերեն» (Անդ,

1908) մեծ արժեք ներկայացնող բառարանները։ Ցրանսերին բնագրից դրաբար է թարգմանել Լամարթինի բանաստեղծությունների ժողովածուն, որը լույս է տեսել Վենետիկում 1876 թվականին, «Բանաստեղծական առաջին մտածությունք» խորագրով։

15 Տե՛ս այս մասին Նիկողայոս Քարամյանի «Ղևոնդ Ալիշան» № 12-ը։

16 «Բա՜մ, Փարոսանի» մասին տե՛ս Ա. Արփիարյանի «Հոբելյան հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» № 17-ը։

17 Տե՛ս Արփիարյանի հուշերը նույնպես հատորում, «Հոբելյան հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի»։

18 Նախաձեռնելով հայության ընդունման իր քաղաքականությունը, Թուրքական դիվանագետները, որպես իրենց արարքն արդարացնող «փաստաթուղթ» վկայակոչում էին նաև այն հանգամանքը, որ հայ գրողները իրենց գրգռիչ բանաստեղծություններով թուրքերի դեմ ելնելու, զենքով պայքարելու, հայրենիքը ուժով ազատելու և այլ՝ այս կարգի կոչեր էին անում հպատակ հայ ժողովրդին, որպեսզի «բայքային» օսմանյան պետականության ամբողջությունը։ Հայությանը գրգռող մտավորականների թվում հիշատակվում էր նաև Ալիշանի անունը, մի հանգամանք, որը մահու չափ ցնցեց Նահապետին։

19 Տե՛ս «Բազմավեպ» 1901 թ. № 12 հավելվածը («Հանդիսա հ. Ղևոնդ Ալիշան աթոռակալ վարդապետի Մխիթարյան ուխտիս»)։ Քիչ վերևում հուշագրության մեջ բերված՝ Ալիշանի մահվան թվականը նշված է նոր տոմարով։

20 Տե՛ս Ս. Երեմյան. «Ազգային դեմքեր, դրագետ հայեր» երրորդ շար. Վենետիկ, 1913 թ., էջ 120—121.

ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃՅԱՆ ԵՎ Հ. ԱԼԻՇԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ի 1948 թվականի մարտ-ապրիլի համարում։ Ֆեթվաճյանի նամակում եղած կրճատումները կատարել է «Բազմավեպ»-ի խմբագրությունը։

1 Ակնարկվում է պոլսահայ հարուստ Գաբրիել Նորատունկյանը։

2 1888 թ. դալով Վենետիկ, Ֆեթվաճյանն այնտեղ մնաց մի քանի ամիս և մեկնեց նույն թվականի դարձանը։ Նա կրկին Վենետիկ եկավ 1889 թ. աշնանը, և ապա՝ 1891 թ. գարնանը (տես հուշագրության շարունակությունը)։

3 «Գեղունի»— աշխարհաբար մեծագիր պարբերական, որը լույս էին ընծայում Վենետիկի Մխիթարյանները 1902—1947 թթ. (անկայուն պարբերականությամբ. ու մեծ ընդմիջումներով), և որն իր գիտական արժեքավոր տեղեկություններ, ճոխ հրատարակության և ընտիր ձևավորման հետևանքով մի անգամից նվաճեց ընթերցող և գիտական հասարակության համակրանքը։

4 Ֆեթվաճյանի հիշյալ ձեռագիր աշխատությունները, ինչպես նաև նրա գեղարվեստական նկարներն ու տեղագրական-ճարտարապետական բնույթի բազմաթիվ գծագրերը, մատիտանկարները և այլն գտնվում են Երևանի պետական պատկերասրահի արխիվային բաժնում։ Գեղարվեստական առանձնագործություններից մի քանիսը ցուցադրվում են ցուցասրահում։

5 Էդգար Շահինի մասին տե՛ս Ա. Արփիարյանի «Հոբելյան հ. Ղևոնդ վարդապետ Ալիշանի» № 5-ը։ Կարապետ Աղամյան (1873—1947. Փարիզում հայտնի էր Շաբլ անունով)— ֆրանսահայ նկարիչ, Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի շրջանավարտ։ Չնայած այն բանին, որ նկարների առաջին ցուցահանդեսը Պոլսում բարձր գնահատականի արժանացավ, այնուամենայնիվ Աղամյանը կատարելագործվելու նպատակով 1900-ական թվականներին մեկնեց Փարիզ։ Երկու տարի հետո ստեղծած նկարների ցուցահանդեսը այստեղ էլ անցնում է մեծ շուքով, իսկ մի քանի գործեր էլ («Մեռելներ, ոտքի՛», «Դեպի հաղթանակ», «Դեպի Բերլին», «Քանդված օջախ») գնեց Լուվրը։ Աղամյանի հռչակն առանձնապես տարածվում է այն բանից հետո, երբ նա գտնում է ֆրանսիական «Իլյուստրասիոն» հանդեսի նկարիչը, ուր և սկսում է զետեղել իր նկարները։ Վերջին տարիներին անշուք ու աննկատ կյանք էր անց կացնում Փարիզում, ուր և վախճանվեց։ Սարգիս Խաչատուրյան (?—1947)— բնանկարիչ։ Սկզբնական կրթությունն ստացել է Կարինի Մանասարյան վարժարանում, ապա՝ Գաբրիել Նորատունկյանի ֆինանսական օժանդակությամբ ընդունվել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիան։ Ցուցահանդեսներ է տվել Վենետիկում, Հռոմում, Փարիզում, ուր արժանացել է մասնագետների բարձր գնահատականներին։ Երկու նկարիչներն էլ Ֆեթվաճյանի ընկերներն էին և մշտապես այցելում էին նրան, մանավանդ կյանքի վերջին տարիներին։

6 Դոստոր Կարոյան— ամերիկահայ գրական-մշակութային գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Մխիթարյան միաբանության բարեկամն ու նրանց հանձնակատարը։ Ֆեթվաճյանի՝ նկարները Հարդդային Հայաստանին նվիրելու գործում իր համեստ դերն ունի նաև Գ. Կարոյանը։

7 Ակնարկում է Մխիթարյանների «Բազմավեպ» ամսագրի հարյուրամյա հոբելյանը։ Ինչպես հայտնի է, ամսագրի «Հարյուրամյակը» լրանում էր 1943 թվականի սկզբներին («Բազմավեպը» սկսել է հրատարակվել 1843 թ. հունվարից. Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ), ինչը և, բնականաբար, պետք է նշվեր։ Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով ստեղծված ծանր պայմանները, մոլեգնող կատաղի պատերազմը, պատճառ են հանդիսանում այդ նախաձեռնության խափանման համար։ «Բազմավեպ»-ի հարյուրամյա հոբելյանը հանդիսավորապես նշվեց 1947 թվականի հոկտեմբերի 18—20-ին (նախ՝ Ս. Ղազար կղզում, ապա «Ֆենիչիա» թատրոնում)։

8 Տե՛ս «Այրարատ» էջ 236—237 (միջադիր. նկարի վերնագիրն է. «Նահատակությունն Ս. Հռիփսիմեայ, ըստ Ցայսմաւուրց Բ. Վասիլի

կայսերս»), և էջ 440—441 միջնագիր, նկարի վերնագիրն է. «Գրիգոր Լուսաւորիչ, ըստ Յայսմաւուրց Բ. Վասիլի կայսեր»։ Ուշագրավ է, որ նկարներից և ոչ մեկի տակ նշված չէ, որ դրանք արտանկարել է Ֆեթվաճյանը։

9 Նարիման խան Ենիկոլոպյան (1836—1906 թթ. հաճախ նաև՝ Ենիկոլոպ-Մամիկոնյան) պարսկահայ պետական-քաղաքական գործիչ։ Ուսումն ստացել է նախ Պարսկաստանում, ապա՝ Փարիզում, որից հետո աշխատանքի է անցել Պարսկաստանի արտաքին գործերի մինիստրությունում։ 1878 թ. նշանակվում է Պարսկաստանի լիազոր-դեսպան Վիեննայում (Ավստրո-Հունգարիա) և մեծ հաջողությամբ վարում այդ պաշտոնը 26 տարի մինչև 1904 թվականը։ Անհայտ պատճառով թողնում է պետական ծառայությունը և ուղևորվում Բելգիա, ուր և, Բելգիայի Օստանդ (Օստանդե) քաղաքում (և ոչ թե Ֆրանսիայում, ինչպես նշված է հուշագրության մեջ) վախճանվում է։ Ջնայած բազում պետական գործերին, Ենիկոլոպյանը հնարավոր ամեն ուժով օգնում և օժանդակում էր հայ գործիչներին, կրթական-դպրոցական հաստատություններին, հովանավորում էր գրքերի հրատարակությունները և այլն։

10 Ակնարկում է Մխիթարյան միաբանության անդամ, գրականագետ, բանաստեղծ Վահան Հովհաննիսյանի (ծն. 1895 թ.) «Սրտերու երգը» ժողովածուն (Վենետիկ, 1939 թ.), ուր և զետեղված է հիշյալ «Հ. Ղևոնդ Ալիշանի դիմապատկերին դիմաց» բանաստեղծությունը։ Վերջինս 1960-ական թվականներին ձայնագրվել է միաբանության անդամ, երաժշտագետ Ղևոնդ Տայանի կողմից և բազմիցս կատարվել զանազան ռիթիներով։

11 Փեշիկյան Եղիա (1895—1964)— բանաստեղծ, Մխիթարյան միաբանության ներքին գործիչներից։ Եղել է Միաբանության ընդհանուր առաջնադիրը (1935 թվականից մինչև մահը), լեզուների և գրականության ուսուցիչ Մուրադ-Ռափայելյան վարժարանում, 1930—1939 թթ. եղել է «Բազմավեպ» ամսագրի խմբագիր-հրատարակիչը, ուր հանդես է բերել մեկից ավելի շահեկան ուսումնասիրություններով։ Ֆեթվաճյանը Փեշիկյանի հետ ծանոթացել էր Վենետիկ կատարած իր առաջին ուղևորության ժամանակ և սերտ նամակագրական կապ ուներ նրա հետ։ Ինչպես պատմեց մեզ Երևանում եղած ժամանակ հ. Եղիա Փեշիկյանը (1962 թ.) չի կարողացել կատարել Ֆեթվաճյանի խնդրանքը՝ նկարն արտատպելու և ուղարկելու մասին։

12 Ինչպես մեզ հաղորդեց հ. Վահան Հովհաննիսյանը, որը 1938 թ. վերջերին գտնվում էր Երևանում, Ֆեթվաճյանի նկարած վերոհիշյալ նկարը իրեն է նվիրել Բելգիայում գտնվող հայ հասարակական-հոգևորական գործիչ Հովհաննես Նալբանդյանը։ Վերջինս իմանալով, որ իր բարեկամը՝ Վահան Հովհաննիսյանը գործերի բերումով գտնվում է Փարիզում, Բելգիայից գալիս է նրան այցելության և Փարիզում 1936 թ. հանձնում է նկարը, հրաժարվելով, սակայն, բացատրել, թե ինչպես է այն հայտնվել իր մոտ։

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է Ավետիք Իսահակյանի «Երկերի» չորահատորյակի չորրորդ հատորում (1959 թ. էջ 7—17) և արտատպվում է նույնությամբ։ Հուշագրությունը հրատարակության է պատրաստել գրականագետ Արամ Ինճիկյանը։

1 Սիմեոն Երևանցի մասին տես՝ «Մխիթարյան միաբանություն» № 4-ը։ Վարդան Հացունի (1870—1944)— գրականագետ-բանաստեղծ։ Ուշագրավ են նրա «Քերթվածք և կենսագրություն Պետրոս Ադամյանի» (Վենետիկ, 1895 թ.) և «Հորհրդածություն Եղիշեի պատմության վրա» (Վենետիկ, 1897 թ.) աշխատությունները։ Սուքիաս Էփրիկյան (1873—?) աշխարհագրագետ։ Մնայուն արժեք է ներկայացնում նրա երկհատոր «Բնաշխարհիկ բառարան»-ը (Վենետիկ, 1900—1905 թթ.)։

2 Հիշատակված գործերը (ի դեպ՝ վերջինի անունը սխալ է նշված. պետք է լինի «Հայոց աշխարհիկ») կազմում են Ալիշանի աշխարհաբար պոեզիայի ընտիր նմուշները, որոնք պարբերաբար զետեղվում էին զանազան դասագրքերում, ժողովածուներում, այբբենարաններում, ընդհուպ մինչև մեր օրերը, և որոնք կազմում են հանրահայտ «Երգք Նահապետի» շարքի բաղկացուցիչ մասը։

3 Միքայել Մխանասարյան (1829—1880)— հայկական ժողովրդական երգերի հավաքող-հրատարակիչ, գեղեցկագրության տեսաբան։ Նրա «Քնար հայկական» (Պետերբուրգ, 1868 թ.) խորագիրը կրող հայկական ժողովրդական երգերի ժողովածուն և «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» (Անդ, 1872 թ.) աշխատությունը լայնորեն հայտնի էին ժամանակին։

4 Տե՛ս այս մասին Վարդան Հացունու «Հայր Ալիշանի հետ» № 8-ը։

5 Հումբոլդ Ալեքսանդր (1769—1859)— գերմանացի նշանավոր բնախույզ, ճանապարհորդ-երկրաբան, որն իր լայն գիտելիքների համար ստացել էր «19-րդ դարի Արիստոտել» մականունը։ Հռչակավոր է նրա «Ճանապարհորդություն նոր աշխարհի արևադարձային մարզերումը» աշխատությունը (1807—1834 թթ), որը բաղկացած է 30 մեծադիր հատորներից և անավարտ է։ Ոչ պակաս կանոր է նրա մյուս աշխատությունը, որն ունի «Կոսմոս» խորագիրը (չորս հատոր, 1845—1857)։ Երկու աշխատություններում էլ երկրաբանական-աշխարհագրական բնույթի բազմաթիվ տեղեկություններ կան Կովկասի մասին։ Ռիխտեր Կարլ (1779—1859 թթ.)— գերմանացի աշխարհագրագետ, ակադեմիկոս, 1820 թվականից մինչև իր մահը՝ պատմական աշխարհագրության պրոֆեսոր Բեռլինի համալսարանում։ Նրա բազմաթիվ աշխատություններից նշանավոր է «Ասիայի հողագիտությունը» հինգ հատորանոց գործը, ուր շատ տեղեկություններ կան Կովկասի մասին։ Ռեկլյու Էլիզ (1830—1905)— ֆրանսիացի աշխարհագրագիտուհի, պետական գործիչ, Փարիզի հեղափոխության (1848 թ.) և Կոմունայի (1871 թ.) ակտիվ մասնակիցներից։ Գլխավոր աշխատությունն ունի «նոր համընդհանուր աշխարհագրություն» ընդարձակ աշխատությունը։

հագրություն» խորագիրը (1876—1894 թթ), որը բաղկացած է 19 հատորներից և որտեղ ընդարձակ տեղեկություններ կան Հայաստանի պատմության ու աշխարհագրության մասին։ Ինքնուրույն աշխատությամբ հասավոնեներն էլ բնագրից աշխարհաբար թարգմանելով հրատարակել է Միքայելը (Դալուսա Տեր-Մկրտչյան) 1893 թվականին էջմիածնում, «Հայաստան, Հայաստան և Բուրդիստան» խորագրով։ Վերոհիշյալ հեղինակների այս կամ այն գործերից Ալիշանը մշտապես օգտվել է իր աշխատությունները գրելու ընթացքում։

6 Ալիշանի կենսագրության սկզբնական շրջանը շարադրված է որոշ չափով անճիշտ։ Նա ծնվել է Պոլսում, 1820 թվականին։ 1832 թվականին, 12 տարեկան հասակում, Մկրտիչ Ավգերյանի ջանքով բերվում է Ս. Ղազար՝ ուսումնառության։ Այստեղ նա սովորում է յոթ տարի (Հինգ տարի նորընծայարանում և չորս տարի՝ Բարձրագույն կրթարանում) և 1841 թվականին ավարտում է իր ուսումը։ Միաբանության ներսում զանազան պաշտոններ վարելուց հետո, նա 1858 թ. ուղարկվում է Փարիզ, որպես Մուրադյան վարժարանի ուսուցիչ, ապա դառնում է վարժարանի տեսուչ (1859 թ.) և վարում է այդ պարտականությունը մինչև 1861 թվականը։

7 Նկատի ունի Պողոս-Պետրոս XIII Թերզյան կարդինալին (1885—1931)։ 1892 թ. առանալով եպիսկոպոսության աստիճան և քաղաքական կյանքի ասպարեզ մտնելով հայ ժողովրդի կյանքի համար ամենամռայլ տարիներին, Թերզյանը գրով և բանիվ բազմիցս դիմեց եվրոպական մեծ ազգերի ղեկավարներին, հոգևոր առաջնորդներին, անձամբ իրենց՝ Հռոմի պապին և «այլոց՝ կոչ անելով գալիք թուրքական չարաչարարներին։ Թերզյանի գործունեությունն առանձնապես ջանադիր դարձավ 1909 թ. ապրիլից հետո, երբ տեղի ունեցավ Ադանայի հայոց ջարդը (ապրիլի 1—3)։ Ադանայի, որի հոգևոր թեմի առաջնորդն էր ինքը։ Ի վերջո, Թերզյանի դիմումներն ու լոգոքները ձանձրացրեցին Եվրոպային և 1919 թվականին Կարդինալի տիտղոս տալու նպատակով կանչելով Հռոմ, պապը վերատեսուչ նշանակեց նրան տեղի կաթոլիկական դպրոցների վրա և այլևս արգելեց նրան քաղաքական գործունեությամբ զբաղվել։ 1919 թվականից Թերզյանը դուրս է գալիս հասարակական ասպարեզից և այլևս չի զբաղվում այդ կարգի հարցերով։ Կյանքի վերջին տարիներին հիմնականում ապրում էր Հռոմում, ուր և վախճանվեց՝ մոռացված բոլորից։

8 Օրմանյան Մաղաքիա (1841—1918)— եկեղեցական-քաղաքական գործիչ, հայ եկեղեցու պատմաբան։ 1896 թ. ընտրվում է պատրիարք և օգտագործելով իր լայն ծանոթությունները կաթոլիկ աշխարհի պարագլուխների հետ, աշխատում է ըստ հնարավորին սանձել տալ թուրքերին հայ ժողովրդի ընդդեմ գործած։ Հետևանքն այն է լինում, որ Օրմանյանը դատի է տրվում որպես «Օսմանյան կայսրությունը թաքցնող» (1908 թ.) և մեծ դժվարությամբ կարողանում է փախչել Երուսաղեմ, ուր և վախճանվում է։ Օրմանյանի նշանավոր աշխատությունն է «Ազգապատում»-ը (Պոլիս-Երուսաղեմ, 1912—1927 թթ. երեք մեծադիր հատոր), որը մատենագետ-պատմաբանի հոչակ բերեց նրան։

9 Խոսքն իսկապես վերաբերում է ռուսական պետական հետագա գործիչ, Սինոդի ավագ դատավոր Կոնստանտին Պետրովիչ Պոբեդոնոսցևին (1827—1907 թթ)։ Վերջինս 1868 թ. ընտրվեց Սենատի անդամ և համատարած արշավանք սկսեց ոչ միայն ռուսական առաջավոր մտքի ներկայացուցիչների հանդեպ, այլ նաև Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող բոլոր ազգությունների։ Պոբեդոնոսցևի օրոք սկսեցին փակվել աշ ռուսական դպրոցները, արգելվեցին կամ սահմանափակվեցին ազգային լեզուներով թերթերը և այլն։ Հիշյալ հալածանքները, որոնք պատմության մեջ հայտնի են «Պոբեդոնոսցևյան ռեակցիա» անունով, հանդիսանում են «Ռուսաստանի պատմության ամենամռայլ էջը» (Լենին)։ Ուստի միանգամայն հասկանալի է, որ 1898 թվականի գարնանը գալով Վենետիկ, հենց Պոբեդոնոսցևն էր ասելու հայ ժողովրդի պատմական ապագայի վերաբերյալ այն մարդախոշոր «նկատառումները», որոնք բերված են հոդվածի շարունակության մեջ։

ՀՈՒՇԵՐԻՑ Հ. ԱԼԻՇԱՆԻ ՄԱՍԻՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1961 թ. № 11—12 (Նոյեմբեր-Դեկտեմբեր)-ում և արտատպվում է նույնությամբ։ «Բազմավեպ»-ի այդ համարն ամբողջությամբ նվիրված է Ալիշանի մահվան 60-ամյա տարեդարձին։

1 «Տերունի»— Ալիշանի բանաստեղծությունների հինգհատորյա ժողովածվի («նուագաց») չորրորդ հատորի (Վենետիկ, 1858 թ.) ենթավերնագիրը։ «Հայրունի»՝ նույն ժողովածուի երրորդ հատորի (Անդ, 1857 թ.) ենթավերնագիրը։

2 Տե՛ս «Այբարատ բնաշխարհ Հայաստանեայց» (Վենետիկ, 1890 թ.) էջ 90—106. «Դրվագ ի Ս. Ղևոնդ երեց Վանանդացի» գլուխը։

3 Ֆինսաս—փոքրիկ քաղաք Հյուսիսային Իտալիայում, Վենետիկից հյուսիս-արևելք։ Այստեղ Վենետիկի Մխիթարյաններն ունեն իրենց սեփական ալիքներն ու ամառանոցը, որտեղ ամռան շոգերին հանգստանալու են ուղարկում աշակերտներին։

4 Մելքում խան (1831—1908 թթ. նաև՝ Հովսեփ Մելքումենց)— հայազգի հասարակական-քաղաքական գործիչ, Փարիզի Մուրադյան վարժարանի շրջանավարտներից։ Եղել է Պարսկաստանի արտաքին գործերի մինիստր, (որտեղ դրսևորեց իրեն որպես կարող դիվանագետ), ապա՝ այդ պետության առաջին դեսպանը Լոնդոնում, հետագայում՝ Բեռլինում և Հռոմում։ Գժտվելով պարսկական վերնախավի հետ, Մելքում խանը թողեց ծառայությունը, մեկնեց Թուրքիա, ապա՝ փոխադրվեց Փարիզ, ուր և ապրում էր երկար տարիներ։ Դարավերջին եկավ Վենետիկ, և կատարելով իր կառավարության հանձնարարությունը, Պարսկաստանի

բարձրագույն պարգևով՝ «Շիրխուրշիդ» շքանշանով պարգևատրեց Ալիշանին և Միաբանության արքահայր Կյուրեղյանին։

5 Զգեստավորության (նաև՝ Սքեմավորություն, Սքեմառություն) ժեսի և այդ կապակցությամբ անունը փոխելու մասին տե՛ս Արրահամ Տեր-Հակոբյանի «Հ. Ալիշանի հոբելյանի առթիվ» № 2-ը։ Ինչպես հայտնի է Ալիշանն էլ, մինչև միաբանության անդամ դառնալը ուներ Քերովբե անունը, իսկ փոքր եղբայրը կոչվում էր Սերովբե։ Այդ անուններն էլ նա հետագայում ավելց իր սանիկների՝ Քուշնեբյան երկվորյակ եղբայրներին, որոնք Սերովբե Քուշնեբյան (1841—1867) և Քերովբե Քուշնեբյան (1841—1865, բանաստեղծ, թարգմանիչ՝ ուսանելիից հայերեն) ձևով հետագայում հայտնի դարձան։

6 Նկատի ունի Ալիշանի «Ճառք հոգևորք վասն միանձանց» աշխատությունը, որը հետամահու հրատարակությամբ լույս է տեսել Վենետիկում 1904 թվականին (696 էջ)։

7 Ալեքսիս Գազնցյան,— Մխիթարյան միաբանության մառանապետը, հետագայում՝ շինությունների վերահսկիչ։ Միաբանության եղբայրներից (Տե՛ս այս մասին Աբր. Տեր-Հակոբյանի «Հ. Ալիշանի հոբելյանի առթիվ» № 2-ը)։

8 Ալիշանի մահն այստեղ նշված է նոր տոմարով (հին տոմարով՝ նոյեմբերի 9)։

ՀՍՍՌ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ Գրադարան
Общественных
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Наук Арм. ССР

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկու խոսք— Ս. Շտիկյան 3
2. Հաբո— Նամակ Վենետիկից 6
3. Ա. Արփիարյան— Օրվան կյանքը 9
4. Գր. Խալաթյանց— Հ. Ալիշան և յուր նոր երկասիրությունը . 12
5. Գր. Արծրունի— Վենետիկ 1870 թվին 15
6. Նիկ. Քարամյան— Ղևոնդ Ալիշան 30
7. Ա. Արփիարյան— Հ. Ղևոնդ Ալիշան 43
8. Աբր. Տեր-Հակոբյան— Հ. Ալիշանի հոբելյանի առթիվ . . 67
9. Ա. Արփիարյան—Հայր Ղևոնդ Վ. Ալիշան 73
10. Մ. Զալյան— Մխիթարյան մենաստանում 80
11. [Նախաբան] 88
12. Գ. Բաշինջաղյան— Ս. Ղազարի կղզին 1884 թվականին . . 92
13. Հ. Թորոսյան— Հ. Ղևոնդ Ալիշան 96
14. Ս. Ներսյան— Ղևոնդ Ալիշան 113
15. Մխիթարյան միաբանություն 139
16. Բ. Սարգսյան— Ազգային առաջին բանաստեղծը 155
17. Տ. Նազարյան— Հայր Ղևոնդ Ալիշան և Խրիմյան Հայրիկ . 163
18. Ղ. Տայան— Հ. Ալիշան ու մեղվաճաղիկ 169
19. Վ. Հացունի— Հայր Ալիշանի հետ 172
20. Թ. Թոմանյան— «Հուշեր և նիշեր Հ. Ալիշանի ներքին վրանքեն» 207
21. Մ. Ճանաշյան— Արշակ Ֆեթվաճյան և Ղ. Ալիշան . . 207
22. Ավ. Իսահակյան— Ղևոնդ Ալիշան 216
23. Գ. Զրաքյան— Հուշերս Հ. Ալիշանի մասին 224
24. Ծանոթագրություններ— Ս. Շտիկյան 229

АЛИШАН В ВОСПОМИНАНИЯХ
СОВРЕМЕННИКОВ
(Сборник)
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван—1974

22-1975

Ալիշանը ժամանակակիցների հուշերում

Խմբագիր՝
Մ. Ս. Թերզյան
Գեղ. խմբագիր՝
Ան. Վ. Գասպրյան
Տեխ. խմբագիր՝
Ի. Գ. Ավետիսյան
Վերատեսող սրբագրիչ՝
Հ. Ե. Տատաշյան

Հանձնված է շարվածքի 3/IX 1974 թ.։ Ստորագրված է տպագրության 16/XII 1974 թ.։ Թուղթ տպագրական № 1, 84×108 1/32, տպագր. 8,25 մամ.=13,86 պայմ. տպ. մամ., հրատ. 11,9 մամ.+2 ներդիր։ Պատվեր 658։ ՎՖ 03608։ Տպաքանակ 5000։ Գինը՝ 60 կ.։ «Հայաստան» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65։